ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2011

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Հայտարարվել են
վեց նոր տաճարներ

Սովորել սուրբ գրություններից, Նենսի Քրուքսթոն

Փրկիչն ուսուցանել է. «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են»: (Հովհաննես 5.39):

Բովանդակություն, նոյեմբեր 2011

Հատոր 12 • Համար 4

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Կրկին հանդիպելով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Սուրբ գրության զորությունը
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

9 Անձնական հայտնություն և վկայություն
Բարբարա Թոմսոն

11 Ժամանակը պիտի գա
Երեց Լ. Վիթնի Քլեյթոն

14 Անել ճիշտ գործ ճիշտ ժամանակին, առանց հապաղելու
Երեց Խոսե Լ. Ալոնսո

16 Խորհուրդ երիտասարդությանը
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր

19 Դու կարևոր ես Նրա համար
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

23 Եկեղեցու պաշտոնյաների հաստատում
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

24 Զավակների սրտերը կդառնան
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

28 Երեխաներ
Երեց Նիլ Լ. Անդերսեն

31 Պատրաստվելու ժամանակը
Երեց Յան Ս. Արդերն

33 Ավելի լավ է վեր նայել
Երեց Կարլ Բ. Քուք

35 Փրկագնում
Երեց Լեզրան Ռ. Քըրթիս Կրտսեր

38 Ապաշխարության աստվածային պարգևը
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

41 Կատարյալ սերը հեռացնում է վախը
Երեց Լ. Թոմ Փերի

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

44 Բոլորս զինվորագրված ենք
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

47 Ահարոնյան Քահանայության զորությունը
Եպիսկոպոս Քեյթ Բ. Մաքմալին

50 Կյանքի հնարավորություն
Երեց Վ. Քրիստոֆեր Վադել

53 Հոգ տանելու Տիրոջ ուղին
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

56 Նախապատրաստություն Քահանայությանը. «Ես ունեմ քո կարիքը»:
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

60 Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

68 Վկայություն
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

71 Տիրոջն ապավինել՝ քո կամքը կատարվի
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

74 Մորմոնի Գիրք՝ գիրք Աստծուց
Երեց Թեդ Ռ. Քալիսթեր

77 Սիրիր նրա մորը
Էլեյն Ս. Դալտոն

79 Անվան կարևորությունը
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

82 Կանգնեք սուրբ տեղերում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

86 Ուխտեր
Երեց Ռասսել Մ. Նելսոն

90 Հիսուսի ուսմունքները
Երեց Դալլին Հ. Օուքս

94 Ուսուցանել համաձայն Հոգու ձևի
Մեթյու Օ. Ռիչարդսոն

96 Միսիոներները Եկեղեցու գանձն են
Երեց Կազուհիկո Յամաշիտա

98 Ընտրեք հավերժական կյանքը
Երեց Ռանդալ Կ. Բենեթ

101 Աղոթքի արտոնությունը
Երեց Ջ. Դեվն Քորնիշ

104 Երգեր, որ նրանք չկարողացան երգել
Երեց Քվենթին Լ. Քուք

108 Մինչև նոր հանդիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ

109 Ինչ եմ ցանկանում, որ իմ թոռնուհիները (և թոռները) հասկանան Սփոփող Միության մասին
Ջուլի Բ. Բեք

114 Գթությունը երբեք չի խափանվում
Սիլվիա Հ. Ալրեդ

117 Հավատարիմ մնա ուխտերին
Բարբարա Թոմսոն

120 Անմոռուկ
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

64 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

124 Համաժողովի պատմությունների ցուցիչ

125 Մեր ժամանակների ուսմունքները

125 Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

126 Եկեղեցու նորությունները

181-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Հենրի Բ. Այրինգ: Բացիչ աղոթք. Երեց Գարի Ջ. Քոլման: Փակիչ աղոթք. Երեց Լոուել Մ. Մնոու: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ; խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի; երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ՝ "The Morning Breaks," *Hymns,* no. 1; "With Songs of Praise," *Hymns,* no. 71; "We Ever Pray for Thee," *Hymns,* no. 23, arr. Wilberg, unpublished; "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "I Am a Child of God," *Children's Songbook,* 2–3, arr. Murphy, unpublished; "Press Forward, Saints," *Hymns,* no. 81, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացիչ աղոթք. Երեց Վոն Յոնգ Կո: Փակիչ աղոթք. Երեց Բրեդլի Դ. Ֆոստեր: Երաժշտություն՝ Երեխաների երգչախումբ Փլեզանթ Վյույից և Հյուսիսային Օգդենից, Յուտա; խմբավար. Վանյա Յ. Վոթկինս; երգեհոնահար՝ Լինդա Մարգեթս՝ "God's Daily Care," *Hymns,* no. 306, և "I Thank Thee, Dear Father," *Children's Songbook,* 7, medley arr. Watkins, unpublished; "Families Can Be Together Forever," *Hymns,* no. 300, arr. Watkins, unpublished; "Praise to the Man," *Hymns,* no. 27; "My Heavenly Father Loves Me," *Children's Songbook,* 228–29, and "I Know My Father Lives," *Hymns,* no. 302, pub. Jackman, medley arr. Watkins, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացիչ աղոթք. Երեց Ռիչարդ Գ. Հինքլի: Փակիչ աղոթք. Երեց Կոիչի Առյագի: Երաժշտություն՝ Մելքիսեդեկյան Քահանայության երգչախումբ Փլեզանթ Գրովից, Յուտա; խմբավար. Ջասթին Բիլս; երգեհոնահար՝ Քլեյ Քրիսչենսեն՝ "Rise Up, O Men of God," *Hymns,* no. 324, arr. Staheli, pub. Jackman; "I Need Thee Every Hour," *Hymns,* no. 334, arr. Bills, unpublished; "Rejoice, the Lord Is King!" *Hymns,* no. 66; "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58, arr. Bills, unpublished:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Դիտեր Ֆ. Ուխդորֆ: Բացիչ աղոթք. Երեց Փոլ Կ. Միբրովսկի: Փակիչ աղոթք. Երեց Ջեյմս Բ. Մարտինո: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ; խմբավար. Մաք Վիլբերգ; երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն՝ "Lead Me into Life Eternal," *Hymns,* no. 45; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns,* no. 83, arr. Wilberg, unpublished; "Consider the Lilies," Hoffman, arr. Lyon, pub. Jackman; "We Thank Thee, O God, for a Prophet," *Hymns,* no. 19; "I'll Go Where You Want Me to Go," *Hymns,* no. 270, arr. Wilberg, unpublished; "I Believe in Christ," *Hymns,* no. 134, arr. Wilberg, unpublished:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Հենրի Բ. Այրինգ: Բացիչ աղոթք. Երեց Ֆ. Մայքլ Վատսոն: Փակիչ աղոթք. Երեց Գրեգորի Ա. Շվիցեր: Երաժշտություն՝ Թաբերնաքլի երգչախումբ; խմբավարներ. Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի; երգեհոնահարներ՝ Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարգեթս՝ "Arise, O God, and Shine," *Hymns,* no. 265, arr. Wilberg, unpublished; "I Feel My Savior's Love," *Children's Songbook,* 74–75, arr. Cardon, unpublished; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3; "Lord, We Ask Thee Ere We Part," *Hymns,* no. 153, arr. Wilberg, unpublished:

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԱՆ, ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2011Թ.
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն: Վարող. Ջուլի Բ. Բեք: Բացիչ աղոթք. Բարբարա Ս. Բրեդշոու: Փակիչ աղոթք. Սանդրա Ռոջերս: Երաժշտություն՝ Սփոփող Միության երգչախումբ Իգլ Մաունթեյնից և Սարատոգա Սփրինգսից, Յուտա; խմբավար. Էմիլի Վեղլի; երգեհոնահարներ՝ Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարգեթս՝ "The Morning Breaks," *Hymns,* no. 1, arr. Wilberg, unpublished; "Sweet Is the Work," *Hymns,* no. 147, arr. Manookin, pub. Jackman; "Hark, All Ye Nations!" *Hymns,* no. 264; "Now Let Us Rejoice," *Hymns,* no. 3:

ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Գերագույն համաժողովի ելույթները շատ լեզուներով մատչելի են conference.lds .org կայքում: Ընտրեք լեզուն: Սովորաբար համաժողովից հետո երկու ամսվա ընթացքում աուդիոձայնագրությունները կարելի է ձեռքբերել բաշխման կենտրոններից:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար ընտրեք այն ուղերձը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում ուսուցանում եք:

ՇԱՊԿԻ ՎՐԱ
Առջևի կազմ. լուսանկարը՝ Ջոն Լյուքի: Ետևի կազմ. լուսանկարը՝ Լես Նիլսոնի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ
Գերագույն համաժողովի տեսարանները Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարվել են Քրեյգ Դայմոնդի, Վելդեն Ս. Անդերսենի, Ջոն Լյուքի, Քրիստինա Սմիթի, Քոդի Բելի, Լես Նիլսոնի, Վեստոն Քոլթոնի, Սառա Ջենսենի, Դերեկ Իսրայելսենի, Դաննի Լայի, Սքոթ Դեյվիսի, Քրիսթի Ջորդանի և Կառա Քոլի կողմից; Բրազիլիայում՝ Բարբարա Ալվեսի, Դեյվիդ Մաքնեմիի և Սանդրա Ռոզադոսի կողմից; Կանադայում՝ Լոռեն Լյուսուի կողմից; Էլ Սալվադորում՝ Խոսե Պենայի կողմից; Անգլիայում՝ Սայմոն Ջոնսի կողմից; Ճապոնիայում՝ Եղբայր Առնոյի կողմից; Մեքսիկայում՝ Մոնիկա Մոռայի կողմից; Ֆիլիպիններում՝ Վիլմոր Լատոռեյի և Էն Ռոսասի կողմից; Հարավային Աֆրիկայում՝ Ռոբ Մայլնի կողմից; Շվեդիայում՝ Աննա Պետերսոնի կողմից; և Ուռուգվայում՝ Մանուել Պենայի կողմից:



ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՀԱՏ. 12 Հ. 4
ԼԻԱՀՈՆԱ 09691 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ջոզեֆ Բ. Վիրթլին, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քուենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Փոլ Բ. Փիփեր
Խորհրդատուներ. Քեյթ Ռ. Էդվարդս, Քրիստոֆել Գոլդեն Կրտս., Փեր Գ. Մալմ

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Լ. Ֆրիշկնեխթ
Խմբագրական տնօրեն. Վինսենթ Ա. Վոն
Գրաֆիկայի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնականներ. Ջենիֆեր Լ. Գրինվուդ, Ադամ Ս. Օլսոն
Համախմբագրեր. Սյուզան Բարեթ, Ռայան Քար
Խմբագրական կազմ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լառեն Պորտեր Գանտ, Քերի Կաստեն, Ջենիֆեր Մեդի, Լիա Մակ Քանահան, Մելիսա Մերիլ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջ. Օդեկիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Չադ Ե. Փարես, Յան Փինբորոու, Փոլ Վանդենբերգ, Մարիսա Ա. Վիդիսոն, Մելիսսա Զենտենո

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Սքոթ Վան Քեմփեն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Գլխավոր դիզայներներ. Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Ս. Չայլդ, Քոլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեն, Սքոթ Մ. Մույ
Հրատարակչության կազմ. Քոլեթ Նեբեկեր Օն, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Ռեջինալդ Ջ. Քրիսչենսեն, Կիմ Ֆենսթերմեյքեր, Բրայան Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիս Քըրբի, Ջինի Ջ. Նիլսոն
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ Ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ներկայացրեք ձեռագրերը և պատվերները առցանց՝ liahona.lds.org; փոստով՝ Liahona, Room 2420, 50 East North Temple Street, Salt Lake City, UT 84150-0024, USA; կամ էլ-փոստով. liahona@ldschurch.org.

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: November 2011 Vol. 12 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ԱՅԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Ալոնսո, Խոսե Լ., 14
Ալրեդ, Միլվիա, Հ., 114
Այրինգ, Հենրի Բ., 23, 56, 68
Անդերսեն, Նիլ, Լ., 28
Արդերն, Յան Ս., 31
Բալլարդ, Մ. Ռասսել, 79
Բեդնար, Դեյվիդ Ա., 24
Բենեթ, Ռանդալ Կ., 98
Բեք, Ջուլի Բ., 109
Դալտոն, Էլեյն Ս., 77
Թոմսոն, Բարբարա, 9, 117
Հեյլս, Ռոբերտ Դ., 71
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 44
Մաքմալին, Քեյթ Բ., 47
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 60, 82, 108
Յամաշիտա, Կազուհիկո, 96
Նելսոն, Ռասսել Մ., 86
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 19, 53, 120
Ռիչարդսոն, Մեթյու Օ., 94
Սքոթ, Ռիչարդ Գ., 6
Վադել, Վ. Քրիստոֆեր, 50
Փաքեր, Բոյդ Կ., 16
Փերի, Լ. Թոմ, 41
Քալիսթեր, Թեդ Ռ., 74
Քըրթիս, Լեգռան Ռ., Կրտսեր, 35
Քելյթոն, Լ. Վիթնի, 11
Քորնիշ, Ջ. Դեվն, 101
Քուք, Կարլ Բ., 33
Քուք, Քվենթին Լ., 104
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 38
Օուքս, Դալլին Հ., 90

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ակտիվացում, 14, 35, 50
Ահարոնյան Քահանայություն, 47
Աղոթք, 82, 101
Աճ, Եկեղեցի, 11, 41
Ամուսնություն, 28
Այցելությամբ ուսուցում, 109, 114
Անձնական արժանավորություն, 19, 120
Անուն, Եկեղեցի, 79
Աշակերտություն, 109
Ապաշխարություն, 16, 35, 38, 44
Առաջնահերթություններ, 28, 31
Աստվածային էություն, 19
Աստվածաշունչ, 74, 90
Բարոյականություն, 16
Բարօրություն, 53
Գերագույն համաժողով, 4, 23, 108
Գթություն, 68, 109, 114
Դարձ, 68, 96
Դիմացկունություն, 68, 71
Երեխաներ, 28
Երիտասարդ Կանայք, 77
Երիտասարդներ, 16, 24, 44, 47, 50, 77
Երկնային Հայր, 108
Զոհաբերություն, 50, 120
Զույգ միսիոներներ, 44
Ընտանեկան պատմություն, 24
Ընտանիք, 28, 77
Ընտրության ազատություն, 98
Ժամանակի կառավարում, 31
Ինքնապահովում, 53
Ծառայություն, 14, 47, 50, 53, 56, 68
Ծնողներ, 28, 77
Համբերություն, 71
Հայտնություն, 6, 9, 16, 82
Հայրեր, 77
Հավատք, 28, 33, 71, 101, 104
Հիսուս Քրիստոս, 35, 41, 74, 79, 90, 101
Հնազանդություն, 33, 38, 86, 90
Հույս, 19, 71
Զախորդություն, 71, 104
Մարգարեություն, 11
Միսիոներական աշխատանք, 11, 41, 44, 50, 79, 96
Մորմոնի Գիրք, 6, 50, 68, 74
Նախապատրաստություն, 50, 56, 96
Ուխտեր, 86, 117
Ուսուցում, 94
Ուրախություն, 38, 120
Չափանիշներ, 44, 60, 77, 82
Պատասխանատվություն, 98
Պարտականություն, 47, 56
Սեր, 53, 77, 96, 120
Սովորել, 94
Սուրբ Հոգի, 6, 9, 16, 33, 47, 82, 94
Սուրբ գրություններ, 6, 74
Փրկող Միություն, 109, 114
Վերականգնում, 11
Վկայություն, 9, 60, 68, 74, 82
Տաճարներ և տաճարային աշխատանք, 4, 24, 41, 109, 117
Տեխնոլոգիա, 24, 31
Փրկագնում, 35
Քահանայություն, 24, 47, 56, 60, 86, 109
Քաջություն, 33, 60
Քավություն, 33, 35, 38, 90
Օրինակ, 41, 60, 77, 90, 96
նրանց ինքնարժեքն, 19, 120

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կրկին հանդիպելով

Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք լցվել Տիրոջ Հոգով, մինչ կլսենք այսօր և վաղը հնչող ուղերձները, և կսովորենք այն բաները, որոնք Տերը ցանկանում է, որ մենք իմանանք:

Որքան լավ է, եղբայրներ և քույրեր, ողջունել ձեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի 181-րդ գերագույն համաժողովին:

Այս համաժողովը նշանավորում է 48 տարին, միայն պատկերացրեք, 48 տարին, ինչ ես կանչվել եմ Տասներկու Առաքյալների Քվորում Նախագահ Դեյվիդ Օ. Մաքկեյի կողմից: Դա 1963-ի հոկտեմբերին էր: Թվում է, անհնար է, որ այդքան շատ տարիներ են եկել ու անցել այդ ժամանակից ի վեր:

Երբ մենք զբաղված ենք, ժամանակը, կարծես, շատ արագ է ընթանում, և անցած վեց ամիսները ինձ համար բացառություն չեն եղել: Այդ ժամանակահատվածի կարևոր իրադարձություններից էր մայիսի 1-ին Ատլանտա Ջորջիա տաճարի վերանվիրագործման հնարավորությունը: Ինձ ուղեկցում էին Երեց և Քույր Մ. Ռասսել Բալլարդները, Երեց և Քույր Վոլթեր Ֆ. Գոնզալեսները, և Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերները:

Վերանվիրագործման նախորեին «Հյուսիսային լույսեր» վերնագրով երեկոյան մշակութային տոնակատարության ժամանակ մենք արժանացանք տաճարի տարածքից 2700 երիտասարդ տղամարդկանց և կանանց ելույթին: Դա առավել գերազանց ծրագիր էր, որ ես երբևէ դիտել էի, որը ստիպեց հանդիսատեսին մի քանի անգամ ոտքի ելնել՝ ոտնկայզ ծափահարությունների համար:

Հաջորդ օրը տաճարը վերանվիրագործվեց երկու նիստերի ժամանակ, որտեղ Տիրոջ Հոգին մեզ հետ էր մեծ զորությամբ:

Օգոստոսի վերջին Նախագահ Հենրի Բ. Այրինգը նվիրագործեց Սան Սալվադոր Էլ Սալվադոր տաճարը: Նրան ուղեկցում էին Քույր Այրինգը և Երեց և Քույր Դ. Թոդ Քրիստոֆերսոնները, Երեց և Քույր Վիլիամ Ռ. Վոքերները և Քույր Օլրեդը՝ Սփոփող Միության գերագույն նախագահությունից, և նրա ամուսինը՝ Ջեֆրին: Նախագահ Այրինգը հաղորդեց, որ դա մեծ հոգևոր իրադարձություն էր:

Այս տարվա ավարտին մոտ, Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը և Քույր Ուխդորֆը, Բարձրագույն այլ Իշխանավորների հետ, կմեկնեն Քետցալթենանգո, Գվաթեմալա, որտեղ Նախագահ Ուխդորֆը կնվիրագործի մեր տաճարը:

Տաճարների կառուցումը շարունակվում է առանց ընդհատումների, եղբայրներ և քույրեր: Այսօր, ես պատիվ ունեմ հայտարարելու մի

քանի նոր տաճարների մասին:

Առաջինը, թույլ տվեք նշել, որ չկա Եկեղեցու կողմից կառուցված որևէ շինություն ավելի կարևոր, քան տաճարը: Տաճարները այն վայրերն են, որտեղ հավերժությունների համար կնքվում են հարաբերությունները: Մենք շնորհակալ ենք աշխարհով մեկ բազմաթիվ բոլոր տաճարների համար և այն օրհնության համար, որ դրանք բերում են մեր անդամների կյանքերը:

Անցած տարի Պրովոյի Թաբերնաքլը՝ Յուտա շրջանում, լուրջ վնասվել էր սաստիկ հրդեհից: Մնացել էին Վերջին Օրերի սերունդների կողմից շատ սիրված այս հիանալի շինության միայն արտաքին պատերը: Մանրազննին ուսումնասիրությունից հետո մենք որոշեցինք վերակառուցել այն, արտաքին պատերի լիարժեք պահպանությամբ և վերակառուցմամբ, որի արդյունքում այն դարձավ Պրովո քաղաքում Եկեղեցու երկրորդ տաճարը: Պրովոյի ներկա տաճարը Եկեղեցու առավել զբաղված տաճարներից մեկն է, իսկ երկրորդ տաճարն այնտեղ կկարողանա հոգալ Եկեղեցու հավատարիմ անդամների աճող թիվը, ովքեր տաճար են այցելում Պրովոյից և մոտակա տարածքներից:

Ես նաև հաճույքով հայտարարում են նոր տաճարների մասին հետևյալ վայրերում. Բառանքիլլա, Կոլումբիա; Դուրբան, Հարավային Աֆրիկա; Քինշասա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն; և Սթար Վելի, Վայոմինգ: Բացի դա, մենք շարունակում ենք մեծ ծրագրերը՝ կապված Փարիզում, Ֆրանսիա, տաճար կառուցելու հետ:

Այս տաճարների մասին մանրամասները կտրամադրվեն ավելի ուշ, երբ ձեռք բերվեն կառուցման վայրերի և անհրաժեշտ այլ հաստատումները:

Նախկին համաժողովներին ես նշել եմ այն առաջընթացի մասին, որը մենք վայելում ենք, ունենալով տաճարներ մեր անդամներին ավելի մոտ վայրերում: Թեև դրանք լավ հասանելի են Եկեղեցու շատ անդամներին, դեռ կան տարածքներ, որտեղ տաճարները շատ հեռու են, և անդամները չեն կարող իրենց թույլ տալ այդ ճանապարհորդությունը: Այդպիսով, նրանք չեն կարողանում ճաշակել տաճարների սուրբ և հավերժական օրհնությունները: Այդ հարցում օգնելու համար մենք ունենք մի ծրագիր, որը կոչվում է Տաճարների պատրոնների աջակցման ընդհանուր ֆոնդ: Այդ ֆոնդը ֆինանսավորում է նրանց մեկանգամյա այցը տաճար, ովքեր այլապես չեն կարող գնալ, սակայն խորապես ցանկանում են: Բոլոր նրանք, ովքեր կցանկանան ներդրում կատարել այդ ֆոնդին, կարող են գրել տեղեկությունը ներդրումների սովորական թերթիկի վրա, որն ամեն ամիս տրվում է եպիսկոպոսին:

Այժմ, եղբայրներ և քույրեր, իմ աղոթքն է, որ մենք կարողանանք լցվել Տիրոջ Հոգով, մինչ կլսենք այսօր և վաղը հնչող ուղերձները, և կսովորենք այն բաները, որոնք Տերը ցանկանում է, որ մենք իմանանք: Այս մասին ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Սուրբ գրության զորությունը

Սուրբ գրությունները նման են լույսի փաթեթների, որոնք լուսավորում են մեր միտքը և տեղ են տալիս ի վերուստ ստացված ուղղորդությանը և ներշնչմանը:

Ես զանից նրանք, ովքեր համաժողովի ժամանակ մոտենում են այս ամբիոնին, զգում են ձեր աղոթքների զորությունը: Մենք ունենք դրանց կարիքը, և մենք շնորհակալ ենք ձեզ դրա համար:

Մեր Երկնային Հայրը հասկանում էր, որ որպեսզի մենք կարողանանք մեր մահկանացու փորձաշրջանի ժամանակ ցանկալի զարգացում ապրենք, մենք պետք է հանդիպենք դժվար խնդիրների: Դրանցից մի քանիսը կարող են չափից դուրս դժվար լինել: Նա տվել է գործիքներ՝ օգնելու մեզ հաջողությամբ անցնել մեր մահկանացու փորձաշրջանը: Այդ գործիքների մեկ հավաքածու է հանդիսանում սուրբ գրությունները:

Դարեր շարունակ Երկնային Հայրը ոգեշնչել է ընտրյալ տղամարդկանց և կանանց՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ գտնել կյանքի առավել բարդ խնդիրների լուծումները: Այդ լիազորված ծառաներին Նա ոգեշնչել է գրի առնել այդ լուծումները ուղեցույցի տեսքով՝ Իր այն զավակների համար, ովքեր հավատում են երջանկության Իր ծրագրին և Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Մեզ մատչելի է այդ ուղեցույցը գանձերի շնորհիվ, որոնք մենք անվանում ենք կանոնիկ աշխատանքներ, դրանք են՝ Հին և Նոր Կտակարանները, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը և Թանկագին Մարգարիտը:

Քանի որ սուրբ գրությունները առաջ են գալիս Սուրբ Հոգու միջոցով ոգեշնչված հաղորդակցման շնորհիվ, դրանք անարատ ճշմարտություն են: Մենք չպետք է մտահոգվենք այն գաղափարների ճշմարտության մասին, որոնք պարունակվում են կանոնիկ աշխատանքներում, քանզի Սուրբ Հոգին է եղել այն գործիքը, որը խրախուսել և ոգեշնչել է նրանց, ովքեր գրի են առել սուրբ գրությունները:

Սուրբ գրությունները նման են լույսի փաթեթների, որոնք լուսավորում են մեր միտքը և տեղ են տալիս ի վերուստ ստացված ուղղորդությանը և ներշնչմանը: Դրանք կարող են դառնալ բանալի, որը բացում է մեր Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ հաղորդակցման ուղին:

Սուրբ գրությունները իշխանության ուժ են տալիս մեր հայտարարություններին, երբ ճիշտ են մեջբերվում: Դրանք կարող են դառնալ հաստատուն ընկերներ, որոնք չունեն աշխարհագրական կամ օրացույցային սահմանափակումներ: Նրանք միշտ մատչելի են, երբ անհրաժեշտ են: Նրանց օգտագործումը ճշմարտության հիմք են ծառայում, որը կարող է արթնացվել Սուրբ Հոգու օգնությամբ: Սուրբ գրությունները սովորելը, խորհելը, ուսումնասիրելը և մտապահելը նման է թղթադարանը ընկերներով, արժեքներով և ճշմարտություններով լցնելուն, որոնք կարելի է հանել ցանկացած պահի, աշխարհի ցանկացած վայրում:

Մեծ զորություն է պարունակվում սուրբ գրությունները մտապահելու մեջ: Մտապահել սուրբ գրությունը նման է նոր ընկերություն ստեղծելուն: Այն նման է նոր անձի հայտնաբերելուն, որը կարող է օգնել կարիքի ժամանակ, ոգեշնչում և սփոփանք պարգևել և լինել անհրաժեշտ փոփոխության համար լիցքի աղբյուր: Օրինակ, այս սաղմոսը մտապահելու որոշումը ինձ համար եղել է զորության և հասկացողության աղբյուր:

«Տիրոջն է երկիրը և նորա լիությունը. Աշխարհը և նորա բնակիչները:

Որովհետև նա ինքը ծովերի վրա հիմնեց նորան, և նորան գետերի վրա հաստատեց:

Ո՞վ վեր կգնա Աստծո սարը, և ո՞վ կկանգնի նորա սրբության տեղումը:

Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով. Որ իր անձը անիրավության չէ տալիս, և երդում չէ անում նենգությունով:.

Նա օրհնություն կստանա Տերից և արդարություն՝ իր փրկության Աստվածանից» (Սաղմոս 24.1–5):

Նման սուրբ գրության շուրջ խորհելը մեծ ուղղություն է տալիս կյանքում: Սուրբ գրությունները կարող են ձևավորել աջակցության հիմք: Դրանք կարող են լինել կամեցող ընկերների մի ահռելի աղբյուր, որոնք կարող են օգնել մեզ: Մտապահված սուրբ գրությունը դառնում է հավերժական

ընկեր, որի զորությունը չի պակասում ժամանակի ընթացքում:

Սուրբ գրության հատվածի մասին խորհելը կարող է դառնալ բանալի, որը բացում է Սուրբ Հոգու կողմից տրվող հայտնությունը, ուղղությունը և նեշնչումը: Սուրբ գրությունները կարող են խաղաղեցնել անհանգիստ հոգին, պարգևել խաղաղություն, հույս և վերականգնել վստահությունը՝ կյանքի խնդիրները հաղթահարելու ունակության հանդեպ: Դրանք կրում են ներուժ, որը կարող է բուժել մեր հոգեբանական խնդիրները, երբ կա հավատք առ Փրկիչ: Դրանք կարող են խթանել ֆիզիկական ապաքինումը:

Սուրբ գրությունները կարող են մեր կյանքի տարբեր ժամանակներ տարբեր նշանակություններ ձեռք բերել՝ կախված մեր կարիքներից: Սուրբ գրությունը, որը մենք, հնարավոր է, կարդացած լինենք շատ անգամ, կարող է իմաստային այնպիսի երանգներ հաղորդել, որոնք թարմություն և ներշնչում կտրամադրեն, երբ մենք հանդիպում ենք կյանքի դժվարություններին:

Ինչպե՞ս եք դուք անձնապես օգտագործում սուրբ գրությունները: Դուք նշումներ անո՞ւմ եք ձեր գրքում: Դուք գրառումներ կատարո՞ւմ եք էջաեզրում, որպեսզի հիշեք հոգևոր ուղղորդության պահը կամ փորձառությունը, որը ձեզ կարևոր դաս է ուսուցանել: Դուք օգտագործո՞ւմ եք բոլոր ստանդարտ աշխատանքները, ներառյալ՝ Հին Կտակարանը: Ես թանկարժեք ճշմարտություններ եմ գտել Հին Կտակարանի էջերում, որոնք հիմնարար բաղադրիչներ են ճշմարտության այն հիմքի համար, որն առաջնորդում է իմ կյանքը և գործում որպես միջոց, երբ ես փորձում եմ կիսվել ավետարանի ուղերձով ուրիշների հետ: Այդ պատճառով ես սիրում եմ Հին Կտակարանը: Դրա էջերում սփռված ես ճշմարտության թանկարժեք մարգարիտներ եմ գտնում: Օրինակ.

«Եվ Սամուելն ասեց. Մի՞թե Տերը այնքան հավանում է ողջակեզների և զոհերի ինչպես Տիրոջ ձայնին լսելուն. Ահա հնազանդությունը զոհից լավ է, և ականջ դնելը խոյերի ճարպիցը» (Ա Թագավորաց 15.22):

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր:

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորնա, և նա կուղղէ քո ճանապարհները:

Դու քո աչքի առաջին իմաստուն մի լինիր, վախիր Տերիցը և հեռացիր չարից: . . .

Որդեակս, մի անարգիր Տիրոջ խրատը, և նորա հանդիմանությունիցը մի ձանձրանար.

Որովհետև Տերը որին որ սիրում է՝ հանդիմանում է, և ինչպես մեկ հայր, որ իր որդին սիրում է:

Երանի այն մարդին որ իմաստություն է գտել, և այն մարդին, որ հանճար է ստանում» (Առակաց 3.5–7, 11–13):

Նոր Կտակարանը նույնպես աղամանդե ճշմարտության աղբյուր է հանդիսանում.

Յիսուսն էլ ասեց նորան. Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը:

Սա է առաջին եւ մեծ պատուիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս:

Այս երկու պատվիրանքից կախված են բոլոր օրենքը և մարգարերքը» (Մատթեոս 22.37–40):

«Եվ Տերն ասեց. Սիմոն, Սիմոն. Ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղէ ցորենի պես.

Բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի. և դու երբոր դառնաս, եղբայրներիդ հաստատիր:

«Նա էլ ասեց նորան. Տեր ես պատրաստ եմ քեզ հետ բանտը և

մահն էլ գնալու։

Եվ նա ասեց. Ասում եմ քեզ, Պետրոս, այսօր հավը չի խոսիլ, մինչև դու երեք անգամ ուրանաս՝ թե ինձ չգիտես։ . . .

Մի աղախին տեսնելով նորան՝ լույսի մոտ նստած, դիտեց նորա վերայ և ասեց. Սա էլ նորա հետ էր։

Բայց նա ուրացավ և ասեց. Ով կին, ես նորան չգիտեմ։

Եվ քիչ մի հետո ուրիշը տեսավ նորան և ասեց. Դու էլ նորանցից ես։ Պետրոսն էլ ասեց. Ով մարդ, չեմ։

Եվ մեկ ժամի չափ էլ որ անցավ, մեկ ուրիշը վիճում էր և ասում. Ճշմարիտ որ սա էլ նորա հետ էր. Որովհետև Գալիլեացի է։

Պետրոսն էլ ասեց. Մարդ, ես չգիտեմ, թե դու ինչ ես ասում. և իսկույն նա դեռ ասելիս՝ հավը խոսեց։

Եվ Տերը դարձավ մտիկ արավ Պետրոսին, և Պետրոսը հիշեց Տիրոջ խոսքը, որ ասեց նորան, թե մինչև հավի խոսելը, երեք անգամ կուրանաս ինձ։

Եվ Պետրոսը դուրս գնաց դառնապես լացավ» (Ղուկաս 22.31–34, 56–62)։

Որքան է ցավում սիրտս նրա համար, ինչ տեղի ունեցավ Պետրոսի հետ։

Վարդապետություն և Ուխտերից այս սուրբ գրությունը առատորեն օրհնել է իմ կյանքը. «Մի փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ, նախ փնտրիր ձեռք բերել իմ խոսքը, և հետո քո լեզուն պիտի արձակվի. հետո, եթե կամենաս, դու կունենաս իմ Հոգին և իմ խոսքը, այո, Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար» (ՎևՈ 11.21)։

Իմ դատելով, Մորմոնի Գիրքը ուսուցանում է ճշմարտություններ առանձնահատուկ հստակությամբ և զորությամբ։ Օրինակ.

«Եվ արդ, ես կկամենայի, որ դուք լինեիք խոնարհ, և լինեիք հլու ու մեղմ. մատչելի աղերսելու համար. լի համբերությամբ ու երկայնամտությամբ՝ լինելով ժուժկալ բոլոր բաներում. լինելով ջանասեր Աստծո պատվիրանները պահելիս բոլոր դեպքերում. խնդրելով ինչ բաների կարիք որ դուք ունեք՝ և հոգևոր և աշխարհիկ. միշտ վերադարձնելով գոհություն Աստծուն, ինչ բաների համար որ դուք ստանում եք։

Եվ տեսեք, որ դուք ունենաք հավատք, հույս և գթություն, և այն ժամանակ դուք միշտ կհարստանաք բարի գործերով» (Ալմա 7.23–24)։

Եվս մեկը.

«Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է։

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, եթե դուք չունեք գթություն, դուք ոչինչ եք, քանզի գթությունը երբեք չի խափանվում։ Ուստի, հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն,

Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի։

Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր» (Մորոնի 7.45)։

Իմ թանկագին կինը՝ Ջենինը, սիրում էր Մորմոնի Գիրքը։ Իր դեռահաս տարիներին այն դարձավ նրա կյանքի հիմքը։ Այն վկայության և ուսուցանման աղբյուր էր նրա լիաժամկետ միսիոներական ծառայության ընթացքում՝ Միացյալ Նահանգների հյուսիս-արևմտյան մասում։ Երբ մենք ծառայում էինք միսիայում Կորդոբայում, Արգենտինա, նա մեծապես խրախուսում էր օգտագործել Մորմոնի Գիրքը մեր քարոզչական աշխատանքում։ Դեռ իր կյանքի վաղ տարիներին Ջենինը համոզվել էր, որ նրանք, ովքեր հետևողականորեն կարդում են Մորմոնի Գիրքը, օրհնվում են Տիրոջ Հոգու ավելի մեծ չափաբաժնով, ավելի մեծ վճռականություն են ունենում հնազանդվելու Նրա պատվիրաններին և ավելի ամուր վկայություն են ունենում Աստծո Որդու աստվածային էության մասին։[1] Ես չգիտեմ, թե քանի տարի շարունակ, երբ մոտենում էր տարվա վերջը, ես տեսնում էի, ինչպես նա լուռ նստած ուշադրությամբ կարդում և ավարտում էր ամբողջ Մորմոնի Գիրքը՝ ևս մեկ անգամ մինչև կբոլորեր տարին։

1991թ. ես ցանկացա Սուրբ Ծննդյան հատուկ մի նվեր անել իմ ընտանիքին։ Այդ ցանկության կատարման մասին իմ անձնական օրագրում հետևյալ գրառումն է կատարվել. «Ժամը 12:38-է, չորեքշաբթի, 18 դեկտեմբերի, 1991թ.։ Ես հենց նոր ավարտեցի Մորմոնի Գրքի առդիհձայնագրումը իմ ընտանիքի համար։ Այդ փորձառությունը խորացրել է այս աստվածային աշխատանքի մասին իմ վկայությունը և մեծացրել իմ ցանկությունը՝ ավելի լավ ծանոթանալու դրա էջերի հետ, որպեսզի կարողանամ այս սուրբ գրքից քաղել ճշմարտություններ, որոնք կօգտագործվեն Տիրոջը իմ ծառայության ընթացքում։ Ես սիրում եմ այս գիրքը։ Ես վկայում եմ իմ հոգով, որ այն ճշմարիտ է, որ այն պատրաստվել է Իսրայելի Տան օրհնության նպատակով և որ դրա բոլոր մասերը սփռված են աշխարհով մեկ։ Բոլոր նրանք, ովքեր կուսումնասիրեն դրա ուղերձը խոնարհությամբ, հավատքով առ Հիսուս Քրիստոսը, կիմանան դրա ճշմարտացիության մասին և մեծ գանձեր կգտնեն, որոնք կառաջնորդեն իրենց դեպի ավելի մեծ երջանկություն, խաղաղություն և հաջողություն այս կյանքում։ Ես վկայում եմ ողջ սրբությամբ, այս գիրքը ճշմարիտ է»։

Թող որ մեզանից յուրաքանչյուրը սուրբ գրությունների ուսումնասիրության արդյունքում իր համար գտնի օրհնությունների հարստությունը։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Gordon B. Hinckley, “A Testimony Vibrant and True,” *Liahona,* Aug. 2005, 6:

Բարբարա Թոմսոն
Սփոփող Միության Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Անձնական հայտնություն և վկայություն

Եթե մենք ջանասիրաբար պահենք պատվիրանները և խնդրենք հավատքով, պատասխանները կգան Տիրոջ ուրույն ճանապարհով և Նրա ուրույն ժամանակին:

Շատ տարիներ առաջ, երբ ես քոլեջի ուսանող էի, լսում էի գերագույն համաժողովը ռադիոյով, քանի որ մենք հեռուստացույց չունեինք մեր փոքրիկ բնակարանում: Համաժողովի խոսնակները հրաշալի էին և ես վայելում էի Սուրբ Հոգու հզոր ազդեցությունը:

Ես շատ լավ հիշում եմ, երբ Բարձրագույն Իշխանություններից մեկը խոսում էր Փրկչի և Նրա ծառայության մասին և բերեց իր վկայությունը, Սուրբ Հոգին իմ հոգում հաստատեց, որ նա ճշմարտություն էր ասում: Այդ պահին, ես կասկած չունեի, որ Փրկիչն ապրում է: Ես կասկած չունեի, որ անձնական հայտնություն եմ ստանում, որն ինձ հաստատում է, որ «Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է»:[1]

Ութ տարեկանում ես մկրտվեցի, հաստատվեցի և ստացա Սուրբ Հոգու պարգևը: Այն ժամանակ դա հիանալի օրհնություն էր, սակայն էլ ավելի մեծ կարևորություն ձեռք բերեց, երբ ես մեծացա և զգացի Սուրբ Հոգու ազդեցությունը տարբեր եղանակներով:

Հաճախ, երբ մենք մանկությունից մեծանում ենք, հասնելով պատանեկությանը, ապա չափահաս տարիքի, մենք դժվարությունների և փորձությունների ենք հանդիպում, որոնց շնորհիվ մենք հասկանում ենք, որ կարիք ունենք աստվածային օգնության, որը գալիս է Սուրբ Հոգու միջոցով: Երբ պայքարի առաջ ենք կանգնում, հաճախ հարց ենք տալիս. «Ո՞րն է իմ խնդրի լուծումը» և «Ինչպե՞ս իմանամ, ինչ անել»:

Ես հաճախ հիշում եմ Մորմոնի Գրքի պատմությունն այն մասին, ինչպես Լեքին ուսուցանում էր ավետարանը իր ընտանիքին: Նա նրանց հետ կիսվեց բազմաթիվ հայտնություններով և ուսմունքներով այն ամենի մասին, ինչ պետք է տեղի ունենար վերջին օրերին: Նեփին փնտրում էր Տիրոջ ուղղությունը, որպեսզի ավելի լավ հասկանար իր հոր ուսմունքները: Նա բարձրացվեց, օրհնվեց և ոգեշնչվեց, որպեսզի իմանար, որ իր հոր ուսմունքները ճշմարիտ էին: Դա թույլ տվեց Նեփիին ուշադիր հետևել Տիրոջ պատվիրաններին և ապրել արդարակյաց կյանքով: Նա անձնական հայտնություն ստացավ, որն առաջնորդում էր իրեն:

Մյուս կողմից, նրա եղբայրները վիճում էին միմյանց հետ, որովհետև չէին հասկանում իրենց հոր ուսմունքները: Նեփին այդ ժամանակ շատ կարևոր հարց տվեց. «Դուք հարցրե՞լ եք Տիրոջը»:[2]

Նրանց պատասխանը թույլ էր. «Ոչ, չենք հարցրել. քանի որ Տերն այդպիսի բան մեզ հայտնի չի դարձնում»:[3]

Նեփին օգտվեց այդ հնարավորությունից՝ ուսուցանելու համար իր եղբայրներին ստանալ անձնական հայտնություն: Նա ասաց. «Դուք չե՞ք հիշում այն բաները, որ Տերն ասել է. Եթե դուք չկարծրացնեք ձեր սրտերը և խնդրեք ինձ հավատքով, հավատալով որ կստանաք, ջանասիրությամբ պահելով իմ պատվիրանները, իհարկե, այս բաները հայտնի կդարձվեն ձեզ»:[4]

Անձնական հայտնություն ստանալու ճանապարհը շատ հստակ է: Մենք պետք է ցանկանանք հայտնություն ստանալ, մենք չպետք է կարծրացնենք մեր սրտերը, ապա մենք պետք է խնդրենք հավատքով, անկեղծ հավատալով, որ կստանանք պատասխան, և պարտաճանաչ պահել Աստծո պատվիրանները:

Այս ուղուն հետևելը չի նշանակում, որ ամեն անգամ Աստծուն հարցնելուց, մենք անմիջապես մանրամասն պատասխան կստանանք: Սակայն, դա նշանակում է, որ, եթե մենք ջանասիրաբար պահենք պատվիրանները և խնդրենք հավատքով, պատասխանները կգան Տիրոջ ուրույն ճանապարհով և Նրա ուրույն ժամանակին:

Երբ երեխա էի, մտածում էի, որ անձնական հայտնությունը կամ աղոթքների պատասխանները գալիս են լսելի ձայնով: Իսկապես, երբեմն հայտնությունը գալիս է իրական ձայնով: Սակայն, ես հասկացել եմ, որ Հոգին խոսում է տարբեր ճանապարհներով:

Վարդապետություն և Ուխտերի բաժին 6-ում բացատրվում են այն ճանապարհները, որոնցով մենք կարող ենք հայտնություն ստանալ.

«Դու հարցրել ես ինձ, և ահա, այնքան հաճախ, որքան հարցրել ես ինձ, դու հրահանգներ ես ստացել իմ Հոգուց»:[5]

«Ես լուսավորել եմ քո միտքը»:[6]

«Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ»:[7]

Մյուս սուրբ գրություններում մենք ավելին ենք սովորում հայտնություն ստանալու մասին.

«Ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում: Արդ, ահա, սա է հայտնության ոգին»:[8]

«Ես այնպես կանեմ, որ կուրծքդ կայրվի քո ներսում. ուստի, դու պիտի զգաս, որ դա ճիշտ է»:[9]

«Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին»:[10]

Առավել հաճախ անձնական հայտնությունը գալիս է, երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, լսում և հետևում ենք մարգարեների և Եկեղեցու մյուս ղեկավարների խորհրդին, և աշխատում ենք ապրել հավատքով լի և արդարակյաց կյանքով: Երբեմն, հայտնությունը գալիս է սուրբ գրությունների միայն մեկ հատվածից կամ համաժողովի ելույթի մեկ տողից: Մի գուցե, ձեր պատասխանը գա, երբ Երեխաների խումբը սքանչելի երգ երգի: Սրանք բոլորը հայտնության տարբեր եղանակներ են:

Վերականգնման վաղ տարիներին, շատ անդամներ ջանասիրաբար հայտնություն են փնտրել և օրհնվել ու ոգեշնչում են ստացել, իմանալով, թե ինչ պետք է անեն:

Քույր Էլիզա Ռ. Մնոուն մարգարե Բրիգամ Յանգից հանձնարարություն ստացավ՝ օգնելու բարձրացնել և ուսուցանել Եկեղեցու քույրերին: Նա ուսուցանում էր, որ առանձին կանայք կարող են ներշնչում ստանալ իրենց անձնական կյանքի, ընտանիքների և իրենց Եկեղեցու պարտականությունների վերաբերյալ: Նա ասել է. «Ասացեք քույրերին առաջ գնալ և կատարել իրենց պարտականությունները, հեզությամբ և հավատքով, և Աստծո Հոգին կիջնի նրանց վրա և նրանք կօրհնվեն իրենց ջանքերում: Խնդրեք նրանց իմաստություն փնտրել զորության փոխարեն, և նրանք կունենան ողջ զորությունը, որի կիրառման համար իմաստություն կունենան»:[11]

Քույր Մնոուն սովորեցնում էր քույրերին առաջնորդություն փնտրել Սուրբ Հոգուց: Նա ասել է, որ Սուրբ Հոգին «բավարարում և լցնում է մարդկային սրտի ամեն ցանկություն, և լրացնում է ամեն անօգ տարածք: Երբ մենք լցվում ենք Հոգով, իմ հոգին հագեցած է»:[12]

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը սովորեցրել է, որ «հայտնությունը և վկայությունը միշտ չէ, որ ահռելի ուժով են գալիս: Շատերի համար, վկայությունը գալիս է դանդաղ՝ մաս-մաս»: Նա շարունակում է. «Եկեք ջանասիրաբար փնտրենք անձնական վկայության լույսը: Եկեք աղերսենք Տիրոջը, որ մեր միտքը և հոգին վառի հավատքի կայծով, որը մեզ թույլ կտա ստանալ և հասկանալ Սուրբ Հոգու աստվածային ծառայությունը»:[13]

Մեր վկայությունները ամրացնում և ուժեցանում են մեզ, երբ մենք հանդիպում ենք մեր ամենօրյա կյանքի խնդիրներին: Որոշ մարդիկ պայքարում են առողջական լուրջ խնդիրների դեմ, մյուսները ֆինանսական խնդիրներ ունեն, ոմանք խնդիրներ ունեն իրենց ամուսնության կամ երեխաների հետ: Ոմանք տառապում են միայնակությունից կամ չիրականացված հույսերից և երազանքներից: Մեր վկայությունն է, առ Տեր Հիսուս Քրիստոս մեր հավատքի և փրկության ծրագրի մասին մեր գիտելիքի հետ մեկտեղ, որ օգնում է մեզ անցնել փորձության և դժվարության այդ ժամանակների միջով:

Իմ արքայության դուստրերը գրքում մենք կարդում ենք քույր Հեդվիգ Բիռեյչելի մասին, որը Գերմանիայում շատ է տառապել վշտից և զրկանքներից Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ: Իր սիրո և գթասիրտ էության շնորհիվ, անգամ մեծ կարիքի պահերին, նա պատրաստակամությամբ կիսվում էր ուտելիքով պատերազմի քաղցած բանտարկյալի հետ: Հետագայում, երբ նրան հարցրեցին, թե ինչպես էր կարողացել «պահել վկայությունը այդ բոլոր փորձությունների ընթացքում», նա պատասխանեց. «Ես չէի պահում վկայությունը այդ տարիների ընթացքում. դա վկայությունն էր, որ պահում էր ինձ»:[14]

Եթե մենք ունենք ամուր վկայություն, դա չի նշանակում, որ այն միշտ այդպիսին կմնա: (Մենք պետք է սնուցենք և ամրացնենք այն, որպեսզի այն բավականին զորութուն ունենա մեզ պահելու համար:) Սա այն պատճառներից մեկն է, որոնցով մենք «հաճախ հավաքվում ենք», որպեսզի ճաշակենք հաղորդությունից, նորոգենք մեր ուխտերը և «սնվենք Աստծո

բարի խոսքով»: Աստծո բարի խոսքն է, որ պահում է մեզ «շարունակ . . . արթուն աղոթքում, ապավինելով միմիայն Քրիստոսի արժանիքներին, որը [մեր] հավատքի հեղինակն ու ամբողջացնողն էր»:[15]

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը սովորեցրել է մեզ. «Եթե դուք պատշաճ ձևով փնտրում եք հայտնության հոգին և կիրառում այն, ես խոստանում եմ, որ դուք «կքայլեք Տիրոջ լույսով» (Եսայիա 2.5; 2 Նեփի 12.5): Երբեմն հայտնության հոգին կգործի անմիջապես և ուժգին, երբեմն՝ հանդարտ և աստիճանաբար, իսկ հաճախ՝ այնքան նուրբ, որ դուք անգամ գիտակցաբար չեք զգա դա: Սակայն, անկախ այն ստանալու ձևից, դրա լույսը կլուսավորի և կխորացնի ձեր հոգին, կմեծացնի ձեր հասկացողությունը (տես Ալմա 5.7; 32.28), և կուղղորդի և կպաշտպանի ձեզ և ձեր ընտանիքին»:[16]

Տերը ցանկանում է օրհնել մեզ մեր կյանքում Իր առաջնորդությամբ, իմաստությամբ և ուղղությամբ: Նա ցանկանում է թափել մեզ վրա Իր Հոգին: Կրկին, անձնական հայտնության համար մենք պետք է ցանկանանք հայտնություն ստանալ, մենք չպետք է կարծրացնենք մեր սրտերը, ապա մենք պետք է խնդրենք հավատքով, անկեղծ հավատալով, որ կստանանք պատասխան, և պարտաճանաչ պահելով Աստծո պատվիրանները: Այդ ժամանակ, երբ մենք փնտրենք մեր հարցերի պատասխանները, Նա կօրհնի մեզ Իր հոգով: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 46.13:
2. 1 Նեփի 15.8:
3. 1 Նեփի 15.9:
4. 1 Նեփի 15.11; տես նաև հատված 10:
5. Վարդապետություն և Ուխտեր 6.14:
6. Վարդապետություն և Ուխտեր 6.15:
7. Վարդապետություն և Ուխտեր 6.23:
8. Վարդապետություն և Ուխտեր 8.2.3:
9. Վարդապետություն և Ուխտեր 9.8:
10. Վարդապետություն և Ուխտեր 11.13:
11. *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 45.
12. *Daughters in My Kingdom,* 46.
13. Dieter F. Uchtdorf, "Your Potential, Your Privilege," *Liahona,* May 2011, 60.
14. Տես *Daughters in My Kingdom,* 79:
15. Մորոնի 6.4–6:
16. David A. Bednar, "The Spirit of Revelation," *Liahona,* May 2011, 90.

Երեց Լ. Վիթնի Քլեյթոն
Յոթանասունի Նախագահությունից

Ժամանակը պիտի գա

Ձեզ հետ ես կանգնած եմ ապշահար, տեսնելով, թե ինչպես է այս աշխատանքն առաջ մղվում հրաշալի, սքանչելի և անդիմադրելի ձևով:

Որպես երիտասարդ միսիոներ ես մի քանի ամիս ծառայել եմ Պերույում՝ Լիմայի կենտրոնում: Այդ պատճառով ես անցել եմ Պլազա դե Ռիմասը շատ անգամներ: Կառավարության Պալատը՝ Պերույի նախագահի պաշտոնական նստավայրը, նայում է հրապարակին: Իմ ընկերակիցներն ու ես հրավիրեցինք պալատի մարդկանց լսել վերականգված ավետարանը: Այն ժամանակ ես հաճախ էի մտածում, թե ինչ կլիներ, եթե մտնեինք պալատ, բայց այդ անելու նույնիսկ միտքը թվում էր խիստ անիրական:

Անցած տարի Երեց Դ.Թոդ Քրիստոֆերսոնը՝ Տասներկուս Առաքյալների Քվորումից, և մի քանի այլ անձինք և ես հանդիպեցինք Ալան Գարսիայի հետ, որն այն ժամանակ Պերույի նախագահն էր, որի նստավայրը Կառավարության Պալատում էր: Մեզ ցույց տվեցին դրա գեղեցիկ սենյակները և մեզ սրտաբաց ընդունեց Նախագահ Գարսիան: Երիտասարդ միսիոների իմ խոհերը պալատի վերաբերյալ իրականացան այնպես, ինչպես ես երբեք չէի կարող երազել 1970 թվականին:

Շատ բաներ են փոխվել Պերույում իմ միսիոներ լինելուց ի վեր, հատկապես՝ Եկեղեցու համար: Այն ժամանակ այնտեղ կային մոտ 11000 Եկեղեցու անդամներ և միայն մեկ ցից: Այսօր կան ավելի քան 500000 անդամ և մոտ 100 ցից: Քաղաքներում, որտեղ կային անդամների միայն փոքրիկ խմբեր, այժմ աշխույժ ցցերն ու գրավիչ ժողովատները զարդարում են երկիրը: Նույնը տեղի է ունեցել ողջ աշխարհով մեկ շատ այլ երկրներում:

Եկեղեցու այս նշանավոր աճը արժե բացատրել: Մենք սկսում ենք Հին կտակարանի մարգարեությամբ:

Դանիելը եբրայեցի ստրուկ էր Բաբելոնում: Նրան հնարավորություն տրվեց մեկնաբանել թագավոր Նաբուգոդոնոսորի երազը: Դանիելը խնդրեց Աստծուն հայտնել իրեն երազը և դրա մեկնաբանությունը, և նրա աղոթքը պատասխան ստացավ: Նա ասաց Նաբուգոդոնոսորին. «Բայց կայ Աստուած երկնքումը՝ գաղտնիքներ յայտնող, եւ նա յայտնում է Նաբուգոդոնոսոր թագավորին ինչ որ պիտի լինի յետին օրերումը: Գլխիդ տեսիլքը քո անկողնի վերայ սա է»: Դանիելը ասաց, որ թագավորը գլխով, կրծքավանդակով, ձեռքերով, ոտքերով և ոտնաթաթերով մի սոսկալի պատկեր էր տեսել: Մի քար պոկվեց սարից և առաջ

գլորվեց, աստիճանաբար մեծանալով չափսերով: Այդ քարը զարկվեց արձանին և փշրեց այն, «բայց այն քարը, որ զարկեց արձանին, մեծ սար եղավ եւ լցրեց բոլոր երկիրը»:

Դանիելը բացատրեց, որ արձանը ներկայացնում էր ապագա քաղաքական թագավորությունները և որ «այդ [ապագա] թագաւորների օրերումը երկնքի Աստուածը մէկ թագաւորութիւն է վեր կացնելու, որ յաւիտեանս չի ավերուիլ. . . . նա պիտի փշրէ եւ վերջացնէ այս բոլոր թագավորութիւնները. Իսկ նա ինքը կմնայ յաւիտեանս»:[1]

Մենք այժմ գնում ենք ավելի ուշ ժամանակներ: Մորոնի հրեշտակն առաջին անգամ հայտնվեց Ջոզեֆ Սմիթին 1823 թվականին և ասաց նրան, որ «Աստված աշխատանք ունի [նրա] համար՝ կատարելու. և որ [նրա] անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ»:[2] Մորոնիի ուղերձը պետք է որ ապշեցրած լիներ Ջոզեֆին, որն ընդամենը 17 տարեկան էր:

1831 թվականին, Տերն ասաց Ջոզեֆին, որ Աստծո արքայության բանալիները, կրկին «վստահված են մարդուն երկրի վրա»: Նա ասաց. «ավետարանը կգլորվի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, մինչև որ լցնի ողջ երկիրը»,[3] ճիշտ ինչպես Դանիելն էր ասել Նաբուգոդոնոսորին:

1898 թվականին Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը պատմեց Կիրթլենդում քահանայության ժողովին իր փորձառության մասին, որը նա ունեցել էր 1834 թվականին, երբ նոր անդամ էր: Նա պատմեց. «Մարգարեն կանչեց բոլորին, ովքեր քահանայություն էին կրում, հավաքվել փոքրիկ զերանաշեն դպրոցում: Այն փոքրիկ տնակ էր, գրեթե 14 քառակուսի ֆուտ: Երբ հավաքվեցինք, Մարգարեն կոչ արեց Իսրայելի երեցներին վկայություն բերել այս աշխատանքի վերաբերյալ: . . . Երբ նրանք վերջացրեցին, մարգարեն ասաց. «Եղբայրներ, այստեղ, այս երեկո ես լավ խրատվեցի և ուսուցանվեցի ձեր վկայություններով, բայց ես ուզում եմ ասել ձեզ Տիրոջ առաջին, որ դուք ավելի շատ բան չգիտեք այս Եկեղեցու և թագավորության ճակատագրի մասին, քան իր մոր գրկում եղող մանկիկը: Դուք չեք երևակայում: . . . Սա ընդամենը մի փոքրիկ քահանայություն է, որ դուք տեսնում եք այստեղ, այս երեկո, բայց այս Եկեղեցին կլցնի Հյուսիսային և Հարավային Ամերիկան, այն կլցնի աշխարհը»:[4]

Այս մարգարեությունները որ.

- Աստծո արքայությունը սարից պոկված քարի նման կլցնի աշխարհը,
- Ջոզեֆ Սմիթի անունը հայտնի կդառնա ողջ աշխարհում, և
- Եկեղեցին կլցնի Ամերիկաները և կլցնի աշխարհը,

հավանաբար ծիծաղելի կթվային 170 տարի առաջ: Հավատացյալների փոքրիկ խումբը, որը հազիվ էր հայթհայթում իր ապրուստը Ամերիկայի չբնակեցված մասում և տեղափոխվում հալածանքից խուսափելու համար, նման չէր հավատքի այն հիմնաքարին, որը պիտի անցներ միջազգային սահմանները և ամենուրեք սրտեր ներթափանցեր:

Բայց դա հենց այն էր, ինչ պատահեց: Թույլ տվեք բերել մի օրինակ:

1925 թ. Սուրբ Ծննդյան օրը Երեց Մելվին Ջ. Բալլարդը Բուենոս Այրեսում, Արգենտինա, նվիրագործեց Հարավային Ամերիկայի ողջ մայր-ցամաքը Հիսուս Քրիստոսի ավետարանի քարոզման համար: Մինչև 1926 թ. օգոստոսը մի բուռ նորադարձներ մկրտվեցին: Նրանք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին անդամներն էին, ովքեր մկրտվեցին ողջ Հարավային Ամերիկայում: Դա 85 տարի առաջ էր՝ այսօր այս համաժողովը լսողներից շատերի կյանքի չափ:

Բուենոս Այրեսում այսօր կա Սիոնի 23 ցից, իսկ Արգենտինայում ընդհանուր առմամբ մեծ թվով ցցեր և տասնյակ հազարավոր Եկեղեցու անդամներ կան՝ մեծ և փոքր քաղաքներում: Այսօր, Հարավային Ամերիկայում կան ավելի քան 600 ցցեր և մի քանի միլիոն Եկեղեցու անդամներ: Մենք տեսնում ենք, թե ինչպես է Աստծո արքայությունը լցնում մայր-ցամաքը, և Ջոզեֆ Սմիթի անունը հրապարակվում ինչպես մեր կողմից, այնպես էլ նրա քննադատների կողմից այն երկրներում, որոնց մասին երևի իր կյանքի ընթացքում նա չէր էլ լսել:

Այսօր ողջ աշխարհում Եկեղեցին ունի մոտ 3000 ցից՝ Բոստոնից մինչև Բանգկոկ, և Մեխիկոյից մինչև Մոսկվա: Ծխերի և ճյուղերի

Մոնտեվիդեո, Ուռուգվայ

թիվը մոտենում է 29000-ի: Շատ երկրներում կան լավ կայացած ցցեր՝ անդամներով, որոնց նախնիները նորադարձներ են եղել: Այլ վայրերում նոր անդամների փոքր խմբերը հանդիպում են փոքր ճյուղերով Եկեղեցու վարձակալված տներում: Ամեն տարի Եկեղեցին ավելի է սփռվում երկրագնդով մեկ:

Մի՞թե անհեթեթ են աշխարհը լցնելու և աշխարհում հանրահայտ լինելու մասին այս մարգարեությունները: Գուցե: Անհավանակա՞ն են: Անկասկած: Անհնարի՞ն են: Իհարկե ոչ: Դրանք իրականանում են մեր աչքի առաջ:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նշել է.

«Ասում էին, որ մի ժամանակ արևը երբեք մայր չէր մտնում Բրիտանական կայսրությունում: Այդ կայսրությունն այժմ վերացել է: Բայց ճիշտ է, որ արևը երբեք մայր չի մտնում Տիրոջ այս աշխատանքում, քանի որ այն ազդում է ողջ երկրագնդի մարդկանց կյանքերի վրա:

Եվ սա միայն սկիզբն է: Մենք դեռ հազիվ ենք սկսել իրականացնել այն ամենը, ինչ կամենում ենք: Մեր աշխատանքը սահմաններ չի ճանաչում: . . . Այն ազգերը, որոնք այժմ փակ են մեզ համար, մի օր կբացվեն»:[5]

Այսօր մենք կարող ենք տեսնել, որ Մորմոնի Գրքի մարգարեության իրականացումը մոտենում է.

«Եվ . . . կլինի այնպես որ թագավորները կփակեն իրենց բերանները. Քանզի այն, ինչ չէր ասվել իրենց, նրանք պիտի տեսնեն. Եւ այն, ինչ նրանք չէին լսել, նրանք պիտի հասկանան:

Քանզի այն օրը, Հայրը հանուն ինձ կգործի մի գործ, որը մեծ և զարմանալի գործ կլինի նրանց մեջ»:[6]

Տիրոջ այս աշխատանքն իսկապես մեծ է և զարմանալի, բայց այն առաջ է շարժվում հիմնականում աննկատ քաղաքական, մշակութային և գիտական շատ ղեկավարների համար: Այն ժամանակի մի հատվածում փոխում է մեկ սիրտ և մեկ ընտանիք, ընթանում է լուռ և համեստ, դրա սրբազան ուղերձը օրհնում է մարդկանց ամենուրեք:

Սալվադոր, Բրազիլիա

Մորմոնի Գրքում կա մի հատված, որը հայտնում է այսօր Եկեղեցու զարմանահրաշ աճի գաղտնիքը: «Եվ դեռ ավելին, ես ասում եմ ձեզ, որ պիտի գա ժամանակը, երբ մի Փրկչի մասին գիտելիքը պիտի տարածվի ամենուր՝ ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի մեջ»:[7]

Մեր ամենակարևոր ուղերձը, որը մենք աստվածայնորեն լիազորված ենք և պատվիրված հասցնել աշխարհին, այն է, որ կա Փրկիչ: Նա ապրել է ժամանակի գագաթնակետին: Նա քավել է մեր մեղքերը, խաչվել է և հարություն առել: Այդ անզուգական ուղերձը, որը մենք հայտարարում ենք Աստծուց ստացած իշխանությամբ, Եկեղեցու աճի իրական պատճառն է:

Ես վկայում եմ, որ Նա հայտնվեց Իր Հոր հետ Ջոզեֆ Սմիթին: Հոր ղեկավարության ներքո, Նա նորից հաստատեց Իր ավետարանը երկրի վրա: Նա կրկին երկիր ուղարկեց առաքյալներին, մարգարեներին և քահանայության բանալիները: Նա ղեկավարում է Իր Եկեղեցին կենդանի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով: Այս Եկեղեցին այն քարն է, որը կտրվեց սարից առանց ձեռքի, որը գլորվում է առաջ երկրագնդի վրայով:

Մենք երախտապարտ ենք Ջոզեֆ Սմիթի համար և զարմանքով հետևում ենք, թե ինչպես է նրա անունը, հարգվում և, այո, նույնիսկ անարգվում ավելի լայնորեն, քան երբևէ ողջ երկրագնդում: Բայց մենք հասկանում ենք, որ վերջին օրերի այս հզոր աշխատանքը նրա վերաբերյալ չէ: Դա Ամենազոր Աստծո և Նրա Որդու՝ Խաղաղության Իշխանի աշխատանքն է: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը Փրկիչն է, և ձեզ հետ ես կանգնած եմ ապշահար,տեսնելով, թե ինչպես է այս աշխատանքն առաջ մղվում հրաշալի, սքանչելի և անդիմադրելի ձևով: Իսկապես,«եկել է ժամանակը, երբ Փրկչի մասին մի գիտելիք . . . տարածվում է ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի մեջ»: Ես բերում եմ վկայություն Նրա՝ ողջ մարդկության Փրկչի, և այս աշխատանքի մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դանիել Բ.28, 35, 44; տես նաև հատվածներ 1-45:
2. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33:
3. Վարդապետություն և Ուխտեր 65.2:
4. Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff (2004), 25–26.
5. Gordon B. Hinckley, “The State of the Church,” *Liahona,* Nov. 2003, 7.
6. 3 Նեփի 21.8-9.
7. Մոսիա 3.20:

Երեց Խոսե Լ. Ալոնսո
Յոթանասունից

Անել ճիշտ գործ ճիշտ ժամանակին, առանց հապաղելու

Փրկիչը . . . մեզ մեծ օրինակ ծառայեց, թե ինչպես պետք է առանց հապաղելու օգնել նրանց, ովքեր կորցրել են ուրախությունն ու երջանկությունը:

Մեր օրերում շատ մարդիկ ապրում են տխրության և մեծ շփոթության մեջ: Նրանք չեն գտնում պատասխաններ իրենց հարցերին և անկարող են հոգալ իրենց կարիքները: Ոմանք կորցրել են ուրախության և երջանկության զգացողությունը: Մարգարեները հայտարարել են, որ ճշմարիտ երջանկությունը գտնվում է Քրիստոսի օրինակին ու ուսմունքներին հետևելու մեջ: Նա մեր Փրկիչն է, Նա մեր ուսուցիչն է և Նա մեր կատարյալ օրինակն է:

Նրա կյանքը ծառայության կյանք էր: Երբ մենք ծառայում ենք մեր մերձավորներին, օգնում ենք նրանց, ովքեր կարիքի մեջ են: Այդ ընթացքում մենք կարող ենք գտնել մեր խնդիրների լուծումները: Հետևելով Փրկչի օրինակին, մենք ցույց ենք տալիս մեր սերը մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ, և ավելի ենք նմանվում Նրանց:

Բենիամին թագավորը ասել է ծառայության արժեքի մասին, որ երբ մենք մեր «մերձավորների ծառայության մեջ ենք,[մենք] սոսկ մեր Աստծո ծառայության մեջ ենք»:[1] Յուրաքանչյուր ոք ունի ծառայություն մատուցելու և սեր ցուցաբերելու հնարավորություն:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խնդրել է մեզ հասնել «օգնության» և փրկել ուրիշներին: Նա ասել է. «Մենք կտեսնենք, որ նրանք, ում մենք ծառայում ենք և ովքեր մեր ջանքերի շնորհիվ զգում են Ուսուցչի ձեռքը, դժվարանում են բացատրել այն փոփոխությունը, որը տեղի է ունենում իրենց կյանքում: Ցանկություն է առաջանում հավատարմորեն ծառայել, խոնարհաբար քայլել և ապրել, ավելի շատ նմանվելով Փրկչին: Ստացած լինելով հավերժական խոստումների այս հոգևոր տեսողությունը և գաղափարը, նրանք արձագանքում են կույր մարդու խոսքերին, ում տեսողությունը վերականգնեց Հիսուսը. «Մի բան գիտեմ, որ կույր էի եւ հիմա տեսնում եմ»»:[2]

Ամեն օր մենք հնարավորություն ունենք օգնության հասնելու և ծառայելու՝ անելու ճիշտը ճիշտ ժամանակին, առանց հապաղելու: Մտածեք բազում մարդկանց մասին, ովքեր դժվարանում են աշխատանք գտնել կամ ովքեր հիվանդ են, ովքեր միայնակ են զգում իրենց, նույնիսկ, ովքեր մտածում են, թե կորցրել են ամեն ինչ: Ի՞նչ կարող եք դուք անել օգնելու համար: Պատկերացրեք, որ մի հարևան, ով անձրևին դրսում է մնացել և ում մեքենան փչացել է, ձեզ կանչում է օգնության: Ի՞նչ ճիշտ կլինի անել նրա համար: Ե՞րբ է դա անելու ճիշտ ժամանակը:

Ես հիշեցի մի դեպք, երբ մենք մեր ընտանիքով գնացել էինք Մեխիկո Սիթի՝ մեր երկու երեխաների համար հագուստ գնելու: Նրանք շատ փոքրիկ էին: Մեր ավագ որդին նոր էր դարձել երկու տարեկան, իսկ մեր կրտսեր որդին մեկ տարեկան էր: Փողոցը լի էր մարդկանցով: Մինչ մենք գնումներ էինք կատարում, մեր երեխաների ձեռքերը բռնած, մի պահ կանգ առանք ինչ-որ բան նայելու, և չհասկացանք, թե ինչպես կորցրեցինք մեր ավագ որդուն: Մենք չգիտեինք, թե ինչպես պատահեց, բայց նա մեզ հետ չէր: Առանց մեկ րոպե անգամ հապաղելու մենք վազելով սկսեցինք փնտրել նրան: Մենք փնտրում և կանչում էինք նրան, զգալով մեծ ցավ, մտածելով, որ կարող էինք ընդմիշտ կորցնել նրան: Մտքում մենք աղաչում էինք Երկնային Հորը օգնել մեզ գտնել նրան:

Փոքր ժամանակ անց մենք գտանք նրան: Ահա նա, միամիտ նայում էր խաղալիքներին խանութի ապակու միջով: Մենք գրկեցինք և համբուրեցինք նրան, և խոստացանք ջանասիրաբար հսկել մեր երեխաներին, որպեսզի երբեք չկորցնենք նրանցից որևէ մեկին: Մենք սովորեցինք, որ մեր որդուն օգնության հասնելու համար մենք պլանավորման ժողովների կարիքը չունեինք: Մենք պարզապես գործի անցանք, գնալով և փնտրելով նրան, ով կորել էր: Մենք նաև հասկացանք, որ մեր որդին անգամ չէր էլ գիտակցել, որ կորել էր:

Եղբայրներ և քույրեր, կլինեն շատերը, ովքեր ինչ-որ պատճառով կորել են մեր տեսադաշտից և

ովքեր չգիտեն, որ կորել են: Եթե մենք հապաղենք, մենք կարող ենքէ ընդմիշտ կորցնել նրանց:

Շատերի համար, ովքեր ունեն մեր օգնության կարիքը, անհրաժեշտ չէ ստեղծել նոր ծրագրեր կամ ձեռնարկել բարդ կամ ծախսատար գործեր: Նրանք ունեն միայն ծառայելու մեր վճռականության կարիքը՝ անելու ճիշտը ճիշտ ժամանակին, առանց հապաղելու:

Երբ Փրկիչը հայտնվեց Մորմոնի Գրքի ժողովրդին, Նա մեզ մեծ օրինակ ծառայեց, թե ինչպես պետք է առանց հապաղելու օգնել նրանց, ովքեր կորցրել են ուրախությունն ու երջանկությունը: Ժողովրդին ուսուցանելուց հետո, Նա տեսավ, որ նրանք ի վիճակի չէին հասկանալ Իր բոլոր խոսքերը: Նա հրավիրեց նրանց գնալ իրենց տները և խորհել նրա վերաբերյալ, ինչ ասել էր նրանց: Նա ասաց նրանց աղոթել Հորը և պատրաստել իրենց անձերը հաջորդ օրը կրկին գալու համար, երբ Նա կվերադառնար և կուսուցաներ նրանց:[3]

Երբ Նա ավարտեց, նայեց ժողովրդին և տեսավ, որ նրանք արտասվում էին, քանզի նրանք ցանկանում էին, որ Նա մնար իրենց հետ.

«Եվ նա ասաց նրանց. Ահա, իմ սիրտը լցված է կարեկցանքով հանդեպ ձեզ:

Ունե՞ք ձեր մեջ այնպիսիք, որ հիվանդ են: Բերեք նրանց այստեղ: Ունե՞ք դուք կաղեր, կամ կույրեր, կամ խեղվածներ, կամ հաշմանդամներ, կամ բորոտներ, կամ որ չորացած են, կամ, որ խուլ են, կամ, որ չարչարված են ինչ-որ ձևով: Բերեք նրանց այստեղ, և ես կբժշկեմ նրանց, քանզի ես կարեկցանք ունեմ ձեզ վրա. իմ սիրտը լցված է ողորմությամբ»:[4]

Եվ նրանք բերեցին իրենց հիվանդներին Նրա մոտ, և Նա բուժեց նրանց: Բազմությունը վար խոնարհվեց Նրա ոտքերի մոտ և երկրպագեց Նրան և համբուրեց Նրա ոտքերը, «այնպես որ նրանք լվացին նրա ոտքերն իրենց արցունքներով»: Այնուհետև Նա պատվիրեց նրանց, որ իրենց փոքր երեխաներին բերեն, և Նա օրհնեց

նրանց մեկ առ մեկ:[5] Սա է օրինակը, որ Փրկիչը տվեց մեզ: Նրա սերը բոլորի համար է, սակայն Նա երբեք ոչ ոքի չի մոռանում:

Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը սիրառատ է, հասկանում է մեզ և համբերատար է: Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, նմանապես սիրում է մեզ: Նրանք օգնում են մեզ Իրենց մարգարեների միջոցով: Ես սովորել եմ, որ մեծ ապահովություն կարելի է գտնել, եթե հետևել մարգարեներին: «Օգնությունը» դեռևս շարունակվում է: Նախագահ Մոնսոնն ասել է. «Տերն ակնկալում է, որ մենք մտածենք: Նա ակնկալում է, որ մենք գործենք: Նա ակնկալում է, որ մենք աշխատենք: Նա ակնկալում է, որ մենք վկայենք: Նա ակնկալում է, որ մենք նվիրված լինենք»:[6]

Մենք ունենք պարտականություն և մեծ հնարավորություն: Շատերը պետք է փորձեն Եկեղեցու գործունեության միջոցով կրկին զգալ ուրախության և երջանկության քաղցրությունը: Այդ ուրախությունը գալիս է արարողությունները ստանալու, սուրբ ուխտեր կապելու և դրանք պահելու արդյունքում: Տերը կարիք ունի, որ մենք օգնենք նրանց: Եկեք անենք ճիշտը ճիշտ ժամանակին և առանց հապաղելու:

Ես վկայում եմ, որ Աստված ապրում է և որ Նա մեր Հայրն է: Հիսուս Քրիստոսը ապրում է և տվել է Իր կյանքը, որպեսզի մենք կարողանանք վերադառնալ մեր Երկնային Հոր ներկայությունը: Ես գիտեմ, որ Նա մեր Փրկիչն է: Ես գիտեմ, որ Նրանց անսահման բարությունը շարունակաբար դրսևորվում է մեր կյանքում: Ես վկայում եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Նրանց մարգարեն է և որ սա միակ ճշմարիտ Եկեղեցին է երկրի վրա: Ես գիտեմ, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը Վերականգնման մարգարեն է: Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է: Այն տալիս է մեզ առաջնորդություն և օրինակներ, որոնցով մենք կարող ենք ավելի նմանվել Աստծուն և նրա սիրելի Որդուն: Սա ես հայտարարում եմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 2.17:
2. Thomas S. Monson, “To the Rescue,” *Liahona,* July 2001, 57, 58.
3. Տես 2 Նեփի 17.1–3:
4. 3 Նեփի 17.6–7; տես նաև հատված 5:
5. Տես 3 Նեփի 17.9–12, 21:
6. Thomas S. Monson, *Liahona,* July 2001, 58.

Նախագահ Բոյդ Կ. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Խորհուրդ երիտասարդությանը

Չնայած ընդդիմությանը, փորձություններին և գայթակղություններին, դուք չպետք է ձախողվեք կամ վախենաք:

Ես երիտասարդության հետ խոսում եմ ավելի անհատապես, քան սովորաբար անում եմ, համեմատելով իմ և ձեր երիտասարդությունը:

Դուք անչափ թանկ եք: Ես տեսել եմ ձեզ մեծ թվով երկրներում և ամեն մայրցամաքում: Դուք շատ ավելի լավն եք, քան մենք, երբ երիտասարդ էինք: Դուք ավելի շատ բան գիտեք ավետարանի մասին: Դուք ավելի հասուն եք և ավելի հավատարիմ:

Ես այժմ 87 տարեկան եմ: Դուք գուցե զարմանաք իմ տարիքի պատճառով, ի՞նչով կարող եմ նպաստել ձեր կյանքին: Ես եղել եմ այնտեղ, որտեղ դուք եք և գիտեմ, թե ուր եք գնում: Բույց դուք դեռ չեք եղել այնտեղ, որտեղ ես եմ: Ես մեջբերում կանեմ դասական մի բանաստեղծությունից.

Ձեր ազդավը դանդաղաշարժ է,
Երիտասարդ ազդավը՝ ոչ,
Ինչ որ չգիտի երիտասարդը,
Շատ լավ գիտի ծերը:

Շատ բաներում ձեր ազդավը
Երիտասարդի վարժապետն է,
Այն, ինչ ձեր ազդավը չգիտի,
Մի քիչ արագ քայլելն է:

Երիտասարդ ազդավը թռչում է վեր
ու վար,
Եվ պտտվում ձեր ազդավի շուրջը:
Ինչ երիտասարդ ազդավը չգիտի,
Այն է, թե ուր թռչի:[1]

Վոդսվորթինը չէ, բայց, այնուամենայնիվ, դասական բանաստեղծություն է:

Այն ամենով, ինչ տեղի է ունենում աշխարհում, բարոյական չափանիշների անկումով, դուք երիտասարդներ մեծանում եք թշնամու տարածքում:

Մենք սուրբ գրություններից գիտենք, որ երկնքում պատերազմ եղավ, և որ Լյուցիֆերն ապստամբեց և իր հետևորդների հետ «դուրս գցվեց երկրի վրա»:[2] Նա վճռել է ձախողել մեր Երկնային Հոր ծրագիրը և ձգտում է վերահսկել բոլորի մտքերն ու գործողությունները: Այս ազդեցությունը հոգևոր է, և նա «խամենուրեք] է, երկրի վրա»:[3]

Սակայն, չնայած ընդդիմությանը, փորձություններին և գայթակղություններին, դուք չպետք է ձախողվեք կամ վախենաք:

Երբ 17 տարեկան էի, ավագ դպրոցն ավարտելու շեմին՝ որպես թուլություններով լի սովորական աշակերտ, ինչպես ես էի կարծում, մի կիրակի առավոտ ամեն ինչ հանկարծակի փոխվեց մեր կյանքում: Հաջորդ օրը մեզ կանչեցին ավագ դպրոցի դահլիճ: Բեմի վրա մի աթոռ էր դրված՝ վրան փոքրիկ ռադիոընդունիչ: Տնօրենը միացրեց ռադիոընդունիչը: Այդ ժամանակ մենք լսեցինք Նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի ձայնը, երբ նա հայտարարեց, որ Փերլ Հարբորը ռմբակոծվել է: Միացյալ Նահանգները պատերազմի մեջ էր հայտնվել Ճապոնիայի հետ:

Ավելի ուշ այդ տեսարանը կրկնվեց: ԿրկինՆախագահ Ռուզվելտի ձայնն էր, այս անգամ հայտարարելով, որ մեր երկիրը պատերազմի մեջ էր Գերմանիայի հետ: II Համաշխարհային Պատերազմը պայթեց ողջ աշխարհով:

Միանգամից մեր ապագան դարձավ անորոշ: Մենք չգիտեինք թե ինչ էր սպասվում: Մենք կենդանի կմնայի՞նք ամուսնանալու և ընտանիք կազմելու համար:

Այսօր կան «պատերազմներ և պատերազմների համբավներ, և ողջ երկիրը խառնաշփոթի մեջ [է]»:[4] Դո՛ւք, մեր երիտասարդնե՛ր, հավանաբար, անորոշություն եք զգում ձեր կյանքում: Ես ուզում եմ խորհուրդ տալ և ուսուցանել ձեզ, տալ ձեզ նախազգուշացում որոշ բաների մասին, որոնք պետք է անել և որոշ բաների մասին, որոնք չպետք է անել:

Ավետարանի ծրագիրը «երջանկության մեծ ծրագիրն է»:[5] Ընտանիքը այդ ծրագրի կենտրոնական մասն է կազմում: Ընտանիքը կախված է այն կյանք տվող ուժերի արժանավոր օգտագործումից, որոնք ձեր մարմնում են գտնվում:

«Ընտանիք. Հայտարարություն Աշխարհին» ոգեշնչված փաստաթղթում, որը լույս է ընծայվել Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից, մենք սովորում ենք, որ նախաերկրային կյանքում «մարդ արարածները՝ տղամարդիկ և կանայք, բոլորն արարված են Աստծո պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես

այդպիսին, յուրաքանչյուրն ունի աստվածային բնույթ և ճակատագիր: Մեռը անհատի հիմնական բնութագիրն է նախաերկրային, երկրային և հավիտենական կյանքի և նպատակի . . .

Մենք հայտարարում ենք նաև Աստծո այն պատվիրանը, որ ծնունդ տալու սուրբ զորությունը պետք է օգտագործվի միայն այն տղամարդու և կնոջ միջև, որոնք օրինական ձևով ամուսնացած են որպես ամուսին և կին»:[6]

Այն մեծ պատիժը, որ Լյուցիֆերը և նրա հետևորդները բերեցին իրենց վրա այն էր, որ նրանք չէին կարող ունենալ մահկանացու մարմին:

Գայթակղություններից շատերը, որոնց դուք կդիմակայեք, իհարկե, ամենալուրջ բաները, կապված են ձեր մարմնի հետ: Դուք ոչ միայն զորություն ունեք մարմիններ ստեղծելու նոր սերնդի համար, բայց դուք նաև ունեք ազատ կամք:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է.«Բոլոր էակները, ովքեր մարմիններ ունեն իշխանություն ունեն նրանց վրա, ովքեր չունեն»:[7] Այսպիսով, ամեն կենդանի հոգի, ով ունի ֆիզիկական մարմին, վերջ ի վերջո իշխանություն ունի հակառակորդի վրա: Դուք տանում եք գայթակղություններ ձեր ֆիզիկական էության պատճառով, բայց դուք նաև իշխանություն ունեք նրա և նրա հրեշտակների վրա:

Մինչև մենք կվերջացնեինք ավագ դպրոցը մեր համադասարանցիներց շատերը գնացին պատերազմ՝ նրանցից ոմանք երբեք չվերադառնալու: Մեզանից մնացածը պետք է շուտով զորակոչվեին: Մենք չգիտեինք մեր ապագայի մասին: Արդյոք կգոյատևեի՞նք պատերազմում: Իսկ երբ վերադառնայինք արդյոք որևէ բան մնացած կլինե՞ր աշխարհից:

Քանի որ համոզված էի, որ ինձ էլ կզորակոչէին, ես միացա օդային ուժերին: Շուտով ես նախաթռիչքային ուսուցման համար Սանտա Անայում էի՝ Կալիֆորնիայում:

Այդ ժամանակ ես չունեի ամուր վկայություն, որ ավետարանը ճշմարիտ է, բայց ես գիտեի, որ իմ սեմինարիայի ուսուցիչները՝ Աբել Ս. Ռիչը և Ջոն Փ. Լիլիուայթը, գիտեին, որ այն ճշմարիտ է: Ես լսել էի նրանց վկայելիս և ես հավատում էի նրանց: Ես մտածեցի մտքումս. «Ես կհենվեմ նրանց վկայությունների վրա, մինչև որ իմ սեփականն ունենամ»: Եվ այդպես էլ եղավ:

Ես լսել էի հայրապետական օրհնությունների մասին, բայց դեռ չէի ստեղել այն: Ամեն ցցում կա կարգված հայրապետ, որն ունի մարգարեության ոգին և հայտնության ոգին: Նա լիազորված է տալ անձնական և անհատական օրհնություններ նրանց, ովքեր գալիս են իրենց եպիսկոպոսի կողմից երաշխավորված: Ես գրեցի իմ եպիսկոպոսին երաշխավորագրի համար:

Ջ. Ռոլանդ Սանդստրոմը Սանտա Անա ցցում ապրող կարգված հայրապետն էր: Նա ոչինչ չգիտեր իմ մասին և երբեք նախկինում ինձ չէր տեսել, բայց նա տվեց ինձ իմ օրհնությունը: Դրանում ես գտա պատասխաններ և հրահանգներ:

Չնայած հայրապետական օրհնությունները շատ անձնական են, ես կկիսվեմ մի կարճ մեջբերումով դրանից. «Դու պիտի առաջնորդվես Սուրբ Հոգու շշունջներով և դու պիտի նախազգուշացվես վտանգների դեմ: Եթե ուշադրություն դարձնես այդ զգուշացումներին, մեր Երկնային Հայրը կօրհնի քեզ, որպեսզի դու կարողանաս նորից միավորվել քո հարազատների հետ»:[8]

Այդ *եթե* բառը չնայած փոքր էր տպագրված, ինձ թվաց էջի չափ մեծ: Ես կօրհնվեի վերադառնալ պատերազմից, *եթե* պահեի պատվիրանները և *եթե* ուշադրություն դարձնեի Սուրբ Հոգու հուշումներին: Չնայած այդ պարգևը շնորհվել էր ինձ մկրտության ժամանակ, ես դեռ չգիտեի, թե ինչ էր Սուրբ Հոգին կամ ինչպես էին հուշումները գործում:

Այն ինչ կարիք ունեի իմանալ հուշումների մասին, ես գտա Մորմոնի Գրքում: Ես կարդացի, որ «հրեշտակները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ. Ուստի, նրանք խոսում են Քրիստոսի խոսքերը: Այդ պատճառով . . . սնվեք Քրիստոսի խոսքերով. Քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:[9]

Հավանաբար, միակ մեծագույն բանը, որ ես սովորեցի Մորմոնի Գիրքը կարդալով, այն էր, որ Հոգու ձայնը գալիս է ավելի շուտ որպես *զգացում*, քան հնչյուն: Դուք կսովորեք, ինչպես ես եմ սովորել «լսել» այդ ձայնին, որն ավելի շուտ *զգացվում է*, քան *լսվում*:

Նեփին նախատեց իր ավագ եղբայրներին ասելով. «Դուք տեսաք հրեշտակի, և նա խոսեց ձեզ հետ. այո, դուք լսել եք նրա ձայնը, ժամանակ առ ժամանակ. և նա խոսել է ձեզ հետ՝ մեղմ, հանդարտ ձայնով, բայց դուք *անզգայացած*

էիք, որպեսզի կարողանայիք *զգալ* նրա խոսքերը»:[10]

Որոշ քննադատներ ասում են, որ այս հատվածները սխալ են, որովհետև դուք *լսում* եք խոսքերը, դուք չեք *զգում* դրանք: Բայց եթե դուք որևէ բան գիտեք հոգևոր հաղորդակցության մասին, դուք գիտեք, որ լավագույն բառը, որպեսզի նկարագրեք այն, ինչ տեղի է ունենում, *զգացում* բառն է:

Սուրբ Հոգու պարգևը, եթե թույլատրեք, կառաջնորդի և կպաշտպանի և նույնիսկ կուղղի ձեր գործողությունները: Դա հոգևոր ձայն է, որը գալիս է բանականության մեջ որպես միտք կամ զգացում, որը դրվում է ձեր սրտում: Մարգարե Ենովսն ասել է. «Տիրոջ ձայնը եկավ իմ մտքի մեջ»:[11] Եվ Տերն ասաց Օլիվեր Քաուդերիին. «Ահա, ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա»:[12]

Հասկանալի է, որ ձեր կյանքի չի լինի առանց սխալների, սակայն եթե մեծ սխալի առաջ կանգնեք, Սուրբ Հոգին ձեզ կնախազգուշացնի դրա մասին: Այս խոստումը վերաբերվում է Եկեղեցու բոլոր անդամներին:

Ոմանք կգործեն օրհասական լուրջ սխալներ՝ օրինազանցելով ավետարանի օրենքները: Այստեղ ժամանակն է հիշեցնելու ձեզ Քավության մասին և լիակատար ներման մասին մինչև այն կետը, որ դուք կարող եք կրկին մաքուր դառնալ: Տերն ասել է. «Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[13]

Եթե հակառակորդը ձեզ գերի վերցնի սխալ վարքի պատճառով, ես հիշեցնում եմ ձեզ, որ դուք կրում եք բանալին, որը կբացի բանտի դուռը ներսի կողմից: Դուք կարող եք մաքուր լվացվել Փրկիչ Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության միջոցով:

Տագանապի պահին դուք գուցե մտածեք, որ դուք արժանի չեք փրկվելու, որովհետև սխալներ եք գործել, մեծ կամ փոքր, և մտածում եք, որ այժմ կորած եք: Դա *երբեք* ճիշտ չէ: Միայն ապաշխարությունը կարող է բժշկել այն, ինչ ցավ է պատճառում: Սակայն ապաշխարությունը *կարող* է բժշկել այն, ինչ ցավ է պատճառում, անկախ նրանից, թե ինչ է դա:

Եթե դուք սայթաքում եք բաների մեջ, որոնց մեջ դուք չպիտի սայթաքեք, կամ ընկերակցում մարդկանց հետ, ովքեր քաշում են ձեզ սխալ ուղղությամբ, ապա ժամանակն է օգտագործել ձեր անկախությունը, ձեր ազատ կամքը: Լսեք Հոգու ձայնին և ձեզ չեն մոլորեցնի:

Ես կրկնում եմ, որ այսօր երիտասարդությունը մեծանում է անկում ապրող բարոյական չափանիշով թշնամու տարածքում: Բայց որպես Տիրոջ ծառա, ես խոստանում եմ, որ դուք կպաշտպանվեք և կպատսպարվեք հակառակորդի հարձակումներից, *եթե* դուք կամենաք ուշադրություն դարձնել հուշումներին, որոնք գալիս են Սուրբ Հոգուց:

Համեստ հագնվեք, հարգալիր խոսեք, վեհացնող երաժշտություն լսեք: Խուսափեք ամեն անբարոյականությունից և անձապես այլասերող փորձառություններից: Ձեր ձեռքը վերցրեք ձեր կյանքը և ինքներդ ձեզ կարգադրեք հավատարիմ լինել: Որովհետև մենք մեծապես կախված ենք ձեզանից, դուք նշանակալիորեն կօրհնվեք: Դուք երբեք հեռու չեք ձեր սիրառատ Երկնային Հոր տեսողությունից:

Իմ վկայության ուժը նույնը չէ, ինչ այն ժամանակ, երբ կարիք էի զգում հենվելու իմ սեմինարիայի ուսուցիչների վկայության վրա: Այսօր ես քայլելիս հենվում եմ ուրիշների վրա՝ տարիքիս և մանկական հասակում ունեցած իմ հոդացավերի պատճառով, բայց ոչ հոգևոր հարցերի վերաբերյալ կասկածների պատճառով: Ես աճել եմ՝ հավատալով, հասկանալով և ճանաչելով ավետարանի թանկարժեք ճշմարտությունները և Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Որպես Նրա հատուկ վկաներից մեկը՝ ես վկայում եմ, որ այս պատերազմի արդյունքը, որը սկսվել է նախաերկրային կյանքում, կասկածի տակ չէ: Լյուցիֆերը տանուլ է տալու:

Քիչ առաջ խոսեցինք ագռավների մասին: Դուք՝ երիտասարդ ագռավներ, պետք չէ, որ աննպատակ վեր ու վար թռչեք՝ անվստահ լինելով առջևում գտնվող ուղու վերաբերյալ: Կան մարդիկ ովքեր գիտեն այդ ուղին: «Որովհետև Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չյայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին»:[14] Տերը կազմավորել է իր Եկեղեցին բանալիների և խորհուրդների սկզբունքնով:

Եկեղեցու ղեկավարությունում նստած են 15 տղամարդիկ՝ հաստատված որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումից յուրաքանչյուրը կրում է բոլոր քահանայության անհրաժեշտ բանալիները Եկեղեցին ղեկավարելու համար: Ավագ Առաքյալը՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, մագարե է, որը միակ լիազորված մարդն է բոլոր այդ բանալիները գործադրելու համար:

Սուրբ գրությունները պահանջում են, որ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը գործեն խորհուրդներով, և որ այդ խորհուրդների որոշումները լինեն միասնական: Եվ դա այդպես է: Առաջնորդելու ուղին մենք վստահում ենք Տիրոջը և ձգտում ենք միայն կատարել Նրա կամքը: Մենք գիտենք, որ նա մեծ վստահություն

Լիսեստեր, Անգլիա

է դրել մեզ վրա՝ անհատապես և հավաքականապես:

Դուք պետք է սովորեք «Տիրոջն ապավինել ձեր բոլոր սրտովը, եւ ձեր հասկացողութեանը չապավինեք»:[15] Դուք պետք է վստահության արժանի լինեք և շրջապատեք ձեզ ընկերներով, ովքեր ուզում են լինել նույնպիսին:

Երբեմն դուք գուցե գայթակղվեք մտածել ինչպես ես եմ երբեմն մտածել իմ երիտասարդության ժամանակ. «Ելնելով նրանից ինչ կատարվում է, աշխարհի վերջը մոտենում է: Աշխարհի վերջը կգա նախքան ես կհասնեմ այնտեղ, ուր պետք է լինեմ»: Այդպես չէ: Դուք պետք է առաջ նայեք՝ անելով ամեն ինչ ճիշտ ձևով՝ ամուսնանալով, ունենալով ընտանիք, տեսնելով ձեր երեխաներին և թոռներին, նույնիսկ ձեր ծոռներին:

Եթե դուք հետևեք այս սկզբունքներին, դուք կպահպանվեք և կպաշտպանվեք և ինքներդ կսովորեք Սուրբ Հոգու հուշումներով, որ ուղով գնալ, քանզի «Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[16] Ես խոստանում եմ ձեզ, որ այդպես էլ կլինի, և օրհնություն եմ հայցում ձեզ համար՝ մեր թանկագին երիտասարդներ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. John Ciardi, “Fast and Slow,” *Fast and Slow: Poems for Advanced Children and Beginning Parents* (1975), 1. © 1975 by John L. Ciardi. Used by permission of Houghton Mifflin Harcourt Publishing Company. All rights reserved.
2. Հայտնություն ԺԲ.9; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 76.25–26:
3. Վարդապետություն և Ուխտեր 52.14:
4. Վարդապետություն և Ուխտեր 45.26:
5. Ալմա 42.8:
6. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
7. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 211.
8. Հայրապետական օրհնություն, Բոյդ Ք. Փաքեր, տրվել է Ջ. Ռոլանդ Սանդսթրոմի կողմից, հունվ. 15, 1944:
9. 2 Նեփի 32.3:
10. 1 Նեփի 17.45; շեշտադրումն ավելացված է:
11. Ենովս 1.10:
12. Վարդապետություն և Ուխտեր 8.2:
13. Վարդապետություն և Ուխտեր 58.42:
14. Ամովս 3.7:
15. Առակաց Գ.5:
16. Մորոնի 10.5:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Դու կարևոր ես Նրա համար

Հոգու արժեքը կշռելիս, Տերը միանգամայն այլ կշեռք է օգտագործում, քան աշխարհը:

Մովսեսը՝ աշխարհում երբևիցե ճանաչված ամենամեծ մարգարեներից մեկը, մեծացվել էր Փարավոնի աղջկա կողմից և անց էր կացրել իր կյանքի առաջին 40 տարիները Եգիպտոսի թագավորական սրահներում: Նա, ի սկզբանե, ծանոթ էր այդ հնադարյան թագավորության փառքին ու շքեղությանը:

Տարիներ անց, հեռավոր լեռան գագաթին, հեռու գտնվելով հզոր Եգիպտոսի շքեղությունից ու փառքից, Մովսեսը կանգնեց Աստծո ներկայության մեջ և խոսեց Նրա հետ դեմառդեմ, ինչպես մարդը խոսում է իր ընկերոջ հետ:[1] Այդ այցելության ժամանակ, Աստված ցույց տվեց Մովսեսին Իր ձեռքի աշխատանքները, թույլ տալով նրան տեսնել Իր աշխատանքի ու փառքի մի փոքր մասը: Երբ տեսիլքն ավարտվեց, Մովսեսն ընկավ գետնին և մնաց այդպես շատ ժամերի ընթացքում: Երբ նրա ուժը վերջապես վերականգնվեց, նա հասկացավ մի բան, որ այդ բոլոր տարիների ընթացքում Փարավոնի պալատներում երբեք նախկինում մտքովն էլ չէր անցել:

«Ես գիտեմ, - ասաց նա, - որ մարդը ոչինչ է»:[2]

Մենք ավելի չնչին ենք, քան կարծում ենք

Որքան շատ ենք մենք սովորում տիեզերքի մասին, ավելի շատ ենք մենք հասկանում, գոնե փոքրագույն չափով, թե ինչ գիտեր Մովսեսը: Տիեզերքը այնքան մեծ է, անբացատրելի և փառահեղ, որ անըմբռնելի է մարդկային մտքի համար: «Անթիվ աշխարհներ եմ ես ստեղծել», - ասաց Աստված Մովսեսին:[3] Գիշերային երկնքի հրաշալիքները այդ ճշմարտության գեղեցիկ վկայությունն են:

Մի քանի բաներ կան, որ լցրել են ինձ շնչահեղձ ակնածանքով, ինչպես գիշերվա խավարում թռչելը օվկիանոսների և մայրցամաքների վրայով և իմ խցիկի պատուհանից դուրս նայելը միլիոնավոր աստղերի անսահման փառքին:

Աստղագետները փորձել են հաշվել աստղերի թիվը տիեզերքում: Մի խումբ գիտնականներ մոտավորապես հաշվարկել են, որ աստղերի թիվը մեր հեռադիտակների համաձայն 10 անգամ մեծ է, քան աշխարհի ծովափների և անապատների ավազի բոլոր հատիկները:[4]

Այս եզրակացությունը ակնառու նմանություն ունի մարգարե Ենովքի

հայտարարության հետ. «Եթե հնարավոր լիներ, որ մարդը կարողանար հաշվել երկրի մասնիկները, այո, սրա նման միլիոնավոր երկրները, դա չէր լինի քո արարչագործությունների թվի սկիզբը»:[5]

Աստծո արարչագործությունների մեծության մասին խորհելով, չի կարելի զարմանալ, որ հրաշալի Բենիամին Թագավորը խորհուրդ է տվել իր ժողովրդին. «Միշտ պահեք ձեր հիշողության մեջ Աստծո մեծությունը և ձեր սեփական ոչնչությունը»:[6]

Մենք ավելի մեծ ենք, քան մենք կարծում ենք

Բայց, չնայած որ մարդը ոչինչ է, մտածելը, որ «հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում», լցնում է ինձ զարմանքով ու ակնածանքով:[7]

Եվ մինչ մենք կարող ենք նայել տիեզերքի հսկայական ընդարձակ տարածությանը և ասել. «Ի՞նչ է մարդը արարչագործության փառքի համեմատությամբ», Աստված Ինքն է ասել, որ մենք ենք պատճառը, որ Նա ստեղծեց տիեզերքը: Նրա գործը և փառքն է, այս փառահեղ տիեզերքի նպատակն է՝ փրկել և վեհացնել մարդկությանը:[8] Այլ կերպ ասած, հավերժության հսկայական ընդարձակ տարածությունը, անսահման տարածության և ժամանակի փառքերն ու գաղտնիքները, բոլորը կառուցված են հասարակ մահկանացուների օգտի համար, ինչպիսին դուք և ես եմ: Մեր Երկնային Հայրը ստեղծեց տիեզերքը, որպեսզի մենք կարողանանք հասնել որպես Նրա որդիներ և դուստրեր մեր ներուժին:

Սա է մարդու պարադոքսը. Աստծո հետ համեմատած՝ մարդը ոչինչ է, այնուամենայնիվ, մենք ամեն ինչ ենք Աստծո համար: Մինչ անսահման արարչագործության համեմատությամբ մենք կարող ենք ոչինչ թվալ, մենք հավերժական կրակի կայծ ունենք, որը վառվում է մեր սրտերում: Մենք ունենք մեզ հասանելի վեհացման անըմբռնելի խոստումը՝ աշխարհներ առանց վերջի: Եվ Աստծո մեծագույն ցանկությունն է՝ օգնել մեզ հասնել դրան:

Հպարտության անխոհեմությունը

Մեծ մոլորեցնողը գիտի, որ Աստծո զավակներին մոլորեցնելու իր ամենաարդյունավետ գործիքներից մեկը մարդու պարադոքսի ծայրահեղություններով հրապուրելն է: Ոմանց նա հրապուրում է իրենց հպարտության հակվածությամբ, դարձնելով նրանց իրենց մեջ փքված և խրախուսելով նրանց հավատալ իրենց սեփական անձի երևակայական կարևորությանը և անհաղթելիությանը: Նա ասում է նրանց, որ նրանք անցել են սովորական սահմաններից և ունակություններից, ի ծնե ունեցած իրավունքի կամ հասարակական դիրքի պատճառով նրանք ավելի բարձր են իրենց շրջապատողներից բոլոր չափանիշներով: Նա բերում է նրանց այն եզրակացության, թե նրանք ենթակա չեն որևէ մեկի օրենքներին, և չպիտի իրենց անհանգստացնեն որևէ մեկի խնդիրներով:

Աբրահամ Լինքոլնը սիրում էր այս պոեմը.

Օհ, ինչու պիտի մահկանացուի
հոգին հպարտ լինի:
Ինչպես արընթաց ընկնող ասուպ,
արագ թռչող ամպ,
Կայծակի փայլ, ալիքի անկում:
Մարդը հեռանում է կյանքից՝
գտնելու իր հանգիստը
գերեզմանում:[9]

Հիսուս Քրիստոսի աշակերտները հասկանում են, որ հավերժության հետ համեմատած, մեր գոյության այս մահկանացու շրջանը միայն «մի փոքր պահ» է:[10] Նրանք գիտեն, որ անձի իսկական արժեքը քիչ առնչություն ունի այն բանի հետ, ինչը աշխարհի կողմից մեծապես հարգված է: Նրանք գիտեն, որ դուք կարող եք դիզել ողջ աշխարհի արժույթը, և դրանով չեք կարողանա գնել մեկ հաց երկնքի տնտեսությունում:

Ովքեր «կժառանգեն Աստծո թագավորությունը»[11] նրանք են, ովքեր դառնում են «ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի»:[12] «Որովհետեւ ամեն ինքն իրան բարձրացնողը կխոնարհուի, եւ ինքն իրան խոնարհեցնողը կբարձրանայ»:[13] Այսպիսի աշակերտները նաև հասկանում են, «որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[14]

Մենք մոռացված չենք

Մեկ այլ ճանապարհ, որի միջոցով Սատանան մոլորեցնում է մեզ, հուսալքվածությունն է: Նա փորձում է մեր ուշադրությունը կենտրոնացնել մեր իսկ աննշանության վրա, մինչև որ մենք սկսում ենք կասկածել, որ ունենք մեծ արժեք: Նա ասում է մեզ, որ մենք շատ փոքր ենք, որ որևէ մեկը մեզ նկատի, որ մենք մոռացված ենք՝ հատկապես Աստծո կողմից:

Թույլ տվեք կիսվել ձեզ հետ անձնական փորձով, որը կարող է որոշ չափով օգնել նրանց, ովքեր իրենց զգում են աննշան, մոռացված կամ միայնակ:

Շատ տարիներ առաջ ես հաճախում էի օդաչուի գործնական ուսուցման Միացյալ Նահանգների Ռազմաօդային Ուժերում: Ես հեռու էի գտնվում իմ տնից՝ երիտասարդ մի զինվոր Արևմտյան Գերմանիայից, ծնված Չեխոսլովակիայում, մեծացած Արևելյան Գերմանիայում և մեծ դժվարությամբ անգլերեն խոսացող: Ես պարզ հիշում եմ իմ ճամփորդությունը դեպի Տեխասի մեր մարզումների ռազմաբազա: Ես ինքնաթիռի մեջ էի, նստած մի ուղևորի կողքին, ով խոսում էր ծանր հարավային արտասանությամբ: Նրա ասածից ես հազիվ թե մի բառ էի հասկանում: Ես ավելի ճիշտ մտածում էի, թե ինձ սխալ լեզու էին սովորեցրել այդ ամբողջ ընթացքում: Ինձ սարսափեցնում էր այն միտքը, որ ես պետք է պայքարեի օդաչուի գործնական ուսուցման ցանկալի բարձր տեղերի համար այն ուսանողների հետ, ում մայրենի լեզուն անգլերենն էր:

Երբ ես ժամանեցի Տեխաս՝ Բիգ Սփրինգ փոքրիկ քաղաքի ռազմաօդային բազա, ես փնտրեցի և գտա Վերջին Օրերի Սրբերի ճյուղը, որը բաղկացած էր մի բուռ հրաշալի մարդկանցից, որոնք հանդիպում էին բազայի կողմից

վարձակալված սենյակներում: Անդամները կառուցում էին մի փոքրիկ ժողովատուն, որը կծառայեր որպես Եկեղեցու մշտական վայր: Այդ ժամանակներում նոր շենքեր կառուցելիս գործի մեծ մասը անդամներն էին կատարում:

Օրեցօր ես հաճախում էի օդաչուի իմ գործնական ուսուցումներին և սովորում իմ ողջ ջանասիրությամբ, այնուհետև իմ ազատ ժամանակի մեծ մասը անց էի կացնում նոր ժողովատան վրա աշխատելով: Այնտեղ ես սովորեցի, որ երկուսչորսը պարի քայլ չէ, այլ փայտի կտոր: Ես նաև սովորեցի մեխին խփելիս իմ բթամատը պաշտպանելու կարևոր հմտությունը:

Ես այնքան շատ ժամանակ էի անցկացնում ժողովատան վրա աշխատելով, որ ճյուղի նախագահը, որը նաև մեր թռիչքի ուսուցիչներից էր, մտահոգություն հայտնեց, որ միգուցե ես պետք է ավելի շատ ժամանակ տրամադրեի սովորելուն:

Իմ ընկերներն ու ուսանող օդաչուները իրենց ազատ ժամերը նույնպես նվիրում էին միջոցառումներին, չնայած ես կարծում եմ, որ կարող եմ ասել, որ այդ միջոցառումներից մի քանիսը ներդաշնակ չէին այսօրվա *Երիտասարդներին Զորացնելու համար* գրքույկի հետ: Ինչ վերաբերվում է ինձ, ես վայելում էի իմ ժամանակը, լինելով արևմտյան Տեխասի այս փոքրիկ ճյուղի ակտիվ մասնիկը, կատարելագործելով նոր ձեռք բերած հյուսնի իմ հմտությունները և լավացնելով իմ անգլերենը, կատարելով երեցների քվորումում և կիրակնօրյա դպրոցում ուսուցանելու իմ ծառայությունները:

Այդ ժամանակ Բիգ Սփրինգը, չնայած իր անվանը, մի փոքր, աննշան և համբավ չունեցող վայր էր: Եվ ես հաճախ ինձ նույնպես էի զգում՝ աննշան, համբավ չունեցող և բավականին միայնակ: Այնուամենայնիվ, ես ոչ մի անգամ չեմ մտածել, թե Տերը մոռացել է ինձ, կամ որ Նա երբևէ չի կարողանա գտնել ինձ այնտեղ: Ես գիտեի, որ Երկնային Հոր համար նշանակություն չուներ, թե որտեղ էի ես, ինչ դիրք ունեի ուրիշների կողքին իմ օդաչուի գործնական ուսուցման դասարանում կամ որն էր իմ կոչումը Եկեղեցում: Նրա համար նշանակություն ուներ այն, որ ես անում էի լավագույնը, որ կարող էի անել, որ իմ սիրտը դարձված էր առ Աստված, և որ ես հոժար էի օգնել իմ շուրջը գտնվողներին: Ես գիտեի, որ եթե ես անեի լավագույնը, որ կարող էի անել, ամեն ինչ լավ կլիներ:

Եվ ամեն ինչ լավ էր:[15]

Վերջինները առաջինները կլինեն

Տիրոջ համար ամենևին նշանակություն չունի, թե մենք անցկացնում ենք մեր օրերը, աշխատելով մարմարե սրահներում, թե՝ ախոռի մսուրում: Նա գիտի, թե որտեղ ենք մենք, անկախ նրանից, թե որքան հասարակ են մեր պայմանները: Նա կօգտագործի Իր իսկ ճանապարհով և Իր սուրբ նպատակներով նրանց, ովքեր դարձնում են իրենց սրտերը դեպի Իրեն:

Աստված գիտի, որ ամենամեծ հոգիներից ոմանք, ովքեր երբևէ ապրել են, նրանք են, ովքեր երբեք չեն հայտնվի պատմության ժամանակագրությունում: Նրանք օրհնված, խոնարհ հոգիներ են, ովքեր հետևում են Փրկչի օրինակին և իրենց կյանքի օրերն անց են կացնում, բարիք գործելով:[16]

Մի այսպիսի զույգ՝ իմ ընկերոջ ծնողները, այս սկզբունքի օրինակ են հանդիսանում ինձ համար: Ամուսինը աշխատում էր Յուտայի պողպատի գործարանում: Ճաշի ժամին նա կհաներ իր սուրբ գրությունները կամ Եկեղեցու թերթը և կկարդար: Երբ մնացած աշխատողները տեսնում էին դա, նրանք ծաղրում էին նրան և փորձում նրա հավատքը: Երբ նրանք անում էին դա, նա խոսում էր նրանց հետ բարությամբ և վստահությամբ: Նա թույլ չէր տալիս, որ նրանց անհարգալից վերաբերմունքը բարկացներ նրան կամ տխրեցներ:

Տարիներ անց ամենաբարձրաձայն ծաղրողներից մեկը շատ հիվանդ էր: Մինչև մեռնելը նա պատվիրեց, որ այս խոնարհ մարդը խոսեր իր թաղմանը, ինչը նա արեց:

Եկեղեցու այս հավատարիմ անդամը երբեք շատ բան չէր ունեցել, ինչ վերաբերվում է հասարակական դիրքին կամ հարստությանը,

բայց նրա ազդեցությունը լայնորեն տարածվում էր բոլոր նրանց վրա, ովքեր գիտեին նրան: Նա մահացավ աշխատավայրում վթարի արդյունքում, մինչ փորձում էր օգնել մեկ ուրիշ աշխատողի, ով անելանելի դրության մեջ էր հայտնվել ձյան պատճառով:

Այդ տարի նրա այրին գլխուղեղի վիրահատություն տարավ, որի արդյունքում չկարողացավ քայլել: Բայց մարդիկ սիրում են գալ ու ժամանակ անցկացնել նրա հետ, քանի որ նա լսում է: Նա հիշում է: Նա մտահոգվում է: Ի վիճակի չլինելով գրել, նա մտապահում է իր երեխաների ու թոռնիկների հեռախոսահամարները: Նա սիրով հիշում է ծնունդներն ու տարելիցները:

Նրանք, ովքեր այցելում են նրան, հեռանում են ավելի լավ զգացմունքներ ունենալով կյանքի և իրենց անձի հանդեպ: Նրանք զգում են նրա սերը: Նրանք գիտեն, որ նա մտահոգվում է: Նա երբեք չի բողոքում, այլ անց է կացնում իր օրերը, օրհնելով ուրիշների կյանքը: Նրա ընկերներից մեկն ասել է, որ այս կինը այն մի քանի մարդկանցից է, ում նա երբևիցե ճանաչել է, ովքեր իսկապես Հիսուս Քրիստոսի սիրո և կյանքի օրինակներն են եղել:

Այս զույգը առաջինը կարող էր ասել, որ նրանք այս աշխարհում այդքան էլ կարևոր չեն եղել: Սակայն, հոգու արժեքը կշռելիս, Տերը միանգամայն այլ կշեռք է օգտագործում, քան աշխարհը: Նա գիտի այս հավատարիմ զույգին, Նա սիրում է նրանց: Նրանց գործերը առ Նա նրանց ամուր հավատքի կենդանի վկայություն են:

Դու կարևոր ես Նրա համար

Եղբայրներ և քույրեր, միգուցե ճիշտ է, որ մարդը ոչինչ է տիեզերքի մեծության հետ համեմատած: Երբեմն մենք նույնիսկ կարող ենք մեզ աննշան, անտեսված, միայնակ կամ մոռացված զգալ: Սակայն միշտ հիշեք՝ դուք կարևոր եք Նրա համար: Եթե դուք երբևէ կասկածեք դրան, խորհեք այս չորս աստվածային սկզբունքների շուրջ.

Առաջինը, Աստված սիրում է հեզին ու խոնարհին, քանզի նրանք

են «մեծ երկնքի արքայության մեջ»:[17]

Երկրորդը, Տերը հանձնարարում է, որ «[Իր] ավետարանի լրիվությունը թույլերի և պարզամիտների միջոցով հռչակվի աշխարհի ծայրերում»:[18] Նա ընտրել է, որ «աշխարհի թույլ բաներն առաջ . . . գան և ջարդեն զորավորներին և ուժեղներին»[19] և ամաչեցնեն «զորավորներին»:[20]

Երրորդը, անկախ այն բանից, թե որտեղ եք դուք ապրում, անկախ այն բանից, թե որքան համեստ են ձեր պայմանները, որքան աղքատիկ ձեր աշխատանքը, որքան սահմանափակ ձեր ունակությունները, որքան սովորական ձեր արտաքինը, կամ որքան փոքր ձեր Եկեղեցու կոչումը կարող են թվալ, դուք անտեսանելի չեք ձեր Երկնային Հոր համար: Նա սիրում է ձեզ: Նա գիտի ձեր խոնարհ սիրտը և ձեր սիրալիր ու բարի գործերը: Միասին դրանք կազմում են ձեր նվիրվածության և հավատքի հարատև վկայությունը:

Չորրորդը և վերջինը, խնդրում եմ, հասկացեք, որ ինչ դուք տեսնում և զգում եք այժմ, այն չէ, ինչ հավերժ կլինի: Դուք չեք զգա միայնակություն, վիշտ, ցավ կամ հիասթափություն հավերժորեն: Մենք ունենք Աստծո հավատարիմ խոստումը, որ Նա ոչ կմոռանա և ոչ էլ կթողնի նրանց, ովքեր դարձնում են իրենց սրտերը դեպի Իրեն:[21] Հուսացեք ու հավատացեք այդ խոստումին: Սովորեք սիրել ձեր Երկնային Հորը և դառնալ Նրա աշակերտը՝ խոսքով և գործով:

Վստահ եղեք, որ եթե դուք միայն համբերեք, հավատաք Նրան և հավատարմությամբ պահեք պատվիրանները, մի օր դուք ինքներդ կունենաք խոստումները, որոնք հայտնի դարձվեցին Պողոս Առաքյալին. «Ինչ որ աչք չտեսաւ եւ ականջ չլսեց եւ մարդի սիրտ չընկաւ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»:[22]

Եղբայրներ և քույրեր, տիեզերքի ամենահզոր էակը ձեր հոգու Հայրն է: Նա ճանաչում է ձեզ: Նա սիրում է ձեզ կատարյալ սիրով:

Աստված նայում է ձեզ ոչ միայն որպես մահկանացու էակի՝ փոքր մոլորակի վրա, ով ապրում է մի կարճ ժամանակահատված: Նա նայում է ձեզ որպես Իր զավակի: Նա նայում է ձեզ որպես այն անձի, որը դուք կարող եք և նախատեսված եք դառնալ: Նա ուզում է, որ դուք իմանաք, որ կարևոր եք Նրա համար:

Թող որ մենք հավատանք, վստահենք և այնպես ապրենք մեր կյանքը, որպեսզի մենք հասկանանք մեր իսկական հավերժական արժեքն ու ներուժը: Թող որ մենք արժանի լինենք թանկարժեք օրհնություններին, որոնք մեր Երկնային Հայրը պահել է մեզ համար, իմ աղոթքն է Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մովսես 1.2:
2. Մովսես 1.10:
3. Մովսես 1.33:
4. Տես Andrew Craig, “Astronomers Count the Stars,” BBC News, July 22, 2003, http://news.bbc.co.uk/2/hi/science/nature/3085885.stm:
5. Մովսես 7.30:
6. Մոսիա 4.11:
7. Վարդապետություն և Ուխտեր 18.10:
8. Տես Մովսես 1.38-39:
9. William Knox, “Mortality,” in James Dalton Morrison, ed., *Masterpieces of Religious Verse* (1948), 397.
10. Վարդապետություն և Ուխտեր 121.7:
11. 3 Նեփի 11.38:
12. Մոսիա 3.19:
13. Ղուկաս 18.14; տես նաև հատվածներ 9–13:
14. Մոսիա 2.17:
15. Դիտեր Ֆ. Ուխդորֆը առաջինն է ավարտել իր դասարանը:
16. Տես Գործք 10.38:
17. Մատթեոս 18.4; տես նաև հատված 1–3:
18. Վարդապետություն և Ուխտեր 1.23:
19. Վարդապետություն և Ուխտեր 1.19:
20. Ա Կորնթացիս 1.27:
21. Տես Եբրայեցիս 13.5:
22. Ա Կորնթացիս 2.9:

Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բեննիոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քենեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստան ազատվել է Յոթանասունի Քվորումների Նախագահության անդամի պաշտոնից:

Ովքեր կարող են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Առաջարկվում է հաստատման Երեց Թեդ Ռ. Քալիսթերը որպես Յոթանասունի Նախագահության անդամ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դե՞մ:

Առաջարկվում է ազատել Երեցներ Գարի Ջ. Քոլմանին, Ռիչարդ Գ. Հինքլիին, Յոշիհիկո Կիկուչիին, Քարլ Փրատին և Մեսիլ Օ. Սամուելսոնին որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամներ և նշանակել նրանց պատվավոր Բարձրագույն Իշխանավորներ:

Առաջարկվում է ազատել Երեցներ Վոն Յոնգ Կոյին, Լոուել Մ. Մնոուին և Փոլ Ք. Սիբրովսկիին որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամներ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս եղբայրների հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Երեցներ Ռալֆ Վ. Հարդի կրտսերը, Ջոն Մ. Հանտսման կրտսերը, Ալեքսանդր Ն. Մանժոսը և Ջ. Վիլլարդ Մարիոթ կրտսերը ազատվել են որպես Տարածքային Յոթանասունականներ:

Առաջարկվում է նրանց հայտնել մեր երախտագիտությունը իրենց գերազանց ծառայության համար:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Նախագահ Մոնսոն, մինչ այժմ իմ դիտարկումներով, քվեարկությունը Համաժողովների Կենտրոնում անցավ միաձայն:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր հաստատող ձայնի, հավատքի, նվիրվածության և աղոթքների համար: ■

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Զավակների սրտերը կդառնան

Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Ոգու մասին և զգալ այն:

Երբ մենք ուսումնասիրում, սովորում և ապրում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանով, հաջորդականությունը հաճախ ուսուցողական է: Օրինակ, խորհեք դասերի վերաբերյալ, որ մենք սովորում ենք հոգևոր կարևորությունների մասին մեծ իրադարձությունների հաջորդականությունից, որոնք տեղի ունեցան, երբ Փրկչի ավետարանի լրիվությունը վերականգնվեց այս վերջին օրերում:

Սրբազան Պուրակում Ջոզեֆ Սմիթը տեսավ և խոսեց Հավերժական Հոր և Հիսուս Քրիստոսի հետ: Այլ բաների հետ մեկտեղ Ջոզեֆը սովորեց Աստվածագլխի էության ճշմարտության և շարունակվող հայտնության մասին: Այս փառահեղ տեսիլքով սկսվեց «ժամանակների լրության տնտեսությունը» (Եփեսացիս Ա.10): Այն աշխարհի պատմության կարևորագույն իրադարձություններից մեկն է:

Մոտավորապես երեք տարի անց, ի պատասխան անկեղծ աղոթքի, 1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան, Ջոզեֆի ննջասենյակը լցվեց լույսով, մինչև այն «դարձավ կեսօրից էլ լուսավոր» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.30): Նրա մահճակալի կողքին հայտնվեց մի անձնավորություն, կանչեց երիտասարդ տղային իր անունով և հայտնեց, որ «ինքը սուրհանդակ է, Աստծո ներկայությունից . . . ուղարկված, և որ նրա անունը Մորոնի է (հատված 33)»: Նա ցուցումներ տվեց Ջոզեֆին Մորմոնի Գրքի առաջ գալու վերաբերյալ: Եվ այնուհետև Մորոնին մեջ բերեց Հին Կտակարանի Մաղաքիայի գրքից, Թագավոր Հակոբոսի տարբերակում օգտագործված լեզվի մի փոքր տարբերությամբ. «Ահա, ես ձեզ կհայտնեմ Քահանայությունը, Եղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ մեծ ու ահեղ օրվա գալը:

Եվ նա զավակների սրտերում կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալստյան ժամանակ» (հատվածներ 38, 39):

Մորոնիի ցուցումները երիտասարդ մարգարեին հիմնականում ներառում էին երկու հիմնական թեմաներ. (1) Մորմոնի Գիրքը և (2) Մաղաքիայի խոսքերը, որոնք կանխագուշակում էին Եղիայի դերը «ամեն բաների հաստատուելու ժամանակներում, որոնց համար խոսեց Աստուած իր բոլոր սուրբ մարգարէների բերանովը յաւիտենից հետէ» (Գործք Առաքելոց Գ.21): Այսպիսով, Վերականգնման նախնական իրադարձությունները հայտնի դարձրեցին Աստվածագլխի վերաբերյալ ճիշտ հասկացողությունը, ընդգծեցին Մորմոնի Գրքի կարևորությունը և կանխատեսեցին փրկության և վեհացման աշխատանքը ապրողների և մահացածների համար: Այս ոգեշնչող հաջորդականությունը ուսուցողական է Աստվածության համար բարձրագույն կարևորություն ունեցող հոգևոր հարցերի շուրջ:

Իմ ուղերձը կենտրոնանում է Եղիայի առաքելության և Եղիայի Ոգու վրա, որի մասին մարգարեացել էր Մորոնին Ջոզեֆ Սմիթին ուղղված իր առաջին ցուցումներում: Ես անկեղծորեն աղոթում եմ Սուրբ Հոգու աջակցության համար:

Եղիայի առաքելությունը

Եղիան Հին Կտակարանի մարգարե էր, ում միջոցով մեծ հրաշքներ էին գործվել: Նա կնքեց երկինքները և անձրև չեկավ Իսրայելում 3,5 տարի: Նա շատացրեց որբևայրու ալյուրն ու յուղը: Նա երիտասարդ տղային կենդանացրեց մեռելներից, և նա կրակ վայր իջեցրեց երկնքից՝ ի պատասխան Բահաղի մարգարեների (տես Գ Թագավորաց 17–18): Իր մահկանացու առաքելության վերջում, նա «մրրիկով վեր ելաւ երկինքը» (Դ Թագավորաց Բ.11) և փոխակերպվեց:

«Մենք սովորում ենք վերջին օրերի հայտնություններից, որ Եղիան կրել է Մելքիսեդեկյան Քահանայության կնքման զորությունը և եղել է վերջին մարգարեն, որն այն ունեցել է նախքան Հիսուս Քրիստոսի ժամանակները» (Աստվածաշնչի Բառարան, «Եղիա»): Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է. «Եղիայի ոգին, զորությունը և կոչումն է, որ դուք զորություն ունենաք ունենալու *Մելքիսեդեկյան Քահանայության լրությունը* . . . և ստանալ . . . Աստծո թագավորությանը վերաբերվող բոլոր արարողությունները» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 311; շեշտադրումն ավելացված է): Կնքման այս սուրբ իշխանությունը

անհրաժեշտ է քահանայության արարողությունները թե երկրի վրա, և թե երկնքում օրինական և կապող դարձնելու համար:

Եղիան Մովսեսի հետ հայտնվեց Կերպարանափոխության Սարի վրա (տես Մատթեոս ԺԷ.3) և հաստատեց այս իշխանությունը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի վրա: 1836թ. ապրիլի 3-ին, Կիրթլենդի տաճարում, Եղիան կրկին հայտնվեց Մովսեսի և այլոց հետ և հաստատեց նույն բանալիները Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քաուդերիի վրա:

Սուրբ գրություններում արձանագրված է, որ Եղիա մարգարեն կանգնեց Ջոզեֆի և Օլիվերի առջև և ասաց.

«Ահա, ժամանակը լիովին մոտեցել է, որը խոսվել է Մաղաքիայի բերանով,- վկայելով, որ նա [Եղիան] կուղարկվի, նախքան Տիրոջ գալստյան մեծ և ահեղ օրը,-

Հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար, և զավակներինը՝ դեպի հայրերը, չլինի թե ողջ երկիրը զարկվի անեծքով,-

Հետևաբար, այս տնտեսության բանալիները հանձնվում են ձեր ձեռքը. և դրանով դուք կարող եք իմանալ, որ Տիրոջ մեծ և ահեղ օրը մոտ է, նույնիսկ դռների մոտ» (ՎԵՈՒ 110.14–16):

1836թ. Եղիայի միջոցով կնքման իշխանության վերականգնումը անհրաժեշտ էր երկիրը Փրկչի Երկրորդ Գալստյան համար նախապատրաստելու համար և սկիզբ դրեց մեծապես աճող և աշխարհով մեկ տարածվող հետաքրքրությանը ընտանիքի պատմության ուսումնասիրության վերաբերյալ:

Եղիայի Ոգին և աշխատանքը

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Այս աշխարհում ամենամեծ պարտականությունը, որ Աստված դրել է մեր վրա, մեր մահացածներին գտնելն է: . . . Քանզի անհրաժեշտ է, որ կնքման զորությունը լինի մեր ձեռքերում, որ կնքենք մեր երեխաներին և մեր մահացածներին ժամանակների լրության տնտեսության համար, տնտեսություն, որում կիրականանան մարդու փրկության վերաբերյալ մինչև աշխարհի ստեղծումը Հիսուս Քրիստոսի կողմից տրված խոստումները: . . . Ուստի, Աստված ասել է. «Ես կուղարկեմ ձեզ Եղիա մարգարեն» (*Teachings: Joseph Smith,* 475):

Ջոզեֆը նաև բացատրել է.

«Բայց ո՞րն է Եղիայի գալու նպատակը կամ ինչպե՞ս է այն իրականանալու: Բանալիները պիտի հանձնվեն, Եղիայի ոգին պիտի գա, Ավետարանը պիտի վերականգնվի, Աստծո Սրբերը հավաքվեն, Սիոնը կառուցվի և Սրբերը որպես ազատիչներ վեր ելնեն Սիոն Սարը [տես Աբդիա 1.21]:

Բայց ինչպե՞ս նրանք կարող են դառնալ ազատիչներ Սիոն Սարի վրա: Իրենց տաճարները կառուցելով . . . և առաջ գնալով ու ստանալով բոլոր արարողությունները . . . իրենց բոլոր նախնիների համար, ովքեր մահացած են. և սա է շղթան, որ կապում է հայրերի սրտերը որդիներին, և որդիներինը հայրերին, որը իրականացնում է Եղիայի առաքելությունը» (*Teachings: Joseph Smith,* 472–73):

Երեց Ռասսել Մ. Նելսոնը սովորեցրել է, որ Եղիայի Ոգին «Սուրբ Հոգու դրսևորումն է, որ վկայություն է բերում ընտանիքի աստվածային էության վերաբերյալ» (“A New Harvest Time,” *Ensign,* May 1998, 34): Սուրբ Հոգու այս հատկանշական ազդեցությունը մղում է մարդկանց ճանաչել, փաստագրել և փայփայել իրենց նախնիներին և ընտանիքի անդամներին՝մահացածներին և ապրողներին:

Եղիայի Ոգին ներգործում է Եկեղեցում և Եկեղեցուց դուրս գտնվող մարդկանց վրա: Այնուամենայնիվ, որպես Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամ, մենք ունենք ուխտ և պատասխանատվություն՝ գտնելու մեր նախնիներին և կատարել նրանց համար ավետարանի փրկող արարողությունները: «Առանց մեզ նրանք չեն կարող

կատարյալ դառնալ» (Եբրայեցիս ԺԱ.40; տես նաև *Teachings: Joseph Smith,* 475)։ Եվ «ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացածների» (ՎևՈՒ 128.15)։

Սրանք են պատճառները, որ մենք կատարում ենք ընտանիքի պատմության ուսումնասիրություն, կառուցում տաճարներ և կատարում ծեսեր։ Այս պատճառով էր Եղիան ուղարկվել՝ վերականգնելու կնքման զորությունը, որ կապում է երկրի վրա և երկնքում։ Մենք ենք Տիրոջ գործակալները փրկության և վեհացման աշխատանքում, որը թույլ չի տա, որ «ողջ երկիրը զարկվի անեծքով» (ՎևՈՒ 110.15), երբ Նա վերադառնա կրկին։ Սա մեր պարտականությունն է և մեծ օրհնությունը։

Հրավեր աճող սերնդին

Այժմ ես հրավիրում եմ աճող սերնդի երիտասարդ կանանց ու տղամարդկանց և երեխաների ուշադրությունը, մինչ ես կընդգծեմ այսօր ձեր կյանքում Եղիայի Ոգու կարևորությունը։ Իմ ուղերձը նախատեսված է ընդհանրապես ամբողջ Եկեղեցու համար, բայց հատկապես ձեզ համար։

Ձեզանից շատերը կարող են մտածել, որ ընտանեկան պատմության աշխատանքը պետք է կատարվի հիմնականում տարիքով մարդկանց կողմից։ Բայց ես չգիտեմ սուրբ գրություններում կամ Եկեղեցու ղեկավարների կողմից հայտարարված հրահանգներում նկարագրված ոչ մի տարիքային սահմանափակում, որն արգելում է, որ այս կարևոր ծառայությունը կատարեն խելահաս չափահասները։ Դուք Աստծո որդիներն ու դուստրերն եք, ուխտի զավակները և արքայության կառուցողները։ Կարիք չկա, որ դուք սպասեք որոշակի տարիքի, որպեսզի կատարեք ձեր պարտականությունը մարդկության փրկության աշխատանքին աջակցելու համար։

Տերը մեր օրերում ակնառու միջոցներ է տվել, որոնք ձեզ հնարավորություն են տալիս սովորել այս աշխատանքի մասին և սիրել այն, որը բռնկված է Եղիայի Ոգով։

Օրինակ, FamilySearch-ը փաստերի, աղբյուրների և ծառայությունների հավաքածու է, որից կարելի է հեշտությամբ օգտվել սեփական համակարգիչների և բազմազան ձեռքի սարքերի միջոցով, որոնք նախատեսված են օգնելու մարդկանց գտնել և գրառել իրենց ընտանիքի պատմությունը։ Այս միջոցները նաև առկա են ընտանիքի պատմության կենտրոններում, որոնք գտնվում են մեր Եկեղեցու բազում շենքերում։

Զուգադիպություն չէ, որ FamilySearch-ը և այլ միջոցները առաջ են եկել այն ժամանակ, երբ երիտասարդները քաջածանոթ են տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների լայն տեսականուն։ Ձեր մատները վարժված են հաղորդագրություն ուղարկելուն և Տիրոջ աշխատանքը արագացնելուն ու բարելավվելուն, և ոչ միայն ձեր ընկերների հետ արագ հաղորդակցվելուն։ Այսօր շատ երիտասարդների ակնհայտ ունակություններն ու ընդունակությունները լավ նախապատրաստություն են փրկության աշխատանքին նպաստելու համար։

Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Ոգու մասին և զգալ այն։ Ես խրախուսում եմ ձեզ սովորել, փնտրել ձեր նախնիներին և պատրաստել ձեր անձերը՝ լինելու փոխանորդ և կատարելու մկրտություններ Տիրոջ տանը *ձեր* մահացածների համար (տես ՎևՈՒ 124.28–36)։ Եվ ես հորդորում եմ ձեզ օգնել այլ մարդկանց իմանալ իրենց ընտանիքի պատմությունները։

Եթե դուք հավատքով արձագանքեք այս հրավերին, ձեր սրտերը կդառնան դեպի հայրերը։ Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները կարմատավորվեն ձեր սրտերում։ Ձեր հայրապետական օրհնությունները, բացահայտելով ձեր տոհմաբանական գիծը, կկապեն ձեզ այս հայրերի հետ և ավելի իմաստալից կդառնան ձեր համար։ Ձեր սերն ու երախտագիտությունը ձեր նախնիների հանդեպ կմեծանան։ Փրկչի մասին ձեր վկայությունը և դարձի ընթացքը կդառնան ավելի խորը ու հաստատուն։ Եվ ես խոստանում եմ, որ դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից։ Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում։

Ծնողներ և ղեկավարներ, խնդրում եմ, օգնեք ձեր երեխաներին և երիտասարդներին սովորել Եղիայի Ոգու մասին և փորձ ձեռք բերել դրա հետ կապված։ Բայց չափից ավելի մեծ ջանքեր մի գործադրեք կամ չափից շատ մանրամասնություններ կամ ուսուցում մի տրամադրեք։ Հրավիրեք երիտասարդներին ինքնուրույն հետազոտել, փորձարկել և սովորել (տես Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.20)։ Ցանկացած երիտասարդ կարող է անել այն, ինչ ես խորհուրդ եմ տալիս՝ օգտագործելով **lds.org/familyhistoryyouth** կայք-էջում

առկա միջոցները: Ահարոնյան Քահանայության քվորումի և Երիտասարդ Կանանց դասարանի նախագահությունները կարող են կարևոր դեր խաղալ, օգնելով երիտասարդներին ծանոթանալ այս հիմնական աղբյուրների հետ: Երիտասարդները մեծապես կարիք ունեն լինելու սովորողներ, որոնք գործում են և, այդպիսով, ստանում լրացուցիչ լույս և գիտելիք՝ Սուրբ Հոգու միջոցով, և ոչ թե լոկ պասիվ ուսանողներ, որոնց վրա, հիմնականում, ազդեցություն են գործում ուրիշները (տես 2 Նեփի 2.26):

Ծնողներ և ղեկավարներ, դուք բոլորդ զարմացած կմնաք, թե որքան արագ ձեր երեխաները և Եկեղեցու երիտասարդները կդառնան մեծապես ունակ՝ օգտվելու այդ գործիքներից: Իսկապես, դուք կսովորեք արժեքավոր դասեր այս երիտասարդներից՝ այս աղբյուրները արդյունավետ օգտագործելու վերաբերյալ: Երիտասարդությունը կարող է մեծ օգնություն առաջարկել ավելի մեծ անհատներին, ովքեր սովոր չեն կամ ում վախեցնում են արդիական սարքավորումները, կամ ովքեր անծանոթ են FamilySearch-ին: Դուք նաև կհաշվեք ձեր բազում օրհնությունները, մինչ երիտասարդները ավելի շատ ժամանակ նվիրաբերեն ընտանիքի պատմության աշխատանքին և տաճարային ծառայությանը, և ավելի քիչ ժամանակ՝ վիդեո խաղերին, համացանցին և սոցիալական կայք-էջերին:

Թրոյ Ջեքսոնը, Ջարեն Հոփը և Էնդրյու Ալենը Ահարոնյան Քահանայության կրողներ են, ովքեր կանչվել էին ոգեշնչված եպիսկոպոսի կողմից, որ միասին ընտանեկան պատմության դասեր անցկացնեին իրենց ծխում: Այս երիտասարդ տղաները ներկայացնում են ձեզանից շատերին՝ սովորելու և ծառայելու ցանկության իրենց ձգտումներով:

Թրոյն ասել է. «Ես սովոր էի գալ եկեղեցի և ուղղակի նստել այնտեղ, բայց այժմ ես հասկանում եմ, որ պետք է գնամ տուն և որոշ բան անեմ: Մենք կարող ենք բոլորս



անել ընտանեկան պատմության աշխատանքը»:

Ջարենը հաղորդել է, որ երբ նա սովորեց ավելի շատ բան ընտանիքի պատմության վերաբերյալ, նա հասկացավ, «որ դրանք պարզապես անուններ չէին, այլ իրական մարդիկ: Ես ավելի ու ավելի մեծ ոգևորությամբ էի անուններ տանում տաճար»:

Էնդրյուն պատմում է. «Ես տարվեցի ընտանեկան պատմությամբ այնպիսի սիրով ու եռանդով, որը չգիտեի, թե կարող էի ունենալ: Մինչ ամեն շաբաթ պատրաստվում էի ուսուցանելուն, հաճախ Սուրբ Հոգին ինձ դրդում էր գործել և փորձել դասի մեջ ուսուցանվող որոշ մեթոդներ: Նախկինում ընտանիքի պատմությունը վախեցնող է եղել: Սակայն Հոգու օգնությամբ ես կարողացա կատարել իմ ծառայությունը և օգնել իմ ծխում շատ մարդկանց»:

Իմ սիրելի երիտասարդ եղբայրներ և քույրեր, ընտանեկան պատմությունը Եկեղեցու կողմից հովանավորվող պարզապես հետաքրքիր ծրագիր կամ միջոցառում չէ, այլ փրկության և վեհացման աշխատանքի կարևորագույն մասն է: Դուք պատրաստված եք եղել այս օրվա և Աստծո թագավորությունը կառուցելու համար: Դուք այստեղ երկրի վրա եք՝ այժմ այս փառահեղ աշխատանքում աջակցելու համար:

Ես վկայում եմ, որ Եղիան վերադարձել է երկիր և վերականգնել է կնքման սուրբ իշխանությունը: Ես վկայում եմ, որ այն, ինչ կապվում է երկրի վրա, կարող է կապված լինել երկնքում: Եվ ես գիտեմ, որ աճող սերնդի երիտասարդները առանցքային նշանակություն ունեն այս մեծ աշխատանքում: Սա ես վկայում եմ Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Երեխաներ

Ես վկայում եմ երեխաների մեծ օրհնության և երջանկության մասին, որը նրանք կպարգևեն մեզ այս կյանքում և հավերժություններում:

Երբ մենք նայում ենք երեխայի աչքերի մեջ, մենք տեսնում ենք ընկերակից Աստծո որդու կամ դստեր, որը մեր կողքին կանգնած էր նախաերկրային կյանքում:

Երեխաներ ունենալու հնարավորություն ունեցող ամուսնու և կնոջ մեծագույն արտոնությունն է մահկանացու մարմիններ ստեղծել Աստծո այս զավակների համար: Մենք հավատում ենք ընտանիքներին և մենք հավատում ենք երեխաներին:

Երբ երեխա է ծնվում ամուսնու և կնոջ կյանքում, նրանք իրականացնում են մեր Երկնային Հոր ծրագրի երեխաներ աշխարհ բերելու մասը: Տերն ասել է. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[1] Մինչև անմահությունը պիտի լինի մահկանացություն:

Ընտանիքը հաստատված է Աստծո կողմից: Ընտանիքները առանցքային են մեր Երկնային Հոր ծրագրում այստեղ՝ երկրի վրա, և հավերժության մեջ: Ինչպես կարդում ենք սուրբ գրություններում, երբ Ադամն ու Եվան միացան ամուսնությամբ, «Աստուած օրհնեց նորանց, եւ Աստուած ասաց նորանց. Աճեցէք և շատացէք, եւ լցրէք երկիրը»:[2] Մեր օրերում մարգարեներն ու առաքյալները հայտարարել են. «Ադամին և Եվային Աստծո կողմից տրված առաջին պատվիրանը որպես ամուսին և կին նրանց ծնող դառնալու հնարավորությունն էր: Մենք հայտարարում ենք, որ դեռևս ուժի մեջ է բազմանալու և երկիրը լցնելու վերաբերյալ Իր զավակներին տրված Աստծո պատվիրանը»:[3]

Այս պատվիրանը չի մոռացվել կամ մի կողմ դրվել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:[4] Մենք խորին երախտագիտություն ենք հայտնում հսկայական հավատքի համար, որ ցուցաբերվում է ամուսինների և կանանց կողմից (հատկապես մեր կանանց) երեխաներ ունենալու նրանց պատրաստակամությամբ: Երբ և քանի երեխա ունենալը անձնական որոշումներ են, որոնք կայացվում են ամուսնու, կնոջ և Տիրոջ կողմից: Սրանք սուրբ որոշումներ են, որոշումներ, որոնք պետք է կայացվեն անկեղծ աղոթքի միջոցով և գործի դրվեն մեծ հավատքով:

Տարիներ առաջ Յոթանասուն Երեց Ջեյմս Օ. Մեյսոնը կիսվեց ինձ հետ այս պատմությամբ. «Մեր վեցերորդ երեխայի ծնունդը մի անմոռանալի փորձառություն էր: Մինչ ես հայացքս սևեռել էի այդ գեղեցիկ նորածին դստեր վրա՝ նրա ծնունդից ընդամենը րոպեներ անց, պարզ լսեցի մի ձայն, որը հայտարարեց. «Դեռևս մեկն էլ կծնվի և դա տղա կլինի»: Անխոհեմորեն, ես ետ վազեցի իմ ամբողջովին ուժասպառ եղած կնոջ անկողնու մոտ և հայտնեցի նրան բարի լուրը: Ես շատ սխալ ժամանակ էի ընտրել դրա համար»:[5] Տարեցտարի Մեյսոնները սպասում էին իրենց յոթերորդ երեխայի ժամանմանը: Երեք, չորս, հինգ, վեց, յոթը տարիներ անցան: Վերջապես ութը տարի անց նրանց յոթերորդ երեխան ծնվեց՝ մի փոքրիկ տղա:

Անցած ապրիլին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց.

«Եթե մի ժամանակ Եկեղեցու և հասարակության չափանիշները հիմնականում համընկնում էին, այժմ մեծ անդունդ կա մեր մեջ, որը գնալով ավելի է խորանում: . . .

Մարդկության Փրկիչը՝ Իր մասին խոսելով, ասել է, որ լինելով աշխարհում, այս աշխարհից չէ:5 Մենք կարող ենք լինել աշխարհում, սակայն ոչ աշխարհից, եթե մերժենք կեղծ հասկացողություններն ու կեղծ ուսմունքները և հավատարիմ մնանք Աստծո պատվիրաններին:[6]

Այսօր աշխարհում շատ ձայներ նսեմացնում են երեխաներ ունենալու կարևորությունը կամ խորհուրդ են տալիս հետաձգել կամ սահմանափակել երեխաներ ունենալը: Իմ դուստրերը վերջերս ուղարկեցին ինձ մի նյութ, որը գրված էր Քրիստոնյա կնոջ կողմից (ոչ մեր հավատքից), ով հինգ երեխաներ ունի: Նա գրում է. «Մեծանալով այս քաղաքակրթության մեջ, շատ դժվար է աստվածաշնչյան մտածելակերպ ունենալ մայրության վերաբերյալ: . . . Երեխաները դասվում են քոլեջից շատ ավելի ցածր: Միանշանակ, աշխարհով մեկ շրջագայելուց ցածր, գիշերային ժամանցներ անցկացնելուց ցածր: Մարզասրահում ձեր մարմինը կատարելագործելուց ցածր: Ցածր ցանկացած աշխատանքից, որը դուք ունեք կամ հույս ունեք ունենալու»: Նա այնուհետև ավելացնում է. «Մայրությունը հաճելի զբաղմունք չէ, այն կոչում է: Դուք չեք հավաքում երեխաներ, որովհետև նրանք ձեզ համար ավելի գեղեցիկ են, քան նամականիշները: Դա այն

չէ, ինչ կարող եք անել, եթե ժամանակը բավականացնի: Դա այն է, ինչի համար Աստված տվել է ձեզ ժամանակ»:[7]

Փոքր երեխաներ ունենալը հեշտ չէ: Շատ ժամանակ պարզապես դժվար է: Մի երիտասարդ մայր ավտոբուս բարձրացավ յոթ երեխաների հետ: Ավտոբուսի վարորդը հարցրեց. «Նրանք բոլորը ձե՞րն են, տիկին: Թե՞ սա դաշտախնջույք է»:

«Նրանք բոլորն էլ իմն են»,- պատասխանում է նա: «Եվ դա դաշտախնջույք չէ»:[8]

Մինչ աշխարհը ավելի ու ավելի հաճախ է հարցնում. «Նրանք բոլորը ձե՞րն են», շնորհակալ եմ ձեզ, որ Եկեղեցում ստեղծում եք ապաստան ընտանիքների համար, որտեղ մենք պատվում և օգնում ենք մայրերին:

Արդարակյաց հոր համար բավարար խոսքեր չկան արտահայտելու երախտագիտությունն ու սերը, որ նա զգում է իր կնոջ հանդեպ՝ երեխաներ բերելու և խնամելու անչափ մեծ պարգևի համար:

Երեց Մեյսոնը մեկ այլ փորձառություն էր ունեցել իր ամուսնությունից ընդամենը շաբաթներ անց, որն օգնեց նրան որոշել իր ընտանիքի պարտականությունների առաջնահերթությունը: Նա ասել է.

«Մարին ու ես պատճառաբանում էինք, որ որպեսզի ես ավարտեմ բժշկական դպրոցը անհրաժեշտ կլինի, որ նա շարունակի աշխատել: Չնայած մենք այդպես չէիք ուզում, երեխաներ ավելի ուշ պիտի ունենայինք: [Իմ ծնողների տանը Եկեղեցու թերթն աչքի անցկացնելիս] ես մի հոդված տեսա Երեց Սպենսեր Վ. Քիմբալի կողմից գրված, ով այն ժամանակ Տասներկուսի Քվորումից էր, [որտեղ ընդգծում էր] ամուսնության հետ կապված պարտականությունները: Ըստ Երեց Քիմբալի, սուրբ պարտականություններից մեկը շատանալն ու երկիրը լցնելն էր: Իմ ծնողների տունը մոտ էր Եկեղեցու վարչական շենքին: Ես անմիջապես քայլեցի դեպի գրասենյակները և նրա հոդվածը կարդալուց 30 րոպե անց նստած էի գրասեղանի մոտ՝Երեց Սպենսեր Վ. Քիմբալի առջև»: (Սա այսօր այդքան էլ հեշտ չի լինի):

«Ես բացատրեցի, որ ուզում էի բժիշկ դառնալ: Այլընտրանք չկար բացի մեր երեխաներ ունենալը հետաձգելուց: Երեց Քիմբալը համբերատար լսեց և այնուհետև պատասխանեց մեղմ ձայնով. «Եղբայր Մեյսոն, արդյո՞ք Տերը կցանկանար, որ դուք խախտեիք նրա կարևորագույն պատվիրաններից մեկը բժիշկ դառնալու համար: Տիրոջ օգնությամբ դուք կարող եք ունենալ ձեր ընտանիքը և միևնույն ժամանակ դառնալ բժիշկ: Որտե՞ղ է ձեր հավատքը»»:

Երեց Մեյսոնը շարունակում է. «Մեր առաջին երեխան ծնվեց դեռ մեկ տարին չանցած: Մարին ու ես ջանասիրաբար աշխատում էինք և Տերը բացեց երկնքի պատուհանները»: Մեյսոնները օրհնվեցին ևս երկու երեխաներով, մինչև նա ավարտեց բժշկական դպրոցը չորս տարի անց:[9]

Աշխարհով մեկ անկայուն տնտեսության և ֆինանսական անորոշության ժամանակներ են: Ապրիլի գերագույն համաժողովին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Եթե դուք մտահոգվում եք կնոջը և ընտանիքին ֆինանսապես ապահովելու մասին, ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ ամոթ չէ, երբ զույգը տնտեսում և խնայում է: Հիմնականում այդ դժվար պահերին է, որ դուք մոտենում եք իրար՝ սովորելով զոհաբերել և դժվար որոշումներ կայացնել»:[10]

Երեց Քիմբալի մինչև հոգու խորքը թափանցող «Որտե՞ղ է ձեր հավատքը» հարցը ուղղում է մեզ դեպի սուրբ գրությունները:

Եդեմի պարտեզում չէր, որ Ադամն ու Եվան ունեցան իրենց առաջին երեխան: Թողնելով պարտեզը, «Ադամը [և Եվան] սկսեցին մշակել երկիրը . . . Ադամը գիտեցավ իր կնոջը և նա որդիներ և դուստրեր բերեց, և [հավատքով գործելով] նրանք սկսեցին բազմանալ և լցնել երկիրը»:[11]

Ոսկով, արծաթով և թանկարժեք բաներով լի իրենց Երուսաղեմի տանը չէր, որ Լեքին ու Սարիան, հավատքով գործելով, բերեցին իրենց որդիներ Հակոբին ու Հովսեփին: Դա անապատում էր: Լեքին խոսեց իր որդի Հակոբի մասին. «Անապատում, իմ նեղության օրերում, իմ առաջնեկն ես դու»:[12] Լեքին ասել է Հովսեփի մասին. «Դու ծնվեցիր [մեր] չարչարանքների անապատում. այո, [մեր] մեծագույն վշտի օրերին քո մայրը ծնեց քեզ»:[13]

Ելից գրքում մի մարդ ու կին ամուսնացան և, հավատքով գործելով, տղա երեխա ունեցան: Դռան վրա ողջունող նշան չկար՝ հայտարարելու նրա ծնունդը: Նրանք թաքցրեցին նրան, քանի որ Փարավոնը հրամայել էր, որ յուրաքանչյուր իսրայելացի նորածին տղայի «գետը գցեցէք»:[14] Դուք գիտեք պատմության շարունակությունը. երեխան խնամքով դրվել էր փոքրիկ տապանակի մեջ, դրվել գետում, հսկվել իր քրոջ կողմից, գտնվել Փարավոնի աղջկա կողմից և պահվել իր սեփական մոր հոգատարության ներքո՝ որպես նրա դայակ: Տղան վերադարձվել էր Փարավոնի դստերը, ով վերցրել էր նրան որպես իր որդի և կոչել նրան Մովսես:

Դավաո, Ֆիլիպիններ

Երեխայի ծննդյան ամենասիրված պատմության մեջ չկար զարդարված մանկան սենյակ կամ թանկարժեք օրորոց՝ միայն մսուր աշխարհի Փրկչի համար։

«Լավագույն ժամանակներում և . . . վատագույն ժամանակներում»,[15] Աստծո ճշմարիտ սրբերը, հավատքով գործելով, երբեք չեն մոռացել, մերժել կամ անուշադրության մատնել «շատանալու և երկիրը լցնելու . . . Աստծո պատվիրանը»։[16] Մենք հավատքով առաջ ենք գնում, գիտակցելով, որ երբ և քանի երեխա ունենալու որոշումը կայացվում է ամուսնու և կնոջ և Տիրոջ կողմից։ Մենք չպետք է քննադատենք միմյանց այս հարցի շուրջ։

Երեխաներ բերելը նուրբ հարց է, որը կարող է շատ ցավագին լինել արդար կանանց համար, ովքեր հնարավորություն չունեն ամուսնանալու ու ընտանիք ունենալու։ Խոսքս ուղղում եմ ձեզ՝ ազնիվ կանայք, մեր Երկնային Հայրը գիտի ձեր աղոթքներն ու ցանկությունները։ Որքան երախտապարտ ենք մենք ձեր ակնառու ազդեցության համար, ներառյալ քնքուշ ձեռքերով երեխաներին հասնելու համար, ովքեր ձեր հավատքի և ամրության կարիքն ունեն։

Երեխաներ բերելը կարող է նաև վշտալի թեմա լինել արդար զույգերի համար, ովքեր ամուսնանում են և պարվում, որ չեն կարող երեխաներ ունենալ, որոնց նրանք այնքան անհամբեր սպասել են, կամ ամուսնու և կնոջ համար, ովքեր ծրագրում են ունենալ մեծ ընտանիք, սակայն օրհնված են ավելի փոքր ընտանիքով։

Մենք չենք կարող միշտ նկարագրել մեր մահկանացության դժվարությունները։ Երբեմն կյանքը շատ անարդար է թվում, հատկապես, երբ մեր մեծագույն ցանկությունն է անել ճիշտ այն բաները, ինչ Տերն է պատվիրել։ Որպես Տիրոջ ծառա, ես հավատացնում եմ ձեզ, որ այս խոստումը հավաստի է. «Հավատարիմ անդամները, ում հանգամանքները նրանց թույլ չեն տալիս ստանալու հավերժական ամուսնության և ծնող լինելու օրհնությունները այս կյանքում, կստանան բոլոր խոստացված օրհնությունները հավերժության մեջ, [եթե] նրանք պահում են ուխտերը, որոնք նրանք կապել են Աստծո հետ»։[17]

Նախագահ Ջ. Սքոթ Դորիուսը՝ Պերու Լիմա Արևմտյան Միսիայից, պատմել է ինձ իրենց պատմությունը։ Նա ասել է.

«Բեքին ու ես ամուսնացած էինք արդեն 25 տարի, առանց հնարավորության ունենալու [կամ որդեգրելու] երեխաներ։ Մենք տեղափոխվել էինք մի քանի անգամ։ Ամեն անգամ նոր միջավայրում մեզ ներկայացնելը դժվար էր, երբեմն, ցավագին։ Ծխի անդամները խորհում էին, թե ինչու մենք երեխաներ [չունեինք]։ Նրանք միակ խորհողները չէին։

Երբ ես կանչվեցի լինել եպիսկոպոս, ծխի անդամները մտահոգություն [արտահայտեցին], որ ես ոչ մի փորձ չունեի երեխաների և պատանիների հետ։ Ես շնորհակալություն հայտնեցի նրանց՝ իրենց հաստատող քվեարկության համար և խնդրեցի նրանց թույլ տալ ինձ կատարելագործել երեխաներ մեծացնելու իմ ունակությունները իրենց երեխաների հետ աշխատելով։ Նրանք սիրով համաձայնվեցին։

Մենք սպասեցինք, հեռանկար ձեռք բերեցինք և սովորեցինք համբերել։ Ամուսնությունից 25 տարի անց մի հրաշք երեխա եկավ մեր կյանք։ Մենք որդեգրեցինք երկու տարեկան Նիկոլին և այնուհետև նորածին Նիկոլային։ Օտարներն այժմ հաճոյախոսություններ են ուղղում մեզ մեր գեղեցիկ թոռնիկների համար։ Մենք ծիծաղում և ասում ենք. «Նրանք մեր երեխաներն են։ Մենք մեր կյանքը հակառակ հերթականությամբ ենք ապրում»»։[18]

Եղբայրներ և քույրեր, մենք չպետք է քննադատաբար

վերաբերվենք իրար այս սուրբ և անձնական պատասխանատվության առնչությամբ:

«Եւ [Հիսուսը] մի երեխայ . . . գրկելով ասաց . . .

Ով որ այսպիսի երեխաներից մէկին իմ անունովս ընդունի՝ ինձ է ընդունում. Եւ ով որ ինձ ընդունի . . . ընդունում է . . . ինձ ուղարկողին»:[19]

Ինչ հրաշալի օրհնություն մենք ունենք՝ ընդունելու Աստծո որդիներին ու դուստրերին մեր տուն:

Եկեք խոնարհաբար և աղոթքով ձգտենք հասկանալ և ընդունել Աստծո պատվիրանները՝ ակնածանքով լսելով Նրա Սուրբ Հոգու ձայնին:

Ընտանիքները առանցքային են Աստծո հավերժական ծրագրում: Ես վկայում եմ երեխաների մեծ օրհնության և երջանկության մասին, որը նրանք կպարգևեն մեզ այս կյանքում և հավերժություններում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39:
2. Ծննդոց Ա.28:
3. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
4. According to the annual American Community Survey, released by the U.S. Census Bureau, "Utah still has the nation's largest households, highest fertility rate, lowest median age, youngest age at marriage and most stay-at-home moms" ("Who Are Utahns? Survey Shows We're Highest, Lowest, Youngest," *Salt Lake Tribune,* Sept. 22, 2011, A1, A8).
5. E-mail from Elder James O. Mason, June 25, 2011.
6. Թոմաս Ս. Մոնսոն, «Քահանայության զորությունը», *Լիահոնա,* մայիս 2011, 66, 67:
7. Rachel Jankovic, "Motherhood Is a Calling (and Where Your Children Rank)," July 14, 2011, desiringgod.org.
8. Տես "Jokes and Funny Stories about Children," thejokes.co.uk/jokes-about-children.php:
9. E-mail from Elder James O. Mason, June 29, 2011.
10. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա,* մայիս 2011, 67:
11. Մովսես 5.1,2:
12. 2 Նեփի 2.1:
13. 2 Նեփի 3.1:
14. Ելից Ա.22:
15. Charles Dickens, *A Tale of Two Cities* (Signet Classic, 1997), 13.
16. *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
17. *Handbook 2: Administering the Church* (2010), 1.3.3.
18. E-mail from President J. Scott Dorius, Aug. 28, 2011.
19. Մարկոս Թ.36–37:

Երեց Յան Ս. Արդերն
Յոթանասունից

Պատրաստվելու ժամանակը

Մենք պետք է նվիրենք մեր ժամանակը այն ամենին, ինչն առավել կարևոր է:

Քարոզիր Իմ Ավետարանը գրքույկի ութերորդ գլուխը մեր ուշադրությունն է հրավիրում ժամանակի իմաստուն օգտագործման վրա: Այս գլխում Երեց Մ. Ռասսել Բալլարդը հիշեցնում է, որ մենք պետք է նպատակներ դնենք և հմտություններ ձեռք բերենք՝ դրանց հասնելու համար (տես *Քարոզիր Իմ Ավետարանը. միսիոներական ծառայության ուղեցույց* [2004], 146): Այդ հմտություններից է մեր ժամանակի ճիշտ օգտագործումը:

Ես շնորհակալ եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի օրինակի համար: Գործելով որպես Աստծո մարգարե, նա հետևում է, ինչպես անում էր Փրկիչը, որպեսզի բավական ժամանակ ունենա հիվանդներին այցելելու (տես Ղուկաս 17.12–14), աղքատներին ոգևորելու և բոլորին ծառայելու համար: Ես նաև շնորհակալ եմ բազմաթիվ այլ մարդկանց օրինակի համար, ովքեր իրենց ժամանակն են տրամադրում, ծառայելով մերձավորներին: Ես վկայում եմ, որ մյուսներին ծառայելու համար մեր ժամանակից հատկացնելը հաճելի է Աստծուն և մոտեցնում է մեզ Նրան: Մեր Փրկիչը հավատարիմ կլինի Իր խոսքին, որ «նա, ով հավատարիմ և իմաստուն է ժամանակի մեջ, արժանի է համարվում ժառանգելու իմ Հոր կողմից նրանց համար պատրաստած ապարանքները» (ՎևՈ 72.4):

Ժամանակը չի վաճառվում, այն չի կարելի է գնել որևէ խանութում որևէ գնով: Սակայն, եթե այն իմաստուն օգտագործվի, ապա այն անգին է: Ամեն օր մեզ անվճար տրված է բոպեների և ժամերի նույն քանակությունը, և մենք շուտով հասկանում ենք, ինչպես սովորեցնում է ծանոթ օրհներգը, որ «ժամանակը անցնում է կայծակի պես, մենք չենք կարող ետ բերել այն» ("Improve the Shining Moments," *Hymns,* no. 226): Այն ժամանակը, որը մենք ունենք, մենք պետք է իմաստուն օգտագործենք: Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Մենք բոլորս պարտական ենք Աստծուն՝ ժամանակը ճիշտ օգտագործելու ունակության համար, և նա կպահանջի մեզանից այն օգտագործելու խիստ հաշվետվություն» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 286):

Նկատի ունենալով մեր առաջ դրված պահանջները, մենք պետք է սովորենք առաջնահերթություններ սահմանել, որպեսզի ընտրությունները համապատասխանեն մեր նպատակներին, այլապես

կենթարկվենք անգործության քամիներին և կքշվենք ժամանակը վատնող մեկ գործողությունից դեպի մյուսը: Մենք բոլորս լավ ուսուցանվել ենք առաջնահերթությունների մասին Վարդապետի Լեռան Քարոզում.«Առաջ Աստուծոյ արքայությունը և նորա արդարությունը խնդրեցեք» (Մատթեոս 6.33, ծանուցում ա; Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս 6.38): (Տես նաև Dallin H. Oaks, "Focus and Priorities," *Liahona,* July 2001, 99–102:)

Ալման խոսել է առաջնահերթությունների մասին, երբ ուսուցանել է, որ «այս կյանքը դարձավ մի փորձնական վիճակ. մի ժամանակ՝ պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն» (Ալմա 12.24): Աստծուն հանդիպելուն պատրաստվելիս, ժամանակի հարուստ ժառանգությունը լավագույն ձևով օգտագործելու համար պահանջվում է ուղղություն, բայց, անշուշտ, մենք պետք է Տիրոջը և մեր ընտանիքները դնենք ցուցակի սկզբում: Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը հիշեցնում է մեզ, որ «ընտանեկան հարաբերություններում *սեր* բառը կարդացվում է որպես *ժամանակ*» («Առավել կարևոր բաները», *Լիահոնա,* նոյ. 2010, 22): Ես վկայում եմ, որ երբ աղոթքով և անկեղծ սրտով փնտրենք օգնություն, մեր Երկնային Հայրը կօգնի մեզ շեշտը դնելու այն բաների վրա, որոնք առավել շատ են արժանի մեր ժամանակին:

Ժամանակի սխալ օգտագործումը անգործության մոտ բարեկամն է: Հետևելով պարապ չլինելու պատվիրանին (ՎԿՈ 88.124), մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի զբաղված լինելը հավասար լինի արդյունավետ լինելուն: Օրինակ, հիանալի է անմիջապես մատների տակ ունենալ ակնթարթային հաղորդակցման միջոցներ, սակայն եկեք հետևենք, որ չդառնանք անվերահսկելի հաղորդակիցներ: Ես զգում եմ, որ ոմանք ընկնում են ժամանակատար նոր հակումների ծուղակը, որը սոցիալական հաղորդագրություններ անընդմեջ ստուգելու և ուղարկելու գերի է մեզ դարձնում, դրանով ստեղծելով զբաղված և արդյունավետ լինելու կեղծ տպավորություն:

Հաղորդակցմանը և տեղեկատվությանը հեշտ հասնելիություն ունենալը շատ օգտակար կողմեր ունի: Ես օգտակար եմ համարում մատչելիությունը հետազոտական հոդվածներին, համաժողովների ելույթներին, նախնիների գրառումներին և է-փոստին, Facebook-ի հիշեցումներին, tweet-երին և տեքստերին: Որքան էլ լավը լինեն այս բաները, մենք չենք կարող թույլ տալ, որ դրանք մի կողմ մղեն մեծագույն կարևորություն կրող բաները: Որքան տխուր կլինի, եթե հեռախոսը և համակարգիչը՝ իրենց ողջ բարդ կառուցվածքով, դուրս մղեին սիրելի Երկնային Հորն ուղղված անկեղծ աղոթքի պարզությունը: Եկեք նույնքան արագ լինենք ծնկի իջնելիս, որքան արագ ենք տեքստ հավաքելիս:

Էլեկտրոնային խաղերը և վիրտուալ ձեռքբերումները չեն կարող փոխարինել իրական ընկերներին, որոնք կարող են քաջալերելով գրկախառնվել, աղոթել մեզ համար և գործել մեր լավագույն շահերին համաձայն: Որքան երախտապարտ եմ ես, երբ տեսնում եմ, ինչպես են քվորումի, դասարանի և Սփոփող Միության անդամները շտապում աջակցել միմյանց: Այդ պահերին, ես ավելի լավ եմ հասկանում այն, ինչ ի նկատի ուներ Պողոս Առաքյալը. «Այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ սուրբերի հետ քաղաքացիներ» (Եփեսացիս 2.19):

Ես գիտեմ, որ մեր մեծագույն երջանկությունը կախված է դեպի Տերը (տես Ալմա 37.37) և այն բաները ուղղվելուց, որոնք տևական հատուցում են պարգևում, ոչ թե՝ անթիվ ժամեր անմիտ տրվելուց կարգավիճակները թարմացնելուն, վիդեո և հեռախոսային խաղեր խաղալուն: Ես կոչ եմ անում ձեզանից յուրաքանչյուրին իր ձեռքը առնել այս բաները, որոնք թալանում են մեզ, զրկելով մեր թանկարժեք ժամանակից, և վճռել դառնալ դրանց տիրակալը, ոչ թե թույլ տալ, որ հակում առաջացնող իրենց բնույթի շնորհիվ, դրանք դառնան մեր տիրակալները:

Որպեսզի ունենանք այն խաղաղությունը, որի մասին խոսում է Փրկիչը (տես Հովհաննես 14.27), մենք պետք է նվիրենք մեր ժամանակը այն ամենին, ինչն առավել կարևոր է, իսկ առավել կարևոր են Աստծո բաները: Աստծո հետ անկեղծ աղոթքի մեջ մտնելով, ամեն օր սուրբ գրությունները կարդալով և ուսումնասիրելով, մեր կարդացածի և զգացածի շուրջ խորհելով, ապա սովորած դասերը կիրառելով և դրանցով ապրելով, մենք մոտենում ենք Նրան: Աստծո խոստումն է, որ, եթե մենք ջանասիրաբար փնտրենք լավագույն գրքերում, «[Նա մեզ] գիտելիք կտա իր Սուրբ Հոգու միջոցով» (ՎԿՈ 121.26; տես նաև ՎԿՈ 109.14–15):

Սատանան կգայթակղի մեզ սխալ օգտագործել մեր ժամանակը՝ ծպտված հրապուրանքներով: Թեև գայթակղություններն անխուսափելի են, Երեց Քվենթին Լ. Քուքը ուսուցանել է, որ «Սրբերը, որոնք արձագանքում են Փրկչի ուղերձին, չեն շեղվի ուղուց՝ մոլորեցնող և կործանարար փորձերով» ("Are You a Saint?" *Liahona,* Nov. 2003, 96): Հայրում Փեյջը՝ Մորմոնի Գրքի Ութ Վկաներից մեկը, արժեքավոր դաս է մեզ սովորեցրել

Սալվադոր, Բրազիլիա

շեղումների մասին: Նա մի հատուկ քար ուներ, որին նայելով գրի էր առնում այն, ինչ համարում էր Եկեղեցու համար ստացված հայտնություններ (տես ՎևՈւ 28): Ճիշտ ուղու վրա վերադառնալու համար, քարը վերցվեց և վերածվեց փոշու, որպեսզի այլևս երբեք չլիներ շեղող հանգամանք:[1] Ես հրավիրում եմ մեզ բոլորին հայտնաբերել մեր կյանքի ժամանակը վատնող շեղումները, որոնք պետք է փոշիացվեն: Մենք պետք է լինենք իմաստուն մեր դատողություններում, հետևելով, որ ժամանակի կշեռքը ճիշտ հավասարակշռված լինի, ներառելով Տիրոջը, ընտանիքը, աշխատանքը և զվարճալի ժամանցը: Ինչպես շատերդ արդեն ձեզ համար պարզել եք, կյանքում ավելի մեծ երջանկություն կարելի է գտնել, եթե օգտագործել ժամանակը այնպիսի բաների վրա, որոնք «առաքինի են, սիրալիր, բարեհամբավ և գովեստի արժանի» (Հավատո հանգանակներ 1.13):

Ժամանակը արագ սլանում է ժամացույցի աշխատանքի հետ մեկտեղ: Քանի դեռ աշխատում է մահկանացու կյանքի ժամացույցը, այսօր լավ օր է՝ վերանայելու համար այն, ինչ մենք անում ենք, պատրաստվելով հանդիպել Աստծուն: Ես վկայում եմ, որ մեծ պարգևներ են սպասվում նրանց, ովքեր մահկանացու կյանքի ժամանակն օգտագործում են անմահությանը և հավերժական կյանքին պատրաստվելու համար: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Provo Utah Central Stake general minutes, Apr. 6, 1856, vol. 10 (1855–60), Church History Library, Salt Lake City, 273 (spelling, punctuation, and capitalization modernized): “Father [Emer] Harris said the Apostle said we have to fight against principalities and powers in high places. Bro. Hiram Page dug out of the earth a black stone [and] put it in his pocket. When he got home, he looked at it. It contained a sentence on paper to befit it. As soon as he wrote one sentence, another sentence came on the stone, until he wrote 16 pages. Bro. Joseph was told of the fact. One person asked Joseph if it is right. He said he did not know, but he prayed and got revelation that the stone was of the devil. Then it was broke to powder and the writings burnt. It was a work of the power of darkness. Amen”:

Երեց Կարլ Բ. Քուք
Յոթանասունից

Ավելի լավ է վեր նայել

Եթե մենք գործի ենք դնում մեր հավատքը և նայում դեպի Տերը օգնության համար, մենք էլ Նախագահ Մոնսոնի նման չենք ճնշվի կյանքի բեռներից:

Որպես Բարձրագույն Իշխանավոր իմ առաջին շաբաթվա վերջին՝ առանձնապես մի հոգնեցուցիչ օրվա ավարտին, իմ պայուսակը գերծանրաբեռնված էր, իսկ միտքս գերզբաղված հետևյալ հարցով. «Ինչպե՞ս եմ կարողանալու անել այս»: Ես դուրս եկա Յոթանասունի գրասենյակից և մտա Եկեղեցու կառավարչական շենքի վերելակը: Երբ վերելակը ցած էր իջնում, գլուխս կախ էր, իսկ հայացքս դատարկ հառված հատակին:

Դուռը բացվեց և ինչ-որ մեկը ներս մտավ, բայց ես հայացքս չբարձրացրեցի: Երբ դուռը փակվեց, ես լսեցի ինչ-որ մեկին հարցնելիս. «Այդ ինչի՞ն ես նայում ներքևում»: Ես ճանաչեցի այդ ձայնը՝ դա Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն էր:

Ես արագ վեր նայեցի և պատասխանեցի «Օ՜, ոչ մի բանի»: (Ես համոզված եմ, որ այդ խելացի պատասխանը իմ ունակությունների հանդեպ վստահությո՛ւն ներշնչեց):

Բայց նա նկատել էր իմ դեմքի ճնշված արտահայտությունը և իմ ծանր ճամպրուկը: Նա ժպտաց և սիրալիր առաջարկեց՝ մատնացույց անելով դեպի երկինք. «Ավելի լավ է վեր նայես»: Երբ մի հարկ էլ ներքև էինք իջնում, նա զվարթորեն բացատրեց, որ գնում էր տաճար: Երբ ինձ ցտեսություն ասաց, նրա հրաժեշտի հայացքը կարծես թե կրկին խոսեց սրտիս հետ. «Ուրեմն, հիշիր, ավելի լավ է վեր նայես»:

Երբ բաժանվեցինք, սուրբ գրքի խոսքերը միտքս եկան. «Հավատացեք Աստծուն. հավատացեք, որ նա կա . . . հավատացեք, որ նա ունի բոլոր իմաստությունը և բոլոր զորությունը՝ և՛ երկնքում, և՛ երկրի վրա»:[1] Երբ մտածեցի Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի զորության մասին, սիրտս գտավ այն հանգստությունը, որը ես զուր որոնում էի իջնող վերելակի հատակին:

Այդ ժամանակից ի վեր ես խորհել եմ այս փորձառության և մարգարեների դերի մասին: Ես ծանրաբեռնված էի և գլուխս կախ էր: Երբ մարգարեն խոսեց, ես նայեցի նրան: Նա ուղղեց իմ կիզակետը, որ նայեմ վեր՝ դեպի Աստված, որտեղ ես կկարողանայի բժշկվել և զորացվել Քրիստոսի Քավության միջոցով: Սա այն է, ինչ մարգարեներն են անում մեզ համար: Նրանք առաջնորդում են մեզ դեպի Աստված:[2]

Ես վկայում եմ, որ Նախագահ Մոնսոնը ոչ միայն մարգարե է, տեսանող և հայտնող, նա նաև դեպի վեր նայելու սկզբունքով ապրելու հրաշալի օրինակ է: Նա կարող է իր պարտականությունների

պատճառով բոլոր մարդկանցից ավելի ծանրաբեռնված զգալ: Փոխարենը, նա մեծ հավատք է գործադրում և լցված է ուրիշների հանդեպ լավատեսությամբ, իմաստությամբ և սիրով: Նրա վերաբերմունքն է «կարող եմ անել» և «կանեմ»: Նա վստահում է Տիրոջը և ապավինում է Նրան՝ ուժի համար, և Տերն օրհնում է նրան:

Փորձառությունը սովորեցրել է ինձ, որ եթե մենք գործի ենք դնում մեր հավատքը և նայում դեպի Տերը օգնության համար, մենք էլ Նախագահ Մոնսոնի նման չենք ճնշվի կյանքի բեռներից: Մենք անընդունակ չենք զգա անելու այն, ինչ մենք կանչված ենք անելու կամ պետք է անենք: Մենք կզորացվենք և մեր կյանքը կլցվի խաղաղությամբ և ուրախությամբ:[3] Մենք կսկսենք հասկանալ, որ մեզ անհանգստություն պատճառող բաների մեծ մասը հավերժական նշանակություն չունեն, իսկ եթե ունեն, Տերը կօգնի մեզ: Բայց մենք պետք է ունենանք հավատք վեր նայելու և խիզախություն՝ հետևելու Նրա հրահանգին:

Ինչո՞ւ է մեր կյանքում հետևողականորեն վեր նայելը մարտահրավեր: Հավանաբար, մեզ մոտ բացակայում է հավատքը, որ այդպիսի հասարակ գործողությունը կարող է լուծել մեր խնդիրները: Օրինակ, երբ թունավոր օձերը խայթեցին Իսրայելի զավակներին, Մովսեսին պատվիրվեց պղնձե մի օձ բարձրացնել ձողի վրա: Պղնձե օձը ներկայացնում էր Քրիստոսին: Նրանք, ովքեր նայեցին վերևում դրված օձին, ինչպես ասվել է մարգարեի կողմից, բժշկվեցին:[4] Բայց շատ ուրիշներ չկարողացան նայել վեր և նրանք կործանվեցին:[5]

Ալման համաձայն է, որ Իսրայելացիները օձին չնայեցին այն պատճառով, որ չհավատացին, որ այդ անելով կբժշկվեին: Այսօր Ալմայի խոսքերը մեզ են վերաբերում.

«Ով իմ եղբայրներ, եթե ձեզ հնարավոր լիներ ապաքինվել, սոսկ աչք ածելով շուրջը, որպեսզի դուք կարողանայիք ապաքինվել, մի՞թե դուք կհրաժարվեիք նայել արագ, թե դուք կկամենայիք ավելի շուտ կարծրացնել ձեր սրտերն անհավատությամբ և լինել ալարկոտ . . .

Եթե այդպես է, վայ պիտի գա ձեզ վրա. բայց եթե այդպես չէ, ուրեմն աչք ածեք շուրջը և սկսեք հավատալ Աստծո Որդուն, որ նա գալու է՝ փրկագնելու իր ժողովրդին, և որ նա պիտի տառապի ու մեռնի՝ [մեր] մեղքերը քավելու համար. և որ նա պիտի բարձրանա մեռելներից»:[6]

Նախագահ Մոնսոնի վեր նայելու հորդորը Քրիստոսին հիշելու փոխաբերությունն է: Երբ մենք հիշում ենք Նրան և վստահում Նրա զորությանը, մենք ուժ ենք ստանում Նրա Քավության միջոցով: Սա է միջոցը, որով մենք կարող ենք ազատվել մեր տագնապներից, մեր բեռներից և մեր տառապանքից: Սա է միջոցը, որով մենք կարող ենք ներվել և ապաքինվել մեր մեղքերի ցավից: Սա է միջոցը, որով մենք կարող ենք ստանալ հավատք և ուժ՝ դիմանալու բոլոր բաներին:[7]

Վերջերս քույր Քուկը և ես Հարավային Աֆրիկայում մասնակցեցինք կանանց համաժողովին: Քավությունը մեր կյանքում կիրառելու մասին մի քանի ոգեշնչող ելույթներ լսելուց հետո, ցցի Սփփոփող Միության նախագահը բոլորիս դուրս հրավիրեց: Մեզանից յուրաքանչյուրին տրվեց հելիումով լցված փուչիկ: Նա բացատրեց, որ փուչիկը ներկայացնում է այն բեռը, փորձությունը կամ դժվարությունը, որը մեզ ետ է պահում մեր կյանքում: Մինչև երեքը հաշվելուց հետո, մենք արձակեցինք մեր փուչիկները կամ մեր «բեռները»: Երբ մենք վեր նայեցինք և հետևեցինք, թե ինչպես էին մեր բեռները լողում հեռվում, պարզորոշ լսվեց «Օ՜» բացականչությունը: Մեր փուչիկներ արձակելը մի սքանչելի հիշեցում տվեց այն աննկարագրելի ուրախության մասին, որը գալիս է վեր նայելուց և Քրիստոսի մասին մտածելուց:

Ի տարբերություն հելիումով լցված փուչիկ արձակելուն, հոգեպես վեր նայելը մեկանգամյա փորձառություն չէ: Մենք սովորում ենք հաղորդության աղոթքից, որ մենք միշտ պետք է հիշենք Նրան և պահենք Նրա պատվիրանները, որպեսզի Նրա Հոգին մեզ հետ ունենանք ամեն օր՝ առաջնորդելու մեզ:[8]

Երբ Իսրայելի զավակները թափառում էին անապատում, Տերն էր առաջնորդում նրանց ճամփորդություններն ամեն օր, երբ նրանք հույս էին դնում Նրա հրահանգին: Ելից գրքում կարդում ենք. «Եվ Եհովան գնում էր նորանց առաջին ցերեկը ամպի սիւնով նորանց ճանապարհ ցոյց տալու համար, եւ գիշերը կրակի սիւնով, որ նորանց լոյս տայ»:[9] Նրա առաջնորդությունը մշտական էր, և ես տալիս եմ ձեզ իմ խոնարհ վկայությունը, որ Տերը կարող է անել նույնը մեզ համար:

Այսպիսով, ինչպե՞ս է Նա առաջնորդելու մեզ այսօր: Մարգարեների, առաքյալների և քահանայության առաջնորդների միջոցով և այն զգացումների միջոցով, որոնք գալիս են մեզ, երբ աղոթքով բացում ենք մեր սրտերն ու հոգիները Երկնային Հոր առաջ: Նա առաջնորդում է մեզ, երբ մենք թողնում ենք աշխարհի բաները, ապաշխարում և փոխվում: Նա առաջնորդում է, երբ մենք պահում ենք Նրա պատվիրանները և փորձում ավելի շատ նմանվել Նրան: Եվ Նա առաջնորդում է մեզ Սուրբ Հոգու միջոցով:[10]

Որպեսզի առաջնորդվենք կյանքի ճամփորդության ընթացքում և ունենանք Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունը, մենք պետք է ունենանք «լսող ականջ» և «տեսնող աչք», երկուսն էլ ուղղված դեպի վեր:[11] Մենք պետք է գործենք ըստ ստացած ուղղությունների: Մենք պետք է վեր նայենք և վեր բարձրանանք: Եվ երբ անենք, ես գիտեմ, որ մենք կքաջալերվենք, քանի որ Աստված կամենում է, որ մենք երջանիկ լինենք:

Մենք Երկնային Հոր զավակներն ենք: Նա ուզում է լինել մեր կյանքի մի մասը, օրհնելու մեզ, և օգնելու մեզ: Նա կբժշկի մեր վերքերը, կչորացնի մեր արցունքները և կօգնի մեզ Իր ներկայություն վերադառնալու մեր ճանապարհի ընթացքում: Երբ մենք ապավինենք Նրան, Նա կառաջնորդի մեզ:

Տերն իմ լույսն է, ուրեմն ինչի՞ց պիտի վախենամ
Օր ու գիշեր նրա ներկայությունը մոտ է . . .
Նա է իմ հրճվանքն ու երգը:
Օր ու գիշեր նա է առաջնորդում ինձ. . . ճանապարհի երկայնքով:[12]

Ես բերում եմ իմ վկայությունը, որ մեղքերը ներվում են և բեռները թեթևանում, երբ մենք նայում ենք Քրիստոսին: «Եկեք հիշենք նրան . . . և չկախենք մեր գլուխը»[13], քանզի ինչպես Նախագահ Մոնսոնն ասաց. «ավելի լավ է վեր նայել»:

Ես վկայում եմ, որ Հիսուսը մեր Փրկիչն է և Քավիչը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 4.9:
2. Տես 2 Նեփի 25.23, 26:
3. Տես Մոսիա 24.15:
4. Տես Թվոց 21.8–9:
5. Տես 1 Նեփի 14.41:
6. Ալմա 33.21–22; տես նաև հատվածներ 19–20:
7. Տես Ալմա 33.21–22; 3 Նեփի 9.13:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.77:
9. Ելից 13.21:
10. Տես 2 Նեփի 9.52; 31.13; Վարդապետություն և Ուխտեր 121.46:
11. Առակաց 20.12:
12. "The Lord Is My Light," *Hymns,* no. 89.
13. 2 Նեփի 10.20:

Երեց Լեգռան Ռ. Քըրթիս Կրտսեր
Յոթանասունից

Փրկագնում

Քրիստոսի միջոցով մարդիկ կարո՛ղ են փոխել և փոխո՛ւմ են իրենց կյանքը՝ փրկագնում առանալով:

Կան տարբեր անուններ, որոնք մենք վկայակոչում ենք՝ խոսելով Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Այդ անունները մեզ ներըմբռնում են տալիս Տիրոջ քավիչ առաքելության մասին տարբեր տեսանկյուններից: Վերցնենք, օրինակ՝ «Փրկիչ» տիտղոսը: Մենք բոլորս պատկերացում ունենք, թե ինչ է նշանակում է փրկվել, քանի որ յուրաքանչյուրս փրկել ենք ինչ-որ ժամանակ ինչ-որ բանից: Երեխա ժամանակ ես ու քույրս խաղում էինք գետում՝ մի փոքրիկ նավակի մեջ, երբ մենք անմտորեն թողեցինք խաղի անվտանգ տարածքը և գետի հոսանքով քշվելով հայտնվեցինք վտանգավոր զառիթափի առաջ: Ի պատասխան մեր աղաղակների՝ մեր հայրը վազեց մեզ օգնության՝ փրկելով մեզ գետի վտանգներից: Երբ մտածում եմ փրկվելու մասին, ես մտաբերում եմ այդ պատահարը:

«Քավիչ» տիտղոսը նմանատիպ ներըմբռնում է առաջարկում: «Քավել» նշանակում է փրկագնել կամ ետ գնել: Իրավական գործի դեպքում սեփականությունը ետ է գնվում մարելով վարկը կամ այլ մուրհակները: Հին Կտակարանի ժամանակ Մովսեսի օրենքը տարբեր եղանակներ էր թույլատրում, երբ գումար վճարելով հնարավոր էր ազատագրել կամ փրկագնել ծառաներին և գույքը (տես Ղևտացիս 25.29–32, 48–55):

Քավել բառի սուրբ գրության հանրահայտ օգտագործման դեպքերից մեկն առնչվում է Իսրայելի զավակների Եգիպտոսի գերությունից դուրս բերման հետ: Այդ ազատագրումից հետո Մովսեսն ասաց նրանց. «Նրա համար, որ Տէրը սիրում էր ձեզ . . . [Նա] ամուր ձեռքով ու հզօր բազկով ձեզ դուրս բերեց, ձեզ փրկագնեց ստրկութեան տնից՝ եգիպտացիների թագաւոր փարաւոնի ձեռքից» (Բ Օրինաց 7.8):

Եհովայի կողմից Իսրայելի ժողովրդին գերությունից փրկագնելու թեման մի քանի անգամ կրկնվում է սուրբ գրություններում: Հաճախ դա արվում է, որպեսզի ժողովրդին հիշեցվի Տիրոջ բարության մասին Իսրայելի զավակներին եգիպտացիներից ազատելիս: Սակայն դա արվում է նաև, որ նրանք սովորեն, որ պետք է լինի ևս մեկ՝ ավելի կարևոր փրկագնում Իսրայելի համար: Լեքին սովորեցրել է. «Եվ Մեսիան գալիս է ժամանակի լրիվության մեջ, որպեսզի մարդկանց զավակներին փրկագնի անկումից» (2 Նեփի 2.26):

Սաղմոսասացը գրել է. «Բայց Աստված իմ անձը կփրկագնէ գերեզմանի ձեռքից» (Սաղմոս 49.15):

Տերը հայտարարել է Եսայիայի միջոցով. «Ես մեզի պես ջնջել եմ քո հանցանքները, և ամպի պես՝ քո մեղքերը. դարձիր դեպի ինձ,

որովհետև ես քեզ փրկագնել եմ» (Եսայիա 44.22):

Այս երեք սուրբ գրություններում նշված փրկագնումը, իհարկե, Հիսուս Քրիստոսի Քավությունն է: Սա է «շատ փրկությունը», որը մեր սիրող Աստվածը տալիս է մեզ (Սաղմոս 130.7): Ի տարբերություն Մովսեսի օրենքի ներքո կատարվող փրկագնման կամ ժամանակակից իրավական պայմանավորվածությունների, այդ փրկագնումը չի գալիս «ապականացու արծաթով կամ ոսկով» (Ա Պետրոս 1.18): «[Քրիստոսում] մենք ունենք փրկություն նրա արյունով՝ մեղքերի թողությունն իր շնորհքի մեծության չափով» (Եփեսացիս 1.7): Նախագահ Ջոն Թեյլորն ուսուցանել է, որ Քավչի զոհաբերության շնորհիվ՝ «պարտքը վճարված է, փրկագնումը՝ արված, ուխտը կատարված է, արդարադատությունը՝ բավարարված, Աստծո կամքը կատարված է, և բոլոր իշխանությունը . . . տրված է Աստծո Որդու ձեռքը» (*Teachings of Presidents of the Church: John Taylor* [2001], 44):

Այդ փրկագնման հետևանքները ներառում են ֆիզիկական մահվան հաղթահարումը բոլոր Աստծո զավակների համար: Այսինքն՝ ժամանակավոր մահը հաղթահարված է և բոլորը պիտի հարություն առնեն: Մյուս կողմից՝ Քրիստոսի այս փրկագնումը հաղթանակ է հոգևոր մահվան հանդեպ: Իր տառապանքների ու մահվան շնորհիվ Քրիստոսը վճարեց ողջ մարդկության մեղքերի համար՝ անհատական ապաշխարության պայմանով:

Այսպիսով, եթե մենք ապաշխարում ենք, մենք կարող ենք ներվել մեր մեղքերից, որի գինը վճարել է մեր Քավիչը: Սա բարի լուր է բոլորիս համար, «որովհետև ամենքը մեղանչել են, և Աստծո փառքից պակասել» (Հռովմայեցիս 3.23): Նրանք, ովքեր էականորեն շեղվել են արդարության ուղիներից, ունեն այդ փրկագնման ծայրահեղ կարիքը, և եթե նրանք լիովին ապաշխարեն, ապա իրավունք ունեն դրանից օգտվելու: Բայց նրանք, ովքեր ջանք են թափել ապրելու արդար կյանքով, նույնպես մեծ անհրաժեշտություն ունեն այս փրկագնման համար, քանի որ առանց Քրիստոսի օգնության ոչ ոք չի կարող հասնել Հոր ներկայությունը: Այսպիսով, այս սիրող փրկագնումը թույլ է տալիս, որ արդարության և ողորմածության օրենքները բավարարվեն բոլոր նրանց կյանքում, ովքեր ապաշխարում և հետևում են Քրիստոսին:

Ինչ մեծ է և ինչ կատկառուն,
ծրագիրը քավման,
ուր սեր, զութ և արդարություն,
դաշն են ու անքաժան:
(“How Great the Wisdom and the Love,” *Hymns*, no. 195)

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է. «Կա մի Քավիչ, մի Միջնորդ, ով կանգնած է կամեցող և ունակ՝ մեղմելու արդարադատության պահանջները և ողորմածություն առաջարկելու նրանց, ովքեր մեղավոր են» (“The Mediator,” *Ensign,* May 1977, 56):

Սուրբ գրություններում, գրականության մեջ և կյանքում շատ ենք հանդիպում փրկագնման պատմությունների: Քրիստոսի միջոցով մարդիկ կարո՛ղ են փոխել և փոխո՛ւմ են իրենց կյանքը՝ փրկագնում ստանալով: Ես սիրում եմ փրկագնման այս պատմությունները:

Մի ընկեր ունեմ, որն իր երիտասարդ տարիքում չէր հետևում Եկեղեցու ուսմունքներին: Երբ երիտասարդ ամուրի դարձավ, նա հասկացավ, թե ինչից էր զրկվում չապրելով ավետարանով: Նա ապաշխարեց, փոխեց իր կյանքը և սկսեց նվիրված արդար կյանք վարել: Մի օր, մեր պատանեկան ընկերությունից տարիներ անց, ես հանդիպեցի նրան տաճարում: Ավետարանի լույսը շողում էր նրա աչքերում, և ես զգում էի, որ նա նվիրված Եկեղեցու անդամ է, որը փորձում է լիովին ապրել ավետարանով: Նրա պատմությունը փրկագնման պատմություն է:

Մի անգամ ես մկրտության առանձնազրույց էի անցկացնում մի կնոջ հետ, որը շատ ցավալի մեղք էր գործել: Առանձնազրույցի ընթացքում ես հարցրեցի, թե արդյոք նա հասկանում է, որ երբեք չի կարող կրկնել այդ մեղքը: Խոր զգացմունքով իր աչքերում և իր ձայնում, նա ասաց. «Օ՜, նախագահ, ես երբեք չեմ կարող կրկնել այդ մեղքը: Այդ է պատճառը, որ ես ուզում եմ մկրտվել, որպեսզի մաքրվեմ այդ սարսափելի մեղքի հետևանքներից»: Նրա պատմությունը փրկագնման պատմություն է:

Մինչ ես այցելում եմ ցցի համաժողովներ և այլ հանդիպումների վերջին տարիներին, ես իրականացնում եմ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի կոչը՝ փրկել Եկեղեցու քիչ ակտիվ անդամներին: Մի ցցի համաժողովի ժամանակ ես պատմեցի, թե ինչպես մի ոչ ակտիվ

անդամ վերադարձել էր լիարժեք ակտիվության նրանից հետո, երբ իր եպիսկոպոսն ու մյուս ղեկավարներն այցելել էին նրան տանը, ասել էին նրան, որ ունեին իր կարիքը և նրան կանչել էին ծխում ծառայելու: Այդ պատմության մարդը ոչ միայն ընդունել էր կոչումը, այլ փոխել էր իր կյանքն ու սովորությունները և լիովին ակտիվացել էր Եկեղեցում:

Իմ ընկերներից մեկն այն ժողովի մեջ էր, որտեղ ես պատմում էի այդ դեպքի մասին: Մինչ ես պատմում էի այդ պատմությունը նրա դեմքը նկատելիորեն փոխվեց: Հաջորդ օրը նա ինձ մի էլ-նամակ ուղարկեց, որում ասում էր, որ այդ պատմության հանդեպ իր հուզական արձագանքի պատճառն այն էր, որ դա շատ նման էր իր աներոջ Եկեղեցի վերադառնալու պատմությանը: Նա ասաց ինձ, որ եպիսկոպոսի այդպիսի մի այցի և Եկեղեցում ծառայելու հրավերի արդյունքում նրա աները վերագնահատել էր իր կյանքն ու իր վկայությունը, լուրջ փոփոխություններ կատարել իր կյանքում և ընդունել էր կոչումը: Այդ վերաակտիվացած մարդն այժմ 88 ժառանգորդ ունի, որոնք Եկեղեցու ակտիվ անդամներ են:

Մի քանի օր անց մի հանդիպման ժամանակ ես պատմեցի այդ երկու պատմությունները: Հաջորդ օրը ես մեկ այլ էլ-նամակ ստացա, որը սկսում էր այսպես. «Դա նման է նաև իմ հոր պատմությանը»: Ցցի նախագահի այդ նամակը պատմում էր, թե ինչպես է նրա հայրը հրավիրվել Եկեղեցում ծառայելու, չնայած ակտիվ չի եղել և որոշ սովորություններ է ունեցել, որոնք անհրաժեշտ է եղել փոխել: Նա ընդունել է հրավերը, ընթացքում ապաշխարել է և, ի վերջո, ծառայել է որպես ցցի նախագահ, այնուհետև՝ միսիայի նախագահ, և իր ժառանգների համար հիմք է դրել, որ նրանք լինեն Եկեղեցու հավատարիմ անդամներ:

Մի քանի շաբաթ անց ես պատմեցի բոլոր երեք պատմությունները մեկ այլ ցցի համաժողովում: Ժողովից հետո մի մարդ մոտեցավ ինձ և ասաց, որ դա նման չէ իր հոր

պատմությանը: Սակայն դա նման է *իր* պատմությանը: Նա պատմեց ինձ այն իրադարձությունների մասին, որոնք նրան օգնեցին ապաշխարել և վերադառնալ լիարժեք ներգրավվածության Եկեղեցում: Եվ այդպես շարունակվեց. մինչ ես փոխանցում էի քիչ ակտիվներին փրկելու պատգամը, ես լսում էի պատմություն պատմությունի ետևից այն մարդկանց մասին, ովքեր արձագանքել էին վերադառնալու և իրենց կյանքը փոխելու հրավերին: Ես լսում էի փրկագնման պատմություններ՝ մեկը մյուսի ետևից:

Թեև մենք երբեք չենք կարող Քավչին ետ վճարել այն, ինչ Նա վճարել է մեզ համար, փրկագնման ծրագիրը կոչ է անում մեր լավագույն ջանքերը ներդնել, որպեսզի լիովին ապաշխարենք և Աստծո կամքը կատարենք: Առաքյալ Օրսոն Ֆ. Ուիթնին գրել է.

Փրկի՜չ, Քավիչ իմ հոգու,
Քո հզոր ձեռքը բժշկել է ինձ,
Քո հրաշագործ զորությունը բարձրացրել է ինձ,
Եվ քաղցրով լցրել է բաժակն իմ դառը:
Բառեր չկան, որ գոհություն հայտնեմ,
Օ՜, ողորմած՝ Իսրայելի Աստված:

Երբեք չեմ կարող քեզ հատուցել,
Տի՜ր, բայց կարող եմ քեզ սիրել:
Քո մաքուր խո՞սքը չի եղել իմ միակ հրճվանքը,
Օրվա իմ ուրախությունը, գիշերվա իմ երազը:
Արդ, թող իմ շուրթերը և իմ վարքը,
Ընդմիշտ խոսեն, գործեն քո կամքը:
(“Savior, Redeemer of My Soul,” *Hymns,* no. 112)

Ես բերում եմ իմ վկայությունը Քրիստոսի Քավության զորության մասին: Երբ ապաշխարում ենք և գալիս ենք Նրա մոտ, մենք կարող ենք ստանալ հավերժական կյանքի բոլոր օրհնությունները: Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք դա անել, ձեռք բերելով փրկագնման սեփական պատմությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ապաշխարության աստվածային պարգևը

Միայն ապաշխարությունն է տանում դեպի ավելի լավ կյանքի պայծառ բարձրունքները:

Մորմոնի Գրքում կա մի պատմություն Նեհոր անունով մարդու մասին: Հեշտ է հասկանալ, թե ինչու Մորմոնը, կրճատելով Նեփիացիների գրվածքների հազար տարիները, կարևոր է համարել այս մարդու և նրա վարդապետության երկարատև ազդեցության մասին պատմությունը: Մորմոնը փորձում էր նախազգուշացնել մեզ, իմանալով, որ այդ փիլիսոփայությունը կրկին ջրի երես կգա մեր օրերում:

Նեհորը ասպարեզ եկավ Քրիստոսի ծննդից մոտ 90 տարի առաջ: Նա ուսուցանում էր, «որ ողջ մարդկությունը կփրկվի վերջին օրը, . . . քանզի Տերն է ստեղծել բոլոր մարդկանց, և նաև փրկագնել է բոլոր մարդկանց. և վերջում բոլոր մարդիկ պետք է ունենան հավերժական կյանք» (Ալմա 1.4):

Մոտ 15 տարի անց, Կորիհորը հայտնվեց Նեփիացիների մեջ, քարոզելով և շեշտելով Նեհորի վարդապետությունը: Մորմոնի Գիրքը գրում է, որ «նա հակաքրիստոս էր, քանզի նա սկսեց քարոզել ժողովրդին մարգարեությունների դեմ, . . . Քրիստոսի գալստի վերաբերյալ» (Ալմա 30.6): Կորիհորի քարոզի իմաստը նրանում էր, «որ չէր կարող կատարված լինել քավություն մարդկանց մեղքերի համար, բայց ամեն մարդ ընթանում էր այս կյանքում ըստ անձնական ինքնակառավարման. հետևաբար, ամեն մարդ առաջադիմել է համաձայն իր հանճարի, և որ ամեն մարդ հաղթել է համաձայն իր ուժի. և ինչ որ մարդ արել է, հանցագործություն չէ» (Ալմա 30.17): Այս կեղծ մարգարեները և նրանց հետևորդները «չէին հավատում իրենց մեղքերից ապաշխարությանը» (Ալմա 15.15):

Ինչպես Նեհորի և Կորիհորի օրերում, մենք ապրում ենք մի ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսի գալուստը հեռու չէ, մեր դեպքում, Նրա Երկրորդ Գալստին պատրաստվելու ժամանակ: Եվ նմանապես, ապաշխարության ուղերձը հաճախ չի ողջունվում: Ոմանք մարգարեանում են, որ եթե կա Աստված, ապա Նա իրական պահանջներ չի դնում մեր առաջ (տես Ալմա 18.5): Մյուսները այսօր այն կարծիքին են, որ սիրող Աստված ներում է բոլոր մեղքերը հասարակ խոստովանության արդյունքում, կամ, որ եթե իսկապես կա պատիժ մեղքի համար, «Աստված կծեծի մեզ մի քանի մտրակահարվածով, և ի վերջո, մենք կփրկվենք Աստծո արքայությունում» (2 Նեփի 28.8): Մյուսները, Կորիհորի հետ, մերժում են Քրիստոսի իսկ գոյությունը և նման բան, ինչպիսին է մեղքը: Ըստ նրանց վարդապետությունների, արժեքները, չափանիշները և, անգամ, ճշմարտությունը, բոլորը հարաբերական են: Այսպիսով, այն, ինչ մարդը ճիշտ է համարում իր համար, չի կարող մյուսների կողմից դատապարտվել որպես սխալ կամ մեղսավոր:

Մակերեսորեն, նման փիլիսոփայությունները հրապուրիչ են թվում, քանի որ մեզ իրավունք են տալիս տրվել որևէ ցանկության առանց մտահոգվելու հետևանքների մասին: Օգտվելով Նեհորի և Կորիհորի վարդապետություններից, մենք կարող ենք արդարացնել և հիմնավորել ցանկացած արարք: Երբ մարգարեները գալիս են, աղաղակելով ապաշխարություն, դա «սառը ջուր է լցնում զվարճացողների վրա»: Բայց, իրականում, մարգարեական կանչը պետք է ուրախությամբ ընդունվի: Առանց ապաշխարության կյանքում իրական առաջխաղացում չի լինի: Զևանալը, որ չկա մեղք, չի նվազեցնի դրա ծանրությունը կամ ցավը: Մեղքի համար տանջվելը ինքնին չի լավացնում իրավիճակը: Միայն ապաշխարությունն է տանում դեպի ավելի լավ կյանքի պայծառ բարձրունքները: Եվ, իհարկե, միայն ապաշխարության միջոցով է մեզ համար հասանելի դառնում Հիսուս Քրիստոսի քավող շնորհը և փրկությունը:Ապաշխարությանը աստվածային պարգև է, և ժպիտ պետք է հայտնվի մեր դեմքին, երբ մենք խոսում ենք այդ մասին: Այն մեզ ուղղորդում է դեպի ազատություն, վստահություն և խաղաղություն: Տոնախմբությունը ընդհատելու փոխարեն, ապաշխարության պարգևը ճշմարիտ տոնախմբության աղբյուր է:

Ապաշխարությունը որպես տարբերակ գոյություն ունի միայն Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Դա Նրա անսահման զոհաբերությունն

է, որ բերում է «միջոցներ մարդկանց համար, որ նրանք կարողանան ունենալ հավատք ի ապաշխարություն» (Ալմա 34.15)։ Ապաշխարությունը անհրաժեշտ պայման է, իսկ Քրիստոսի շնորհը՝ այն զորությունը, որի միջոցով «ողորմությունը կարող է բավարարել արդարադատության պահանջները» (Ալմա 34.16)։ Մեր վկայությունը հետևյալն է.

«Եվ մենք գիտենք, որ արդարացումը, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով, արդար է և ճշմարիտ.

Եվ մենք գիտենք նաև, որ սրբագործումը, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով, արդար է և ճշմարիտ, բոլոր նրանց համար, ովքեր սիրում և ծառայում են Աստծուն՝ իրենց ողջ զորությամբ, մտքով և ուժով» (ՎևՈւ 20.30–31)։

Ապաշխարությունը ծավալուն թեմա է, սակայն այսօր ես կուզենայի նշել ավետարանի այս հիմնարար սկզբունքի միայն հինգ թևերը, որոնք, հուսով եմ, օգտակար կլինեն։

Առաջին, ապաշխարելու հրավերը սիրո արտահայտում է։ Երբ Փրկիչը «սկսեց քարոզել և ասել. Ապաշխարեցեք, որովհետև մոտեցել է երկնքի թագավորությունը» (Մատթեոս 4.17), դա սիրո ուղերձ էր, որը բոլոր արժանիներին հրավիրում էր միանալ Նրան հավերժական կյանքի խոսքերը այս կյանքում և հավերժական կյանքն ապագայում։ (Մովսես 6.59)։ Եթե մենք չհրավիրենք ուրիշներին փոխվել կամ չպահանջենք ապաշխարություն ինքներս մեզանից, ապա մենք չենք կատարի մեր հիմնական պարտականությունը մեկս մյուսի և ինքներս մեր հանդեպ։ Զիջող ծնողը, զվարճությանը տրվող ընկեր, վախ տածող Եկեղեցու ղեկավարը, իրականում ավելի մտահոգված են իրենց համար, քան նրանց բարեկեցության և երջանկության, ում կարող էին օգնել։ Այո, ապաշխարության կոչը երբեմն կարող է անհանդուրժողական կամ վիրավորական թվալ, անգամ կարող է թշնամանք առաջացնել, սակայն ուղեկցվի հոգով, իրականում այն խորը հոգատարության դրսևորում է (տես ՎևՈւ 121.43–44)։

Երկրորդ, ապաշխարություն նշանակում է ձգտել փոխվել։ Մեզ

համար Գեթսեմանի այգում կամ խաչի վրա Փրկչի տառապանքները ծաղրի կենթարկվեն, եթե ակնկալենք, որ Նա պետք է մեզ հրեշտակների վերածի՝ առանց իրական ջանքի մեր կողմից։ Փոխարենը, մենք հայցում ենք Նրա շնորհը՝ լրացնելու և փոխհատուցելու համար մեր առավել ջանասեր ջանքերը (տես 2 Նեփի 25.23)։ Մի գուցե, որքան ողորմածության համար, այնքան էլ մենք պետք է աղոթենք ժամանակի և հնարավորության համար՝ աշխատելու, ձգտելու և հաղթահարելու համար։ Անշուշտ, Տերը ժպտում է, երբ մեկը ցանկանում է դատաստանի գալ արժանի լինելով, ով վճռականորեն աշխատում է օրեցօր՝ թուլությունները զորությամբ փոխարինելու համար։ Իրական ապաշխարությունը, իրական փոփոխությունը կարող են պահանջել բազմակի փորձեր, սակայն այդ աշխատանքի մեջ կա մի կատարելագործող և սուրբ տարր։ Աստվածային ներումը և բուժումը այդպիսի հոգու վրա բնականորեն են իջնում, քանզի իսկապես «առաքինությունը սիրում է առաքինությանը. լույսը հարում է լույսին. ողորմությունը գութ ունի ողորմության վրա և պահանջում է յուրայիններին» (ՎևՈւ 88.40)։

Ապաշխարությամբ մենք կարող ենք հետևողականորեն մեծացնել սելեստիալ արքայության օրենքով ապրելու մեր ունակությունը, քանզի մենք հասկանում ենք, որ «նա, ով չի կարողանում մնալ սելեստիալ արքայության օրենքում, չի կարողանա մնալ սելեստիալ փառքում» (ՎևՈւ 88:22)։

Երրորդ, ապաշխարություն նշանակում է ոչ միայն թողնել մեղքը, այլ պարտավորվել հնազանդվել։ Աստվածաշնչի բառարանը նշում է. «Ապաշխարություն նշանակում է շրջել սիրտը և կամքը դեպի Աստված, և հրաժարվել մեղքից, որին մենք բնականորեն հակված ենք»։[1] Մորմոնի Գրքում այս ուսմունքի բազմաթիվ օրինակներից են Ալմայի խոսքերը իր որդիներից մեկին.

«Հետևաբար, ես պատվիրում եմ քեզ, որդիս, Աստծո երկյուղով, որ դու ետ կանգնես քո անօրինություններից.

Որպեսզի դու դառնաս դեպի Տերը քո բոլոր մտքով, կարողությամբ և ուժով» (Ալմա 39.12–13; տես նաև Մոսիա 7.33; 3 Նեփի 20.26; Մորմոն 9.6)։

Որպեսզի ապաշխարությունը լիարժեք լինի, այն պետք է ներառի

ոչ պակաս, քան առ Նա հնազանդության ուխտ: Մենք հաճախ խոսում ենք այս ուխտի մասին որպես մկրտության ուխտի, քանզի դա կատարվում է ջրով մկրտության ժամանակ (տես Մոսիա 18.10): Փրկչի մկրտությունը, որը մեզ հետևելու օրինակ է տալիս, հաստատեց Հորը հնազանդվելու Նրա ուխտը: «Բայց չնայած իր սուրբ լինելուն, նա ցույց է տալիս մարդկանց զավակներին, որ ըստ մարմնի նա իրեն խոնարհեցնում է Հոր առաջ, և վկայում է Հորը, որ նա ահնազանդ կլինի նրան՝ նրա պատվիրանները պահելիս» (2 Նեփի 31.7): Առանց այս ուխտի, ապաշխարությունը մնում է անավարտ, իսկ մեղքերի թողությունը չիրականացված:[2] Պրոֆեսսոր Նոել Ռեյնոլդսի հիշարժան արտահայտությամբ. «Ապաշխարության ընտրությունը նշանակում է վառել բոլոր ուղղությունների կամուրջները [վճռել] և ընդմիշտ հետևել միայն *մեկ* ուղով, *մեկ* ուղով, որը տանում է դեպի հավերժական կյանք»:[3]

Չորրորդ, ապաշխարությունը պահանջում է մտադրության լրջություն և պատրաստակամություն՝ շարունակել, անգամ ցավի միջով: Փորձերը ստեղծում են ապաշխարության որոշակի քայլերի մի ցանկ, որոնք կարող են օգտակար լինել ոմանց, սակայն դա կարող է նաև առաջացնել ստուգման նշան դնելու մեխանիկական մոտեցում՝ առանց իրական զգացումի կամ փոփոխության: Իրական ապաշխարությունն արհեստական չէ: Տերը տալիս է երկու գերիշխող պահանջ. «Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,– ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (ՎևՈ 58.43):

Խոստովանելը և մեղքը թողնելը զորեղ սկզբունքներ են: Դրանք ավելին են, քան սովորական «Ես ընդունում եմ դա: Ես ներողություն եմ խնդրում»: Խոստովանությունը սխալի և Աստծուն կամ մարդուն հասցրած վիրավորանքի խորը, երբեմն տենդային գիտակցումն է: Զղջանքը և ափսոսանքը և դառը արդյունքները հաճախ ուղեկցում են խոստովանությունը, հատկապես երբ մարդու արարքները որևէ մեկին ցավ են պատճառել, կամ, ավելի վատ, պատճառ են եղել մեկ ուրիշի մեղքի: Դա խորը ճնշման զգացումն է, իրերը իրականության մեջ տեսնելը, որ ստիպում է մարդուն, ինչպես Ալմային, աղաղակել. «Ով Հիսուս, դու, Աստծո Որդի, ողորմություն ունեցիր իմ հանդեպ, որ դառը մաղձի մեջ եմ, և օղակված եմ մահվան հավիտենական շղթաներով» (Ալմա 36.18):

Ողորմած Քավչի և Նրա զորության հանդեպ հավատքով հուսահատությունը կարող է հույսի վերածվել: Մարդու սիրտը և ցանկությունները փոխվում են, և մեղքը, որը մի ժամանակ հրապուրիչ է եղել, զարհուրելի է թվում: Այն վնասը, որը մեղսագործը պատճառել է, այժմ ձևավորում է այդ նոր սիրտը: Այդ վճռականությունը շուտով հասունանում է, դառալով Աստծուն հնազանդվելու ուխտ: Այդ ուխտի առկայությամբ, Սուրբ Հոգին, աստվածային շնորհի սուրհանդակը, կտա հանգստություն և ներում: Եվ այդ անձը կրկին Ալմայի հետ միասին կհայտարարի. «Եվ, Օհ, ինչպիսի ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր» (Ալմա 36.20):

Ցանկացած ցավ, որն իր հետ բերում է ապաշխարություն, կլինի շատ ավելի թույլ, քան չլուծված մեղսագործության համար արդարադատությունը բավարարելու տառապանքները: Փրկիչը շատ չի խոսել այն մասին, թե ինչ է տարել արդարադատության պահանջները բավարարելու և մեր մեղքերը քավելու համար, բայց Նա ասել է հայտնություն պարունակող այս արտահայտությունը.

Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն.

Բայց, եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես.

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով,– և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը» (ՎևՈ 19.16–18):

Հինգերորդ, ինչպիսին էլ որ լինի ապաշխարության գինը, այն կլանվում է ներման ուրախությամբ: Գերագույն համաժողովի ելույթում, որը կոչվում էր «Ներման պայծառ առավոտը», Նախագահ Բոյդ Ք. Փաքերը հետևյալ համեմատությունն է կատարում.

«1847թ. ապրիլին, Բրիգամ Յանգը առաջնորդեց պիոներների առաջին խումբը, որը դուրս էր գալիս Վինթերս Քվոթերսից: Այդ նույն ժամանակ, դեպի արևմուտք 1600 մղոն հեռու Դոններ Խմբի ողջ մնացածները մաքառում էին Սիեռա Նեվադա լեռների լանջերին, որպեսզի իջնեին Սակրամենտո դաշտավայր:

Նրանք դաժան ձմեռ էին անցկացրել, գազաթի տակ ձնաբքերի մեջ ծուղակն ընկնելով: Սովի և աննկարագրելի տառապանքների օրերը, շաբաթները և ամիսները գրեթե անհավատալի են:

Նրանց մեջ էր տասնհինգամյա Ջոն Բրինը: Ապրիլի 24-ի գիշերը նա գնաց Ջոնսոնի ռանչո: Տարիներ անց Ջոնը գրեց.

«Արդեն բավականին մութ էր, երբ մենք հասանք Ջոնսոնի ռանչո, և երբ ես սկսեցի տեսնել, արդեն վաղ առավոտ էր: Եղանակը լավն էր, հողը ծածկված էր կանաչ խոտով, թռչունները երգում էին ծառերի վրա, իսկ ճանապարհորդությունը ավարտված էր: Ես չէի հավատում, որ կենդանի էի:

Այն, ինչ տեսա այդ առավոտ, լուսանկարվեց իմ մտքում: Դեպքերի մեծ մասը ջնջվել է հիշողությունիցս, սակայն ես միշտ կտեսնեմ ճամբարը Ջոնսոն ռանչոյի կողքին»:

Նախագահ Փաքերը պատմում է. «Սկզբում ինձ շատ էր զարմացրել «դեպքերի մեծ մասը ջնջվել է հիշողությունիցս» արտահայտությունը: Ինչպե՞ս կարող էին նրա մտքից դուրս գալ անտանելի տառապանքների և վշտի ամիսները: Ինչպե՞ս կարող էր այդ դաժան խավար ձմեռը փոխարինվել պայծառ առավոտի հիշողությամբ:

Ավելի խորը մտածելով, ես հասկացա, որ դա բոլորովին էլ զարմանալի չէր: Ես տեսել եմ, ինչպես է նման բան կատարվել մարդկանց

հետ, որոնց ճանաչում եմ: Ես տեսել եմ, ինչպես մեկը, մեղքի և հոգևոր սովի երկար ձմեռ անցկացնելուց հետո, տեսել է ներման առավոտը: Երբ առավոտը բացվեց, նրանք սովորեցին սա.

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք [ՎևՈ 58.42]»:[4]

Ես երախտագիտությամբ ընդունում և վկայում եմ, որ մեր Տիրոջ աննկարագրելի տառապանքները, մահը և Հարությունը «իրագործում է ապաշխարության պայմանը» (Հելաման 14.18): Ապաշխարության աստվածային պարգևը երջանկության բանալին է այստեղ և հետագայում: Փրկչի խոսքերով և խորին հնազանդությամբ և սիրով, ես հրավիրում եմ բոլորին «ապաշխարել, որովհետև մոտեցել է երկնքի թագավորությունը» (Մատթեոս 4.17): Ես գիտեմ, որ ընդունելով այս հրավերը, դուք ուրախություն կգտնեք այժմ և հավիտյան: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Bible Dictionary, “Repentance.”
2. Մորմոնի Գիրքը շարունակաբար խոսում է «առ ապաշխարություն մկրտվելու» մասին (տես Մոսիա 26.22; Ալմա 5.62; 6.2; 7.14; 8.10; 9.27; 48.19; 49.30; Հելաման 3.24; 5.17, 19; 3 Նեփի 1.23; 7.24–26; Մորոնի 8.11): Հովհաննես Մկրտիչը օգտագործում է նույն խոսքերը (տես Մատթեոս 3.11), և Պողոսը խոսում է «ապաշխարության մկրտության» մասին (Գործք 19.4): Արտահայտությունը նաև հանդիպում է Վարդապետություն և Ուխտերին (տես Վարդապետություն և Ուխտեր 35.5; 107.20): Այն պարզապես նշում է այն փաստը, որ մկրտությունը՝ իր ուխտի հետ միասին ապաշխարության հիմքն է կազմում: Լիարժեք ապաշխարությամբ, ներառյալ՝ մկրտությունը, մարդը արժանի է ձեռնադրվելու Սուրբ Հոգու պարգևի համար, և դա Սուրբ Հոգու միջոցով է, որ կատարվում է մկրտությունը Հոգով (տես Հովհաննես 3.5) և մեղքերի թողությունը. «Քանզի դուռը, որով դուք պիտի մտնեք, ապաշխարությունը և ջրով ամկրտությունն է. և ապա գալիս է ձեր մեղքերի թողությունը՝ կրակով և Սուրբ Հոգով» (2 Նեփի 31.17):
3. Noel B. Reynolds, “The True Points of My Doctrine,” *Journal of Book of Mormon Studies,* vol. 5, no. 2 (1996): 35; emphasis added.
4. Boyd K. Packer, in Conference Report, Oct. 1995, 21; see also “The Brilliant Morning of Forgiveness,” *Ensign,* Nov. 1995, 18.

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կատարյալ սերը հեռացնում է վախը

Եթե դուք օգտագործեք ընձեռված հնարավորությունը և կիսվեք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին ձեր համոզմունքներով և զգացումներով, սիրո և քաջության ոգին կլինի ձեր մշտական ուղեկիցը:

Նախագահ Մոնսոն, մենք ոգևորված ենք նոր տաճարների մասին ուրախ լուրերով: Հատկապես ուրախ եմ Վայոմինգի նահանգում իմ շատ ու շատ բարեկամների համար:

Երբ աշխարհի որևէ մասում նոր տաճար է կառուցվում, Եկեղեցին անում է մի բան, որն արդեն սովորական ավանդույթ է դարձել Միացյալ Նահանգներում և Կանադայում, մենք բաց դռների օրեր ենք անցկացնում: Նոր տաճարի նվիրագործմանը նախորդող շաբաթների ընթացքում մենք բաց ենք անում դռները և հրավիրում տեղի կառավարության ղեկավարներին և կրոնական առաջնորդներին, տեղի Եկեղեցու անդամներին և այլ հավատքների մարդկանց գալ և շրջայց կատարելու նորակառույց տաճարում:

Եկեղեցուն անծանոթ մարդկանց համար սա հրաշալի առիթ է մի փոքր ավելին իմանալ մեր Եկեղեցու մասին: Նորակառույց տաճարի այցելուները հիմնականում հիանում են նրա ներքին և արտաքին գեղեցկությամբ: Նրանք տպավորվում են վարպետորեն կատարված աշխատանքով և տաճարի յուրաքանչյուր առանձնահատկության վրա մանրակրկիտ ուշադրությամբ: Ավելին, այցելուներից շատերը յուրօրինակ զգացողություններ են ապրում դեռևս չնվիրագործված տաճարում շրջայց կատարելիս: Սրանք ընդհանուր արձագանքներ են, որ լսվում են մեր բաց դռների օրերին: Սակայն այցելուների վրա ամենաշատը տպավորություն են թողնում Եկեղեցու անդամները, որոնց նրանք հանդիպում են մեր բաց դռների օրերին: Նրանք հեռանում են տպավորված իրենց հյուրընկալողներով՝ Վերջին Օրերի Սրբերով:

Եկեղեցին այժմ ավելի քան երբևէ ավելի մեծ ուշադրության է արժանանում ողջ աշխարհում: Լրագրողներն ամեն օր խոսում կամ գրում են Եկեղեցու մասին, պատմում են դրա բազմաթիվ միջոցառումների մասին: Միացյալ Նահանգների հայտնի լրատվամիջոցներից շատերը մշտապես քննարկումներ են ծավալում Եկեղեցու կամ դրա անդամների մասին: Այդ քննարկումները տարածվում են նաև ողջ երկրագնդով:

Եկեղեցին նաև ուշադրություն է գրավում համացանցում, որն ինչպեսզիտեք, մեծ տեղ է գրավում մարդկանց մեջ տեղեկության փոխանակման հարցում: Ողջ աշխարհում ամբողջ օրվա ընթացքում Եկեղեցին և դրա ուսմունքները քննարկվում են համացանցում, բլոգներում և սոցիալական ցանցերում մարդկանց կողմից, ովքեր երբեք լրագրության փորձ չեն ունեցել: Մարդիկ տեսանյութեր են պատրաստում և դրանք առցանց ներկայացնում: Նրանք սովորական մարդիկ են, ինչպես մեր հավատքից, այնպես էլ այլ հավատքներից, ովքեր խոսում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին:

Հաղորդակցության միջոցների մեջ փոփոխությունները մասնավորապես բացատրում են, թե ինչու ենք մենք՝ «Մորմոններս», ավելի քան երբևէ նկատելի: Սակայն Եկեղեցին միշտ աճում և առաջ է շարժվում: Այսօր ավելի շատ մարդիկ Եկեղեցու անդամ ընկեր կամ հարևան ունեն, և Եկեղեցու հայտնի անդամներ կան կառավարության, բիզնեսի, շոու բիզնեսի, կրթության բնագավառներում և ամենուր: Անգամ նրանք, ովքեր Եկեղեցու անդամներ չեն, նկատել են դա, և նրանք հետաքրքրվում են, թե ինչ է տեղի ունենում: Հրաշալի է, որ այդքան շատերն այժմ տեղյակ են Եկեղեցու և Վերջին Օրերի Սրբերի մասին:

Չնայած որ Եկեղեցին ավելի նկատելի է դառնում, դեռևս շատ մարդիկ կան, ովքեր չեն հասկանում այն: Ոմանք ուսուցանվել են կասկածամտորեն մոտենալ Եկեղեցուն և գործում են Եկեղեցու մասին բացասական կարծրատիպի ներքո՝ առանց հարցականի տակ դնելու իրենց աղբյուրն ու իսկությունը: Կա նաև բավականաչափ շատ ապատեղեկատվություն և խառնաշփոթություն Եկեղեցու և նրա սկզբունքների վերաբերյալ: Սա այդպես է եղել դեռևս Մարգարե Ջոզեֆ Սմիթի ժամանակներից ի վեր:

Ջոզեֆ Սմիթը գրել է իր պատմությունը մասամբ նաև, «որպեսզի մոլորությունից հանի հասարակական կարծիքը և բոլոր ճշմարտություն փնտրողներին տեղեկացնի փաստերին» (Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.1): Ճիշտ է, որ միշտ կլինեն այնպիսիք, որ կաղճատեն ճշմարտությունը և միտումնավոր կխեղաթյուրեն Եկեղեցու ուսմունքները: Սակայն Եկեղեցու մասին հարցեր ունեցողներից շատերը պարզապես ուզում են հասկանալ: Այդ արդարամիտ մարդիկ իսկապես հետաքրքրվում են մեզանով:

Եկեղեցու ավելի նկատելի դառնալը և աճող համբավը մեծ հնարավորություն են ընձեռում մեզ՝ անդամներիս: Մենք կարող ենք օգնել՝ «մոլորությունից հանելով հասարակական կարծիքը», և շտկելով ապատեղեկատվությունը, երբ մեզ սխալ կերպ են ներկայացնում: Ավելի կարևոր է չնայած, որ ասենք, թե ով ենք մենք:

Կան մի շարք բաներ, որ մենք կարող ենք անել, որը դուք կարող եք անել, Եկեղեցու մասին հասկացողությունը խորացնելու համար: Եթե մենք դա անենք նույն ոգով և մեզ պահենք այնպես, ինչպես տաճարի բաց դռների օրերին ենք մեզ դրսևորում, մեր ընկերներն ու մերձավորները մեզ ավելի լավ կհասկանան: Նրանց կասկածները կվերանան, բացասական կարծրատիպերը կչքանան, և նրանք կտեսնեն Եկեղեցին այնպիսին, ինչպիսին որ այն իրականում կա:

Ուզում եմ մի քանի առաջարկություններ անել, թե ինչ կարող մենք անել:

Առաջինը՝ մենք պետք է համարձակորեն հայտարարենք Հիսուս Քրիստոսի մասին: Մենք ուզում ենք մարդիկ իմանան, որ մենք հավատում ենք, որ Նա է ողջ մարդկության պատմության առանցքային կերպարը: Նրա կյանքը և ուսմունքները կազմում են Աստվածաշնչի և մեր կողմից սուրբ գրություններ համարվող մյուս գրքերի սիրտը: Հին Կտակարանը նախապատրաստում է մեզ Քրիստոսի մահկանացու ծառայությանը: Նոր Կտակարանը նկարագրում է Նրա մահկանացու ծառայությունը: Մորմոնի Գիրքը մեզ տալիս է Նրա մահկանացու ծառայության երկրորդ վկայությունը: Նա եկավ երկիր հայտարարելու Իր ավետարանի մասին որպես հիմք ողջ մարդկության համար, որպեսզի Աստծո բոլոր զավակները կարողանան Նրա մասին և Նրա ուսմունքների մասին: Այնուհետև Նա տվեց Իր կյանքը՝ դառնալով մեր Փրկիչը և Քավիչը: Միայն Հիսուս Քրիստոսի միջոցով է հնարավոր մեր փրկությունը: Ահա թե ինչու ենք մենք հավատում, որ Նա ողջ մարդկության պատմության մեջ առանցքային դեր ունի: Մեր հավերժական ճակատագիրը միշտ եղել է Նրա ձեռքերում: Փառահեղ բան է՝ հավատալ Նրան և ընդունել Նրան որպես մեր Փրկիչ, մեր Տեր և մեր Վարդապետ:

Մենք նաև հավատում ենք, որ միայն Քրիստոսով է հնարավոր առավելագույն բավարարվածություն, հույս և երջանկություն գտնել և՛ այս կյանքում և՛ հավերժությունների մեջ: Մեր վարդապետությունը, ինչպես ուսուցանվում է Մորմոնի Գրքում, ազդու կերպով հաստատում է. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք

հավերժական կյանք» (2 Նեփի 31.20):

Մենք հայտարարում ենք մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և ընդունում ենք Նրան որպես մեր Փրկիչ: Նա կօրհնի մեզ և կառաջնորդի մեզ բոլոր գործերում: Եթե մենք տքնաջան աշխատենք մահկանացու կյանքում, Նա կամրացնի մեզ և մեզ խաղաղություն կպարգևի փորձության ժամանակ: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները քայլում են հավատքով Նրա հանդեպ, ում Եկեղեցին է սա:

Երկրորդ՝ մարդկանց համար արդարության օրինակ եղեք: Մեր համոզմունքների մասին հայտարարելուց հետո, մենք պետք է հետևենք Ա Տիմոթեոս Դ.12-ում մեզ տրված խորհրդին. «Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով»:

Փրկիչն ուսուցանել է մեր հավատքի օրինակը լինելու կարևորության մասին՝ ասելով. «Այսպես լուսավորե՛ ձեր լույսը մարդկանց առաջին, որ ձեր բարի գործերը տեսնեն և փառավորեն ձեր Հորը, որ երկնքումն է» (Մատթեոս Ե.16):

Մեր կյանքը պետք է լինի մեծահոգության և առաքինության օրինակ, երբ փորձում ենք աշխարհի առաջ լինել Նրա օրինակը ներկայացնողները: Յուրաքանչյուրիս կատարած բարի գործերը կարող են պատիվ բերել և՛ Փրկչին, և՛ Նրա Եկեղեցուն: Երբ բարի գործեր կատարեք, լինելով պատվավոր և ազնիվ տղամարդիկ և կանայք, Քրիստոսի Լույսը կարտացոլվի ձեր կյանքում:

Հաջորդը՝ խոսեք Եկեղեցու մասին: Մեր ամենօրյա կյանքում մենք օրհնված ենք բազում հնարավորություններով կիսվելու ուրիշների հետ այն ամենով, ինչին հավատում ենք: Երբ մեր ընկերներն ու գործընկերները հետաքրքրվում են մեր կրոնական համոզմունքներով, նրանք ցանկանում են իմանալ, թե ով ենք մենք և ինչի ենք հավատում: Նրանք գուցե հետաքրքրվեն, գուցե չհետաքրքրվեն Եկեղեցով, սակայն նրանք ուզում են ավելի լավ ճանաչել մեզ:

Ես առաջարկում եմ ձեզ ընդունել նրանց հրավերը: Ձեր ընկերները չեն խնդրում, որ դուք ուսուցանեք, քարոզեք, մեկնաբանեք և հորդորեք: Նրանց ներգրավվեք երկխոսության մեջ՝ կիսվեք ձեր կրոնական համոզմունքներով, սակայն նաև հարցրեք նրանց համոզմունքների մասին: Չափեք նրանց հետաքրքրության աստիճանը նրանց տրված հարցից: Եթե նրանք շատ հարցեր են տալիս, խոսակցությունը կենտրոնացրեք նրանց հարցերին պատասխանելով: Միշտ հիշեք, որ ավելի լավ է նրանք հարցնեն, քան դուք պատմեք:

Որոշ անդամներ կարծես ցանկանում են Եկեղեցու իրենց անդամությունը գաղտնի պահել: Նրանք իրենց պատճառներն ունեն: Օրինակ, նրանք գուցե մտածում են, որ դա այն վայրը չէ, որտեղ կարող են կիսվել իրենց համոզմունքներով: Միգուցե վախենում են սխալվել կամ, որ իրենց կուղղեն հարցեր, որոնց չեն կարող պատասխանել: Եթե նման մտքեր եք ունենում, ես ուզում եմ խորհուրդ տալ ձեզ: Պարզապես հիշեք Հովհաննեսի խոսքերը. «Վախ չկա սերի մեջ. այլ կատարյալ սերը հեռացնում է վախը» (Ա Հովհաննես Դ.18): Եթե մենք պարզապես սիրենք Աստծուն և սիրենք մեր մերձավորներին, մեզ խոստում է տրվել, որ կհաղթահարենք մեր մտավախությունները:

Եթե վերջերս այցելել եք Mormon .org կայքը, որը Եկեղեցու կայքն է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են սովորել Եկեղեցու մասին, դուք հավանաբար տեսել եք անդամների, որոնք իրենց մասին տեղեկություն են տեղադրել: Նրանք ստեղծել են առցանց բնութագրեր, որտեղ բացատրում են, թե ովքեր են իրենք և ինչու է իրենց համար կարևոր իրենց կրոնական համոզմունքները: Նրանք խոսում են իրենց հավատքի մասին:

Մենք նման զրույցներին պետք է մոտենանք Քրիստոսանման սիրով: Մեր ձայնի երանգը, խոսելիս թե գրելիս, պետք է լինի հարգալից և քաղաքակիրթ, անկախ մյուսների պատասխաններից: Մենք պետք է լինենք ազնիվ և բաց, և փորձենք լինել հստակ մեր խոսքում: Մենք չենք ցանկանում վիճել կամ լինել պաշտպանվող:

Պետրոս Առաքյալը բացատրել է. «Այլ ձեզ կանչող Սուրբի պես, դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերումը» (Ա Պետրոս Ա.15):

Մեր ժամանակների «վարքը» կարծես թե ավելի ու ավելի է ներառում համացանցը: Մենք խրախուսում ենք մարդկանց՝ երիտասարդ թե տարեց, օգտագործել համացանցը և սոցիալական լրատվամիջոցները լսելի դառնալու և կիսվելու իրենց կրոնական համոզմունքներով:

Համացանցում դուք գուցե պատահաբար հանդիպեք Եկեղեցու վերաբերյալ ծավալվող զրույցի: Հոգով առաջնորդվելով՝ մի վարանեք ձեր կարծիքը ավելացնել այդ զրույցին:

Հիսուս Քրիստոսի ավետարանի ուղերձը ոչ մի ուրիշ բանի նման չէ, որով դուք երբևէ կկիսվեք մյուսների

հետ: Տեղեկատվական այս դարաշրջանում, այն աշխարհում գոյություն ունեցող ամենաարժեքավոր տեղեկությունն է: Անառարկելի է նրա գինը: Այն թանկագին մարգարիտ է (տես Մատթեոս ԺԳ.46):

Խոսելով Եկեղեցու մասին՝ մենք չենք փորձում այն իրականությունից ավելի պերճախոս ներկայացնել: Մենք կարիք չունենք գովազդել մեր ուղերձը: Մենք պետք է ազնվորեն և ուղղակիորեն ներկայացնենք ուղերձը: Եթե մենք բացենք հաղորդակցության ուղիները, Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը կհաստատի իրեն նրանց մոտ, ովքեր պատրաստ են ընդունելու այն:

Երբեմն կա մեծ տարբերություն, հասկացողության մի անդունդ, թե ինչպես ենք մենք ընկալում Եկեղեցին ներսից և ինչպես են մյուսները տեսնում այն դրսից: Դա է հիմնական պատճառը, որ յուրաքանչյուր նոր տաճար նվիրագործելուց առաջ, մենք բաց դռների օրեր ենք անցկացնում: Տաճարի բաց դռների օրերին կամավոր անդամները պարզապես փորձում են օգնել մարդկանց տեսնել Եկեղեցին այնպիսին, ինչպիսին որ այն իրենք են տեսնում ներսից: Նրանք համարում են, որ Եկեղեցին զարմանահրաշ աշխատանք է, անգամ հրաշք, և ցանկանում են, որ մյուսներն էլ իմանան դա: Ես խնդրում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը նույնը անի:

Ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք օգտագործեք ընձեռված հնարավորությունը և կիսվեք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին ձեր համոզմունքներով և զգացումներով, սիրո և քաջության ոգին կլինի ձեր մշտական ուղեկիցը, քանզի՝ «կատարյալ սերը հեռացնում է վախը» (Ա Հովհաննես Դ.18):

Ժամանակն է օգտագործել մարդկանց հետ Հիսուս Քրիստոսի ավետարանով կիսվելու հնարավորությունները: Թող որ մենք պատրաստվենք, որպեսզի մեզ տրված հնարավորությունն օգտագործելով՝ մենք կիսվենք մեր հավատքով, սա իմ խոնարհ աղոթք է՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Բոլորս զինվորագրված ենք

Յուրաքանչյուր տղամարդուց՝ երիտասարդ, թե տարեց, ով կրում է քահանայություն, ես խնդրում եմ ավելի ուժեղ ու ավելի նվիրված ձայն, . . . ձայն ավետարանի համար, ձայն Աստծո համար:

Այս հուզիչ օրհներգի ոգով և Երեց Ռիչորդ Գ. Հինքլիի զորեղ աղոթքը սրտում, ես, եղբայրներ, ցանկանում եմ նման անկեղծությամբ այս երեկո խոսել Միարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց հետ:

Երբ վերապատմում ենք Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի վեհության մասին, մենք երբեմն քիչ ենք խոսում այն սպառնալից առճակատման մասին, որը նախորդեց դրան՝ առճակատում, որի նպատակն էր կործանել պատանուն, եթե հնարավոր էր, և ամեն գնով արգելափակել սպասվող հայտնությունը: Մենք չենք խոսում հակառակորդի մասին ավելի շատ, քան պետք է, և ես առհասարակ չեմ սիրում խոսել նրա մասին, սակայն երիտասարդ Ջոզեֆի փորձը հիշեցնում է մեզ այն, ինչ յուրաքանչյուր տղամարդ, այդ թվում՝ յուրաքանչյուր երիտասարդ, որ այս լսարանում է, պետք է հիշի:

Թիվ մեկ՝ Սատանան կամ Լյուցիֆերը կամ ստերի հայրը, ինչպես կկամենաք նրան անվանել, իրական է՝ չարի իրական մարմնացում: Նրա շարժառիթները, բոլոր դեպքերում, չարակամ են, և նա պրկվում է փրկագնող լույսի՝ ճշմարտության մտքի անգամ հայտնվելուց: Թիվ երկու՝ նա հավերժորեն դեմ է Աստծո սիրուն, Հիսուս Քրիստոսի Քավությանը և խաղաղության և փրկության աշխատանքին: Նա պայքարում է դրանց դեմ՝ երբ և որտեղ որ կարող է: Նա գիտի, որ ի վերջո նա պիտի պարտվի և դուրս գցվի, սակայն նա մտադիր է իր հետ վերցնել որքան կարող է շատերի:

Այսպիսով, որո՞նք են դևի մարտավարություններից մի քանիսն այս պայքարում, երբ հավերժական կյանքը վտանգվում է: Այստեղ կրկին Սուրբ պուրակի փորձն ուսուցանող է: Ջոզեֆն արձանագրել է, որ փորձելով դեմ կանգնել այն ամենին, որ առջևում էր, Լյուցիֆերը «այնպիսի մի ապշելի ազդեցություն ունեցավ ինձ վրա, որ լեզուս կարծես կապվեց, այնպես որ ես չէի կարողանում խոսել»:[1]

Ինչպես այս առավոտ ուսուցանեց Նախագահ Բոյդ Ք. Փաքերը, Սատանան չի կարող ուղղակիորեն կյանքը խլել: Դա այն շատ բաներից մեկն է, որ նա չի կարող անել: Սակայն, ըստ երևույթին, աշխատանքը դադարեցնելու նրա ջանքերը պետք է ողջամտորեն լավ գործեն, եթե նա կարողանա պարզապես կապել հավատարիմների լեզուն: Եղբայրներ, եթե դա այդպես է, այս երեկո ես փնտրում եմ տղամարդկանց՝ երիտասարդ, թե ծեր, ովքեր այնքան անտարբեր չեն բարու և չարի միջև այս ճակատամարտի նկատմամբ, որ պատրաստ են զինվորագրվելու և չլռելու: Մենք պատերազմի մեջ ենք, և հաջորդ մի քանի րոպեների ընթացքում ես ուզում եմ հավաքագրել ճակատամարտելու պատրաստ մարդկանց:

Կարիք կա՞, որ ես մի քանի տակտ երգեմ «Բոլորս զինվորագրված ենք» երգից: Դուք գիտեք այս տողը. «Մենք սպասում ենք զինվորների, ո՞վքեր կլինեն կամավորներ»:[2] Իհարկե, զենքի կոչի հրաշալի մասն այն է, որ մենք հրացանով կրակող կամ ձեռքի նռնակ նետող կամավորներ *չենք* խնդրում: Ո՛չ, մենք ուզում ենք գումարտակներ, որտեղ որպես զենք կվերցնեն «Աստծո բերանից դուրս եկող ամեն խոսք»:[3] Այնպես որ, այս երեկո ես փնտրում եմ միսիոներների, ովքեր կամովին չեն կապում իրենց լեզուները, այլ Տիրոջ Հոգով և իրենց քահանայության իշխանությամբ կամենում են բաց անել իրենց շուրթերը և հրաշքներ խոսել: Նման խոսքերը, ինչպես մի առիթով ուսուցանել են վաղ ժամանակների եղբայրները, այն միջոցն են, որոնցով հավատքի «հզոր գործերը կատարվել են և ապագայում կկատարվեն»:[4]

Ես առանձնապես խնդրում եմ Ահարոնյան Քահանայության երիտասարդ տղամարդկանց նստել և ուշադրությամբ լսել: Ձեզ համար, թույլ տվեք մեջ բերել մի մարզական նմանություն: Մենք կյանքի և մահվան մրցույթում ենք, երիտասարդ տղամարդիկ, այնպես որ ես պատրաստվում եմ մոտեցնել իմ դեմքը ձեր դեմքին՝ քիթ քթի առաջ, բավական խանդավառությամբ, որ

ձեր հոնքերը մի քիչ խանձվեն, ինչպես մարզիչներն են երբեմն անում, երբ խաղը մոտենում է ավարտին և հաղթանակը ճակատագրական է: Եվ քանի որ խաղը ձեզանից է կախված, մարզիչն ասում է ձեզ, որ այս խաղում հաղթելու համար ձեզանից ոմանք պետք է բարոյապես ավելի մաքուր լինեն: Բարու և չարի միջև այս իրական պայքարում դուք չեք կարող ամեն անգամ գայթակղության հանդիպելիս խաղալ հակառակորդի թիմում, ապա ակնկալել, կարծես թե ոչինչ չի պատահել, որ կհավաքագրվեք Փրկչի թիմում, երբ գա միսիայի և տաճարի ժամանակը: Դա, իմ երիտասարդ ընկերներ, դուք չեք կարող անել: Աստծուն հնարավոր չէ ծաղրել:

Այսպիսով, այսօր մենք ունենք երկսայրի ընտրություն՝ դուք և ես: Դա այն է, որ այս Եկեղեցու արձանագրություններում արդեն կան հազարավոր Ահարոնյան Քահանայության տարիքի երիտասարդ տղամարդիկ, որոնք կազմում են մեր ապագա միսիոներական ծառայության թեկնածուների ավազանը: Սակայն խնդիրն այն է, որ այդ սարկավագները, ուսուցիչները և քահանաները մնան բավական ակտիվ է և բավական արժանի, որպեսզի կարգվեն երեցներ և ծառայեն որպես միսիոներներ: Այսպիսով, մենք կարիք ունենք, որ հավաքականի երիտասարդ տղամարդիկ *մնան* թիմում և դադարեն խաղալ սահմաններից դուրս, որ երբ խաղադաշտ մտնելու ձեր կարիքը լինի, դուք կարողանաք դաշտ մտնել և ողջ սրտով խաղալ: Իմ իմացած գրեթե բոլոր մարզական մրցույթներում, հատակին կամ դաշտում սահմաններ կան գծած, որոնց շրջանակներում պետք է մնա յուրաքանչյուր մասնակից, որպեսզի մրցի: Նույն ձևով Տերը արժանավորության սահմաններ է գծել նրանց համար, ովքեր կոչված են աշխատելու Նրա հետ այս աշխատանքում: Ոչ մի միսիոներ չի կարող չապաշխարել սեռական մեղքից կամ գռեհիկ խոսելաձևից կամ տռփագրությանն անձնատուր լինելուց, և ապա ակնկալել, որ կարող է ուրիշներին ապաշխարության կանչել այդ նույն բաներից: Դուք չեք կարող անել դա: Հոգին չի կարող ձեզ հետ լինել, և խոսքերը կմնան ձեր կոկորդում, երբ դուք փորձեք դրա մասին խոսել: Դուք չեք կարող քայլել Լեքիի ասած «արգելված ճանապարհներով»[5] և հույս ունենալ, որ կկարողանաք ուրիշներին առաջնորդել «նեղ և անձուկ»[6] արահետով՝ դա անհնարին բան է:

Բայց կա այս մարտահրավերը հաղթահարելու պատասխան՝ ինչպես ձեզ համար, այնպես էլ այն հետաքրքրվողի համար, ում դուք կուսուցանեք: Ով էլ դուք լինեք և ինչ էլ դուք արած լինեք, դուք կարող եք ներում ձեռք բերել: Դուք՝ ամեն մեկդ, երիտասարդներ, կարող եք ետևում թողնել ցանկացած օրինազանցություն, որը չարչարում է ձեզ: Դա «ներման հրաշքն է»՝ Տեր Հիսուս Քրիստոսի Քավության հրաշքը: Սակայն դուք չեք կարող անել դա առանց ավետարանի հանդեպ գործուն պարտավորություն վերցնելու, և դուք չեք կարող անել դա առանց ապաշխարության, եթե դա անհրաժեշտ է: Խնդրում եմ ձեզ, երիտասարդ տղաներ, եղեք ակտիվ և մաքուր: Եթե անհրաժեշտ է, ես խնդրում եմ ձեզ՝ *դարձեք* ակտիվ և *դարձեք* մաքուր:

Եղբայրներ, մենք խոսում ենք ձեզ հետ համարձակ, քանի որ ավելի նուրբ խոսելը չի աշխատում: Մենք խոսում ենք համարձակ, քանի որ Սատանան իրական է և սպասում է, որ ձեզ կործանի, և դուք հանդիպում եք նրա ազդեցությանը ավելի ու ավելի վաղ տարիքում: Այնպես որ, մենք մեր բուռն ենք հավաքում ձեր կրծածալը և բղավում, այնքան բարձր, որքան ուժ ունենք.

Լսիր, ճակատամարտի ձայնը
հնչում է բարձր և հստակ։
Եկ, միացիր մեր շարքին։ Եկ,
միացիր մեր շարքին։[7]

Իմ երիտասարդ ընկերներ, մենք ունենք անելիքներ։ Գալիք ամիսներին ու տարիներին մեզ պետք են տասնյակ հազարավոր միսիոներներ։ Նրանց համալրողների առավել մեծ մասը պետք է լինի Ահարոնյան Քահանայությունից, ովքեր կարգված, ակտիվ, մաքուր և արժանի կլինեն ծառայելու։

Ձեզանից նրանց, ովքեր ծառայել են կամ այժմ ծառայում են, մենք շնորհակալություն ենք հայտնում այն լավ գործերի համար, որ դուք արել եք, և նրանց համար, ում կյանքին դուք դիպչել եք։ Աստված օրհնի ձեզ։ Մենք նաև գիտակցում ենք, որ կան ոմանք, ովքեր ողջ կյանքում հույս են փայփայել, որ միսիայում կծառայեն, բայց առողջական կամ իրենց զորությունից վեր այլ խոչընդոտների պատճառներով չեն կարող դա անել։ Մենք հրապարակավ և հպարտությամբ ողջունում ենք այս խմբին։ Մենք գիտենք ձեր ցանկությունները և գովաբանում ենք ձեր նվիրվածությունը։ Դուք վայելում եք մեր սերն ու մեր հիացմունքը։ Դուք «թիմի կազմում եք» և միշտ կլինեք, քանի որ պատվով ազատված եք լիաժամկետ ծառայությունից։ Բայց մնացածիդ կարիքը մենք ունենք։

Այժմ, դուք՝ Մելքիսեդեկյան քահանայության եղբայրներ, մի ժպտացեք և հետ մի նստեք հարմարավետ ձեր տեղերում։ Ես չեմ վերջացրել։ Մեզ հարկավոր են Եկեղեցական ծառայության միսիայում ծառայող հազարավոր զույգեր։ Յուրաքանչյուր միսիայի նախագահ միսիոներական զույգեր է խնդրում։ Ամենուրեք, ուր նրանք ծառայում են, մեր զույգերը հասունություն են բերում աշխատանքում, որը 19 տարեկան երիտասարդների ոչ մի թիվ, որքան էլ լավը լինեն, չի կարող ապահովել։

Ծառայության խրախուսելով ավելի շատ զույգերի, Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը կատարել է միսիոներական աշխատանքի վերջին 50 տարվա մեջ ամենահամարձակ և ամենամեծահոգի փոփոխություններից մեկը։ Այս տարվա մայիս ամսին քահանայության գործող առաջնորդները ծանուցում են ստացել, որ միսիոներական զույգերի բնակարանային վարձավճարները (և մենք խոսում ենք *միայն* բնակարանների վարձակալության մասին), կարող են համալրվել Եկեղեցու միսիոներական հիմնադրամից, եթե արժեքը գերազանցում է մեկ ամսվա համար նախանշված գումարի սահմանը։ Ինչպիսի օրհնություն։ Սա երկնքից ուղարկված աջակցություն է մեր զույգերի համար՝ իրենց միսիայի ժամանակ ամենամեծ միջոցները պահանջող ծախսի ուղղությամբ։ Եղբայրները նաև որոշել են, որ զույգերի առաքելությունները ավանդական 18 կամ 23 ամիսներին զուգահեռ կարող են տևել 6 կամ 12 ամիս։ Մեկ այլ հրաշալի քայլով, միսիոներական զույգերին թույլտվություն է տրվել ընտանեկան կարևոր իրադարձությունների դեպքում, իրենց հաշվին, կարճ ժամանակով վերադառնալ տուն։ Եվ դադարեք անհանգստանալ, որ դուք ստիպված եք լինելու դռներ թակել կամ 19 տարեկանների ժամանակացույցով ծառայել։ Մենք ձեզ չենք խնդրում դա անել. մենք ունենք հազարավոր այլ բաներ, որ դուք կարող եք անել՝ դրանք անելու լայն հնարավորություններով։

Եղբայրներ, մենք գիտակցում ենք, որ առողջության, ընտանեկան կամ տնտեսական պայմաններից ելնելով, *ձեզանից* ոմանք գուցէ չկարողանան գնալ հենց հիմա, կամ գուցե՝ երբևէ։ Բայց մի փոքր ծրագրավորելու դեպքում, ձեզանից շատերը կարող են ծառայել։

Եպիսկոպոսներ և ցցի նախագահներ, քննարկեք այս կարիքը ձեր խորհուրդներում և համաժողովներում։ Նստեք բեմահարթակին ձեր ժողովների ժամանակ և աղոթքով նայենք դեպի ժողովը, որպեսզի ոգեշնչում ստանաք, թե ով պետք է կոչում ստանա։ Ապա խորհրդակցեք նրանց հետ և օգնեք նրանց ծառայության օր սահմանել։ Եղբայրներ, երբ դա տեղի ունենա, ասեք ձեր կանանց, որ եթե դուք կարող եք թողնել ձեր թիկնաթոռը և հեռակառավարման վահանակը մի քանի ամսով, ապա նրանք կարող են թողնել իրենց թոռներին։ Այդ փոքրիկ թանկագին երեխաների հետ ամեն ինչ լավ կլինի, և ես խոստանում եմ ձեզ, որ Տիրոջ ծառայության մեջ դուք նրանց համար այնպիսի բաներ կանեք, աշխարհներ առանց սահմանի, ինչպիսին դուք երբեք չեք անի տունը մնալով և նրանց ձեր թևերի տակ առնելով։ Չկա ավելի մեծ նվեր, որ կարող են տալ պապիկն ու տատիկն իրենց սերնդին, քան գործով և խոսքով ասելը, որ «այս ընտանիքում բոլորը ծառայում են միսիայում»։

Միսիոներական աշխատանքը միակ բանը չէ, որ պետք է անենք այս մեծ, ընդարձակ, հրաշալի Եկեղեցում։ Սակայն գրեթե ամեն ինչ, որ մենք պետք է անենք, կախված է նախ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը մարդկանց կողմից լսելուց և հավատքի գալուց։ Անշուշտ, այդ է պատճառը, որ Տասներկուսին տրված Հիսուսի վերջին հանձնարարությունն այդքան հասարակ էր. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, մկրտելով նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու

Մոնրեալ, Քվիբեք, Կանադա

անունով»:[8] Այնուհետև, և միայն դրանից հետո, կարող են ավետարանի մնացած օրհնությունները իրականանալ՝ համերաշխությունը ընտանիքում, երիտասարդական ծրագրերը, քահանայության խոստումները և արարողությունները՝ հասնելով մինչև տաճար: Սակայն ինչպես Նեփին է վկայել՝ դրանցից ոչ մեկը չի կարող գալ, քանի դեռ մարդ «ներս չի մտել . . . դարպասով»:[9] Այն ամենի հետ, ինչ պետք է անենք հավերժական կյանքի ճանապարհին, մենք ավելի շատ միսիոներների կարիք ունենք, որպեսզի բացենք դարպասը և օգնենք մարդկանց անցնել դրա միջով:

Յուրաքանչյուր տղամարդուց՝ երիտասարդ, թե տարեց, ով կրում է քահանայություն, ես խնդրում եմ ավելի ուժեղ ու ավելի նվիրված ձայն, ոչ միայն չարի և չարին մարմնավորողի դեմ, այլ ձայն՝ բարու համար, ձայն ավետարանի համար, ձայն Աստծո համար: Եղբայրներ՝ բոլոր տարիքի, արձակեք ձեր լեզուն և տեսեք, թե ձեր խոսքերն ինչպես են հրաշքներ գործում նրանց կյանքում, «ովքեր ետ են պահվել ճշմարտությունից, միայն այն պատճառով, որ չգիտեն որտեղ գտնել այն»:[10]

Շտապեք ճակատամարտի, արագ դեպի դաշտ:
Ճշմարտությունը՝ սաղավարտ, ասպար և վահան:
Կանգնեք խրոխտ ծածանվող մեր գույների ներքո:
Զվարթ քայլերգով, ուրախ դեպի տուն:[11]

Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.15:
2. "We Are All Enlisted," *Hymns,* no. 250.
3. Վարդապետություն և Ուխտեր 84.44; տես նաև Բ Օրինաց 8.3; Մատթեոս 4.4:
4. *Lectures on Faith* (1985), 73.
5. 1 Նեփի 8.28:
6. 2 Նեփի 31.18:
7. *Hymns,* no. 250.
8. Մատթեոս ԻԸ.19:
9. 2 Նեփի 33.9.
10. Վարդապետություն և Ուխտեր 123.12:
11. *Hymns,* no. 250.

Եպիսկոպոս Քեյթ Բ. Մաքմալին
Նախագահող Եպիսկոպոսության
Երկրորդ Խորհրդական

Սիարոնյան Քահանայության զորությունը

Ձեր կրած Սիարոնյան Քահանայության պաշտոնով դուք կարևոր դեր ունեք Իր զավակների հետ Երկնային Հոր աշխատանքը կատարելու և այս երկիրն Իր Սուրբ Որդու Երկրորդ Գալստյանը նախապատրաստելու գործում.

Վերջերս անցկացված Բարձրագույն Իշխանավորների ուսուցման նիստի ժամանակ, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կրկին ընդգծեց Սիարոնյան Քահանայություն կրողների պարտականություններն ու հնարավորությունները.[1] Այս ուսուցման ոգով ես կխոսեմ ձեզ հետ, եղբայրներ:

Պատշաճ կատարվող պարտականությունը որոշիչ դեր ունի ժողովուրդների եւ ազգերի ճակատագրում: Պարտականության սկզբունքն այքան հիմնարար է, որ քահանայություն կրողներին հորդորվում է.«Ուստի, այժմ թող ամեն տղամարդ սովորի իր պարտականությունը և ողջ ջանասիրությամբ գործի այն պաշտոնում, որում նշանակված է».[2]

Նախագահ Մոնսոնը բացատրում է. «Պարտականության կանչը կարող է գալ աննկատ, մինչ մենք՝ քահանայություն կրողներս, արձագանքում ենք ստացած հանձնարարություններին».[3] Նախագահ Մոնսոնը մեջբերել է Ջորջ Ալբերտ Սմիթին. «Ձեր պարտականությունն է՝ առաջին հերթին, իմանալ, թե ինչ է Տերը ցանկանում, և ապա Իր սուրբ Քահանայության իշխանությամբ եւ զորությամբ մեծարել ձեր կոչումը ձեր մերձավորների ներկայությամբ այնպես, որ մարդիկ ուրախ լինեն հետեւելու ձեզ».[4]

Խոսելով Իր պարտականության մասին, մեր Տերն ասել է. «Ես չեմ փնտրում իմ կամքը, այլ Հոր կամքը»:[5] «Ես երկնքից իջայ ոչ թէ իմ կամքը կատարելու համար, այլ կամքը նրա, ով ինձ ուղարկեց»:[6] Քանի որ Հիսուս Քրիստոսը կատարեց Իր պարտականությունը, «ողջ մարդկությունը կարող է փրկվել՝ հնազանդվելով Ավետարանի օրենքներին եւ արարողություններին».[7] Եղբայրներ, սա է այն չափանիշը, որին պետք է հետեւենք:

Իմ փորձից ելնելով գիտեմ, որ դուք, որ ծառայում եք որպես սարկավագներ, ուսուցիչներ և քահանաներ, պատրաստակամ,

վստահելի եւ ունակ եք կատարելու ձեր պարտականությունը, ինչպես ինքներդ եք ակնկալում։ Մենք հիանում ենք ձեզանով։ Ձեր կենսունակությունը վարակիչ է, ձեր կարողություններն՝ ապշեցուցիչ, ձեր ընկերությունը՝ ոգևորիչ։ Ձեր կրած Ահարոնյան Քահանայության պաշտոնով դուք կարևոր դեր ունեք Իր զավակների հետ Երկնային Հոր աշխատանքը կատարելու և այս երկիրն Իր Սուրբ Որդու Երկրորդ Գալստյանը նախապատրաստելու գործում։ Ձեր և ձեր պարտականության մասին մեր տեսլականը անցնում է ձեր տարիքից։ Պողոսը խոսել է ձեր մասին, երբ ասել է. «Թող ոչ ոք չանարգի քո երիտասարդությունը. բայց դու օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, գթությամբ, սիրով, հավատքով, սրբությունով».[8]

Տղամարդկանց հնում եկավ
յուր ժամ
Քահանայությունն Ահարոնյան։
Ղևտացիների, քահանաների,
մարգարեների հետ
Այն մի միջոց էր Աստծո որդկանց
օրհնության.

Ապա եկավ աշխարհի Փրկիչը
Փնտրեց Հովհաննես անունով
մեկին,
Որ մկրտվի նույն իշխանությամբ
Ի նշան սկզբի փրկության։

Վերջին օրերին նույն
իշխանությունը
Կրկին վերականգնվեց երկրի վրա,
Ավետարանի ճշմարտությունը՝
սկզբից մինչ վերջ
Կարող է ծնվել մարդու հոգու մեջ։

Ահարոնյան Քահանայություն, վսեմ
ճշմարտություն,
Եկ ի նախապատրաստություն,
Որ Աստծո Սիրելի Որդու միջոցով
Հասնի մեզ փրկագնում։

Իսկ նա, ով ունի այդ
զորությունները
Պատանի չէ պարզապես։
Քահանայության թիկնոցն ուսին
գցած,
Ասում ենք. «Ահա՝ տղամարդը»։[9]

«Ահարոնյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել հրեշտակների սպասավորման բանալիները և սպասավորել արտաքին արարողությունները, ավետարանի գիրը, ապաշխարության մկրտությունը՝ մեղքերի թողության համար՝ համաձայն ուխտերի և պատվիրանների»։[10] Նախագահ Բոյդ Ք. Փաքերը նկատել է. «Մենք շատ լավ բաշխել ենք քահանայության *իշխանությունը* Մենք քահանայության իշխանությունը սերմանել ենք գրեթե ամենուր . . . Սակայն քահանայության *իշխանության* տարածումը առաջ է անցել քահանայության *զորության* տարածումից»։[11] Աստծո զավակների հավերժական բարեկեցության համար, սա պետք է ուղղվի։

Մեր մարգարեն մեզ ասել է, թե ինչպես կարելի է դա անել։ Մեջբերելով Ջորջ Ք. Քենոնին, Նախագահ Մոնսոնն ասել է. «Ես ուզում եմ տեսնել Քահանայության զորությունը ամրապնդվելիս . . . Ես ուզում եմ տեսնել, որ այս ուժն ու զորությունը սփռվում են բոլոր Քահանայություն կրողների միջոցով՝ ամենաբարձրից մինչեւ ամենացածը . . . մինչև Եկեղեցու ամենափոքր եւ ամենահամեստ սարկավագը։ Ամեն մարդ պետք է փնտրի եւ վայելի Աստծո հայտնությունները, իր հոգում փայլող երկնքի լույսը, որը նրան գիտելիքներ է տալիս իր պարտականությունների վերաբերյալ, աշխատանքի այն մասի համար, որը դրված է նրա վրա՝ իր Քահանայության շնորհիվ»։[12]

Ի՞նչ կարող է անել սարկավագը, ուսուցիչը կամ քահանան, որպեսզի ստանա հայտնության հոգին եւ մեծարի իր կոչումը։ Նա կարող է ապրել այնպես, որ վայելի Սուրբ Հոգու մաքրող, սրբագործող և լուսավորող ազդեցությունը։

Դրա կարևորությունը երևում է Ալմայի հետևյալ խոսքերում. «Արդ, ես ասում եմ ձեզ, որ սա է կարգը, ըստ որի ես կանչված եմ . . . քարոզելու. . . . աճող սերնդին . . . որ նրանք պետք է ապաշխարեն և *վերստին ծնվեն»։*[13] Երբ մեկը վերստին ծնվում է, նրա սիրտը փոխվում է։ Նա ոչ մի հակում չի ունենում չար կամ անմաքուր բան անելու։ Նա խոր ու մնայուն սեր է զգում Աստծո հանդեպ։ Նա ցանկանում է լավը լինել, ծառայել ուրիշներին եւ պահել պատվիրանները.[14]

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը նկարագրել է այս հզոր փոփոխության իր փորձը. «Զգացումը, որ եկավ ինձ վրա, խաղաղության, սիրո եւ լույսի մաքուր զգացում էր։ Ես զգացի իմ հոգում, որ եթե մեղք էի գործել, . . . այն ներվել էր ինձ. որ ես իսկապես մաքրվել էի մեղքից, իմ սիրտը հուզված էր, եւ ես զգում էի, որ չեմ վնասի իմ ոտքերի տակի ամենափոքր իսկ միջատին։

Ես, կարծես, ցանկություն էի զգում բարիք անել ամենուր, բոլոր մարդկանց եւ ամեն արարածի: Ես զգում էի նոր կյանք, նոր ցանկության՝ անելու այն, ինչը ճիշտ էր: Իմ հոգում չէր մնացել չարի ցանկության անգամ մի մասնիկ: Ճիշտ է, ես պատանի էի, . . . սակայն ես զգում էի, որ նման մի ազդեցություն իջավ ինձ վրա, եւ ես գիտեմ, որ դա Աստծուց էր, եւ այն եղել է ու միշտ կլինի կենդանի վկայություն ինձ համար, որ Տերն ընդունել է ինձ».[15]

Այսպիսով, մենք կոչ ենք անում ձեզ՝ հրաշալի երիտասարդ եղբայրներ, որ ջանասիրաբար ձգտեք «վերստին ծնվել»:[16] Աղոթեք այս հզոր փոփոխության համար ձեր կյանքում: Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Ամենից առավել, ցանկացեք ճանաչել Աստծուն եւ դառնալ Նրա սուրբ Որդու նման: Վայելեք ձեր երիտասարդությունը, բայց «մի կողմ դրեք երեխայական բաները»:[17]

Հեռու մնացեք անվայել ու անմիտ շատախոսությունից:

Փախչեք ամեն տեսակի չարիքից:

Խուսափեք հակառակությունից:

Երբ կարիք կա, ապաշխարեք:[18]

Սա կօգնի ձեզ բարձրանալ տղամարդու ձեր հասակի ողջ չափով: Քաջության, արժանահավատության, խոնարհության, հավատքի եւ բարության հատկանիշները ձերը կդառնան: Ընկերները կհիանան ձեզանով, ծնողները կգովաբանեն ձեզ, քահանայության եղբայրները կապավինեն ձեզ և երիտասարդ աղջիկները կպաշտեն ձեզ և ավելի լավը կդառնան ձեր շնորհիվ: Աստված կպատվի ձեզ և ձեր քահանայության ծառայությանը *զորություն կտա ի վերուստ*.

Մնացածս կանենք մեր մասը: Որպես ծնողներ եւ պապեր՝ մենք ձեզ ավելի խիզախ ծառայության կպատրաստենք Աստծո արքայությունում: Որպես ձեր եղբայրներ՝ մենք օրինակ կլինենք, որին կցանկանաք նմանվել: Մենք կավելացնենք ձեր քվորումների ուժը: Մենք կաջակցենք ձեր քվորումների նախագահություններին, մինչ նրանք գործադրում են իրենց նախագահողի բանալիները: Մենք ձեզ հնարավորություն կտրամադրենք լիովին ստանձնել Ահարոնյան Քահանայության պարտականությունները եւ մեծարել ձեր կոչումը:

Ձեր ծառայության միջոցով մեծ օրհնություններ կտրվեն Եկեղեցուն: «Հրեշտակները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ»:[19] Դուք նույնպես կարող եք դա անել: Երբ խոսում եք Սուրբ Հոգու զորությամբ և սպասավորում եք սուրբ հաղորդության խորհրդանիշերը, տղամարդիկ և կանայք, տղաներն ու աղջիկները կձգտեն ապաշխարել, բարձրացնել իրենց հավատքն առ Քրիստոս և Սուրբ Հոգին միշտ իրենց հետ ունենալ:

Երբ ծոմ պահեք և հավաքեք ծոմի նվիրատվությունները, անդամների մոտ ցանկություն կառաջանա Փրկչին նմանվելու գործեր անել: Տերը հոգում էր աղքատների և ճնշվածների մասին և կոչ էր անում: «Եկեք, հետեւեք ինձ»:[20] Պակաս հաջողակ մարդկանց ծառայելը մեզ հնարավորություն է տալիս մասնակցել Նրա սուրբ աշխատանքին և օգնում է մեզ պահպանել մեր անցյալ մեղքերի ներումը:[21]

Երբ «այցելում եք յուրաքանչյուր անդամի տուն»,[22] մի վախեցեք ոչ էլ ամաչեք: Ճիշտ պահին Սուրբ Հոգին ձեզ կհուշի ինչ խոսքեր խոսել, ինչ վկայություն բերել, ինչ ծառայություն մատուցել:

«Եկեղեցու վրա միշտ հսկելու»[23] ձեր ջանասեր ջանքերը կլինեն արգասաբեր: Ձեր պարկեշտ պահվածքը զինաթափ կանի ամենաանհավատ սիրտը և կթուլացնի հակառակորդի ազդեցությունը: Ձեզ հետ եկեղեցի գալու, հաղորդությունից ճաշակելու և ձեզ ծառայելու հրավերը կողջունվի և բալասան կդառնա ստվերում կորածների համար, որտեղ ավետարանի լույսը խամրած անթեղ է կամ ամենևին լույս չի տալիս:

Օ, իմ սիրելի երիտասարդ եղբայրներ, «մի անտեսեք ձեզանում եղած շնորհքը»,[24] որը դուք ստացել եք, երբ կարգվել եք և ձեզ շնորհվել է Ահարոնյան Քահանայություն:

«Աստված չտվեց մեզ երկչոտության ոգի, այլ զորութեան եւ սիրո եւ զգաստութեան:

Ուրեմն ամոթ մի համարիր մեր Տիրոջ վկայությունը . . . այլ վայելիր ավետարանը Աստծո զորության համեմատ.

Որ փրկեց մեզ և սուրբ կոչումով կանչեց . . . Քրիստոս Յիսուսում հավիտենական դարերից առաջ»:[25]

Մեր սիրելի մարգարեն ձեզ կոչ է արել «կանգնել գույների ներքո»:[26] Մենք ողջունում ենք ձեզ, աղոթում ենք ձեզ համար, ուրախ ենք ձեզ հետ ծառայելու համար և Աստծուն գոհություն ենք հայտնում ձեր փրկարար ծառայության զորության համար:

Ես վկայություն եմ բերում, որ Աստված մեր Հավերժական Հայրն է, և բնակվում է երկինքներում: Հիսուս Քրիստոսը Աստծո վուրբ Որդին է՝ աշխարհի Քավիչը, և դուք՝ Ահարոնյան Քահանայություն կրողներդ, Նրա պատվիրակներն եք երկրի վրա է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, General Authority training meeting, Apr. 2010.
2. Վարդապետություն և Ուխտեր 107.99:
3. Thomas S. Monson, "The Sacred Call of Service," *Liahona,* May 2005, 54.
4. George Albert Smith, in Conference Report, Apr. 1942, 14; see also Thomas S. Monson, *Liahona,* May 2005, 54.
5. Հովհաննես Ե.30:
6. Հովհաննես 6.38:
7. Հավատո Հանգանակներ 1.3:
8. Ա Տիմոթեոս Դ.12:
9. Poem by Keith B. McMullin; see Keith B. McMullin, "Behold the Man," *Ensign,* Nov. 1997, 42.
10. Վարդապետություն և Ուխտեր 107.20:
11. Boyd K. Packer, "The Power of the Priesthood," *Liahona,* May 2010, 7.
12. George Q. Cannon, *Deseret Weekly,* Nov. 2, 1889, 593; quoted by Thomas S. Monson in a General Authority training meeting, Apr. 2010.
13. Ալմա 5.49; շեշտադրումն ավելացված է:
14. Տես Marion G. Romney, "According to the Covenants," *Ensign,* Nov. 1975, 71–73:
15. Joseph F. Smith, in Conference Report, Apr. 1898, 66.
16. Տես Հովհաննես 3.3–7; Ալմա 5.14–21, 49:
17. Ա Կորնթացիս ԺԳ.11:
18. Տես Ա Տիմոթեոս 2.16, 22–26:
19. 2 Նեփի 32.3:
20. Ղուկաս 18.22; տես նաև Հովհաննես 14.12–14:
21. Տես Մոսիա 4.26:
22. Վարդապետություն և Ուխտեր 20.47:
23. Վարդապետություն և Ուխտեր 20.53:
24. Ա Տիմոթեոս Դ.14:
25. Բ Տիմոթեոս Ա.7–8:
26. Thomas S. Monson, General Authority training meeting, Apr. 2010.

Երեց Վ. Քրիսթոֆեր Վադել
Յոթանասունից

Կյանքի հնարավորություն

Ձեր նվիրյալ ծառայության և կամավոր զոհաբերության շնորհիվ, ձեր միսիան ձեզ համար սուրբ հող կդառնա:

Միսիոների կյանքի կարևորագույն փուլ է հանդիսանում նրա վերջին, կամ «ազատման», հարցազրույցը միսիայի նախագահի հետ: Հարցազրույցի առանցքում ընկած են կյանքի հիշարժան փորձառությունների և հիմնական դասերի քննարկումը, որոնք ձեռք են բերվում ընդամենը 18–24 ամիսների ընթացքում:

Թեև այդ փորձառություններից և դասերից շատերը կարող են միանման լինել միսիոներական ծառայության ժամանակ, յուրաքանչյուր միսիա առանձնահատուկ է՝ իր խնդիրներով և հնարավորություններով, որոնք կլարեն և կփորձեն մեզ՝ ըստ մեր կարիքների և բնավորությունների:

Լիաժամկետ միսիայում ծառայելու համար մեր երկնային տունը թողնելուց շատ առաջ, մենք թողել ենք մեր երկնային ծնողներին՝ մեր մահկանացու առաքելությունը կատարելու համար: Մենք ունենք Հայր Երկնքում, որը ճանաչում է մեզ՝ մեր ուժեղ կողմերը և թուլությունները, ունակությունները և ներուժը: Նա գիտի, թե ինչ միսիայի նախագահ, զուգընկերներ, անդամներ և հետաքրքրվողներ են մեզ հարկավոր, որպեսզի մենք դառնանք միսիոներ, ամուսին, հայր և քահանայություն կրող, որն ունակ ենք դառնալու:

Մարգարեները, տեսանողները և հայտնողները նշանակում են միսիոներներին Սուրբ Հոգու առաջնորդությամբ և ազդեցությամբ: Ոգեշնչված միսիաների նախագահները վերահսկում են փոխանցումները վեց շաբաթը մեկ և արագ սովորում են այն մասին, որ Տերը ճշգրիտ գիտի, թե որտեղ պետք է ծառայի յուրաքանչյուր միսիոներ:

Մի քանի տարի առաջ, Երեց Խավիեր Միսյեգոն՝ Մադրիդից, Իսպանիա, ծառայում էր լիաժամկետ միսիայում Արիզոնայում: Այդ ժամանակ Միացյալ Նահանգներ նրա միսիայի կանչը տարօրինակ էր թվում, քանի որ Իսպանիայից երիտասարդների մեծ մասը կանչվում էին ծառայելու իրենց երկրում:

Ցցի հավաքի ավարտին, որտեղ նա և նրա զուգընկերը հրավիրված էին մասնակցելու, Երեց Միսյեգոյին մոտեցավ Եկեղեցու քիչ-ակտիվ մի անդամ: Նա եկել էր ընկերոջ հետ և երկար տարիների ընթացքում առաջին անգամ էր, որ նա հայտնվել էր կրկին հավաքատան ներսում: Երեց Միսյեգոյին հարցրեցին, թե արդյոք նա ճանաչում էր Խոսե Միսյեգոյին Մադրիդում: Երբ Երեց Միսյեգոն պատասխանեց, որ իր հոր անունը Խոսե Միսյեգո էր, տղամարդը ոգևորված մի քանի հարց ևս տվեց, համոզվելու համար, որ դա հենց նույն Խոսե Միսյեգոն էր: Երբ պարզվեց, որ նրանք խոսում էին նույն մարդու մասին, այդ քիչ-ակտիվ անդամը սկսեց արտասվել: «Ձեր հայրը միակ մարդն էր, ում ես մկրտեցի իմ ողջ միսիայի ընթացքում», - բացատրեց նա, նկարագրելով, թե ինչպես էր իր միսիան, իր կարծիքով, ձախողված եղել: Ակտիվ չլինելու իր տարիները նա վերագրեց անհամատասխանության և դեպրեսիայի իր զգացումներին, քանի որ համոզված էր, որ չէր արդարացրել Տիրոջ սպասելիքները:

Այնուհետև Երեց Միսյեգոն նկարագրեց, թե ինչ էր նշանակում իր ընտանիքի համար այդ «թվացյալ ձախողումը»: Նա ասաց, որ իր հայրը, որը մկրտվել էր երիտասարդ ամուրի լինելով, ամուսնացել էր տաճարում, որ նա վեց երեխաներից չորրորդն էր, որ բոլոր երեք տղաները և մեկ քույրը ծառայել են լիաժամկետ միսիայում, որ բոլորը ակտիվ են Եկեղեցում, և որ բոլոր ամուսնացածները կնքվել են տաճարում:

Քիչ ակտիվ վերադարձած միսիոները սկսեց լաց լինել: Իր ջանքերի շնորհիվ, մի շարք կյանքեր էին օրհնվել, և Տերը ուղարկել էր մի երեցի Մադրիդից, Իսպանիա, որպեսզի զար Արիզոնայում հավաքի և իրեն հայտներ, որ նա ձախողում չէր ունեցել: Տեր գիտի, թե որտեղ պետք է ծառայի յուրաքանչյուր միսիոներ:

Անկախ նրանից, թե ինչպես է Տերը որոշում օրհնել մեզ միսիայի ընթացքում, միսիոներական ծառայության օրհնությունները չեն ավարտվում, երբ մենք ազատվում ենք մեր ցցի նախագահի կողմից: Ձեր միսիան ձեր կյանքի պատրաստման փուլն է: Հավատարիմ ծառայության ընթացքում ձեռք բերած փորձառությունները, դասերը և վկայությունը նպատակ ունեն ապահովելու ավետարանի վրա կենտրոնացած հիմք, որը կծառայի մահկանացու կյանքում և հավերժություններում: Այնուամենայնիվ,

որպեսզի օրհնությունները շարունակվեն միսիայից հետո, պետք է բավարարել որոշակի պայմանների: «Քանզի բոլոր նրանք, ովքեր կամենում են օրհնություն ստանալ իմ ձեռքից, պիտի մնան օրենքի մեջ, որը նշանակվել է այդ օրհնության համար, և նրա պայմանների մեջ» (ՎևՈւ 132.5): Այս սկզբունքը ուսուցանվում է Ելիցի պատմության մեջ:

Իր հանձնարարությունը Տիրոջից ստանալուց հետո, Մովսեսը վերադառնում է Եգիպտոս՝ ազատելու Իսրայելի զավակներին գերությունից: Ժանտախտը ժանտախտից հետո թույլ չէր տալիս, որ նրանք ազատ լինեին, մինչև հասավ 10-րդ վերջին ժանտախտի ժամանակը. «Այն գիշերը Եգիպտոսի երկրովը պիտի անցնեմ, և զարկեմ Եգիպտոսի երկրումը ամեն առաջնեկը» (Ելից 12.12):

«Կործանիչից» պաշտպանվելու համար (տող 23), Տերը հրահանգեց Իր ժողովրդին զոհաբերություն կատարել՝ «անարատ» գառ (տող 5) և հավաքել զոհաբերության արյունը: Այնուհետև նրանք պետք է վերցնեին արյունը և քսեին յուրաքանչյուր տան մուտքին՝«երկու կողմի դրանդիներին և . . .վերի սեմին» (տող 7), այս խոստումով. «Եվ երբոր արյունը տեսնեմ, ձեր վրայից պիտի անցնեմ. և հարուածը ձեր վրա պիտի չգա ձեզ կորցնեու համար» (տող 13):

«Իսրայելի որդիքը գնացին, և արին ինչպես Եհովան պատվիրել էր» (տող 28): Նրանք կատարեցին զոհաբերությունը, հավաքեցին արյունը և քսեցին այն իրենց տների վրա: «Եվ եղավ որ կես գիշերին Եհովան Եգիպտոսի երկրումը ամեն առաջնեկին զարկեց» (տող 29): Մովսեսը և նրա ժողովուրդը, համաձայն Տիրոջ խոստմանը, պաշտպանված էին:

Իսրայելցիների կողմից օգտագործած արյունը, որը խորհրդանշում էր Փրկչի ապագա Քավությունը, նրանց արած զոհաբերության արդյունքն էր: Ինչևէ, զոհաբերությունը և արյունը բավական չէին խոստացված օրհնությունը ստանալու համար: *Եթե արյունը չքսվեր մուտքի դռանը, զոհաբերությունը ապարդյուն կլիներ:*

Նախագահ Մոնսոնը ուսուցանել է. «Միսիոներական աշխատանքը դժվար է: Այն տանում է մեր եռանդից, այն լարում է մեր ունակությունները, այն պահանջում է մեր լավագույն ջանքերը: . . . Չկա աշխատանք, որը պահանջում է ավելի երկար ժամեր կամ ավելի մեծ նվիրվածություն կամ նման զոհաբերություն և ջերմեռանդ աղոթք» (“That All May Hear,” *Ensign,* May 1995, 49):

Զոհաբերության արդյունքում մենք վերադառնում ենք մեր միսիաներից մեր անձնական պարգևներով: Հավատքի պարգև: Վկայության պարգև: Հոգու դերի հասկացողության պարգև: Ավետարանի ամենօրյա ուսումնասիրության պարգև: Մեր Փրկչին ծառայելու պարգև: Պարգևները խնամքով փաթեթավորված են մաշված սուրբ գրքերում, *Քարոզիր Իմ Ավետարանը* պատառոտված գրքույկում, միսիոներական ամսագրերում և շնորհակալ սրտերում: Ինչևէ, ինչպես Իսրայելի զավակները, միսիոներական ծառայության ընթացիկ օրհնությունները զոհաբերությունից հետո կիրառում են պահանջում:

Մի քանի տարի առաջ, երբ Քույր Վադելը և ես Իսպանիա Բարսելոնա միսիայում էինք, ուր ես նախագահում էի, ես յուրաքանչյուր միսիոների իրենց վերջին հարցազրույցի ժամանակ տալիս էի վերջին հանձնարարությունը: Տուն վերադառնալիս նրանք պետք է անմիջապես ժամանակ հատկացնեին, խորհելով այն դասերի և պարգևների մասին, որոնք նրանց տվել էր մեծահոգի Երկնային Հայրը: Նրանք պետք է աղոթքով թվարկեին և մտածեին, թե ինչպես լավագույնս կարող էին կիրառել միսիայից հետո այդ դասերը, դասեր, որոնք ազդեցություն կունենային իրենց կյանքի բոլոր բնագավառներում՝ կրթության և կարիերայի ընտրության, ամուսնության և երեխաների, Եկեղեցու ապագա ծառայությունների, և, ամենակարևորը, այն հարցում, թե ինչ էին նրանք շարունակելու դառնալ, ինչպես նաև որպես Հիսուս Քրիստոսի աշակերտ իրենց շարունակ զարգացման մեջ:

Չկա վերադարձած միսիոներ, որի համար շատ ուշ կլինի մտածել այն դասերի մասին, որոնք նա ստացել է հավատարիմ ծառայության ընթացքում, և կիրառել դրանք ավելի մեծ ջանասիրությամբ: Այդպես մենք կյանքում ավելի լիարժեք կզգանք Հոգու ազդեցությունը, մեր ընտանիքները կամրացվեն և մենք կմոտենանք մեր Փրկչին և Երկնային Հորը: Նախորդ

գերագույն համաժողովներից մեկին Երեց Լ. Թոմ Փերին հետևյալ հրավերն ուղղեց. «Ես կոչ եմ անում ձեզ՝ վերադարձած միսիոներներ, վերանվիրագործեք ինքներդ ձեզ, որպեսզի կրկին լցվեք միսիոներական ծառայության ցանկությամբ և հոգով: Ես կոչ եմ անում ձեզ ձգտել, լինել և գործել որպես մեր Երկնային Հոր ծառայող: . . . Ես ուզում եմ ձեզ խոստանալ, որ ձեզ համար պահված են մեծ օրհնություններ, եթե դուք շարունակեք առաջ գնալ այն եռանդով, որն ունեք լիաժամկետ միսիայում ծառայելիս» (“The Returned Missionary,” *Liahona,* Jan. 2002, 88, 89; *Ensign,* Nov. 2001, 77):

Այժմ, այն երիտասարդ տղամարդկանց հետ, ովքեր դեռ պետք է ծառայեն լիաժամկետ միսիայում, ես կիսվում են Նախագահ Մոնսոնի խորհրդով, որը նա տվեց անցյալ հոկտեմբերին. «Ես կրկնում եմ այն, ինչ երկար ժամանակ ուսուցանել են մարգարեները. յուրաքանչյուր արժանի, ունակ երիտասարդ տղամարդ պետք է պատրաստվի ծառայելու միսիայում: Միսիոներական ծառայությունը քահանայական պարտականություն է՝ պարտավորություն, որը Տերն ակնկալում է մեզանից, ում այդքան շատ է տրվել» («Կրկին հանդիպելով», *Լիահոնա,* նոյ. 2010, 5–6):

Ինչպես անցյալ և ներկա միսիոներների դեպքում, Տերը ճանաչում է ձեզ և ձեզ համար ունի պատրաստած միսիոներական փորձառություն: Նա ճանաչում է ձեր միսիայի նախագահին և նրա հիանալի կնոջը, որոնք կսիրեն ձեզ իրենց երեխաների նման, և ովքեր ոգեշնչում և ուղղություն կհայցեն ձեզ համար: Նա ճանաչում է ձեր բոլոր զուգընկերներին և այն, թե ինչ դուք կսովորեք նրանցից: Նա գիտի, թե որ բնագավառներում դուք կաշխատեք, որ անդամներին կհանդիպեք, ում կուսուցանեք և ինչ կյանքեր կփոխեք հավերժության մեջ:

Ձեր նվիրյալ ծառայության և կամավոր զոհաբերության շնորհիվ, ձեր միսիան ձեզ համար սուրբ հող կդառնա: Դուք դարձի հրաշքի ականատեսը կլինեք, երբ Հոգին ձեր միջոցով աշխատի և փոխի նրանց սրտերը, ում դուք ուսուցանում եք:

Շատ բան կա անելու, երբ դուք պատրաստվում եք ծառայելու: Տիրոջ արդյունավետ ծառա դառնալը պահանջում է ավելին, քան պարզապես ձեռնադրվել, կրել կրծքանշանը կամ մտնել միսիոներների պատրաստման կենտրոն: Դա մի գործընթաց է, որը սկսվում է շատ առաջ նրանից, երբ ձեզ կդիմեն որպես «Երեց»:

Ձեր միսիայի ժամանեք Մորմոնի Գրքի ձեր անձնական վկայությամբ, որը ձեռք եք բերել ուսումնասիրության և աղոթքի միջոցով: Մորմոնի Գիրքը Քրիստոսի աստվածային էության հզոր վկայություն է: Այն նաև Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով կատարված Վերականգնման ապացույցն է: Որպես միսիոներ, դուք նախ պետք է ունենաք անձնական վկայություն այն մասին, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Սուրբ Հոգու այս վկայությունը պետք է դառնա ձեր ուսուցանման առանցքը (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 103):

Ձեր միսիայի ժամանեք, արժանի լինելով Սուրբ Հոգու ընկերակցությանը: Նախագահ Էզրա Թավթ Բենսոնի խոսքերով. «Հոգին այս աշխատանքում միակ առավել կարևոր տարրն է: Հոգու շնորհիվ ձեր կոչումը մեծարելով, դուք կարող եք հրաշքներ գործել Տիրոջ համար ձեր միսիայի դաշտում: Առանց Հոգու, դուք երբեք հաջողության չեք հասնի, *անկախ* ձեր տաղանդներից և ընդունակություններից»: (*Քարոզիր Իմ Ավետարանը,* 176).

Ձեր միսիայի ժամանեք՝ պատրաստ աշխատելու: Որպես միսիոներ ձեր հաջողությունը հիմնականում կգնահատվի գտնելու, ուսուցանելու, մկրտելու ւ հաստատելու ձեր վճռականությամբ: Ձեզանից պահանջվում է արդյունավետ աշխատել ամեն օր, անելով լավագույնը՝ Քրիստոսի մոտ հոգիներ բերելու համար: (*Քարոզիր Իմ Ավետարանը,* 10, 11):

Ես կրկնում են Երեց Մ. Ռասսել Բալլարդի հրավերը, տրված ծառայության պատրաստվող երիտասարդների նախորդ խմբին. «Մենք նայում ենք ձեզ՝ Ահարոնյան Քահանայության իմ երիտասարդ եղբայրներ: Մենք ունենք ձեր կարիքը: Հելամանի 2000 անվախ մարտիկների նման, դուք նույնպես Աստծո հոգևոր որդիներն եք, և դուք նույնպես կարող եք օժտվել Նրա արքայությունը կառուցելու և պաշտպանելու զորությամբ: Մենք ունենք ձեր կարիքը, որպեսզի դուք կապեք սուրբ ուխտերը, ինչպես նրանք արեցին: Դուք պետք է լինեք խորապես հնազանդ և հավատարիմ, ինչպես նրանք էին» (“The Greatest Generation of Missionaries,” *Liahona,* Nov. 2002, 47):

Ընդունելով այս հրավերը, դուք մեծ դաս կսովորեք, ինչպես սովորեց Երեց Միսյեզոն և բոլոր նրանք, ովքեր հավատարիմ ծառայեցին, վերադարձան և կիրառեցին: Դուք կիմանաք, որ մեր մարգարե՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերը ճշմարիտ են. «Միսիոների կյանքի հնարավորությունը ձերն է: Հավերժության օրհնությունները սպասում են ձեզ: Ձերն է արտոնությունը քահանայության ծառայության բեմի վրա լինելու ոչ թե դիտորդներ, այլ մասնակիցներ» (*Ensign,* May 1995, 49): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Հոգ տանելու Տիրոջ ուղին

Եկեղեցու բարօրություն սկզբունքները պարզապես լավ գաղափարներ չեն. դրանք Աստծուց հայտնված ճշմարտություններ են. դրանք կարիքավորներին օգնելու Նրա ուղին են:

Վաթսուն հինգ տարի առաջ, II հաշխարհամարտից կարճ ժամանակ անց, ես փորձառություն ունեցա, անձամբ զգալով Եկեղեցու բարօրության ծրագրի անմիջական օրհնությունները: Չնայած երեխա էի, ես դեռ հիշում եմ պահածոյացված դեղձի քաղցր համը եփած ցորենի հետ և նվիրաբերված հագուստի հատուկ հոտը, որոնք ուղարկվել էին հետպատերազմյան Գերմանիայի Սրբերին Միացյալ Նահանգների հոգատար Եկեղեցու անդամների կողմից: Ես երբեք չեմ մոռանա և իմ հիշողության մեջ հավերժ կփայփայեմ սիրո և բարության այդ քայլերը մեզանից նրանց նկատմամբ, ովքեր մեծ կարիքի մեջ էին:

Այս անձնական փորձը և ոգեշնչված բարօրության ծրագրի 75-ամյակն ինձ առիթ են տալիս կրկին անդրադառնալ աղքատների և կարիքավորների մասին հոգալու, ինքնավստահ դառնալու և մեր մերձավորներին ծառայելու հիմնական սկզբունքներին:

Հավատքի առանցքում

Երբեմն մենք դիտում ենք բարօրությունը որպես ավետարանի ծառի բազմաթիվ ճյուղերից մեկը, պարզապես, ավետարանի մեկ այլ թեմա: Սակայն ես հավատում եմ, որ Տիրոջ ծրագրում բարօրության սկզբունքների հանդեպ մեր պարտավորությունը պետք է լինի Նրա հանդեպ մեր հավատքի ու նվիրման արմատական մասը:

Ժամանակների սկզբից ի վեր մեր Երկնային Հայրը այս հարցի շուրջ խոսել է մեծ պարզությամբ՝ սկսելով մեղմ խնդրանքից, «Եթե սիրում ես . . . հիշիր աղքատներին և նվիրաբերիր քո ունեցվածքից՝ նրանց աջակցելու համար»[1], շարունակելով ուղղակի պատվիրանով. «Բոլոր բաներում հիշեք աղքատներին ու կարիքավորներին, հիվանդներին ու տառապյալներին, քանզի ով որ չի անում այս բաները, նա իմ աշակերտը չէ»[2], և ավարտելով խիստ նախազգուշացմամբ. «Եթե մի մարդ վերցնում է այն առատությունից, որը ես պատրաստել եմ, և իր մասից բաժին չի հանում աղքատին ու կարիքավորին, իմ ավետարանի օրենքի համաձայն, նա, ամբարիշտների հետ, իր աչքերը կբարձրացնի դժոխքում՝ տանջանքի մեջ լինելով»:[3]

Ֆիզիկականն ու հոգևորը միահյուսված են

Երկու մեծ պատվիրանները՝ սիրել Աստծուն և մեր մերձավորին, ֆիզիկականի և հոգևորի միահյուսում են: Կարևոր է նշել, որ այս երկու պատվիրաններին անվանում են «մեծ», որովհետև մնացած բոլոր պատվիրանները դրանցից են բխում:[4] Այլ կերպ ասած, մեր անձնական, ընտանեկան և եկեղեցական առաջնահերթությունները պետք է սկսեն այստեղից: Բոլոր մյուս նպատակներն ու գործողությունները պետք է բխեն այս երկու մեծ պատվիրանների աղբյուրից՝ Աստծո և մերձավորի հանդեպ մեր սիրուց:

Մետաղադրամի երկու կողմերի նման՝ ֆիզիկականն ու հոգևորն իրարից անբաժան են:

Բոլորին կյանք Շնորհողը հռչակել է. «Բոլոր բաներն ինձ համար հոգևոր են, և ոչ մի անգամ ես ձեզ չեմ տվել օրենք, որը լինի ֆիզիկական»:[5] Ինձ համար սա նշանակում է, որ «հոգևոր կյանքն առաջին հերթին *կյանք* է: Դա ոչ թե մի բան է, որ պարզապես պետք է իմանալ և ուսումնասիրել, այլ՝ ապրել»[6]

Ցավոք, կան մարդիկ, ովքեր անտեսում են «ֆիզիկականը», որովհետև այն պակաս կարևոր են համարում: Նրանք զանձում են հոգևորը, նվազագույնի հասցնելով նյութականը: Թեև կարևոր է, որ մեր մտքերը ուղղված լինեն դեպի երկինք, մենք բաց ենք թողնում կրոնի էությունը, եթե ձեռք չենք մեկնում նաև մեր մերձավորին:

Օրինակ՝ Ենովքը կառուցեց Սիոնի հասարակությունը և հոգևոր աշխատանքով՝ ստեղծելով մեկ սրտի և մեկ մտքի ժողովուրդ, *և* ֆիզիկական աշխատանքով՝ ապահովելով, որ ոչ մի աղքատ չլինի իրենց մեջ:[7]

Ինչպես միշտ, մենք կարող ենք նայել մեր կատարյալ Ուսուցչին՝ Հիսուս Քրիստոսին, որպես օրինակի: Ինչպես Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ կրտսերն է ուսուցանել. «Երբ Փրկիչը եկավ երկիր, Նա ուներ երկու մեծ առաքելություն. մեկը Օծյալի գործը

կատարելն էր՝ Քավություն անկման համար և օրենքը կատարել, մյուսը՝ աշխատանքն էր իր մարմնական եղբայրների և քույրերի մեջ՝ տառապանքներից նրանց ազատելը»:[8]

Նման ձևով մեր հոգևոր առաջնութացն անքակտելիորեն կապված է ուրիշների համար կատարված ֆիզիկական ծառայության հետ:

Մեկը լրացնում է մյուսին: Մեկն առանց մյուսի հակասում է Աստծո երջանկության ծրագրին:

Տիրոջ ուղին

Աշխարհում կան շատ բարի մարդիկ և կազմակերպություններ, որոնք փորձում են բավարարել աղքատների և կարիքավորների հրատապ կարիքները: Մենք երախտապարտ ենք դրա համար, սակայն կարիքավորների մասին հոգալու Տիրոջ ուղին տարբերվում է աշխարհի ուղուց: Տերն ասել է. «Դա անպայման պետք է արվի իմ ուրույն ձևով»:[9] Նա շահագրգռված չէ միայն մեր անմիջական կարիքներով. Նա մտահոգված է մեր հավերժական առաջընթացով: Այդ իսկ պատճառով, Տիրոջ ուղին, ի լրումն աղքատների մասին հոգալու, միշտ ընդգրկել է ինքնապահովման և մերձավորին ծառայելու սկզբունքները:

1941-ին Գիլա գետը վարարեց և հեղեղեց Արիզոնայի Դունկան հովիտը: Սպենսեր Վ. Քիմբալ անունով երիտասարդ մի ցցի նախագահ հանդիպեց իր խորհրդականների հետ, գնահատեց վնասները և հեռագիր ուղարկեց Սոլթ Լեյք Սիթի՝ խնդրելով մեծ գումարի օգնություն:

Փողի փոխարեն նախագահ Հեբեր Ջ. Գրանտն ուղարկեց երեք տղամարդ՝ Հենրի Դ. Մոյլին, Մարիոն Ջ. Ռոմնիին և Հարոլդ Բ. Լիին: Նրանք այցելեցին նախագահ Քիմբալին և նրան սովորեցրեցին մի կարևոր դաս. «Այս ծրագիրը «ինձ օգնություն տվեք» ոգով չէ, – ասացին նրանք: – Սա «ինքնաօգնության» ծրագիր է»:

Շատ տարիներ անց, Նախագահն Քիմբալն ասաց. «Կարծում եմ հեշտ բան կլիներ, որ Եղբայրները մեզ [գումար] ուղարկեին, և ինձ համար շատ դժվար չէր լինի նստել իմ գրասենյակում և բաժանել այն, բայց շատ ավելի մեծ բարիք եղավ

Սան Սալվադոր, Էլ Սալվադոր

մեզ համար, երբ [մեր մարդկանցից] հարյուրավորները գնացին Դունկան և կառուցեցին ցանկապատեր, հավաքեցին խոտն ու հավասարեցրեցին հողը և արեցին ամեն բան, ինչ անհրաժեշտ էր: Դա էր ինքնաօգնությունը»:[10]

Հետևելով Տիրոջ ուղուն, Նախագահ Քիմբալի ցցի անդամները ոչ միայն իրենց անմիջական կարիքները հոգացին, այլ նաև զարգացրեցին ինքնավստահություն, թեթևացրեցին տառապանքը և, ծառայելով միմյանց, աճեցին սիրով և միասնությամբ:

Մենք բոլորս ընդգրկված ենք

Հենց այս պահին Եկեղեցու շատ անդամներ տառապում են: Նրանք սոված են, ֆինանսապես ճնշված են և պայքարում են ամեն տեսակի ֆիզիկական, զգացմունքային և հոգևոր նեղությունների դեմ: Նրանք աղոթում են իրենց հոգու ողջ զորությամբ օգնության և սփոփանքի համար:

Եղբայրներ, խնդրում եմ, մի կարծեք, թե սա ուրիշի պատասխանատվությունն է: Դա իմն է և ձերը: Մենք բոլորս ընդգրկված են: «Բոլոր» նշանակում է *բոլորը*՝ Ահարոնյան և Մելքիսեդեկյան քահանայություն կրող յուրանքանչյուր տղամարդ՝ հարուստ, թե աղքատ՝ ամեն ազգի մեջ: Տիրոջ ծրագրում յուրաքանչյուրի համար բան կա անելու:[11]

Դասը, որ մենք սովորում ենք սերնդե-սերունդ, այն է, որ թե հարուստ, թե աղքատ՝ *բոլորը* նույն սուրբ պարտականությունն են կրում՝ օգնելու իրենց մերձավորին: Բոլորս պետք է միասին աշխատենք, որպեսզի հաջողությամբ կիրառենք բարօրության և ինքնապահովման սկզբունքները:

Շատ հաճախ մենք մեր շուրջը նկատում ենք կարիքներ՝ հուսալով, որ ինչ-որ մեկը հեռվից մոգական ձևով կհայտնվի և կհոգա այդ կարիքները: Գուցե մենք սպասում ենք, որ մի փորձագետ կգա՝ մասնագիտացված գիտելիքներով, և կլուծի հատուկ խնդիրները: Անելով դա՝ մենք մեր մերձավորին զրկում ենք այն ծառայությունից, որ կարող էինք տրամադրել, և ինքներս մեզ զրկում ենք ծառայելու հնարավորությունից: Չնայած վատ բան չկա փորձագետներ ներգրավելու մեջ, եկեք չփախչենք իրականությունից. երբեք բավարար չափով մասնագետներ չեն լինի բոլոր խնդիրները լուծելու համար: Փոխարենը, Տերը դռան շեմին է դրել իր քահանայությունը և դրա կազմակերպությունը ամեն ազգում, որտեղ հիմնվել է Եկեղեցին: Եվ նրա կողքին կանգնեցրել է Սփոփող Միությունը: Ինչպես մենք՝ քահանայություն կրողներս գիտենք, բարօրության ոչ մի գործ հաջողությամբ չի ավարտվում, եթե լավագույնս չեն օգտագործվում մեր քույրերի զարմանալի պարգևներն ու տաղանդները:

Տիրոջ ուղին գետի կողքին նստելը չէ ու սպասելը, թե երբ ջուրը կվերջանա, որ գետն անցնենք: Այն համախմբվելն է, թևքերը ծալելն ու գործի անցնելը, կամուրջ կամ նավակ կառուցելը, որպեսզի հատենք-անցնենք մեր մարտահրավերների ջրերը: Դուք՝ Սիոնի տղամարդիկ, դուք քահանայություն կրողներ եք, ովքեր կարող են առաջնորդել և սփոփանք բերել Սրբերին, կիրառելով բարօրության ծրագրի ոգեշնչված սկզբունքները: Դա ձեր առաքելությունն է՝ բացել ձեր աչքերը, օգտագործել ձեր քահանայությունը և գնալ ու աշխատել Տիրոջ ուղով:

Ամենափառահեղ կազմակերպությունը Երկրի վրա

Մեծ ճգնաժամի տարիներին Եղբայրները խնդրեցին Հարոլդ Բ.

Լիին, որն այդ ժամանակ ծառայում էր ցցի նախագահ, գտնել լուծումներ այն ճնշող աղքատության, վշտի ու սովի պայմաններում, որոնք այնքան տարածված էին ողջ աշխարհում այդ ժամանակ: Նա չարչարվում էր, որ մի լուծում գտներ, և խնդիրը ներկայացրեց Տիրոջն ու հարցրեց. «Ի՞նչ կազմակերպություն պետք է մենք ունենանք . . . որ կարողանանք մի բան անել»:

Եվ «կարծես Տերն ասաց [նրան]. «Լսի՛ր, որդիս: Դուք կարիք չունեք որևէ այլ կազմակերպության: Ես տվել եմ ձեզ ամենափառահեղ կազմակերպությունը, որ կա երկրի երեսին: Չկա ավելի փառահեղ կազմակերպություն, քան քահանայության կազմակերպությունն է: Այն, ինչ դուք պետք է անեք, քահանայությունը գործի դնելն է: Ուրիշ ոչինչ»»:[12]

Դա նաև մեր ժամանակի ելակետն է: Մենք արդեն ունենք Տիրոջ կազմակերպությունն իր տեղում: Մեր խնդիրը որոշելն է, թե ինչպես օգտագործենք այն:

Մենք պետք է սկսենք այն ամենին ծանոթանալուց, ինչ Տերն արդեն հայտնել է: Մենք չպետք է ենթադրենք, որ գիտենք դա: Մենք պետք է նյութին մոտենանք երեխայի խոնարհությամբ: Յուրաքանչյուր սերունդ պետք է նորից սովորի այն վարդապետությունները, որոնք կարիքավորների մասին հոգալու Տիրոջ ուղու հիմքն են: Ինչպես շատ մարգարեներ տարիների ընթացքում հրահանգել են մեզ, Եկեղեցու բարօրություն սկզբունքները պարզապես լավ գաղափարներ չեն. դրանք Աստծուց հայտնված ճշմարտություններ են: Դրանք կարիքավորներին օգնելու Նրա ուղին են:

Եղբայրներ, նախ ուսումնասիրեք հայտնությամբ տրված սկզբունքներն ու վարդապետությունները: Կարդացեք Եկեղեցու բարօրության վերաբերյալ ձեռնարկները[13], օգտվեք providentliving.org ինտերնետային կայքից, վերընթերցեք 2011 հունիս ամսվա *Լիահոնայի* հոդվածները Եկեղեցու բարօրության ծրագրի մասին: Գիտելիք ձեռք բերեք Տիրոջ ուղով Իր Սրբերին ապահովելու մասին: Սովորեք, թե ինչպես են կարիքավորներին խնամելու, մերձավորին

Լիսեստեր, Անգլիա

ծառայելու և ինքնապահովման սկզբունքները լրացնում միմյանց: Ինքնապահովման Տիրոջ ուղին հավասարակշռված ձևով ներառում է կյանքի շատ բնագավառներ, այդ թվում, կրթություն, առողջություն, զբաղվածություն, ընտանեկան ֆինանսներ և հոգևոր ուժ: Ծանոթացեք Եկեղեցու բարօրության ժամանակակից ծրագրին:[14]

Երբ դուք ուսումնասիրեք Եկեղեցու բարօրության ծրագրի վարդապետություններն ու սկզբունքները, փորձեք կիրառել այն, ինչ սովորել եք ձեր պատասխանատվության սահմաններում գտնվող մարդկանց համար: Սա նշանակում է, որ մեծամասամբ, դուք ինքնուրույն պետք է կողմնորոշվեք, թե ինչ անել: Յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր համայնք, աշխարհի յուրաքանչյուր տարածք տարբեր է: Եկեղեցու բարօրության հարցերի համար չկա, այսպես ասած, մի չափսի հագուստ, որը հարմար է բոլոր դեպքերի համար: Դա ինքնապահովման ծրագիր է, որում անհատները պատասխանատու են իրենց ինքնուրույն ապահովելու համար: Մեր միջոցներն են՝ անձնական աղոթքը, աստվածատուր մեր տաղանդները և ունակությունները, մեր ընտանիքների շնորհիվ մեզ մատչելի միջոցները, համայնքային բազմազան միջոցները և, իհարկե, քահանայության քվորումների և Սփոփող Միության հոգատար աջակցությունը: Այդ ամենը մեզ կտանի ինքնապահովման ոգեշնչված ուղով:

Դուք պետք է ինքներդ սահմանեք ուղղությունը, որը համապատասխանում է Տիրոջ վարդապետությանը և հարմար է ձեր աշխարհագրական տարածքի հանգամանքներում: Աստվածային բարօրության ծրագիրն իրականացնելու համար դուք կարիք չունեք միշտ դիմել Սոլթ Լեյք Սիթի: Փոխարենը, դուք պետք է դիմեք ձեր ձեռնարկներին, լսեք ձեր սրտերին և հայցեք երկնքի օգնությունը: Վստահեք Տիրոջ ոգեշնչմանը և հետևեք Նրա ուղուն:

Վերջում դուք պետք է անեք ձեր տարածքում այն, ինչ անում են Քրիստոսի աշակերտները բոլոր տնտեսությունների ժամանակ՝ խորհուրդ արեք միասին, օգտագործեք բոլոր առկա միջոցները, փնտրեք Սուրբ Հոգու ոգեշնչումը, ստացեք Տիրոջ հաստատումը, և ապա թևքերը ծալեք ու գործի անցեք:

Ես ձեզ խոստանում եմ, որ եթե դուք հետևեք այս օրինակին, դուք հատուկ ուղղորդում կստանաք, թե *ում, ինչով, երբ,* և *որտեղ* պետք է հոգ տանել Տիրոջ ուղով:

Տիրոջ ուղով հոգ տանելու օրհնությունները

Տիրոջ ուղով հոգ տանելու Եկեղեցու բարօրության ծրագրի մարգարեական խոստումներն ու օրհնություններն Իր զավակներին խոստացած Տիրոջ ամենաշքեղ ու վեհ օրհնություններից են. «Եթէ քո հացը յօժար սրտով քաղցածներին տաս և չքաւոր մարդկանց կշտացնես, այն ժամանակ խաւարի մէջ կը ծագի քո լոյսը, քո խաւարը կը վերածուի միջօրէի: Քո Աստուածը ամէն ժամ քեզ հետ կը լինի»:[15]

Անկախ նրանից, հարուստ ենք, թե աղքատ, անկախ այն բանից, թե որտեղ ենք ապրում այս երկրագնդի վրա, մենք բոլորս ունենք միմյանց կարիքը, քանի որ մեր ժամանակը, տաղանդները և միջոցները զոհաբերելու շնորհիվ՝ մեր հոգիները հաստատվում են ու զտվում:

Տիրոջ ուղով հոգ տանելու այս աշխատանքը պարզապես ևս մեկ տարր չէ Եկեղեցու ծրագրերի գրացուցակում: Այն չի կարող անտեսվել կամ մի կողմ դրվել: Այն առանցքային դեր ունի մեր վարդապետության մեջ. այն մեր կրոնի էությունն է: Եղբայրներ՝ որպես քահանայություն կրողներ, մեր մեծ և հատուկ արտոնությունն է՝ գործի դնել քահանայությունը: Մենք չպետք է մեր սրտերը կամ մեր մտքերը հեռացնենք ավելի ինքնավստահ, կարիքավորների հանդեպ ավելի հոգատար և կարեկցանքի ավելի շատ ծառայություն մատուցելու նպատակից:

Ֆիզիկականը միահյուսված է հոգևորին: Աստված մեզ տվել է այս մահկանացու փորձնական ժամանակաշրջանն ու աշխարհիկ մարտահրավերները, որոնք գործում են որպես աշխատասենյակ, որտեղ մենք կարող ենք աճել՝ դառնալ այնպիսի էակներ, ինչպիսին Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք դառնանք: Թող որ մենք հասկանանք մեծ պարտքը և օրհնությունը, որը գալիս է Տիրոջը հետևելուց և Նրա ուղով հոգ տանելուց, սա իմ աղոթքն է՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 42.29, 30:
2. Վարդապետություն և Ուխտեր 52.40:
3. Վարդապետություն և Ուխտեր 104.18:
4. Տես Մատթեոս 22.36–40:
5. Վարդապետություն և Ուխտեր 29.34:
6. Thomas Merton, *Thoughts in Solitude* (1956), 46.
7. Մովսես 7.18:
8. J. Reuben Clark Jr., in Conference Report, Apr. 1937, 22.
9. Վարդապետություն և Ուխտեր 104.16; տես նաև 15 հատվածը:
10. Spencer W. Kimball, in Conference Report, Apr. 1974, 183, 184.
11. Տես Մոսիա 4.26, 18.27:
12. Harold B. Lee, transcript of welfare agricultural meeting, Oct. 3, 1970, 20.
13. Տես *Handbook 1: Stake Presidents and Bishops* (2010), chapter 5, “Administering Church Welfare”; *Handbook 2: Administering the Church* (2010), chapter 6, “Welfare Principles and Leadership”; *Providing in the Lord’s Way: Summary of a Leader’s Guide to Welfare* (pamphlet, 2009):
14. Elder Glen L. Rudd’s book *Pure Religion: The Story of Church Welfare since 1930* (1995), available from Church Distribution Services, is a wonderful place to study the doctrines and history of the Lord’s welfare program.
15. Եսայիա 58.10–11; տես նաև 7–9 հատվածները:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Նախապատրաստություն Քահանայությանը. «Ես ունեմ քո կարիքը»:

Մի մտահոգվեք այն մասին, թե որքան անփորձ եք, այլ մտածեք, թե ինչ կարող եք դառնալ Տիրոջ օգնությամբ:

Իմ սիրելի եղբայրներ, ինձ համար մեծ ուրախություն է լինել ձեզ հետ՝ Աստծո Քահանայության այս համաշխարհային ժողովին: Այսօր ես կխոսեմ քահանայության նախապատրաստության մասին, ինչպես ձեր, այնպես էլ ուրիշներին օգնություն տրամադրելու առումով:

Մեզանից շատերը երբեմն մտածում են. «Արդյո՞ք ես պատրաստ եմ քահանայության այս հանձնարարությանը»: Իմ պատասխանն է. «Այո, դուք պատրաստ եք»: Այսօր իմ նպատակն է օգնել ձեզ հասկանալ, որ դուք պատրաստ եք, և քաջություն քաղեք դրանից:

Ինչպես գիտեք, Ահարոնյան Քահանայությունը ստեղծված է որպես նախապատրաստական քահանայություն: Ահարոնյան Քահանայության մեծ մասը կազմում են 12-19 տարեկան երիտասարդ սարկավագները, ուսուցիչները և քահանաները:

Մենք կարող ենք մտածել, թե քահանայության նախապատրաստությունը տեղի է ունենում Ահարոնյան Քահանայության տարիներին: Սակայն մեր Երկնային Հայրը սկսել է նախապատրաստել մեզ դեռ այն ժամանակ, երբ մենք ուսուցանվում էին Նրա ծնկի մոտ՝ Նրա արքայությունում, դեռ մեր ծնվելուց առաջ: Նա պատրաստում է մեզ այսօր: Եվ նա կշարունակի պատրաստել մեզ, որքան որ մենք թույլ տանք Իրեն:

Քահանայության ողջ նախապատրաստության իմաստը, ինչպես նախաերկրային, այնպես էլ այս կյանքում, կայանում է նրանում, որ մենք և նրանք, ում մենք ծառայում ենք Նրա համար, ուժեղացված լինենք հավերժական կյանքի համար: Նախաերկրային կյանքի առաջին դասերից մի քանիսը, անշուշտ, ներառում են փրկության ծրագիրը, որի կենտրոնում է գտնվում Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը: Մեզ ոչ միայն ուսուցանվել է ծրագիրը, այլ մենք եղել ենք խորհուրդների մեջ, երբ ընտրել ենք այն:

Քանի որ ծնվելու ժամանակ մոռացության վարագույրը պատում է մեր միտքը, մենք պետք է գտնենք ուղին՝ այս կյանքում նորից սովորելու այն, ինչը ժամանակին իմացել ենք և պաշտպանել: Այս կյանքում մեր նախապատրաստության մի մասն է կազմում այդ թանկարժեք ճշմարտությունը գտնելը, որպեսզի կարողանանք կրկին պարտավորվել ուխտի միջոցով: Դա մեր կողմից պահանջում է հավատք, խոնարհություն և խիզախություն, ինչպես նաև օգնություն մյուս մարդկանցից, ովքեր գտել են ճշմարտությունը և ապա կիսվել դրանով մեզ հետ:

Այդ մարդիկ կարող են լինել մեր ծնողները, միսիոներները կամ ընկերները: Բայց այդ օգնությունը եղել է մեր նախապատրաստության մասը: Մեր քահանայության նախապատրաստությունը միշտ ներառում է ուրիշներին, ովքեր արդեն պատրաստ են առաջարկելու մեզ ավետարանը ընդունելու հնարավորությունը, ապա որոշելու պահել ուխտերը, որպեսզի դրանք ամրապնդվեն մեր սրտերում: Որպեսզի մենք արժանի լինենք հավերժական կյանքին, այս կյանքում մեր ծառայությունը պետք է ներառի աշխատանք ողջ սրտով, մտքով և զորությամբ, և օգնություն մյուսներին՝ նախապատրաստվելու մեզ հետ միասին Աստծո մոտ վերադառնալուն:

Այսպիսով, այս կյանքում քահանայության նախապատրաստության մի մասը պետք է լինի մյուսներին ծառայելու և ուսուցանելու հնարավորությունները: Դա կարող է նշանակել լինել Եկեղեցում ուսուցիչներ, իմաստուն և սիրող հայրեր, քվորումի անդամներ և Տեր Հիսուս Քրիստոսի միսիոներներ: Տերը կառաջարկի հնարավորություններ, սակայն արդյոք պատրաստ կլինենք մենք, թե՝ ոչ, կախված է մեզանից: Այսօր իմ նպատակն է շեշտել այն մի քանի կարևոր ընտրությունները, որոնք անհրաժեշտ են քահանայության արդյունավետ նախապատրաստության համար:

Լավ ընտրությունները՝ ինչպես այն անձի կողմից, ով ուսուցանում է, այնպես էլ՝ ուսուցանվողի կողմից, կախված են ճիշտ հասկանալուց, թե ինչպես է Տերը պատրաստում Իր քահանայության ծառաներին:

Առաջինը, Նա կանչում է մարդկանց՝ երիտասարդ և մեծահասակ, ովքեր աշխարհիկ աչքերի, անգամ հենց իրենց համար, թվում են թույլ և հասարակ: Տերը կարող է այդ բացահայտ թերությունները ուժեղ կողմերի վերածել: Դա կփոխի այն եղանակը, որով իմաստուն ղեկավարը որոշում է, թե ում և ինչպես ուսուցանել: Եվ դա կարող է փոխել այն, թե ինչպես է քահանայություն կրողը արձագանքում իրեն առաջարկվող զարգացման հնարավորություններին:

Եկեք դիտարկենք մի քանի օրինակներ: Ես անփորձ քահանա էի մի մեծ ծխում: Իմ եպիսկոպոսը զանգահարեց ինձ կիրակի օրը: Երբ ես վերցրեցի լսափողը, նա ասաց. «Դու ժամանակ ունե՞ս ինձ հետ գալու: Ես քո օգնության կարիքն ունեմ»: Նա բացատրեց, որ ցանկանում է, որ ես միայն լինեմ իր ուղեկիցը, երբ նա կայցելի մի կնոջ, որին ես չեմ ճանաչում, սակայն որը ուտելիք չուներ և պետք է սովորեր, թե ինչպես ավելի լավ տնօրիներ իր ֆինանսները:

Ես գիտեի, որ նա իր եպիսկոպությունում ուներ երկու փորձառու խորհրդականներ: Երկուսն էլ մեծ փորձով հասուն տղամարդիկ էին: Մեկը խոշոր գործարար էր և հետագայում դարձավ միսիայի նախագահ և Բարձրագույն Իշխանություն: Մյուսը հայտնի դատավոր էր:

Ես եպիսկոպոսի նոր կանչված առաջին օգնականն էի քահանաների քվորումում: Նա գիտեր, որ ես քիչ էի հասկանում բարօրության սկզբունքներից: Ավելի քիչ ես գիտեի ֆինանսական կառավարման մասին: Ես երբեք դեռ չեկ դուրս չէի գրել, չունեի, անգամ, բանկային հաշիվ և երբեք չէի տեսել անձնական բյուջե: Այնուամենայնիվ, չնայած իմ անփորձ վիճակին, ես զգացի, որ նա չափազանց լուրջ ասաց. «Ես քո օգնության կարիքն ունեմ»:

Ես հասկացա, թե ինչ նկատի ուներ այդ ոգեշնչված եպիսկոպոսը: Նա իմ մեջ տեսնում էր խոստումնալից քահանայության կրող նախապատրաստելու ոսկե հնարավորություն: Ես համոզված եմ, որ նա չէր կանխատեսում, որ այդ անուսույց տղան Նախագահող Եպիսկոպոսության ապագա անդամն էր: Սակայն այդ օրը և տարիներ շարունակ մնացած բոլոր օրերին, ինչ ես իրեն ճանաչել եմ, նա ինձ վերաբերվում էր որպես մեծ խոստում պարունակող նախապատրաստական ծրագրի:

Նա, կարծես, վայելում էր դա, սակայն դա աշխատանք էր նրա համար: Կարիքավոր այրուն այցելելուց հետո երբ հասանք իմ տուն, նա կանգնեցրեց մեքենան: Նա բացեց իր լավ մաշված և ամբողջությամբ նշումներ արված իր սուրբ գրությունները: Նա ինձ բարի ուղղում տվեց: Նա ինձ ասաց, որ ես պետք է ուսումնասիրեի սուրբ գրությունները և ավելի շատ սովորեի: Սակայն նա պետք է որ տեսներ,

որ ես բավական թույլ և պարզ եմ, և կարող եմ լավ ուսուցանվել: Մինչ այսօր ես հիշում եմ, թե ինչ նա ուսուցանեց այդ օրը: Սակայն ավելի լավ եմ հիշում նրա վստահությունն իմ հանդեպ, որ կարող եմ սովորել և լինել ավելի լավ, և որ ես կլինեի ավելի լավը:

Նա նայում էր իմ ով լինելու իրականությունից այն կողմ, տեսնելով հնարավորություններ, որոնք առկա են մի մարդու մեջ, որն իրեն թույլ և հասարակ է զգում, և դրանով ցանկանում Տիրոջ օգնությունը, հավատալով, որ այն կտրվի:

Եպիսկոպոսները, միսիաների նախագահները և հայրերը կարող են օգտվել այդ հնարավորություններից: Ես տեսել եմ, ինչպես դա արվեց վերջերս սարկավագների քվորումի նախագահի կողմից ծոմի ժողովին վկայություն բերելիս: Նա պետք է դառնար ուսուցիչ և հեռանար իր քվորումի անդամներից:

Նա մեծ հուզումով վկայեց իր քվորումի անդամների բարության և զորության աճի մասին: Ես երբեք չէի լսել, որ որևէ մեկը այդպես հիանալիորեն գովեր որևէ կազմակերպություն: Նա գովեց նրանց ծառայության համար: Ապա նա ասաց, որ գիտեր, որ կարող էր օգնել նոր սարկավագներին, երբ նրանք գերծանրաբեռնված են իրենց զգում, քանի որ ինքն էլ նույն զգացումներով էր եկել քահանայություն:

Իր թուլության զգացումը նրան ավելի համբերատար է դարձրել, ավելի կարեկից, և, հետևաբար, ավելի ունակ ամրացնելու և ծառայելու մյուսներին: Ահարոնյան Քահանայությում այդ երկու տարիների ընթացքում նա, կարծես, դարձել էր փորձված և իմաստուն: Նա սովորել էր, որ որպես քվորումի նախագահ օգնություն էր ձեռք բերել իր կարիքների հստակ և կենդանի հիշողությունների շնորհիվ, երբ երկու տարով ավելի երիտասարդ էր: Ղեկավարման հետ կապված նրա և մեր խնդիրը այն ժամանակ է առաջանում, երբ այդ հիշողությունները մարում են և խամրում ժամանակի ընթացքում և հաջողության հետևանքով:

Պողոսը, հավանաբար, տեսել էր այդ վտանգը քահանայության իր երիտասարդ զուգընկերոջ՝ Տիմոթեոսին խորհուրդ տալուց: Նա խրախուսեց և ուսուցանեց նրան ինչպես իր քահանայության նախապատրաստության, այնպես էլ՝ ուրիշներին նախապատրաստելու գործում Տիրոջն օգնելու վերաբերյալ:

Լսեք, թե ինչ է ասում Պողոսն իր երիտասարդ ընկերոջը՝ Տիմոթեոսին.

«Ոչ ոք քո մանկությունը չանարգէ. Այլ օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով:

Մինչև որ գամ՝ միտք դիր կարդալուն, հորդորմունքին և վարդապետությանը:

Անհոգ մի լինիր այն քեզանում եղած շնորհքի համար. Որ քեզ տրվեցավ մարգարեությունով երիցության ձեռնադրությամբը . . .

Սորանք մտածիր, սորանցում կաց[1], որ քո առաջադիմությունը ամենին հայտնի լինի»:[2]

Պողոսը լավ խորհուրդ է տվել մեզ բոլորիս: Մի մտահոգվեք այն մասին, թե որքան անփորձ եք, այլ մտածեք, թե ինչ կարող եք դառնալ Տիրոջ օգնությամբ:

Վարդապետությունը, որով Պողոսը մեզ խորհուրդ է տալիս սնվել քահանայությանը նախապատրաստվելիս, Քրիստոսի խոսքերն են, և Սուրբ Հոգին ստանալուն արժանանալը: Այդ ժամանակ մենք կարող ենք իմանալ, թե ինչ է Տերը ցանկանում, որ մենք անենք մեր ծառայության մեջ, և կարող ենք քաջություն ստանալ դա անելու համար, ինչպիսին էլ լինեն մեր դժվարությունները ապագայում:

Մենք պատրաստվում ենք քահանայության ծառայությանը, որն ավելի դժվար կդառնա ժամանակի ընթացքում: Օրինակ, մեր մկանները և ուղեղները ծերանում են մեզ հետ միասին: Սովորելու և մեր կարդացածը հիշելու մեր կարողությունը կնվազի: Որպեսզի մատուցենք քահանայության այն ծառայությունը, որը մեզանից ակնկալում է Տերը, ամեն օր ավելի ու ավելի մեծ ինքնակարգապահության կարիք կունենանք: Մենք կարող ենք պատրաստվել այդ քննությանը, կառուցելով հավատք ամենօրյա ծառայության միջոցով:

Տերը մեզ հնարավորություն է տվել պատրաստվելու նրան, ինչը Նա կոչել է «քահանայության երդում և ուխտ»:[3]

Դա ուխտ է, որը մենք կապում ենք Աստծո հետ, այն մասին, որ մենք կպահենք Նրա բոլոր պատվիրանները և կծառայենք այնպես, ինչպես Նա կծառայեր, եթե անձամբ ներկա լիներ: Այս չափանիշով ապրելով մենք կառուցում ենք ուժ, որը մեզ հարկավոր է մինչև վերջ դիմանալու համար:

Քահանայության մեծ ուսուցիչներ ինձ ցույց են տվել, ինչպես կառուցել այդ ուժը. դա հոգնածության և վախի, որը ստիպել է ինձ մտածել հեռանալու մասին, միջով առաջ մղվելու սովորույթի ձևավորումն է: Տիրոջ մեծ ուսուցիչները ինձ ցույց են տվել, որ կայուն հոգևոր զորությունը օգնում է հաղթահարել այն անցակետը, որտեղ ուրիշները կհանգստանային:

Դուք, քահանայության մեծ ղեկավարներ, որ կառուցել եք ձեր հոգևոր ամրությունը երիտասարդ հասակում, կպահպանեք այն, երբ ֆիզիկական ուժերը պակասեն:

Իմ կրտսեր եղբայրը գործով հայտնվել էր Յուտայի մի փոքր քաղաքում: Նրան հյուրանոց զանգահարեց Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը: Ուշ երեկոյան էր, ծանր աշխատանքային օր էր եղել իմ եղբոր և, անշուշտ, Նախագահ Քիմբալի համար, որն այսպես սկսեց խոսակցությունը. «Ես իմացա, որ դու քաղաքում ես: Գիտեմ, որ ուշ է, հնարավոր է, դու արդեն անկողնում ես, բայց չե՞ս կարող օգնել ինձ: Դու ինձ պետք ես, որ ուղեկցես՝ այս քաղաքի մեր բոլոր հավաքատների վիճակը ստուգելու համար»: Այդ երեկո եղբայրս գնաց նրա հետ, չունենալով հավաքատների շահագործման մասին որևէ գիտելիք, չիմանալով, թե ինչու էր Նախագահ Քիմբալը նման գործ անում երկար օր անցկացնելուց հետո:

Տարիներ անց, ես նմանատիպ գիշերային զանգ ստացա, երբ գտնվում էի հյուրանոցում՝ Ճապոնիայում: Այդ ժամանակ ես Եկեղեցու Կրթության նոր կառավարիչն էի: Ես գիտեի, որ Նախագահ Գորդոն Բ.

Հինքլին՝ Ճապոնիայում իր հանձնարարությամբ նույն հյուրանոցում էր մնում: Ես պատասխանեցի զանգին, չնայած որ արդեն պառկել էի քնելու՝ զերհոգնած նրանից հետո, երբ համարում էի ամեն-ինչ արված:

Նախագահ Հինքլին իր հաճելի ձայնով ասաց. «Ինչո՞ւ ես դու քնում, երբ ես այստեղ կարդում եմ այն ձեռագիրը, որը մեզ խնդրել են ուսումնասիրել»: Այսպիսով, ես վեր կացա և անցա աշխատանքի, թեև գիտեի, որ Նախագահ Հինքլին ինձանից շատ ավելի լավ կուսումնասիրեր ձեռագիրը: Բայց նա այդպես ինձ զգացնել տվեց, որ ունի իմ օգնության կարիքը:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, գրեթե ամեն ժողովից հետո հարցնում է Առաջին Նախագահության քարտուղարին. «Ես հասցնո՞ւմ եմ իմ աշխատանքը»: Եվ նա միշտ ժպտում է, երբ ստանում է պատասխանը. «Օ, իհարկե, Նախագահ»: Նախագահ Մոնսոնի բավարարված ժպիտը ինձ համար ուղերձ է հանդիսանում: Այն ստիպում է ինձ մտածել. «Արդյո՞ք ես չեմ կարող ավելին անել իմ հանձնարարության մեջ»: Այնուհետև ես վերադառնում եմ իմ գրասենյակային աշխատանքին:

Մեծ ուսուցիչները ինձ ցույց են տվել, ինչպես պատրաստվել պահել երդումը և ուխտը, երբ ժամանակը և տարիքը այն դժվար են դարձնում: Նրանք ինձ ցույց են տվել և սովորեցրել են, թե ինչպես կարգապահություն ձևավորեմ, որպեսզի աշխատեմ ավելի շատ, քան կարծել եմ, թե ունակ եմ, քանիդեռ առողջություն և ուժ ունեմ:

Ես չեմ կարող ամեն ժամ լինել կատարյալ ծառա, սակայն կարող եմ ավելի շատ ջանք գործադրել, քան, կարծում էի, որ կարող եմ: Վաղ ձևավորված այդ սովորույթի շնորհիվ ես պատրաստված կլինեմ գալիք փորձություններին: Դուք և ես կարող ենք պատրաստվել, ունենալով երդումը և ուխտը պահելու ուժը այն փորձությունների ժամանակ, որոնք, անշուշտ, ի հայտ կգան կյանքի ավարտին մոտ:

Ես դրա ականատեսն եմ եղել Եկեղեցու Կրթության Խորհրդի ժողովի ժամանակ: Նախագահ

Դավաո, Ֆիլիպիններ

Սպենսեր Վ. Քիմբալը այդ ժամանակ իր ետևում էր թողել ծառայության շատ տարիներ, միևնույն ժամանակ անցնելով առողջական այնպիսի խնդիրների միջով, որոնք միայն Աշխատանքը կարող է հասկանալ: Նա այդ առավոտ նախագահում էր ժողովին:

Հանկարծ, նա դադարեց խոսել: Նա ընկավ իր աթոռից: Նրա աչքերը փակվեցին: Նրա գլուխն ընկավ կրծքավանդակին: Ես նստած էի նրա կողքին: Երեց Հոլլանդը մեր կողքին էր: Մենք երկուսս վեր կացանք, որ օգնեինք նրան: Մեր անփորձ վիճակում, մենք որոշեցինք իր աթոռում նստած նրան տեղափոխել մոտակա գրասենյակ:

Ծայրահեղության այդ պահին նա դարձավ մեր ուսուցիչը: Յուրաքանչյուրս բռնելով նրա աթոռի մի կողմը, մենք Եկեղեցու վարչական շենքի ժողովների սենյակից դուրս եկանք նախասրահ: Նա կիսաբաց անելով աչքերը, դեռ թույլ, ասաց. «Օ, խնդրում եմ, զգույշ եղեք: Չվնասեք ձեր մեջքը»: Երբ մենք մոտեցանք նրա գրասենյակի դռանը, նա ասաց. «Օ, ես ահավոր եմ զգում, որ ընդհատեցի ժողովը»: Նրան իր գրասենյակ տեղափոխելուց մի քանի րոպե անց, դեռ չիմանալով, թե որն էր նրա խնդիրը, նա նայեց մեզ և ասաց. «Ձե՞ք կարծում, որ պետք է վերադառնաք ժողովին»:

Մենք շտապեցինք հետ, ինչ-որ կերպ հասկանալով, որ մեր ներկայությունն այնտեղ կարևոր էր Տիրոջ համար: Նախագահ Քիմբալը մանկությունից ի վեր չի խնայել իրեն, ծառայելով և սիրելով Տիրոջը: Այդ սովորույթն այնքան ամուր էր արմատավորվել, որ միշտ գործում էր, երբ նա ուներ դրա կարիքը: Նա պատրաստված էր: Եվ այդպես նա կարողացավ ուսուցանել և ցույց տալ մեզ, թե ինչպես պետք է պատրաստ լինել պահելու երդումը և ուխտը, տարիների ընթացքում մշտապես պատրաստվելու միջոցով, օգտագործելով բոլոր մեր ուժերը նրա համար, ինչը կարող է փոքր հետևանքներով աննշան գործ թվալ:

Իմ աղոթքն է, որ մենք կարողանանք պահել մեր քահանայության ուխտերը, որպեսզի հավերժական կյանքին արժանի դառնանք և արժանի դարձնենք բոլոր նրանց, ում կանչվել ենք ուսուցանելու: Ես խոստանում եմ ձեզ, որ եթե դուք անեք այն ամենը, ինչ կարող եք անել, Աստված կմեծացնի ձեր ուժը և ձեր իմաստությունը: Նա կկոփի ձեզ: Ես խոստանում եմ ձեզ, որ նրանք, ում դուք ուսուցանում եք և ում համար օրինակ եք ծառայում, կփառավորեն ձեր անունը, ինչպես ես, որ այս օրերին մեծ ուսուցիչներ ունեմ:

Ես վկայում եմ, որ Հայր Աստվածն ապրում է և սիրում է ձեզ: Նա և Նրա հարություն առած և փառավորված Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտվեցին մի անփորձ տղայի՝ Ջոզեֆ Սմիթին: Նրանք վստահեցին նրան ավետարանի լրիվության և ճշմարիտ Եկեղեցու վերականգնումը: Նրանք խրախուսեցին նրան, երբ նա ուներ դրա կարիքը: Նրանք թույլ տվեցին, որ նա զգար սիրով արված խրատները, որոնք պետք է իջեցնեին նրան, որպեսզի հետո բարձրացնեին: Նրանք պատրաստեցին նրան, և Նրանք պատրաստում են մեզ, քանզի սելեստիալ փառքին հասնելու համար պահանջվող ուժն է քահանայության ողջ ծառայության նպատակը և պատճառը:

Ես թողնում եմ ձեզ իմ վկայությունը, որ դուք կարողանաք ճանաչել փառավոր հնարավորությունները, որ Աստված տվել է ձեզ, կանչելով և պատրաստելով ձեզ Իր ծառայությանը և ուրիշներին ծառայելուն: Մեր սիրող ղեկավարի և ուսուցչի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 32.3:
2. Ա Տիմոթեոս Դ.12–14, 16:
3. Վարդապետություն և Ուխտեր 84.39:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ

Թող որ մենք միշտ լինենք խիզախ և պատրաստ պաշտպանելու մեր համոզմունքները:

Իմ սիրելի եղբայրներ, հսկայական արտոնություն է ձեզ հետ լինել այս երեկո: Մենք՝ Աստծո քահանայություն կրողներս, մեծ կապ ու եղբայրություն ենք ձևավորում:

Վարդապետություն և Ուխտեր 121 բաժնի 36 հատվածում մենք կարդում ենք, «որ քահանայության իրավունքներն անբաժանելիորեն կապված են երկնքի զորությունների հետ»: Ինչպիսի հրաշալի պարգև է մեզ տրված՝ կրել քահանայություն, որն «անբաժանելիորեն կապված է երկնքի զորությունների հետ»: Ինչևէ, այս թակագին պարգևն իր հետ բերում է ոչ միայն հատուկ օրհնություններ, այլև լուրջ պարտականություններ: Մենք պետք է այնպես ապրենք, որ միշտ արժանի լինենք քահանայությանը, որ կրում ենք: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ շրջապատված ենք գայթկղություններով, որոնք մեզ տանում են դեպի կործանարար ուղիներ: Նման ուղիներից խուսափելու համար անհրաժեշտ է վճռականություն և խիզախություն:

Ես հիշում եմ այն ժամանակները, ձեզանից ոմանք ևս կհիշեն, երբ մարդկանց մեծ մասի չափանիշները նման էին մեր չափանիշներին: Այլևս այդպես չէ: Վերջերս *New York Times* օրաթերթում հոդված կարդացի մի ուսումնասիրության մասին, որը տեղի էր ունեցել 2008-ի ամռանը: Նոտր Դամի մի հայտնի սոցիոլոգ ղեկավարել էր հետազոտություն կատարող մի խումբ, ովքեր հարցազրույցներ էին վարել 230 երիտասարդ ամուրիների հետ ողջ Ամերիկայի տարածքում: Կարծում եմ, կարող ենք հաստատ ենթադրել, որ աշխարհի շատ մասերում նմանատիպ արդյունքներ կստացվեին:

Ես կիսվում եմ ձեզ հետ այդ խոսուն հոդվածի մի հատվածով.

«Հարցազրույց վարողները բաց հարցեր էին տալիս, ճշտի և սխալի, բարոյական երկընտրանքների և կյանքի իմաստի մասին: Ցաք ու ցրիվ պատասխաններում . . . տեսնում ենք՝ ինչպես են երիտասարդները խարխափում են ինչ-որ իմաստալից բան ասել այդ հարցերի վերաբերյալ: Սակայն նրանք դրա համար պարզապես չունեն համապատասխան մտապատկերներ կամ բառապաշար:

Երբ նրանց խնդրել են ներկայացնել, թե բարոյական ինչ երկընտրանք կա իրենց առջև ծառացած, երիտասարդների երկու երրորդը կա՛մ չեն կարողացել պատասխանել հարցին, կա՛մ ներկայացրել են բարոյականության հետ կապ չունեցող խնդիրներ, օրինակ, արդյոք կարողացել են իրենց թույլ տալ բնակարան վարձել կամ արդյոք բավականաչափ գումար ունեցել են մեքենան կայանելու համար»:

Հոդվածը շարունակում է.

«Թերի դիրքորոշումը, որը շատերը կրկին ու կրկին արտահայտել էին, այն էր, որ բարոյական ընտրություններն ուղղակի անհատական ճաշակի հարցեր են: Պատասխանողները որպես կանոն ասել են. «Դա անձնական խնդիր է, այն կախված է անհատից, ո՞վ եմ ես, որ ինչ-որ բան ասեմ»:

Մերժելով հեղինակությունների հանդեպ կույր հարգանքը, երիտասարդներից շատերը մեկ այլ ծայրահեղության էին դիմել, խասելով. «Ես կանեմ այն, ինչը ինձ կերջանկացնի կամ ինչպես ես կզգամ: Ես գործելու համար չգիտեմ այլ եղանակ, բացի ներքին զգացումին հետևելը»»:

Հարցազրույցներ վարողները շեշտել են, որ երիտասարդների մեծ մասը, ում հետ զրուցել էին, չէին ստացել անհրաժեշտ պաշար, – դպրոցների, ինստիտուտների կամ ընտանիքների կողմից, – իրենց բարոյական ներգիտակցությունը զարգացնելու համար»:[1]

Եղբայրներ, ինձ լսողներից ոչ ոք չպետք է կասկածի, թե բարոյականությունը ինչ է և ինչ չէ, և ոչ ոք չպետք է կասկածի, թե ինչ է ակնկալվում մեզանից՝ Աստծո Քահանայությունը կրողներից: Մենք ուսուցանվել և շարունակում ենք ուսուցանվել Աստծո օրենքները: Անկախ նրանից, թե ինչ կտեսնեք կամ կլսեք այլ վայրերում, այդ օրենքներն անփոփոխ են:

Օրեցօր անցնող կյանքով քայլելիս մեր հավատքն անխուսափելիորեն կփորձվի: Երբեմն կլինենք մարդկանցով շրջապատված, բայց դեռևս փոքրամասնություն կկազմենք կամ անգամ միայնակ կլինենք այն հարցում, թե ինչն է ընդունելի և ինչը՝ ոչ: Արդյոք բարոյական խիզախություն ունե՞նք անվարան պաշտպանելու մեր համոզմունքները, անգամ եթե դա անելով մենք պետք է կանգնենք միայնակ: Որպես

Աստծո քահանայության կրողներ, կարևոր է, որ մենք կարողանանք խիզախորեն դիմավորել մեր ճանապարհին հանդիպող դժվարությունները: Հիշեք Թենիսոնի խոսքերը. «Իմ ուժը տաս հոգու ուժ է, որովհետև իմ սիրտը մաքուր է»:[2]

Սճող թվերով որոշ հանրաճանաչ մարդիկ և այլ և այլ պատճառներով հասարակության աչքի առաջ հայտնված անձինք, հակված են ծաղրելու կրոնը ընդհանրապես, իսկ երբեմն էլ Եկեղեցին մասնավորապես: Եթե մեր վկայությունները բավականին ամուր արմատավորված չեն, նման քննադատությունները կարող են պատճառ դառնալ, որ մենք կասկածենք մեր իսկ համոզմունքներին կամ վճռական չլինենք մեր որոշումներում:

1 Նեփի 8-րդ գլխում գտնվող կյանքի ծառի մասին իր տեսիլքում Լեքին մյուսների թվում տեսնում է նրանց, ովքեր կառչել էին երկաթե ձողից, մինչև որ առաջ եկան և ճաշակեցին կյանքի ծառի պտղից, ինչը գիտենք, որ ներկայացնում է Աստծո սերը: Ապա, ցավոք, պտուղը ճաշակելուց հետո, ոմանք ամաչեցին «մեծ ու ընդարձակ շենքում» գտնվողների պատճառով, ովքեր ներկայացնում են մարդկանց զավակների հպարտությունը, ովքեր մատով ցույց էին տալիս նրանց և ծաղրում էին նրանց. և նրանք հեռացան դեպի արգելված ուղիներ և կորան:[3]

Հակառակորդի համար ինչպիսի հզոր զենք է ծաղրանքը: Եղբայրներ, կրկին հարցնում եմ, արդյոք խիզախություն ունե՞նք ամուր և անսասան կանգնելու նման ծանր ընդդիմության առաջ:

Կարծում եմ, իմ համոզմունքների հարցում առաջին անգամ խիզախություն դրսևորել եմ, երբ Երկրորդ Աշխարհամարտի վերջում ծառայում էի Միացյալ Նահանգների Նավատորմում:

Նավատորմի նորակոչիկների ճամբարը հեշտ փորձառություն չէր ո՛չ իմ, ո՛չ էլ որևէ մեկի համար, ով անցել է դրանով: Առաջին երեք շաբաթների ընթացքում ես համոզվեցի, որ կյանքս վտանգված է: Նավատորմը չէր փորձում ինձ վարժեցնել, այն փորձում էր ինձ սպանել:

Ես միշտ կհիշեմ ծառայության առաջին շաբաթվա կիրակին: Մենք հաճելի նորություն լսեցինք ավագ ենթասպայից: Զգաստ շարքերով կանգնած, վարժադաշտում, ուր փչում էր կալիֆորնիական սառը քամին, մենք լսեցինք նրա հրամանը. «Այսօր բոլորդ գնում եք եկեղեցի, բոլորդ, բացի ինձանից: Ես հանգստանո՛ւմ եմ»: Ապա բղավեց. «Կաթոլիկնե՛ր, դուք բոլորդ հավաքվում եք Քեմփ Դիկատուրում, և չվերադառնաք մինչև ժամը երեքը: Առա՛ջ, քայլով մա՛րշ»: Բավականին մեծ զորաբաժին գնաց: Ապա նա բղավեց իր հաջորդ հրամանը. «Հրեանե՛ր, դուք հավաքվում եք Քեմփ Հենրիում, և չվերադառնաք մինչև ժամը երեքը: Առա՛ջ, քայլով մա՛րշ»: Ինչ-որ չափով ավելի քիչ ծառայողներ դուրս եկան: Ապա ասաց. «Մնացածներդ, բողոքականնե՛ր, հավաքվում եք Քեմփ Ֆարագաթի թատրոնում, և չվերադառնաք մինչև ժամը երեքը: Առա՛ջ, քայլով մա՛րշ»:

Ես անմիջապես մտածեցի. «Մոնսոն, դու ոչ կաթոլիկ ես, ոչ հրեա, ոչ էլ բողոքական: Դու մորմոն ես, այնպես որ պետք է կանգնած մնաս»: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ ինձ միայնգամայն միայնակ էի զգում: Այո, խիզախ ու վճռական, սակայն միայնակ:

Ապա ես լսեցի ամենահաճելի խոսքերը, որ երբևէ լսել էի ավագ ենթասպայի բերանից: Նա նայեց իմ կողմը և ասաց. «Իսկ դուք, տղանե՛ր, ի՞նչ եք ձեզ համարում»: Մինչ այդ պահը ես չէի նկատել, որ որևէ մեկը կանգնած է իմ կողքին կամ իմ ետևում: Գրեթե միասին, մենք պատասխանեցինք. «Մորմոններ»: Դժվար է նկարագրել այն ուրախությունը, որ պատեց սիրտս, երբ շրջվելով, ես տեսա մի քանի այլ նավաստիների:

Ավագ ենթասպան շփոթված քորեց գլուխը և վարանելով ասաց. «Դե, տղաներ, գնացեք հավաքվելու համար մի տեղ գտեք, և չվերադառնաք մինչև ժամը երեքը: Առա՛ջ, քայլով մա՛րշ»:

Երբ մենք քայլքով հեռացանք, ես հիշեցի Երեխաների Խմբում տարիներ առաջ սովորած քառյակը.

Խիզախություն ունեցիր Մորմոն լինել,
Խիզախություն ունեցիր միայնակ կանգնել:
Խիզախություն ունեցիր ամուր նպատակ ունենալ,
Խիզախություն ունեցիր դա հայտնել:

Ճիշտ է, իրադարձությունն այլ կերպ դասավորվեց, քան ես էի ակնկալում, սակայն ես պատրաստակամ էի միայնակ կանգնելու, երբ դրա անհրաժեշտությունը կար:

Այդ օրից ի վեր պահեր են եղել, երբ ոչ ոք չի եղել իմ ետևում

կանգնած, և ես միայնակ *եմ* կանգնել: Որքան երախտապարտ եմ ես, որ վաղուց ի վեր որոշում եմ կայացրել ամուր և շիտակ մնալ, միշտ պատրաստված և պատրաստակամ պաշտպանելու իմ կրոնը, եթե անհրաժեշտություն առաջանա:

Որպեսզի չլինի, թե երբևէ մենք անհամապատասխան զգանք մեզ սպասվող առաջադրանքների համար, եղբայրներ, ուզում եմ ձեզ հետ կիսվել Եկեղեցու Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի խոսքերով, որը նա հղել է 1987թ. Կալիֆոռնիայում անդամների մի մեծ հավաքի ժամանակ: Նախագահ Բենսոնն ասել է.

«Բոլոր դարաշրջանների մարգարեները ժամանակի նրբանցքներով նայել են վար՝ դեպի մեր օրերը: Միլիարդավոր մահացած մարդիկ և նրանք, ովքեր դեռ պետք է ծնվեն, իրենց աչքը մեզ վրա են պահում: Երբեք մի սխալվեք՝ դուք նշանավոր սերունդ եք: . . .

Մոտ վեց հազար տարի Աստված պահել է ձեզ, որպեսզի զաք այս վերջին օրերին՝ նախքան Տիրոջ երկրորդ գալուստը: Ոմանք կմոլորվեն, սակայն Աստծո արքայությունը կմնա անխաթար՝ ողջունելու իր գլխավորի՝ Հիսուս Քրիստոսի վերադարձը:

Չնայած այս սերունդն իր ամբարշտությամբ համեմատելի է Նոյի օրերի սերնդի հետ, երբ Տերը մաքրեց երկիրը ջրհեղեղով, այս անգամ կա մեծ տարբերություն: Աստված այս վերջին օրերի համար պահել է Իր ամենաամուր զավակներից մի քանիսին, ովքեր կօգնեն հաղթանակած կրել արքայությունը»:[4]

Այո, եղբայրներ, մենք Նրա ամենաամուր զավակներից ենք: Մեր պարտականությունն է՝ արժանի լինել բոլոր փառահեղ օրհնություններին, որ մեր Երկնային Հայրը պահել է մեզ համար: Ուր էլ որ գնում ենք, մեր քահանայությունը մեզ հետ է: Արդյոք կանգնո՞ւմ ենք սուրբ վայրերում: Խնդրում եմ, նախքան ձեզ և ձեր քահանայությունը վտանգելը, լինելով այնպիսի տեղերում կամ մասնակցելով այնպիսի միջոցառումների, որոնք արժանի չեն ձեզ կամ այդ քահանայությանը, դադար առեք և մտածեք հետևանքների մասին: Մեզանից յուրաքանչյուրը կրել է Ահարոնյան Քահանայությունը: Այն շնորհվելիս յուրաքանչյուրը ստացել է զորություն, որը կրում է հրեշտակների սպասավորման բանալիները: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Դուք չեք կարող անել մի բան, որը վարագույր կքաշի ձեր և ձեզ սպասավորող հրեշտակների միջև:

Դուք չեք կարող անբարո որևէ բան անել: Դուք չեք կարող անազնիվ լինել: Դուք չեք կարող խաբել կամ ստել: Դուք չեք կարող Աստծո անունն անտեղի գործածել կամ կեղտոտ լեզու օգտագործել և դեռևս իրավունք ունենալ ստանալու հրեշտակների սպասավորությունը»:[5]

Եթե ձեզանից որևէ մեկը սայթակել է իր ճանապարհին, ես ուզում եմ դուք հասկանաք առանց կասկածի, որ միշտ ետդարձի ճանապարհ կա: Այդ ընթացքը կոչվում է ապաշխարություն: Մեր Փրկիչը Իր կյանքը տվեց՝ այդ օրհնված նվերը ձեզ և ինձ պարգևելու համար: Չնայած որ ապաշխարության ուղին հեշտ չէ, խոստումներն իրական են: Մեզ ասվել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձյունի պես պիտի սպիտականան»:[6] «Եվ [դրանք] այլևս պիտի չհիշեմ»:[7] Ինչպիսի ասվածք: Ինչպիսի օրհնություն Ինչպիսի խոստում:

Ձեր մեջ կլինեն մարդիկ, որ կմտածեն. «Լավ, ես չեմ պահում բոլոր պատվիրանները, և ես չեմ անում այն, ինչ պետք է անեմ, և դեռևս իմ կյանքը հրաշալի է ընթանում: Կարծում եմ, կարող եմ ձեռք բերել իմ կարկանդակը և նաև վայելել այն»: Եղբայրներ, ես խոստանում եմ ձեզ, որ դա երկար չի տևում:

Մի քանի ամիս առաջ մի նամակ ստացա մի տղամարդուց, որը մտածել էր, որ կարող է նման ձևով ապրել: Նա այժմ ապաշխարել է և իր կյանքը համապատասխանեցրել է ավետարանի սկզբունքներին և պատվիրաններին: Ես ցանկանում եմ կիսվել ձեզ հետ նրա նամակից մի պարբերությամբ, քանի որ դա ներկայացնում է խեղաթյուրված մտածողության իրականությունը. «Ես ինքս դաս քաղեցի (շատ դժվարությամբ), որ Փրկիչը բացարձակապես ճիշտ էր, երբ ասում էր. «Ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել. որովհետև կամ մեկին կատե և մյուսին կսիրե, կամ մեկին կմեծարեն և մյուսին կարհամարհե: Չեք կարող Աստծուն ծառայել և մամոնային»:[8] Ես փորձում էի երկուսն էլ անել: Վերջում ես ունեի ողջ դատարկությունը, խավարը և միայնակությունը, որ Սատանան բերում է նրանց, ովքեր հավատում են իր խաբկանքներին, պատրանքներին և ստերին»:

Որպեսզի լինենք ուժեղ և դիմակայենք սխալ ուղղությամբ մեզ քաշող ուժերին կամ բոլոր այն ձայներին, որոնք մեզ քաջալերում են սխալ ճանապարհով գնալ, մենք պետք է ունենանք մեր անձնական վկայությունը: Լինեք 12 թե 112 տարեկան, դուք կարող եք ինքներդ իմանալ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Կարդացեք Մորմոնի Գիրքը: Խորհեք դրա ուսմունքների շուրջ: Հարցրեք Երկնային Հորը, արդյոք այն ճշմարիտ է:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները

Հոկտեմբեր 2011

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն



Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Սթիվեն Ե. Սնոու

Վոլթեր Ֆ. Գոնզալես

Լ. Վիթնի Քլեյթոն

Ջեյ Ե. Ջենսեն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Թեդ Ռ. Քալիստեր

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ
(այբենական կարգով)

Մարկոս Ա. Այդուկայտիս | Խոսե Լ. Ալոնսո | Կարլոս Հ. Սմադո | Յան Ս. Արդերն | Մերվին Բ. Առնոլդ | Դեյվիդ Ս. Բաքստեր | Շեյն Մ. Բոուեն | Ջեռալդ Կոսե | Յուն Հվան Չոյի | Քրեյգ Ս. Քրիսչենսեն



Դոն Ռ. Քլարկ | Կարլ Բ. Քուք | Լորենս Ե. Քորբրիջ | Կլաուդիո Ռ. Մ. Կոստա | Լեգռան Ռ. Քրոթիս Կտսեր | Բենջամին դե Հոյոս | Ջոն Բ. Դիքսոն | Քեվին Ռ. Դանքան | Դեյվիդ Ֆ. Էվանս | Էնրիկե Ռ. Ֆալաբելլա

Էդուարդո Գավարետ | Կարլոս Ա. Գոդոյ | Քրիստոֆել Գոլդեն Կրտս | Ջերիթ Կ. Գոնգ | Ս. Սքոթ Գրոու | Ջեյմս Ջ. Համուլա | Քեյթ Կ. Հիլբիգ | Մարլին Կ. Ջենսեն | Դենիել Լ. Ջոնսոն | Փոլ Վ. Ջոնսոն

Պատրիկ Քիրոն | Փոլ Ե. Քոլիքեր | Էրիկ Վ. Կոպիչկե | Ռիչարդ Ջ. Մեյնզ | Մարկուս Բ. Նաշ | Բրենտ Հ. Նիլսոն | Ալեն Ֆ. Փաքեր | Քեվին Վ. Փիրսոն | Էնթոնի Դ. Փերկինս | Փոլ Բ. Փայփեր

Ռաֆայել Ե. Պինո | Բրուս Դ. Պորտեր | Դեյլ Գ. Ռենկանդ | Մայքլ Տ. Ռինգվուդ | Լին Գ. Ռոբբինս | Ջոզեֆ Վ. Սիտատի | Ուլիսես Սոարես | Գարի Ե. Սթիվենսոն | Մայքլ Ջոն Ու. Թեի | Հոսե Ա. Թեյքեյրա

Օկտավիանո Տենորիո | Խուան Ա. Ուսեդա | Ֆրանսիսկո Ջ. Վինաս | Վ. Քրիստոֆեր Վադել | Վիլյամ Ռ. Վոքեր | Ֆ. Մայքլ Վատսոն | Կազուհիկո Յամաշիտա | Ջորջ Ֆ. Զեբալոս | Կլաուդիո Դ. Զիվիկ | Վ. Քրեյգ Ցվիկ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ
(այբենական կարգով)

Վիլֆորդ Վ. Սնդերսեն | Կոիչի Սոյագի | Ռանդալ Կ. Բենեթ | Քրեյգ Ա. Քարդոն

Բրուս Ա. Քարլսոն | Ջ. Դեվն Քորնիշ | Քեյթ Ռ. Էդվարդս | Սթենլի Գ. Էլիս

Բրեդլի Դ. Ֆոսթեր | Լարի Վ. Գիբբոնս | Օ. Վինսենթ Հալեք | Լարի Ռ. Լորենս

Պեր Գ. Մալմ | Ջեյմս Բ. Մարտինո | Ջայրո Մազագարդի | Քենտ Ֆ. Ռիչարդս

Գրեգորի Ա. Շվիցեր | Քենտ Դ. Վատսոն | Երեց Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Ռիչարդ Ս. Էջլի
Առաջին Խորհրդական

Հ. Դեյվիդ Բրոթն
Նախագահող Եպիսկոպոս

Քեյթ Բ. Մաքմալին
Երկրորդ Խորհրդական

Վերջին Օրերի Սրբերը աշխարհով մեկ տարբեր վայրերում հավաքվել էին գերագույն համաժողովի ուղերձները «իրենց սեփական լեզվով» (ՎևՈւ 90.11) լսելու համար: Վերևում ձախից՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ լուսանկարված են Եկեղեցու անդամները Յոհաննեսբուրգում՝ Հարավային Աֆրիկա, Սալվադորում՝ Բրազիլիա, Սան Սալվադորում՝ Էլ Սալվադոր, Մոնրեալում՝ Քվիբեք, Կանադա, Մոնտալբանում՝ Ֆիլիպիններ, Գոմեզ Պալասիայում՝ Մեքսիկա, և Տոկիոյում՝ Ճապոնիա:

Մենք խոստում ունենք, որ «եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:[9]

Երբ իմանում ենք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, դրանից հետևում է, որ Ջոզեֆ Սմիթը իսկապես մարգարե էր, և նա տեսել է Աստծուն՝ Երկնային Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ուրեմն դա նշանակում է, որ ավետարանը վերականգնվել է այս վերջին օրերին Ջոզեֆ Սմիթի միջոցով, ներառյալ Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների վերականգնումը:

Հենց որ վկայություն ենք ստանում, մենք պարտավորություն ենք ձեռք բերում՝ կիսվել այդ վկայությամբ մյուսների հետ: Եղբայրներ, ձեզանից շատերը ծառայել են որպես միսիոներներ աշխարհի տարբեր մասերում: Երիտասարդներ, ձեզանից շատերը դեռ կծառայեն: Պատրաստվեք այժմ այդ հնարավորությանը: Հավաստիացեք, որ արժանի եք ծառայելու:

Եթե մենք պատրաստվել ենք կիսվելու ավետարանով, մենք պատրաստ կլինենք արձագանքելու Պետրոս Առաքյալի խորհրդին, որը հորդորում էր. «Միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»:[10]

Մեր կյանքի ընթացքում մենք առիթներ կունենանք կիսվելու մեր համոզմունքներով, թեպետ չգիտենք, թե երբ այդ հնարավորությունը մեզ կընձեռվի: Նման հնարավորություն ես ունեցա 1957թ., երբ աշխատում էի հրատարակչությունում և ինձ խնդրեցին գնալ Դալլաս՝ Տեխասի նահանգ, որը երբեմն անվանում են «եկեղեցիների քաղաք», գործարար համագումարի մասնակցելու: Այդ համագումարի ավարտին ես նստեցի տեսարժան վայրեր տանող ավտոբուսը, որը շրջելու էր արվարձաններով: Տարբեր եկեղեցիների մոտով անցնելիս մեր վարորդը ներկայացնում էր. «Ձախում դուք տեսնում եք Մեթոդական եկեղեցին», կամ «Աջում Կաթողիկե եկեղեցու մայր տաճարն է»:

Երբ անցանք բլրի վրա կարմիր աղյուսից կառուցված գեղեցիկ շինության մոտով, վարորդը հայտարարեց. «Այս կառույցում հավաքվում են Մորմոնները»: Ավտոբուսի ետևի մասից մի կին ձայն տվեց. «Վարորդ, կարո՞ղ եք մի փոքր ավելին ասել Մորմոնների մասին»:

Վարորդը կանգնեցրեց ավտոբուսը ճանապարհի եզրին, շրջվեց և պատասխանեց. «Տիկին, Մորմոնների մասին գիտեմ միայն, որ նրանք հավաքվում են այս կարմիր աղյուսե շենքում: Այս ավտոբուսում կա՞ մեկը, որն ինչ-որ բան ավելին գիտի Մորմոնների մասին»:

Ես սպասեցի, որ տեսնեմ, թե ով կպատասխանի: Ես ուշադիր նայեցի յուրաքանչյուրի դեմքին, որպեսզի տեսնեմ, արդյոք ցանկանում են որևէ բան ասել: Ոչինչ: Ես հասկացա, որ ես պետք է անեմ այն, ինչ Պետրոս Առաքյալն էր առաջարկել՝ «միշտ պատրաստ եղեք պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե»: Ես նաև հասկացա, որ ճշմարիտ է այն խոսքը, որ՝ «Երբ որոշում կայանցնելու պահը գալիս է, պատրաստվելու ժամանակը անցյալում է»:

Հաջորդող 15 րոպեների ընթացքում ես արտոնություն ունեցա ավտոբուսի մարդկանց հետ կիսվելու իմ վկայությամբ Եկեղեցու և իմ համոզմունքների մասին: Ես երախտապարտ էի իմ վկայության համար, և երեխտապարտ էի, որ պատրաստ էի կիսվել դրանով:

Իմ ողջ սրտով և հոգով ես աղոթում եմ, որ քահանայություն կրող յուրաքանչյուր ոք պատվի այն քահանայությունը, որ կրում է և հավատարիմ մնա այն վստահությանը, որը նրան փոխանցվել է այն շնորհվելիս: Թող որ մեզանից յուրաքանչյուրը, որ կրում է Աստծո քահանայությունը, իմանա՝ ինչին է հավատում: Թող որ մենք միշտ լինենք խիզախ և պատրաստ պաշտպանելու մեր համոզմունքները, և եթե այդ ընթացքում մենք պետք է միայնակ մնանք, թող որ դա անենք քաջաբար, ամրացած գիտելիքով, որ իրականում մենք երբեք միայնակ չենք, երբ կանգնում ենք մեր Երկնային Հոր հետ:

Երբ խորհում ենք մեզ տրված մեծ պարգևի մասին, «քահանայության իրավունքներն անբաժանելիորեն կապված են երկնքի զորությունների հետ», թող որ միշտ վճռական լինենք պահպանելու և պաշտպանելու այն և արժանի մնալու նրա մեծ խոստումներին: Եղբայրներ, թող որ մենք հետևենք Փրկչի հրահանգին, որ տրվել է մեզ 3 Նեփիի գրքում. «Բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Ահա, ե՛ս եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք, ա՛յն, ինչ դուք տեսաք ինձ անելիս»:[11]

Իմ աղոթքն է և իմ օրհնությունը բոլոր նրանց համար, ովքեր լսում են իմ ձայնը, որ մենք միշտ հետևենք այդ լույսին և բարձր պահենք այն, որ ողջ աշխարհը տեսնի այն՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. David Brooks, “If It Feels Right . . . ,” *New York Times,* Sept. 12, 2011, nytimes.com.
2. Alfred, Lord Tennyson, “Sir Galahad,” in *Poems of the English Race,* sel. Raymond Macdonald Alden (1921), 296.
3. Տես 1 Նեփի 8.26-28:
4. Ezra Taft Benson, “In His Steps” (Church Educational System fireside, Feb. 8, 1987); see also “In His Steps,” in *1979 Devotional Speeches of the Year: BYU Devotional and Fireside Addresses* (1980), 59.
5. Gordon B. Hinckley, “Personal Worthiness to Exercise the Priesthood,” *Liahona,* July 2002, 59.
6. Եսայիա 1.18:
7. Երեմիա ԼԱ.34:
8. Մատթեոս Զ.24::
9. Մորոնի 10.4:
10. Ա Պետրոս Գ.15:
11. 3 Նեփի 18.24:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Վկայություն

Մորմոնի Գիրքը լավագույն ուղեկիցն է իմանալու՝ ինչպես ենք մենք այդ ամենը կատարում և ինչպես կարող ենք ավելի լավ անել:

Ես երախտապարտ եմ այս կիրակի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու գերագույն համաժողովին ձեզ հետ խոսելու այս հնարավորության համար: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ ունի միևնույն սուրբ պարտականությունը: Մկրտվելիս մենք ընդունել ենք այն և խոստացել, որ կաճենք՝ համապատասխանելով դրան: Մենք սովորում ենք Մորմոնի Գրքի մեծ մարգարե Ալմայի խոսքերից, թե ինչ ենք խոստացել Աստծուն, որ կդառնանք. «Հոժար եք՝ սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու, որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ՝ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ»:[1]

Դա կարևոր պարտականություն է և փառահեղ խոստում՝ Աստծուց: Իմ ուղերձն այսօր քաջալերանքի խոսք է: Ճիշտ ինչպես Մորմոնի Գրքում է պարտականությունը պարզեցվում մեզ համար, այն նաև ուղղորդում է մեզ վեր՝ դեպի հավերժական կյանք տանող ճանապարհով:

Առաջինը, մենք խոստացել ենք դառնալ գթառատ: Երկրորդ, մենք խոստացել ենք դառնալ Աստծո վկաներ: Եվ երրորդ, մենք խոստացել ենք համբերել: Մորմոնի Գիրքը լավագույն ուղեկիցն է իմանալու՝ ինչպես ենք մենք այդ ամենը կատարում և ինչպես կարող ենք ավելի լավ անել:

Եկեք սկսենք գթառատ լինելուց: Ես կհիշեցնեմ ձեզ վերջին փորձառությունները: Ձեզանից շատերը մասնակցեցին ծառայությանօրվա միջոցառմանը: Հազարավոր մարդիկ համախմբվել էին ողջ աշխարհում:

Ձեր ընկեր Սրբերի խորհուրդն աղոթեց իմանալու, թե ինչ ծառայություն պետք է ծրագրել: Նրանք խնդրեցին Աստծուն, որպեսզի իմանան, թե ում պետք է մենք ծառայենք, ինչպիսի ծառայություն պետք է մատուցենք և ում պետք է խնդրենք մասնակցել: Նրանք գուցե նաև աղոթել են, որ չմոռանան գոգաթիակները կամ խմելու ջուրը: Ամենակարևորը, նրանք աղոթել էին, որ նրանք, ովքեր ծառայություն կմատուցեն, և նրանք, ովքեր կստանան այդ ծառայությունը, բոլորը զգան Աստծո սերը:

Ես գիտեմ, որ այդ աղոթքները պատասխանվել են առնվազն մեկ ծխում: Ավելի քան 120 անդամներ կամավոր մասնակցեցին օգնելու համար: Երեք ժամվա ընթացքում նրանք մաքրեցին մեր համայնքի եկեղեցիների տարածքները: Դա դժվար և ուրախ աշխատանք էր: Եկեղեցիների ծառայողները արտահայտեցին իրենց երախտապարտությունը: Ովքեր միասին աշխատեցին այդ օրը, ապրեցին համախմբվածության և ավելի մեծ սիրո զգացում: Ոմանք ասացին, որ ուրախություն են զգացել անգամ մոլախոտերը քաղհանելիս և թփուտները հարդարելիս:

Մորմոնի Գրքից խոսքերը օգնեցին նրանց իմանալ այդ ուրախության պատճառը: Բենիամին Թագավորն էր, որ իր ժողովրդին ասաց. «Սովորեք, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք . . . ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[2] Իսկ Մորմոնի Գրքում Մորմոնը սովորեցնում է. «Բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. և ով որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի»:[3]

Տերը պահում է ձեզ տված Իր խոստումները, երբ դուք պահում եք ձեր խոստումները: Երբ դուք ծառայում եք մյուսներին հանուն Նրա, դուք զգում եք Նրա սերը: Եվ ժամանակի հետ գթությունը դառնում է ձեր բուն էությունը: Եվ ձեր սրտում դուք կստանաք Մորմոնի հավաստիացումը, որ երբ կյանքում մշտապես ծառայում եք մյուսներին, ձեր համար ամեն ինչ լավ կլինի:

Ճիշտ ինչպես դուք խոստացել եք Աստծուն դառնալ գթասիրտ, դուք խոստացել եք լինել Նրա վկան, ուր էլ որ լինեք ձեր կյանքում: Կրկին, Մորմոնի Գիրքը իմ իմացած լավագույն ուղեկիցն է, որ կարող է օգնել մեզ պահել այդ խոստումը:

Մի անգամ ինձ հրավիրել էին ելույթ ունենալ համալսարաններից մեկի ավարտական հանդեսին: Համալսարանի նախագահը ցանկացել

էր հրավիրել Նախագահ Գորդոն Բ. Հինքլիին, սակայն նա զբաղված էր եղել: Այդ պատճառով, ինձ հրավիրեցին: Ես Տասներկու Առաքյալների Քվորումի կրտսեր անդամ էի:

Ինձ հրավիրող անձնավորությունը մտահոգվեց, երբ ավելի շատ տեղեկացավ որպես Առաքյալ իմ պարտականություններին: Նա զանգահարեց ինձ և ասաց, որ հիմա է հասկանում, որ իմ պարտականությունն է լինել Հիսուս Քրիստոսի վկան:

Շատ վճռական տոնով նա ինձ ասաց, որ չեմ կարող իմ խոսքը հղելիս դա անել: Նա բացատրեց, որ համալսարանը հարգում է բոլոր հավատքի մարդկանց, ներառյալ նրանց, ովքեր մերժում են Աստծո գոյությունը: Նա կրկնեց. «Դուք չեք կարող ձեր պարտականությունը կատարել այստեղ»:

Ես դրեցի լսափողը իմ մտքում լուրջ հարցեր ունենալով: Արդյոք չպե՞տք է հաղորդեմ համալսարանին, որ չեմ համաձայնվում ելույթ ունենալ այնտեղ: Մի քանի շաբաթ էր մնում այդ իրադարձությանը: Իմ ելույթի մասին արդեն հայտարարվել էր: Ի՞նչ ազդեցություն կգործեր ելույթից հրաժարվելը Եկեղեցու բարի համբավի վրա:

Ես աղոթեցի, որպեսզի իմանամ, թե ինչ է Աստված ուզում, որ անեմ: Պատասխանը եկավ ինձ համար շատ անսպասելի ձևով: Ես հասկացա, որ Նեփիի, Աբինադիի, Ալմայի, Ամուղեկի և Մոսիայի որդիների օրինակներն իրենց ազդեցությունն էին թողել ինձ վրա: Նրանք Հիսուս Քրիստոսի համարձակ վկաներն էին մահացու վտանգի պահին:

Այնպես որ այլ ելք չէր մնում, բացի ելույթ պատրաստելը: Ես սկսեցի տեղեկություններ հավաքել այդ համալսարանի մասին: Ելույթի օրը մոտենալու հետ իմ անհանգստությունը մեծանում էր և իմ աղոթքները ավելի էին ուժգնանում:

Ասես Կարմիր Ծովը հրաշքով կիսվեց, երբ ես գտա նորությունների մի հոդված: Այդ համալսարանը մեծարման էր արժանացել անելով այն, ինչ Եկեղեցին էր անում՝ ողջ աշխարհում մարդասիրական օգնություններ տրամադրելով: Այսպիսով,

ես իմ ելույթում նկարագրեցի, թե ինչ ենք մենք և նրանք արել մեծ կարիքի մեջ գտնվող մարդկանց բարձրացնելու համար: Ես ասացի, որ Հիսուս Քրիստոսն էր այն օրհնությունների աղբյուրը, որ եկել էր այն մարդկանց կյանք, որոնց մենք և նրանք ծառայել էին:

Այդ ելույթից հետո բոլոր ներկաները ոտքի կանգնեցին և ծափահարեցին, ինչը ինձ համար արտասովոր էր: Ես զարմացա, սակայն դեռևս մի փոքր անհանգիստ էի: Ես հիշեցի, թե ինչ էր տեղի ունեցել Աբինադիի հետ: Միայն Ալման էր ընդունել նրա վկայությունը: Բայց այդ երեկո, մեծ պաշտոնական ընթրիքի ժամանակ համալսարանի նախագահը ասաց, որ իմ ելույթում նա լսեց Աստծո խոսքերը:

Նման հրաշալի փրկությունը շատ հազվադեպ երևույթ է իմ կյանքում որպես Քրիստոսի վկա: Սակայն ակնհայտ է Մորմոնի Գրքի ազդեցությունը ձեր բնավորության, զորության և ձեր խիզախության վրա՝ Աստծո վկան լինելու համար: Այս գրքի վարդապետությունը և քաջարի օրինակները կբարձրացնեն, կուղեկցեն և կքաջալերեն ձեզ:

Յուրաքանչյուր միսիոներ, որ հայտարարում է Հիսուս Քրիստոսի անունն ու ավետարանը, կօրհնվի ամեն օր Մորմոնի Գրքից սնուցվելով: Ծնողները, ովքեր պայքարում են, որպեսզի Փրկչի վկայությունը իրենց երեխայի սիրտ ներթափանցի, օգնություն կստանան, երբ ուղի փնտրեն Մորմոնի Գրքի խոսքերն ու ոգին իրենց տուն և իրենց ընտանիքի անդամների կյանք բերելու համար: Դա իսկապես գործում է մեզ համար:

Ես կարող եմ ասել, որ այդ հրաշքը տեղի է ունենում ամեն հաղորդության ժողովին և Եկեղեցու դասերին, որոնց ես հաճախում եմ: Բանախոսներն ու ուսուցիչները խորը հասկացողություն և սեր են ցուցաբերում սուրբ գրությունների, հատկապես Մորմոնի Գրքի հանդեպ: Եվ անձնական վկայությունները գալիս են իրենց սրտի խորքից: Նրանք ուսուցանում են աճող համոզմունքով և վկայություն են բերում մեծ զորությամբ:

Ես նաև տեսնում եմ, թե որքան լավ ենք մենք կատարում մկրտության ժամանակ տված մեր խոստումի երրորդ մասը: Մենք ուխտ ենք կապել, որ համբերենք, պահենք Աստծո պատվիրանները մեր

ողջ կյանքի ընթացքում:

Ես այցելեցի հիվանդանոց իմ վաղեմի ընկերուհուն, որին քաղցկեղ էին ախտորոշել: Ես ինձ հետ տարել էի իմ փոքր դուստրերին: Ես չէի սպասում, որ նա կճանաչի նրանց: Նրա ընտանիքը հավաքված էր նրա մահճակալի շուրջը, երբ մենք ներս մտանք:

Նա նայեց և ժպտաց: Ես միշտ կհիշեմ նրա հայացքը, երբ նա տեսավ, որ մենք մեր դուստրերի հետ էինք: Նա ձեռքով հասկացրեց, որ մոտենանք իրեն: Նա նստեց, զրկախառնվեց նրանց հետ և ներկայացրեց իր ընտանիքին: Նա գովեց այդ երկու աղջնակներին: Կարծես նա թագավորական արքունիքին արքայադուստրերի էր ներկայացնում:

Ես կարծում էի, մեր այցելությունն արագ կավարտվի: Անշուշտ, ես կարծում էի նա հոգնած է: Բայց մինչ ես դիտում էի, կարծես տարիները հալվեցին և անհետացան: Նա փայլում էր և ակնհայտորեն լցվել էր սիրով բոլորիս հանդեպ:

Նա ասես վայելում էր այդ պահը, ասես ժամանակը կանգ էր առել: Նա իր կյանքի մեծ մասը անցկացրել էր խնամելով երեխաներին Տիրոջ համար: Նա գիտեր Մորմոնի Գրքի պատմությունից, որ հարություն առած Փրկիչը վերցրել էր փոքր երեխաներին մեկ առ մեկ, օրհնել էր նրանց և ապա ուրախությունից արտասվել:[4] Եվ նա ինքը ունեցել էր այդ ուրախությունն այնքան երկար, որը օգնել էր նրան համբերել Նրա սիրո ծառայության մեջ մինչև վերջ:

Ես տեսել եմ այդ նույն հրաշքը մի մարդու ննջարանում, որը երկար տարիների հավատարիմ ծառայություն էր մատուցել, ինչը կարելի է մտածել, բավարար էր հանգստանալու համար:

Ես գիտեի, որ նա երկար և ցավոտ բուժում էր անցել մի հիվանդության համար, որը բժիշկների խոսքով անբուժելի էր: Նրանք բուժումը դադարեցրել էին, չտալով ոչ մի հույս:

Նրա կինը ինձ ուղեկցեց ննջարան: Այնտեղ նա պառկած էր հարդարված անկողնու վրա: Նա հագել էր ճերմակ վերնաշապիկ և նոր կոշիկներ, կապել էր փողկապ:

Նա տեսավ զարմանք իմ աչքերում, հանդարտ ծիծաղեց և բացատրեց. «Ինձ օրհնություն տալուց հետո, ես ցանկանում եմ պատրաստ լինել պատասխանելու կանչին՝ վերցնել մահճակալսև գնալ աշխատելու»: Ես տեսա, որ նա պատրաստ էր այն հարցազրույցին, որ անցնելու էր Վարդապետի հետ, որի համար նա այդքան հավատարմորեն աշխատել էր:

Նա լիովին դարձի եկած Վերջին Օրերի Սրբերի օրինակ էր, որոնց հաճախ եմ հանդիպում, երբ նրանք նվիրաբերված ծառայությամբ լի կյանք են ապրած լինում: Նրանք առաջ են մղվում:

Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին դա այսպես է նկարագրել. «Լիովին դարձի եկած մարդու մեջ Հիսուս Քրիստոսի ավետարանին հակառակ բաների հանդեպ ցանկությունն իրականում մահացած է, և փոխարինվում է Աստծո սիրով և նրա պատվիրանները պահելու հաստատուն ու վերահսկվող վճռականությամբ»:[5]

Այդ հաստատուն վճռականությունն ավելի ու ավելի հաճախ եմ նկատում Հիսուս Քրիստոսի կոփված աշակերտների մոտ: Իմ դուստրերին ողջունող քրոջ և նոր կոշիկներ հագած այն տղամարդու պես, որը պատրաստ էր վեր կենալ և քայլել, նրանք հետևում են Փրկչի պատվիրանին մինչև վերջ: Դուք բոլորդ դրա ականատեսն եք:

Դուք կարող եք տեսնել դա կրկին, եթե վերադառնաք Մորմոնի Գրքին: Ես դեռևս սրտանց հիանում են, երբ կարդում եմ Աստծո խոնջացած և տոկուն ծառայի այս խոսքերը. «Քանզի հենց այս պահին իմ ամբողջ մարմինը սաստիկ դողում է, մինչ փորձում եմ խոսել ձեզ հետ. բայց Տերը . . . իրոք, զորավիգ է ինձ և թույլ է տվել ինձ, որ ես խոսեմ ձեզ հետ»:[6]

Դուք էլ իմ պես քաջություն կստանաք Մորոնիի կողմից մեզ տրված համբերելու օրինակից: Նա միայնակ էր իր ծառայության մեջ: Նա գիտեր, որ իր կյանքը մոտենում է ավարտին: Սակայն լսեք, թե ինչ էր նա գրում ի սեր այն մարդկանց, ովքեր դեռ չէին ծնվել, և իր թշնամիների սերունդների. «Այո, եկե՛ք դեպի Քրիստոսը, և կատարելագործվե՛ք նրանում, և հրաժարվե՛ք ամեն անաստվածությունից. և եթե դուք հրաժարվեք ամեն անաստվածությունից և սիրեք Աստծուն, ձեր ողջ զորությամբ՝ մտքով և ուժով, ապա նրա շնորհը բավական է ձեզ, որ նրա շնորհով դուք կարողանաք լինել կատարյալ Քրիստոսում»:[7]

Մորոնին տվեց այդ վկայությունը որպես իր կյանքին և ծառայությանը հրաժեշտի խոսքեր: Նա հորդորեց գթասրտություն, ինչպես Մորմոնի Գրքի մյուս մարգարեները: Նա ավելացրեց Փրկչի մասին իր վկայությունը, երբ մահը չոքել էր նրա առաջ: Նա Աստծո իսկական դարձի եկած զավակ էր, ինչպես մենք կարող ենք լինել՝ լի գթությամբ, անհողդողդ և անվախ՝ որպես Փրկչի և Նրա ավետարանի վկա, և վճռական՝ մինչև վերջ համբերելու:

Մորոնին ուսուցանեց մեզ, թե դրա համար ինչ է մեզանից պահանջվում: Նա ասաց, որ լիովին դարձի գալու համար նախ անհրաժեշտ է հավատք: Մորմոնի Գրքի աղոթքով ուսումնասիրությունը կկառուցի հավատք առ Հայր Աստված, Իր Սիրելի

Որդին և Նրա ավետարանը: Դա հավատք կկառուցի Աստծո հին ու նոր մարգարեների հանդեպ:

Այն կարող է ձեզ էլ ավելի մոտեցնել Աստծուն, քան որևէ այլ գիրք: Այն կարող է ավելի շատ բարելավել կյանքը: Ես հորդորում եմ ձեզ անել այն, ինչ իմ զուգընկեր միսիոներն էր արել: Երբ նա հեռացել էր տնից լինելով դեռահաս, ինչ-որ մեկը Մորմոնի Գիրքը դրել էր նրա արկղի մեջ, որը նա պետք է իր հետ վերցներ ավելի մեծ երջանկության իր փնտրտուքներում:

Տարիներ էին անցել: Նա տեղափոխվել էր տեղից-տեղ ողջ աշխարհով: Նա միայնակ և տխուր էր, երբ մի օր տեսավ այդ արկղը: Այն լի էր իրերով, որոնք նա տանում էր իր հետ: Արկղի տակ նա գտավ Մորմոնի Գիրքը: Նա կարդաց այնտեղ տրված խոստումը և փորձարկեց այն: Նա գիտեր, որ դա ճիշտ էր: Այդ վկայությունը փոխեց նրա կյանքը: Նա գտավ երջանկություն՝ իր ամենանվիրական երազանքներից առավել:

Մորմոնի Գրքի ձեր օրինակը հնարավոր է ձեր տեսադաշտից հեռու է մնացել հոգսերի և ամենօրյա պարտականությունների պատճառով: Ես աղերսում եմ, որ ավելի խորը և հաճախ ուսումնասիրեք այն: Այն պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը, որը միակ ուղին է դեպի տուն՝ Աստծո մոտ:

Ես ձեզ հետ եմ թողնում իմ հաստատուն վկայությունը, որ Աստված ապրում է և կպատասխանի ձեր աղոթքներին: Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն է: Մորմոնի Գիրքը ճշմարիտ և հաստատուն վկայություն է, որ Նա ապրում է, և որ Նա մեր հարություն առած և կենդանի Փրկիչն է:

Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի թանկագին վկան է: Ես այժմ թողնում եմ ձեզ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսիա 18.9:
2. Մոսիա 3.17:
3. Մորոնի 7.47:
4. Տես 3 Նեփի 17.21–22:
5. Marion G. Romney, in Conference Report, Oct. 1963, 23.
6. Մոսիա 2.30:
7. Մորոնի 10.32:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տիրոջն ապավինել՝ Քո կամքը կատարվի

Մեր կյանքի նպատակը Երկրի վրա աճելը, զարգանալը և մեր իսկ փորձառությունների միջոցով ամրանալն է:

Շաբաթ օրվա այս առավոտ, մենք շնորհակալություն ենք հայտնում և վկայում մեր Փրկչի կենդանի իրականության մասին: Նրա ավետարանը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Մենք այսօր առաջնորդվում ենք ապրող մարգարեի՝ Թոմաս Ս. Մոնսոնի կողմից: Ամենակարևորը, մենք հանդիսավոր վկայություն ենք բերում Հիսուս Քրիստոսի Քավության և դրանից բխող հավերժական օրհնությունների մասին:

Անցած մի քանի ամիսների ընթացքում, ես հնարավորություն եմ ունեցել ավելի շատ ուսումնասիրել և սովորե մեր Փրկչի քավող զոհաբերության մասին և թե ինչպես Նա պատրաստվեց կատարելու այդ հավերժական զոհաբերությունը մեզանից յուրաքանչյուրի համար:

Նրա նախապատրաստությունը սկսվեց նախաերկրային կյանքում, երբ Նա ապավինեց Իր Հորը, ասելով. «Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան»:[1] Սկսած այդ պահից մինչ այսօր, Նա գործադրում է Իր ազատ կամքը՝ընդունելու և իրականացնելու Երկնային Հոր ծրագիրը: Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ Իր պատանեկությունից Նա գնաց «[Իր] Հոր գործով»[2] և «սպասում էր Տիրոջ կողմից իր ծառայության ժամանակի գալուն»:[3] 30 տարեկանում Նա հանդիպեց ուժեղ գայթակղության, սակայն որոշեց դիմադրել, ասելով. «Գնա յետս, սատանայ»:[4] Գեթսեմանում Նա վստահեց Իր Հորը, հայտարարելով. «Սակայն ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»,[5] իսկ հետո գործադրեց Իր ազատ կամքը և տառապեց մեր մեղքերի համար: Հասարակական նվաստացուցիչ դատի և խաչելության հոգևարքի մեջ Նա ապավինեց Իր Հորը, պատրաստ «մեր մեղքերի համար վիրատրվելու [և] մեր անօրէնութիւնների . . . համար հարուածվելու»:[6] Նույնիսկ երբ Նա աղաղակեց. «Իմ Աստուած՝ իմ Աստուած, ինչո՞ւ թողեցիր ինձ»,[7] Նա ապավինում էր Իր Հորը՝գործադրելով Իր ազատ կամքը՝ ներելու Իր թշնամիներին,[8] հոգ տանելու Իր մոր համար[9] և համբերելու մինչև վերջ, մինչև Իր կյանքը և մահկանացու առաքելությունն ավարտվեին:[10]

Ես հաճախ եմ խորհրդածել. «Ինչո՞ւ են Աստծո Որդին և Նրա սուրբ մարգարեները և բոլոր հավատարիմ Սրբերը կրում փորձություններ և տառապանքներ, երբ նույնիսկ փորձում են անել Երկնային Հոր

կամքը: Ինչո՞ւ է դա այդքան դժվար, հատկապես՝ նրանց համար:

Ես մտածում եմ Ջոզեֆ Սմիթի մասին, որը տառապանք կրեց, երբ տղա էր, և հալածանք՝ իր կյանքի ընթացքում: Փրկչի նման նա աղաղակեց. «Ով Աստված, ո՞ւրտեղ ես դու»:[11] Այնուամենայնիվ, նույնիսկ, երբ նա, թվում էր, միայնակ էր, նա գործադրեց իր ազատ կամքը, ապավինելով Տիրոջը և իրականացնելով իր Երկնային Հոր կամքը:

Ես մտածում եմ մեր ռահվիրա նախնիների մասին. դուրս քշված լինելով Նավուից, տափաստաններում՝ գործադրելով մարգարեին հետևելու իրենց ազատ կամքը, նույնիսկ, տանելով հիվանդություն, զրկանք, նույնիսկ, մահ: Ինչո՞ւ համար էր այդ սոսկալի տառապանք: Ո՞րն էր դրա նպատակը Ո՞րն էր դրա իմաստը:

Երբ տալիս ենք այս հարցերը, հասկանում ենք, որ մեր կյանքի նպատակը Երկրի վրա աճելը, զարգանալը և մեր իսկ փորձառությունների միջոցով ամրանալն է: Ինչպե՞ս ենք մենք անում այս: Սուրբ գրությունները տալիս են մեզ պատասխան մեկ պարզ արտահայտությամբ. Մենք «[ապավինում] ենք Տիրոջը»:[12] Ստուգարքներ և փորձություններ տրվում են մեզ բոլորիս: Այս մահկանացու դժվարությունները թույլ են տալիս մեզ և մեր Երկնային Հորը տեսնել, թե մենք արդյոք կգործադրե՞նք Նրա Որդուն հետևելու մեր ազատ կամքը: Նա արդեն գիտի և մենք ունենք հնարավորություն սովորելու, որ որքան էլ դժվարին լինեն մեր հանգամանքները, «այս բոլոր բաները փորձառություն կտան [մեզ] և կլինեն [մեր] օգտի համար»:[13]

Արդյո՞ք սա նշանակում է, որ մենք միշտ կհասկանանք մեր մարտահրավերները: Մի՞թե մենք բոլորս էլ չենք ունենա պատճառ ինչ որ ժամանակ ասելու. «Ով Աստված, որտեղ ես դու»:[14] Այո: Երբ կողակիցն է մահանում, նրա զուգընկերը հարց կտա: Երբ տնտեսական դժվարություններ են ծագում ընտանիքում, հայրը հարց կտա: Երբ երեխաները հեռանում են ուղուց, մայրը և հայրը կաղաղակեն վշտաբեկ: Այո, «իրիկունը լաց է գալիս, իսկ առաւօտը ցնծութիւն»:[15] Ապա մեր աճող հավատքի և հասկացողության արշալույսին մենք բարձրանում ենք և ընտրում ապավինել Տիրոջը, ասելով. «Քո կամքը կատարվի»:[16]

Ուրեմն այդ դեպքում, ի՞նչ է նշանակում *ապավինել* Տիրոջը: Սուրբ գրություններում ապավինել նշանակում է հուսալ, ակնկալել և վստահել: Տիրոջը հուսալն ու վստահելը պահանջում է հավատք, համբերություն, համեստություն, հեզություն, երկայնամտություն, պատվիրանները պահել և մինչև վերջ համբերել:

Ապավինել Տիրոջը նշանակում է հավատքի սերմ ցանել և սնուցել այն «մեծ ջանասիրությամբ և . . . համբերությամբ»:[17]

Դա նշանակում է աղոթել, ինչպես Փրկիչն է աղոթել Աստծուն՝ մեր Երկնային Հորը, ասելով. «Քո թագավորությունը գա: Քո կամքը կատարվի»:[18] Դա մի աղոթք է, որը մենք հղում ենք մեր ողջ հոգով, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունով:

Ապավինել Տիրոջը նշանակում է խորհրդածել մեր սրտերում և «ստանալ Սուրբ Հոգին», որպեսզի կարողանանք իմանալ «բոլոր բաները, որոնք [մենք] պիտի անենք»:[19]

Երբ հետևում ենք Հոգու հուշումներին, մենք հայտնաբերում ենք, որ «նեղութիւնը համբերութիւն է գործում»[20] և մենք սովորում ենք «համբերությամբ շարունակել, մինչև որ կատարյալ դարձվենք»:[21]

Ապավինել Տիրոջը նշանակում է «կանգնել անսասան»[22] և «առաջ մղվել» հավատքով, «ունենալով հույսի կատարյալ պայծառություն»:[23]

Դա նշանակում է «ապավինելով միմիայն Քրիստոսի արժանիքներին»[24] և «[Նրա] շնորհի աջակցությամբ ասել. Թող քո կամքը կատարվի, ով Տեր, և ոչ մերը»:[25]

Երբ մենք ապավինում ենք Տիրոջը, մենք «անխախտ ենք Աստծո պատվիրանները պահելիս»[26] իմանալով, որ «պիտի մի օր հանգստանանք բոլոր [մեր] չարչարանքներից»:[27]

Եվ մենք «դեն [չենք] գցում [մեր] վստահութիւնը»[28] որ «բոլոր բաները, ինչով մենք չարչարվել ենք, միաժամանակ կգործեն [մեր] բարիքի համար»:[29]

Այդ չարչարանքները կգան բոլոր ձևերով և չափերով: Հոբի փորձառությունը հիշեցնում է մեզ, թե ինչի կարող ենք կանչվել դիմանալու համար: Հոբը կորցրեց բոլոր իր ունեցվածքը, ներառյալ իր հողը, տունը և անասունները, իր ընտանիքի անդամներին, իր համբավը, իր ֆիզիկական առողջությունը և, նույնիսկ, իր մտավոր լավ վիճակը: Սակայն, նա ապավինեց Տիրոջը և բերեց հզոր անձնական վկայություն: Նա ասաց.

«Իսկ ես գիտեմ որ փրկիչս կենդանի է, եւ նա վերջը պիտի կանգնէ հողի վերայ:

Եւ իմ . . . մորթը այսպէս

թափուելուց յետոյ, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն»:[30]

«Թէ որ ինձ սպանէ, ես նորան եմ յուսալու»:[31]

Նույնիսկ Հոբի, մարգարեների և Փրկչի փայլուն օրինակներով, մենք դժվարին կհամարենք Տիրոջն ապավինելը, հատկապես, երբ չենք կարողանում լիովին հասկանալ Նրա ծրագիրն ու նպատակները մեզ համար: Այդ հասկացողությունը շատ հաճախ տրվում է «տող առ տող [և] ցուցում առ ցուցում»:[32]

Իմ կյանքում ես հասկացել եմ, որ երբեմն չեմ ստանում իմ աղոթքի պատասխանը, որովհետև Տերը գիտի, որ ես պատրաստ չեմ: Երբ Նա պատասխանում է, հաճախ դա լինում է «մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ»[33], որովհետև սա այն բոլորն է, որ ես կարող եմ տանել կամ որ պատրաստ եմ անել:

Խիստ հաճախ մենք աղոթում ենք համբերություն ունենալու համար, բայց կամենում ենք ունենալ հենց այժմ: Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը, երբ պատանի էր, աղոթեց ավետարանի ճշմարտացիության վերաբերյալ վկայություն ստանալու համար: Շատ տարիներ անց, երբ նա ծառայում էր իր միսիայում Շոտլանդիայում, վերջապես այդ վկայությունն եկավ: Հետագայում նա գրեց. «Դա մի հավաստիացում էր ինձ համար, որ անկեղծ աղոթքը պատասխանվում է «ինչ որ մի ժամանակ, ինչ որ մի տեղում»:[34]

Մենք, հավանական է, չիմանանք, երբ կամ ինչպես կտրվեն Տիրոջ պատասխանները, բայց Նրա ժամանակին և Նրա ձևով, ես վկայում եմ, պատասխանները կգան: Որոշ պատասխանների համար մենք գուցե ստիպված լինենք սպասել մինչև հանդերձյալ կյանք: Սա կարող է ճիշտ լինել մեր հայրապետական օրհնության որոշ խոստումների համար և ընտանիքի անդամների որոշ օրհնությունների դեպքում: Եկեք հույսներս չկտրենք Տիրոջից: Նրա օրհնությունները հավերժական են, ոչ թե ժամանակավոր:

Տիրոջն ապավինելը մեզ անգին հնարավորություն է ընձեռում հայտնաբերելու, որ կան շատերը,

ովքեր ապավինում են մեզ: Մեր երեխաներն ապավինում են մեզ, որպեսզի մենք համբերություն, սեր և ըմբռնում դրսևորենք նրանց հանդեպ: Մեր ծնողներն ապավինում են մեզ, որ մենք դրսևորենք երախտագիտություն և կարեկցանք: Մեր եղբայրներն ու քույրերն ապավինում են մեզ, որ լինենք հանդուրժողական, ողորմած և ներողամիտ: Մեր կողակիցներն ապավինում են մեզ, որ սիրենք նրանց, ինչպես Փրկիչն է սիրում մեզանից յուրաքանչյուրին:

Երբ ֆիզիկական տառապանք ենք տանում, մենք գնալով ավելի լավատեղյակ ենք դառնում այն մասին, թե որքան շատերն են ծառայում մեզանից յուրաքանչյուրին: Բոլոր Մարիամների և Մարթաների, բոլոր բարի Սամարացիների, ովքեր ծառայում են հիվանդներին, օգնության հասնում թույլերին և հոգ տանում մտավոր և ֆիզիկական թուլություն ունեցողների համար, նրանց հանդեպ ես զգում եմ սիրառատ Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու երախտագիտությունը: Ձեր Քրիստոսանման ամենօրյա ծառայության մեջ դուք ապավինում եք Տիրոջը և կատարում ձեր Երկնային Հոր կամքը: Նրա հավաստիացումը ձեզ պարզ է. «Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[35] Նա գիտի ձեր զոհաբերությունները և ձեր վշտերը: Նա լսում է ձեր աղոթքները: Նրա խաղաղությունը և հանգիստը կլինեն ձերը. եթե դուք շարունակեք ապավինել Նրան հավատքով:

Մեզանից յուրաքանչյուրն ավելի շատ է սիրված Տիրոջ կողմից ,քան մենք հնարավորինս կարող ենք հասկանալ կամ պատկերացնել: Եկեք, ուրեմն, լինենք ավելի բարի մեկմեկու հանդեպ և ավելի բարի ինքներս մեր հանդեպ: Եկեք հիշենք, որ երբ ապավինում ենք Տիրոջը, մենք դառնում ենք «սրբեր [Նրա] քավությամբ, . . . ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել [մեզ] վրա՝ ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը»:[36]

Այդպիսին էր մեր Փրկչի հոժարակամությունը Իր Հոր հանդեպ Գեթսեմանի պարտեզում: Նա աղերսեց Իր աշակերտներին. «Արթուն կացեք ինձ հետ», սակայն երեք անգամ վերադարձավ նրանց մոտ՝ տեսնելով նրանց աչքերը ծանրացած քնից:[37] Առանց այդ աշակերտների ընկերակցության և բացարձակապես առանց Իր Հոր ներկայության, Փրկիչն ընտրեց տանել մեր «ցավերը և չարչարանքները և փորձություններն ամեն տեսակի»:[38] Մի հրեշտակ ուղարկվեց զորացնելու Նրան:[39] Նա ընկրկեց որ չխմեր այդ դառը բաժակը:[40] Նա ապավինեց Իր Հորը, ասելով. «Քո կամքը կատարվի»,[41] և Նա խոնարհաբար միայնակ կոխ տվեց գինու հնձանը:[42] Այժմ՝ որպես Նրա Տասներկու Առաքյալներից մեկը այս վերջին օրերում, ես աղոթում եմ, որ մենք զորացվենք արթուն մնալու Նրա հետ և ապավինենք Նրան մեր բոլոր օրերում:

Այս շաբաթ առավոտ, ես արտահայտում եմ իմ երախտագիտությունը, որ իմ և ձեր Գեթսեմանում,[43] մենք միայնակ չենք: Նա, ով պահպանում է *մեզ* , «չի ննջիլ եւ չի քնանալ»:[44] Նրա հրեշտակներն այստեղ և վարագույրից այն կողմ «[մեր] շուրջն են, որ բարձրացնեն [մեզ]»:[45] Ես

բերում եմ իմ հատուկ վկայությունը, որ մեր Փրկչի խոստումը ճշմարիտ է. «Բայց Տիրոջն ապաւինողները կնորոգուին ոյժով, թեւերով վեր կսլանան արծիվների պէս, կվազեն եւ չեն վաստակիլ, կգնան եւ չեն յոգնիլ»:[46] Թող որ մենք ապավինենք Տիրոջը, առաջ մղվելով հավատքով, որպեսզի ասենք մեր աղոթքներում. «Քո կամքը կատարվի»,[47] և վերադառնանք Նրա մոտ պատվով: Մեր Փրկչի ու Քավչի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 4.2:
2. Ղուկաս Բ.49:
3. Joseph Smith Translation, Matthew 3:24, in Bible appendix.
4. Ղուկաս Դ.8:
5. Ղուկաս ԻԲ.42:
6. Եսայիա ԾԳ.5, Մոսիա ԺԴ.5:
7. Մատթեոս 27.46; Մարկոս 15.34:
8. Տես Ղուկաս ԻԳ.34:
9. Տես Հովհաննես 19.27:
10. Տես Հովհաննես 19.30:
11. Վարդապետություն և Ուխտեր 121.1:
12. Սաղմոս ԼԷ.9 ճԻԳ.2 Եսայիա Ը.17 Խ.312 Նեփի 18.17:
13. Վարդապետություն և Ուխտեր 122.7:
14. Վարդապետություն և Ուխտեր 121.1:
15. Սաղմոս 30.5:
16. Մատթեոս Զ.103 Նեփի 13.10; տես նաև Մատթեոս ԻԶ.39:
17. Ալմա 32.41:
18. Մատթեոս Զ.10; Ղուկաս ԺԱ.2:
19. 2 Նեփի 32.5:
20. Հռովմայեցիս Ե.3:
21. Վարդապետություն և Ուխտեր 67.13:
22. Ալմա 45.17:
23. 2 Նեփի 31.20:
24. Մորոնի 6.4:
25. Վարդապետություն և Ուխտեր 109.44:
26. Ալմա 1.25:
27. Ալմա 34.41:
28. Եբրայեցիս Ժ.35:
29. Վարդապետություն և Ուխտեր 98.3:
30. Հոբ ԺԹ.25–26:
31. Հոբ ԺԳ.15:
32. 2 Նեփի 28.30:
33. 2 Նեփի 28.30:
34. *Teachings of Presidents of the Church: David O. McKay* (2003), xviii.
35. Մատթէոս ԻԵ.40:
36. Մոսիա 3.19:
37. Մատթեոս 26.38; տես նաևհատվածներ 39–45:
38. Ալմա 7.11:
39. Տես Ղուկաս 22.43:
40. "In Memory of the Crucified," *Hymns,* no. 190; տես նաև 3 Նեփի 11.11; Վարդապետություն և Ուխտեր 19.18–19:
41. Մատթեոս 26.42:
42. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.107; 88.106; 133.50:
43. "Where Can I Turn for Peace?" *Hymns,* no. 129.
44. Սաղմոս ճԻԱ.4:
45. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
46. Եսայիա Խ.31:
47. Մատթեոս 26.42:

Երեց Թեդ Ռ. Քալիսթեր
Յոթանասունի Նախագահությունից

Մորմոնի Գիրք՝ գիրք Աստծուց

Աստվածաշնչի հետ միասին Մորմոնի Գիրքը Քրիստոսի վարդապետությունների և Նրա աստվածային էության անբաժանելի վկայությունն է:

Տարիներ առաջ իմ նախա-նախապապիկը առաջին անգամ իր ձեռքը վերցրեց Մորմոնի Գիրքը: Նա բացեց այն մեջտեղում և կարդաց մի քանի էջ: Այդ ժամանակ նա հայտարարեց. «Այդ գիրքը գրվել է կամ Աստծո կամ դևի կողմից, և ես պետք է պարզեմ, թե ով է այն գրել»: Հաջորդ տաս օրերի ընթացքում նա երկու անգամ մինչև վերջ կարդաց այն, ապա հայտարարեց. «Դևը չէր կարող գրել սա, այն պետք է որ Աստծուց լինի»:[1]

Դա է Մորմոնի Գրքի հանճարեղությունը՝ չկա միջինը: Այն կամ Աստծո խոսքն է, ինչպես մարգարեացվել է, կամ ամբողջովին կեղծիք է: Այս գիրքը չի հավակնում լինելու պարզապես բարոյական թեզ կամ աստվածաբանական մեկնաբանություններ կամ ներշնչված գրառումների հավաքածու: Այն հավակնում է լինելու Աստծո խոսքը՝ ամեն մի նախադասություն, ամեն մի տող, ամեն մի էջ: Ջոզեֆ Սմիթը հայտարարել է, որ Աստծո հրեշտակը ուղղորդել է իրեն դեպի ոսկե թիթեղները, որոնք պարունակում են հնադարյան Ամերիկայի մարգարեների գրառումները, և որ նա թարգմանել է այդ թիթեղները աստվածային զորություններով: Եթե այդ պատմությունը ճշմարիտ է, ապա Մորմոնի Գիրքը սուրբ գրություն է, ինչպես մարգարեացվել է. եթե ոչ, ապա դա բարդ, այնուամենայնիվ, դիվական խաբեություն է:

Ս. Ս. Լյուիսը խոսել է նմանատիպ երկընտրության մասին, որի առաջ կանգնում է այն անձը, որը պետք է կամ ընդունի կամ մերժի Փրկչի աստվածային բնույթը, երբ չկա միջինը. «Ես փորձում եմ կանխել իսկապես հիմար խոսքերը, որ մարդիկ հաճախ ասում են Նրա մասին. «Ես պատրաստ եմ ընդունել Հիսուսին որպես բարոյականության ուսուցչի, սակայն չեմ ընդունում Աստված լինելու Նրա հայտարարությունը»: Դա մի բան է, որը մենք երբեք չպետք է ասենք: Մի մարդ, որը հասարակ մարդ է եղել և ասել այնպիսի բաներ, ինչպիսին Հիսուսն է ասել, չի կարող բարոյականության մեծ ուսուցիչ լինել: . . . Դուք պետք է կատարեք ձեր ընտրությունը: Կամ այս մարդը եղել է և կա Աստծո Որդին, կամ խելագար կամ ավելի վատ է եղել: . . . Սակայն եկեք չհանգենք որևէ սատարող անմտության

մարդկության մեծ ուսուցիչ լինելու Նրա էության մասին: Նա չի թողել դա մեր դատողությանը: Նա այդ մտադրությունը չի ունեցել»:[2]

Նմանապես, մենք պետք է հասարակ ընտրություն կատարենք Մորմոնի Գրքի հետ կապված՝ այն կամ Աստծուց է, կամ դևից: Չկա այլ տարբերակ: Մի պահ, ես խնդրում եմ ձեզ մի փորձ կատարել, որը կօգնի ձեր որոշել այս գրքի իրական էությունը: Հարցրեք ինքներդ ձեզ. Մորմոնի Գրքից հետևյալ սուրբ գրությունները ձեզ մոտեցնում են Աստծուն, թե դևին.

«Սնվեք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.3):

Կամ իր որդիներին ուղղված սիրող հոր այս խոսքերը. «Եվ, այժմ, իմ որդիներ, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը» (Հելաման 5.12):

«Եկեք Քրիստոսի մոտ և կատարելագործվեք նրանում» (Մորոնի 10.32).

Կարո՞ղ էին արդյոք Մորմոնի Գրքից այդ հայտարարությունները ստեղծված լինել չարի կողմից: Նրանից հետո, երբ Փրկիչը որոշ դևերի վտարեց, փարիսեցիները հայտարարեցին, որ Նա դա արեց «դևերի իշխան Բէեղզեբուղի» օգնությամբ: Փրկիչը պատասխանեց, որ նման եզրահանգումը անիմաստ է. «Ամեն թագավորություն, – ասաց Նա, – որ իր դեմ բաժանված է՝ կավիրվի, և ամեն . . . տուն, որ իր դեմ բաժանված է՝ չի մնալ»: Եվ Նրա համոզիչ պատասխանը. *«Եվ թե որ սատանան սատանային հանում է, իր դեմ բաժանվեցավ. Էլ ինչպե՞ս նորա թագավորությունը կկենայ»* (Մատթեոս 12.24–26; շեշտադրումն ավելացված է):

Եթե Մորմոնի Գրքի վերը նշված սուրբ գրությունները ուսուցանում են մեզ երկրպագել, սիրել և ծառայել Փրկչին (ինչը դրանք անում են), ապա ինչպե՞ս դրանք կարող են լինել դևից: Այդ դեպքում, նա իր դեմ դուրս կգար և կկործաներ իր սեփական արքայությունը՝ մի պայման, որը, ինչպես ասում է Փրկիչը, չի կարող գոյություն ունենալ:

Մորմոնի Գրքի անկեղծ, անկողմնակալ ուսումնասիրությունը կարող է բերել այն նույն եզրահանգման, որին եկել էր իմ նախա-նախապապիկը. «Դևը չէր կարող գրել սա, այն պետք է որ Աստծուց լինի»:

Սակայն, ինչո՞ւ է Մորմոնի Գիրքն այդքան կարևոր, եթե մենք արդեն ունենք Աստվածաշունչ, որը մեզ ուսուցանում է Հիսուս Քրիստոսի մասին: Դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչու այսօր աշխարհում գոյություն ունեն այդքան բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներ, երբ նրանք կարող են իրենց վարդապետությունները վերցնել հիմնականում Աստվածաշնչից: Որովհետև նրանք տարբեր ձևերով են մեկնաբանում Աստվածաշունչը: Եթե նրանք նույն ձևով այն մեկնաբանեին, ապա կլինեին նույն եկեղեցուց: Սա պայման չէ, որը ցանկանում է Տերը, քանզի Պողոս Առաքյալն ասել է, որ կա «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն» (Եփեսացիս 4.5): Այս միայնությունը հաստատելու համար, Տերը հիմնել է վկաների աստվածային օրենքը: Պողոսն ուսուցանում է. «Երկու և երեք վկաների բերանից ամեն բան կհաստատվի» (Բ Կորնթացիս 13.1):

Աստվածաշունչը մի վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, իսկ Մորմոնի Գիրքը՝ մեկ այլ վկայություն: Ինչո՞ւ է այդքան կենսական այս երկրորդ վկայությունը: Հետևյալ պատկերը կարող է օգնել. Որքա՞ն ուղիղ գծեր դուք կարող եք անցկացնել մեկ կետով մեկ թղթի վրա: Պատասխանն է. անթիվ: Մի պահ պատկերացրեք, որ մեկ կետը ներկայացնում է Աստվածաշունչը, իսկ հարյուրավոր ուղիղ գծերը, որոնք անցնում են այդ կետով, ներկայացնում են Աստվածաշնչի տարբեր մեկնաբանումները, և որ այդ մեկնաբանումներից յուրաքանչյուրը մի եկեղեցի է ներկայացնում:

Ի՞նչ է պատահում, եթե այդ թղթի վրա հայտնվում է երկրորդ կետը՝ Մորմոնի Գիրքը: Քանի՞ ուղիղ գիծ դուք կարող եք տանել այս երկու կետերի՝ Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի միջև: Միայն մեկ: Քրիստոսի վարդապետությունների միայն մեկ մեկնաբանություն կարող է ճշմարիտ լինել, եթե կա երկու վկաների վկայություն:

Կրկին և կրկին, Մորմոնի Գիրքը հանդիսանում է հաստատող, պարզաբանող, միավորող վկայություն այն վարդապետությունների մասին, որոնք ուսուցանվում են Աստվածաշնչում, քանզի կա միայն «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն»: Օրինակ, որոշ մարդիկ կասկածում են, թե արդյոք մկրտությունը կարևոր է փրկության համար, թեև Փրկիչը հայտարարել է Նիկոդեմոսին. «Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա կարող չէ Աստծո արքայությունը մտնել» (Հովհաննես 3.5): Ինչևէ, Մորմոնի Գիրքը փարատում է այս թեմայով բոլոր կասկածները. «Եվ նա պատվիրում է բոլոր մարդկանց, որ նրանք պետք է ապաշխարեն և մկրտվեն իր անունով . . . այլապես նրանք չեն կարողանա փրկվել Աստծո արքայության մեջ» (2 Նեփի 9.23):

Այսօր աշխարհում գոյություն ունեն մկրտության տարբեր եղանակներ, թեև Աստվածաշունչը մեզ տալիս է այն ձևը, որով Փրկիչը՝ մեր մեծ Օրինակը, մկրտվեց. «[Նա] շուտով դուրս եկավ ջրիցը» (Մատթեոս 3.16): Արդյո՞ք Նա կարող է դուրս գալ ջրից, եթե նախ չմտներ ջուրը: Եթե այս առարկայի շուրջ որևէ կասկած կա, Մորմոնի Գիրքը հստակությամբ

Ջունդայ, Բրազիլիա

պարզաբանում է մկրտության ճիշտ ձևի մասին վարդապետությունը. «Եվ հետո դուք պիտի ընկղմեք նրանց ջրի մեջ, և կրկին դուրս բերեք ջրից» (3 Նեփի 11.26):

Շատերը հավատացած են, որ Աստվածաշնչով հայտնությունները ավարտվել են, թեև Աստվածաշունչը հանդիսացել է Աստծո հայտնությունների ձևի վկայությունը մարդկության գոյության 4000 տարիների ընթացքում: Սակայն մեկ սխալ վարդապետություն, ինչպես սա է, դոմինոյի նման կարող է այլ դոմինոներ գցել կամ, այս դեպքում, ճիշտ վարդապետությունների անկման պատճառ լինել: Հայտնությունների դադարեցմանը հավատալը նշանակում է, որ վարդապետությունն այն մասին, որ Աստված նույնն է երեկ, այսօր և հավերժ, (Mormon 9:9) կեղծ է, դա նշանակում է, որ Ամովսի ուսուցանած վարդապետությունը, որ «Տեր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթե չհայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս 3.7), կեղծ է; և այն նշանակում է, որ վարդապետությունն այն մասին, որ «Աստված աչառ չէ» (Գործք 10.34) և, այդպիսով խոսում է բոլոր մարդկանց հետ բոլոր ժամանակներում, կեղծ է: Սակայն, բարեբախտաբար, Մորմոնի Գիրքը ուժեղացնում է շարունակ ստացվող հայտնության աստվածաշնչյան ճշմարտությունը.

«Եվ դարձյալ, ես խոսում եմ ձեզ հետ, որ ուրանում եք Աստծո հայտնությունները, և ասում, թե դրանք վերացել են, որ չկան ոչ մի հայտնություններ, . . .

. . . մենք չենք կարդում, որ Աստված նույնն է երեկ, այսօր, և հավիտյան»: (Մորմոն 9.7, 9):

Այլ խոսքերով, եթե Աստված, որն անփոփոխ է, խոսել է հին ժամանակներում, Նա նմանապես խոսում է մեր ժամակներում:

Վարդապետական հաստատումների և պարզաբանումների ցանկը կարելի է անվերջ շարունակել, սակայն դրանցից ամենազորեղը, ինչպեսև ամենահուզիչը, Հիսուս Քրիստոսի Քավության մասին Մորմոնի Գրքի պատմություններն են: Ցանկանո՞ւմ եք դուք, որ ձեր հոգում փորագրվի անժխտելի վկայությունն այն մասին, որ Փրկիչը իջել է ձեր մեղքերից ներքև, և որ չկա մի մեղք, մահկանացու մի հոգս, որը դուրս կլինի Նրա Քավության գթասիրտ զորությունից, որ ձեր յուրաքանչյուր մաքառման համար Նա ունի ապաքինող գերզորեղ բալասան: Ապա կարդացեք Մորմոնի Գիրքը: Այն կուսուցանի ձեզ և կվկայի, որ Քրիստոսի Քավությունը անսահման է, որովհետև այն ընդգրկում, ներառում, պարփակում և գերազանցում է մարդուն հայտնի ցանկացած թուլություն: Ահա, թե ինչու է Մորմոն մարգարեն հայտարարել. «Դուք պիտի ունենաք հույս Քրիստոսի քավության միջոցով» (Մորոնի 7.41):

Զարմանալի չէ, որ Մորմոնի Գիրքը համարձակ հայտարարում է. «Եվ եթե դուք հավատաք Քրիստոսին, դուք կհավատաք այս խոսքերին, քանզի դրանք Քրիստոսի խոսքերն են» (2 Նեփի 33.10): Աստվածաշնչի հետ միասին Մորմոնի Գիրքը Քրիստոսի վարդապետությունների և Նրա աստվածային էության անբաժանելի վկայությունն է: Աստվածաշնչի հետ միասին, այն «սովորեցնում են բոլոր մարդկանց, որ նրանք պետք է բարիք անեն» (2 Նեփի 33.10): Եվ Աստվածաշնչի հետ միասին, այն մեզ է բերում «մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն»: Այդ պատճառով է Մորմոնի Գիրքը այդքան կարևոր մեր կյանքի համար:

Մի քանի տարի առաջ ես ներկա եղա մեր երկրպագության ծառայությանը Տոռոնտոյում, Կանադա: Խոսում էր 14-ամյա մի աղջիկ: Նա ասաց, որ զրուցում էր իր կրոնի մասին իր դպրոցական ընկերներից մեկի հետ: Նրա ընկերուհին ասաց. «Ի՞նչ կրոնի ես դու պատկանում»:

Նա պատասխանեց. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն, կամ՝ Մորմոններին»:

Ընկերուհին ասաց. «Ես գիտեմ այդ Եկեղեցին, և ես գիտեմ, որ այն ճշմարիտ չէ»:

«Որտեղի՞ց գիտես», – հնչեց հարցը:

«Որովհետև, – ասաց ընկերուհին, - ես ուսումնասիրել եմ այն»:

«Դու կարդացե՞լ ես Մորմոնի Գիրքը»:

«Ոչ, - եղավ պատասխանը, – չեմ կարդացել»:

Ապա, այս քաղցր աղջնակը պատասխանեց. «Ուրեմն դու չես ուսումնասիրել իմ Եկեղեցին, որովհետև ես կարդացել եմ Մորմոնի Գրքի յուրաքանչյուր էջը և գիտեմ, որ այն ճշմարիտ է»:

Ես նույնպես կարդացել եմ Մորմոնի Գրքի յուրաքանչյուր էջը կրկին ու կրկին, և ես բերում եմ իմ խոհեմ վկայությունը, ինչպես իմ նախա-նախապապիկը, որ այն Աստծուց է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Willard Richards, in LeGrand Richards, *A Marvelous Work and a Wonder,* rev. ed. (1972), 81, 82.
2. C. S. Lewis, *Mere Christianity* (1952), 40–41.

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

Սիրիր նրա մորը

Ինչպե՞ս կարող է հայրը մեծացնել երջանիկ դուստր, որն ընտելացած կլինի մեր այսօրվա ավելի ու ավելի թունավոր դարձող աշխարհում: Պատասխանը ուսուցանվել է Տիրոջ մարգարեների կողմից:

Խոսքերով չի կարելի նկարագրել այն սուրբ իրադարձությունը, երբ նորաթուխ հայրը իր ձեռքերում առաջին անգամ բռնում է իր նորածին դստերը: Այս տարի մեր որդիներից երեքը դարձան աղջիկ մանուկների նոր հայրեր: Երբ մեր հաղթանդամ, ամուր, ռեգբի խաղացող մեր տղան՝ Ջոնը, իր ձեռքերում պահել էր իր առաջին նորածին դստերը, նա նայեց նրան ակնածալից մեղմությամբ, ապա նայեց ինձ այնպիսի մի արտահայտությամբ, կարծես, ասում էր. «Ինչպե՞ս ես պետք է աղջիկ մեծացնեմ»:

Այս առավոտ, ես կուզենայի խոսել մեր որդիների և բոլոր հայրերի հետ: Ինչպե՞ս կարող է հայրը մեծացնել երջանիկ դուստր, որն ընտելացած կլինի մեր այսօրվա ավելի ու ավելի թունավոր դարձող աշխարհում: Պատասխանը ուսուցանվել է Տիրոջ մարգարեների կողմից: Դա պարզ և ճշմարիտ պատասխան է. «Ամենակարևոր բաները, որ հայրը կարող է անել իր [դստեր] համար, դա [նրա] մորը սիրելն է»:[1] Նրանով, թե ինչպես դուք կսիրեք նրա մորը, դուք կուսուցանեք ձեր դստերը մեղմություն, հավատարմություն, հարգանք, կարեկցանք և նվիրում: Ձեր օրինակից նա կսովորի, թե ինչ պետք է ակնկալի երիտասարդ տղամարդկանցից և թե ինչ հատկանիշներ պետք է փնտրի ապագա ամուսնու մեջ: Նրանով, թե ինչպես եք դուք սիրում և հարգում ձեր կնոջը, դուք կարող եք ձեր դստերը ցույց տալ, որ նա երբեք չպետք է բավարարվի դրանից ավելի քչով: Ձեր օրինակը կսովորեցնի ձեր դստերը գնահատել կին լինելու պարգևը: Դուք ցույց եք տալիս նրան, որ նա մեր Երկնային Հոր դուստրն է, որը սիրում է իրեն:

Սիրեք նրա մորն այնքան շատ, որպեսզի ձեր ամուսնությունը սելեստիալ լինի: Ժամանակի և ողջ հավերժությունների համար տաճարային ամուսնությունը արժանի է ձեր ամենամեծ ջանքերին և բարձրագույն առաջնահերթությանը: Միայն նրանից հետո, երբ Նեփին ավարտեց տաճարը անապատում, նա ասաց. «Եվ . . . մենք ապրեցինք երջանիկ»:[2] Այդ «երջանկությունը» գտնվում է տաճարում: Դա ուխտը պահելն է: Թույլ մի տվեք, որ որևէ ազդեցություն մտնի ձեր կյանք կամ ձեր տուն, որը վտանգի տակ կդնի ձեր ուխտերը կամ ձեր կնոջը և ընտանիքին ձեր նվիրվածությունը:



Երիտասարդ Կանանց կազմակերպությունում մենք օգնում ենք ձեր դստերը հասկանալ իր ինքնությունը՝ որպես Աստծո դուստր, և կարևորությունը՝ մնալու առաքինի և արժանի տաճարային օրհնություններին և տաճարային ամուսնությանը: Մենք ուսուցանում ենք ձեր դստերը սուրբ ուխտեր կապելու և դրանք պահելու կարևորությունը: Մենք սովորեցնում ենք նրան վճռել այժմ ապրել այնպես, որպեսզի նա միշտ կարողանա արժանի լինել մտնելու տաճար, և թույլ չտալ, որ որևէ բան հետաձգի, շեղի կամ որակազրկի նրան այդ նպատակը իրականացնելուց: Ձեր՝ որպես նրա հոր օրինակը, ավելի բարձրաձայն է խոսում, քան մեր կարևոր խոսքերը: Երիտասարդ կանայք մտահոգվում են իրենց հայրերի համար: Շատերը խոստովանում են, որ իրենց մեծագույն ցանկությունն է՝ որպես ընտանիք հավերժ միավորվելը: Նրանք ուզում են, որ դուք իրենց կողքին լինեք, երբ իրենք գնում են տաճար կամ ամուսնանում են տաճարում: Մոտ մնացեք ձեր դստերը և օգնեք նրան պատրաստվել և արժանի մնալ տաճարին: Երբ նա դառնա 12 տարեկան, նրան հաճախ ձեզ հետ տաճար տարեք՝ ձեր նախնիների և մյուսների համար մկրտություններ կատարելու համար: Նա ընդմիշտ կփայփայի այդ հուշերը:

Այսօր տարածված է մի մշակույթ, որը փորձում է քայքայել և ցածրացնել ձեր հավերժական դերը որպես հայրապետ և հայր, ինչպես նաև նվազագույնի հասցնել ձեր առավել կարևոր պարտականությունները: Դրանք տրվել են ձեր

«աստվածային ծրագրով» և որպես հայրեր դուք «պետք է ղեկավարեք ձեր ընտանիքները սիրով և առաքինությամբ, և պատասխանատու լինեք ապահովելու ընտանիքի կենսական կարիքներն ու պաշտպանությունը»:[3]

Հայրեր, ըստ սահմանման, դուք ձեր տների, ձեր կանանց և ձեր երեխաների պահապաններն եք: Այսօր «հեշտ չէ պաշտպանել ընտանիքը չարի ներխուժումներից [նրանց] մտքեր և հոգիներ: . . . Այդ ազդեցությունները կարող են ազատորեն մտնել և մտնում են տուն: Սատանան [շատ խելացի է]: Նա կարիք չունի ջարդելու դուռը»:[4]

Հայրեր, դուք պետք է լինեք առաքինության պահապաններ: «Քահանայություն կրողը *առաքինի* է: Առաքինի պահվածքը ենթադրում է, որ [դուք ունեք] մաքուր մտքեր և մաքուր գործեր: . . . Առաքինությունը . . . աստվածայնության հատկանիշ է: . . . [Այն] մոտ է սրբությանը»:[5] Երիտասարդ Կանանց քրիստոսանման արժեքները ներառում են առաքինության արժեքը: Մենք այսօր ձեզ ենք վստահում, որպեսզի միանաք մեզ, առաջնորդելով աշխարհը դեպի առաքինության վերադարձը: Դա անելու համար, դուք «պետք է առաքինություն և սրբություն գործադրեք»,[6] հանելով ձեր կյանքից այն ամենը, ինչ չար է և անհարիր Նրան, ով կրում է Աստծո սուրբ քահանայությունը: «Թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և . . . Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը»:[7] Այնպես որ, ուշադիր եղեք, թե ինչ եք դիտում կամ կարդում զվարճացնող լրատվամիջոցներում: Ձեր անձնական առաքինությունը օրինակ է ծառայելու ձեր դուստրերին, ինչպես նաև որդիներին, որպեսզի իմանան, թե ինչպիսին պետք է լինի իսկական ուժը և քաջությունը: Լինելով ձեր սեփական կյանքի, ձեր տան և ձեր երեխաների կյանքի առաքինության պահապանը, դուք ցույց եք տալիս ձեր կնոջը և դուստրերին, թե որն է իսկական սերը: Ձեր անձնական մաքրությունը ձեզ զորություն կպարգևի:

Դուք ձեր դստեր պահապանն եք ավելի, քան միայն իրավական առումով: Ներկա եղեք ձեր դստեր կյանքում: Թող նա իմանա ձեր չափանիշները, ձեր ակնկալիքները, ձեր հույսերը և երազանքները՝ նրա հաջողությունների և երջանկության վերաբերյալ: Հարցազրույց ունեցեք նրա հետ, ծանոթացեք նրա ընկերների և, երբ ժամանակը գա, նրա երիտասարդների հետ: Օգնեք նրան հասկանալ կրթության կարևորությունը: Օգնեք նրան հասկանալ, որ համեստության չափանիշը պաշտպանություն է հանդիսանում: Օգնեք նրան ընտրել այնպիսի երաժշտություն և լրատվամիջոցներ, որը հրավիրում է Հոգին և համապատասխանում է նրա աստվածային ինքնությանը: Եղեք նրա կյանքի ակտիվ մասը: Եվ եթե, իր դեռահաս շրջանում, նա ժամանակին չի վերադառնում տուն ժամադրությունից, գնացեք նրա ետևից: Նա կդիմադրի և կհայտարարի, որ դուք կործանում եք իր հասարակական կյանքը, բայց նա ներքուստ կիմանա, որ դուք սիրում եք իրեն և նրա պահապանն եք, որովհետև բավականաչափ մտահոգվում եք նրա մասին:

Դուք սովորական տղամարդիկ չեք: Նախաերկրային իրականություններում ձեր քաջության շնորհիվ դուք արժանացել եք ղեկավարներ լինելուն և քահանայության զորություն կրելուն: Այնտեղ դուք դրսևորել եք «մեծ հավատք ու բարի գործեր» և դուք այժմ այստեղ եք նույնն անելու համար:[8] Ձեր քահանայությունը ձեզ առանձնացնում է մյուսներից:

Մի քանի շաբաթ անց մեր երեք որդիները իրենց փոքր դուստրերին պետք է անուններ և օրհնություններ տան: Ես հույսով եմ, որ դա կլինի առաջինը քահանայության այն բազմաթիվ օրհնություններից, որ նրանք կստանան իրենց հայրերից, քանի որ այն աշխարհում, որում նրանք մեծանալու են, նրանք այդ օրհնությունների կարիքը կունենան: Ձեր դուստրը կփայփայի քահանայությունը և իր սրտում կվճռի, որ սա է այն, ինչ նա ցանկանում է ունենալ իր ապագա տանը և ընտանիքում: Միշտ հիշեք, «որ քահանայության իրավունքներն անբաժանորեն կապված են երկնքի զորությունների հետ» և կարող են «կառավարվել . . . միայն արդարության սկզբունքների հիման վրա»:[9]

Դուք գիտ՞եք, որ ձեր դստեր հերոսն եք: Իմ հայրը եղել է իմ հերոսը: Ես ամեն երեկո սպասում էի նրան աշխատանքից մեր տան աստիճաններին նստած: Նա բարձրացնում էր ինձ, պտտում իր շուրջը, ապա դնում իմ ոտքերը իր մեծ կոշիկների վրա և մենք պարելով տուն էինք մտնում: Ինձ դուր էր գալիս փորձել հետևել նրա յուրաքանչյուր քայլին: Մինչ այժմ ես այդպես էլ անում եմ:

Հայրեր, ձեր վկայությունը զորեղ ազդեցություն ունի ձեր դուստրերի վրա: Ես գիտեի, որ հայրս վկայություն ուներ: Ես գիտեի, որ սիրում էր Տիրոջը: Եվ որովհետև իմ հայրը սիրում էր Տիրոջը, ես նույնպես սիրում էի: Ես գիտեի, որ նա հոգ էր տանում այրիների համար, որովհետև նա արձակուրդ վերցրեց, որպեսզի ներկեր մեր հարևան այրի կնոջ տունը: Կարծում եմ, դա ամենալավ արձակուրդն էր, որը մեր ընտանիքը երբևէ անց էր կացրել, որովհետև նա սովորեցրեց ինձ ներկել: Դուք կօրհնեք ձեր դստեր կյանքը ապագա տարիների համար, եթե ուղիներ փնտրեք նրա հետ ժամանակ անցկացնելու և ձեր վկայությամբ կիսվելու:

Մորմոնի Գրքում, Աբիշը դարձի եկավ նրանից հետո, երբ նրա հայրը կիսվեց իր նշանակալից տեսիլքով: Տարիներ շարունակ նա պահել է իր սրտում այդ վկայությունը և արդարակեցորեն ապրել շատ ամբարիշտ հասարակության մեջ: Ապա եկավ ժամանակը, երբ նա այլևս չէր կարող լուռ մնալ, և նա վազեց տնից տուն՝ կիսվելով իր վկայությամբ և հրաշքով, որին ականատես էր եղել թագավորի պալատում: Աբիշի դարձի և վկայության զորությունը վճռական դեր ունեցավ մի ամբողջ հասարակություն փոխելու գործում: Այն մարդիկ, ովքեր լսեցին նրա վկայությունը, «դարձի եկան առ Տերը, [և] երբեք չհեռացան», իսկ նրանց որդիները դարձան քաջ մարտիկներ:[10]

Ինչպես ասվում է օրհներգում. «Բարձրացեք, Աստծո տղամարդիկ»: [11] Այս կոչը ուղղված է ձեզ՝ տղամարդկանց, ովքեր կրում են Աստծո սուրբ քահանայությունը: Թող որ ձեր մասին ասեն, ինչպես ասվել է Մորոնի զորապետի մասին.

«[Նա] մի ուժեղ և զորեղ մարդ էր . . . կատարյալ հասկացողության տեր, . . . մի մարդ էր, որը հաստատուն էր Քրիստոսի հավատքում: . . .

Եթե բոլոր մարդիկ եղած լինեին, և մնային, և երբևէ լինեին Մորոնիի նման, ահա, նույնիսկ դժոխքի զորությունները հավիտյան կսասանվեին . . . , դևը երբեք զորություն չէր ունենա մարդկանց զավակների սրտերի վրա»:[12]

Եղբայրներ, հայրեր, երիտասարդ տղամարդիկ, «հավատարիմ եղեք ձեր արքայական միջուկին»:[13]

Ուրեմն, ինչպե՞ս մեծացնել աղջկան: Սիրեք նրա մորը: Առաջնորդեք ձեր ընտանիքին դեպի տաճար, եղեք առաքինության պահապաններ և մեծարեք ձեր քահանայությունը: Հայրեր, ձեզ են վստահվել մեր Երկնային Հոր արքայական դուստրերը: Նրանք առաքինի են և ընտրյալ: Իմ աղոթքն է, որ դուք նրանց լավ նայեք, ամրացնեք նրանց, առաքինության օրինակ ծառայեք և ուսուցանեք նրանց գնալ Փրկչի հետքերով, քանզի Նա ապրում է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. President David O. McKay often quoted this statement of Theodore Hesburgh, in “Quotable Quotes,” *Reader’s Digest,* Jan. 1963, 25; see also *Richard Evans’ Quote Book* (1971), 11.
2. 2 Նեփի 5.27:
3. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
4. A. Theodore Tuttle, “The Role of Fathers,” *Ensign,* Jan. 1974, 67.
5. Ezra Taft Benson, “Godly Characteristics of the Master,” *Ensign,* Nov. 1986, 46.
6. Վարդապետություն և Ուխտեր 46.33:
7. Վարդապետություն և Ուխտեր 121.45,46:
8. Ալմա 13.3; տես նաև հատված 2:
9. Վարդապետություն և Ուխտեր 121.36:
10. Ալմա 23.6; տես նաև Ալմա 19.16–17; 53.10–22:
11. “Rise Up, O Men of God,” *Hymns,* no. 323.
12. Ալմա 48.11,13,17:
13. In Harold B. Lee, “Be Loyal to the Royal within You,” in *Speeches of the Year: BYU Devotional and Ten-Stake Fireside Addresses 1973* (1974), 100.

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Անվան կարևորությունը

Եկեք սովորություն ձեռք բերենք՝ . . . հստակ հնչեցնել, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է այն անունը, որով մենք պետք է ճանաչվենք, ինչպես բառացիորեն ասել է Տերն Ինքը:

Երեց Հեյլս, մեր բոլորի կողմից, մենք մեր խորին սերն ու երախտագիտությունն ենք հայտնում ձեզ, որ այստեղ եք այս առավոտ:

Հիանալի է լինել ձեզ հետ, երկրպագելով միասին այս գեղեցիկ կիրակնօրյա առավոտյան: Մկսած անցած ապրիլի գերագույն համաժողովից իմ միտքը բազմիցս կենտրոնացել է անվան կարևորության վրա: Այս անցած մի քանի ամիսների ընթացքում մի քանի թոռնիկներ են ծնվել մեր ընտանիքում: Չնայած թվում է, թե նրանք գալիս են ավելի արագ, քան ես կարող եմ հարմարվել այդ տեմպին, յուրաքանչյուր երեխա ցանկալի լրացում է մեր ընտանիքում: Յուրաքանչյուրը ստացել է հատուկ մի անուն՝ ընտրված իրենց ծնողների կողմից, անուն, որով նրանք կճանաչվեն իրենց կյանքի ընթացքում, տարբերվելով ցանկացած այլ մարդուց: Սա այդպես է ցանկացած ընտանիքի համար, ինչպես նաև աշխարհի կրոնների համար:

Տեր Հիսուս Քրիստոսը գիտեր, թե որքան կարևոր էր հստակ անուն տալ Իր Եկեղեցուն այս վերջին օրերում: Վարդապետություն և Ուխտերի 115-րդ բաժնում Նա անվանակոչում է Եկեղեցին. «Քանզի այսպես պիտի կոչվի իմ եկեղեցին վերջին օրերին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի» (հատված 4):

Եվ Բենիամին թագավորը սովորեցրեց իր ժողովրդին Մորմոնի Գրքի ժամանակներում.

«Ես կկամենայի, որ դուք ձեզ վրա վերցնեք Քրիստոսի անունը, դուք, բոլորդ, որ մտել եք ուխտի մեջ Աստծո հետ, որ լինեք մինչև ձեր կյանքի վերջը հնազանդ: . . .

Եվ ես կկամենայի, որ դուք հիշեք նաև, որ այս է անունը, որ ես ասացի պիտի տամ ձեզ, որը երբեք չպիտի ջնջվի, բացի դա լինի օրինազանցության միջոցով. հետևաբար, զգույշ եղեք, որ չօրինազանցեք, որ այդ անունը չջնջվի ձեր սրտերից» (Մոսիա 5.8, 11):

Մենք վերցնում ենք Քրիստոսի անունը մեզ վրա մկրտության ջրերում: Մենք վերականգնում ենք այդ մկրտության ազդեցությունը ամեն շաբաթ, երբ ճաշակում ենք հաղորդությունը, որը նշանակում

է, որ մենք հոժար ենք մեզ վրա վերցնել Նրա անունը, և խոստանում ենք միշտ հիշել Նրան (տես ՎԿՈ 20.77, 79)։

Արդյո՞ք մենք գիտակցում ենք, թե որքան օրհնված ենք, վերցնելով մեզ վրա Աստծո Միրելի և Միածին Որդու անունը։ Մենք հասկանու՞մ ենք, թե որքան մեծ նշանակություն ունի այն։ Փրկչի անունը միակ անունն է երկնքի տակ, որով մարդը կարող է փրկվել (տես 2 Նեփի 31.21)։

Ինչպես հիշում եք, Նախագահ Բոյդ Ք. Փաքերը քննարկեց Եկեղեցու անվան կարևորությունը անցած ապրիլի գերագույն համաժողովին։ Նա բացատրեց, որ «հնազանդվելով հայտնությանը՝ մենք կոչում ենք մեզ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի, այլ ոչ թե՝ մորմոնական Եկեղեցի» («Առաջնորդվելով Սուրբ Հոգով», *Լիահոնա,* մայիս 2011, 30)։

Քանի որ Եկեղեցու ամբողջական անունը շատ կարևոր է, ես արձագանքում եմ սուրբ գրությունների հայտնություններին, Առաջին Նախագահության 1982թ. և 2001թ. նամակների հրահանգներին և Առաքյալների այլ խոսքերին, ովքեր խրախուսել են Եկեղեցու անդամներին սովորեցնել աշխարհին, որ Եկեղեցին ճանաչված է Տեր Հիսուս Քրիստոսի անունով։ Դա է այն անունը, որով Տերը կկոչի մեզ վերջին օրը։ Դա է անունը, որով Նրա Եկեղեցին կտարբերվի մնացած բոլորից։

Ես շատ եմ մտածել այն մասին, թե ինչու է Փրկիչը Իր վերականգնված Եկեղեցուն տվել վեց բառերից կազմված այդ անունը։ Այն կարող է երկար թվալ, բայց եթե մենք մտածենք դրա մասին որպես Եկեղեցին բնութագրող գաղափարի, այն կդառնա հրաշալիորեն կարճ, անկեղծ և պարզ։ Ինչպե՞ս կարող էր որևէ նկարագրություն լինել ավելի ուղղակի ու պարզ, և միևնույն ժամանակ արտահայտվի այսքան քիչ բառերով։

Յուրաքանչյուր բառ պարզաբանող և էական է։ Դրանով նշվում է վերականգնված Եկեղեցու առանձնահատուկ դիրքը աշխարհի կրոնների շարքում։

Հիսուս Քրիստոսի Եկեղեցի բառերը հայտարարում են, որ սա Նրա եկեղեցին է։ Մորմոնի Գրքում Հիսուսը սովորեցրել է. «Եվ ինչպես կլինի այն իմ եկեղեցին, եթե այն կոչված չլինի իմ անունով։ Քանզի եթե մի եկեղեցի կոչվի Մովսեսի անունով, ուրեմն դա կլինի Մովսեսի եկեղեցին. կամ եթե այն կոչված լինի մարդու անունով [ինչպես Մորմոն], ուրեմն դա կլինի մարդու եկեղեցի. բայց եթե այն կոչված լինի իմ անունով, ուրեմն դա իմ եկեղեցին է, եթե այնպես լինի, որ նրանք կառուցված լինեն իմ ավետարանի վրա» (3 Նեփի 27.8)։

Վերջին Օրերի բառերը բացատրում են, որ դա նույն Եկեղեցին է, որը Հիսուս Քրիստոսը հաստատել էր Իր մահկանացու ծառայության ժամանակ, սակայն վերականգնված այս վերջին օրերում։ Մենք գիտենք, որ եղել է անկում կամ ուխտադրժություն, և անհրաժեշտություն էր ծագել, որպեսզի մեր օրերում Նրա ճշմարիտ և ամբողջական Եկեղեցին վերականգնվեր։

Սրբեր նշանակում է, որ դրա անդամները հետևում են Նրան և ձգտում են անել Նրա կամքը, պահել Նրա պատվիրանները և պատրաստվել կրկին ապրել Նրա և մեր Երկնային Հոր ներկայության մեջ։ *Սրբեր* բառը պարզապես վերաբերվում է նրանց, ովքեր ձգտում են դարձնել իրենց կյանքը սուրբ՝ ուխտելով հետևել Քրիստոսին։

Անունը, որը Փրկիչը տվել է Իր Եկեղեցուն, մեզ ասում է, թե ով ենք մենք և ինչին ենք հավատում։ Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը ողջ մարդկության Փրկիչն է։ Նա քավություն է արել բոլոր նրանց համար, ովքեր կապաշխարեն իրենց մեղքերը, և Նա կոտրել է մահվան կապանքները ու հնարավորություն է տվել, որ մեռելները հարություն առնեն։ Մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին։ Եվ ինչպես Բենիամին թագավորն է ասել իր ժողովրդին, ես էլ վերապնդում եմ հետևյալը այսօր մեր բոլորի համար. «Դուք հիշեք պահել [Նրա] անունը միշտ գրված ձեր սրտերում» (Մոսիա 5.12)։

Մեզ խնդրել են կանգնել որպես Նրա վկաներ «բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում» (Մոսիա 18.9)։ Սա մասնավորապես նշանակում է, որ մենք պետք է հոժար լինենք ուրիշներին տեղեկացնել, թե ում ենք մենք հետևում և ում Եկեղեցուն ենք պատկանում՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն։ Մենք հիարկե ուզում ենք անել սա սիրո և վկայության հոգով։ Մենք ուզում ենք հետևել Փրկչին, հայտարարելով պարզ և հասարակ ձևով, ավելի շատ՝ խոնարհաբար, որ մենք Նրա Եկեղեցու անդամներն ենք։ Մենք հետևում ենք Նրան Վերջին Օրերի Սրբեր՝ վերջին օրերի աշակերտներ լինելով։

Մարդկանց և կազմակերպություններին հաճախ ուրիշները մականուն են տալիս։ Մականունը կարող է անվան կրճատ ձևը լինել,

կամ այն կարող է տրվել որևէ դեպքից հետո կամ ինչ-որ ֆիզիկական կամ այլ առանձնահատկության պատճառով: Չնայած մականունները չունեն միևնույն կարգավիճակն ու նշանակությունը, ինչպես իրական անունները, դրանք կարող են պատշաճ օգտագործվել:

Տիրոջ Եկեղեցին՝ թե նախկինում, թե մեր ժամանակներում, ունեցել է մականուններ: Նոր Կտակարանի ժամանակներում Սրբերը կոչվել են *Քրիստոնյաներ*, քանի որ հրապարակայնորեն խոստովանում էին, որ հավատում էին Հիսուս Քրիստոսին: Այդ անունը, որը սկզբում օգտագործվեց նրանց նսեմացնելու նպատակով, այժմ բարձր արժանիք կրող անուն է և մեզ համար պատիվ է Քրիստոնյա Եկեղեցի կոչվելը:

Մեր անդամները կոչվել են *Մորմոններ*, քանի որ մենք հավատում ենք Մորմոնի Գրքին՝ Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին: Ուրիշները կարող են փորձել օգտագործել *Մորմոն* բառը ավելի լայնորեն, ընդգրկելով և վկայակոչելով նրանց, ովքեր թողել են Եկեղեցին և կազմավորել մի շարք առանձնացած խմբեր: Այսպիսի օգտագործումը տանում է միայն շփոթության: Մենք շնորհակալ ենք զանգվածային լրատվամիջոցներին, որոնք փորձում են շրջանցել *Մորմոն* բառի այնպիսի օգտագործումը, որը կարող է պատճառ դառնալ, որ մարդիկ շփոթեն Եկեղեցին առանձնացած խմբերի հետ: Թույլ տվեք ինձ պարզորոշ կերպով հայտարարել, որ ոչ մի խմբակցություն, ներառյալ նրանք, ովքեր կոչում են իրենց Ֆունդամենտալիստ Մորմոններ կամ մեր անվան այլ տարբերակներով, ոչ մի առնչություն չունեն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հետ:

Մինչդեռ *Մորմոնը* Եկեղեցու լրիվ և ճիշտ անունը չէ, և թեև այն ի սկզբանե տրված է մեր նսեմացնողների կողմից մեր վաղ տարիների հալածանքների ժամանակ, այն դարձել է ընդունելի մականուն, որը վերաբերվում է անդամներին, և ոչ թե կազմակերպությանը: Մենք կարիք չունենք դադարել *Մորմոն* անունը օգտագործելը, եթե այն

պատշաճ է, բայց մենք պետք է շարունակենք կարևորություն տալ Եկեղեցու լրիվ և ճիշտ անվանը: Այլ կերպ ասած, մենք պետք է խուսափենք «Մորմոնական Եկեղեցի» արտահայտությունից:

Տարիների ընթացքում, երբ ես հանձնարարություններ էի կատարում աշխարհով մեկ, ինձ բազում անգամներ հարցնում էին, թե արդյոք ես Մորմոնական Եկեղեցուց եմ: Իմ պատասխանը եղել է՝ «Ես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ եմ: Քանի որ մենք հավատում ենք Մորմոնի Գրքին, որը կոչված է հին ժամանակների ամերիկացի մարգարե առաջնորդի անունով և հանդիսանում է ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, մենք երբեմն կոչվում ենք Մորմոններ»: Ամեն անգամ այս պատասխանը լավ է ընդունվել և, փաստորեն, հնարավորություններ է առաջ բերել բացատրելու ավետարանի լրիվության վերականգնումն այս վերջին օրերում:

Եղբայրներ և քույրեր, միայն մտածեք, թե ինչ ազդեցություն մենք կարող ենք ունենալ, եթե պատասխանենք, պարզապես Եկեղեցու լրիվ անունն օգտագործելով, ինչպես որ Տերն է պատվիրել անել: Եվ եթե դուք չեք կարող անմիջապես օգտագործել լրիվ անունը, գոնե ասացեք՝ «Ես Հիսուս Քրիստոսի Եկեղեցուց եմ», իսկ հետո բացատրեք՝ «Վերջին Օրերի Սրբերի»:

Ոմանք կարող են հարցնել ինտերնետային կայքերի մասին, ինչպես օրինակ՝ Mormon.org, ինչպես նաև Եկեղեցու նախաձեռնած զանգվածային լրատվամիջոցների քարոզարշավի մասին: Ինչպես ես ասացի, անդամների մասին խոսելիս *Մորմոններ* բառն օգտագործելը երբեմն պատշաճ է: Որպես հարմար տարբերակ, Եկեղեցուց դուրս գտնվողները մեզ փնտրում են այդ տերմինով: Բայց հենց դուք բացում եք Mormon.org, Եկեղեցու լրիվ անունը բացատրվում է հենց առաջին էջի վրա և այն հայտնվում է յուրաքանչյուր լրացուցիչ էջի վրա: Անիմաստ է ակնկալելը, որ մարդիկ օգտագործեն Եկեղեցու լրիվ անունը, երբ փնտրում են մեզ կամ փորձում են բացել մեր կայքէջը:

Մինչ այս ամենը արդյունավետ է, այն չպետք է ետ պահի անդամներին Եկեղեցու լրիվ անունը օգտագործելու հնարավորությունից: Եկեք սովորություն ձեռք բերենք՝ մեր ընտանիքներում, Եկեղեցու միջոցառումների ժամանակ և մեր ամենօրյա հարաբերություններում հստակ հնչեցնել, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է այն անունը, որով մենք պետք է ճանաչվենք, ինչպես բառացիորեն ասել է Տերն Ինքը:

Վերջերս կատարված հանրային կարծիքի հարցումը ցույց տվեց, որ չափից շատ թվով մարդիկ դեռևս ճիշտ չեն հասկանում, որ *Մորմոն* անունը վերաբերվում է

մեր Եկեղեցու անդամներին: Եվ մարդկանց մեծամասնությունը դեռևս վստահ չեն, որ Մորմոնները Քրիստոնյա են: Նույնիսկ, երբ նրանք կարդում են աշխարհով մեկ մեր Օգնող Ձեռքեր ծրագրի մասին փոթորիկների, երկրաշարժերի, ջրհեղեղների և սովի ժամանակ, նրանք չեն նույնացնում մեր մարդասիրական ջանքերը մեզ հետ՝ որպես Քրիստոնյա կազմակերպություն: Միանշանակ, նրանց համար ավելի հեշտ կլիներ հասկանալը, որ մենք հավատում և հետևում ենք Փրկչին, եթե մենք մեզ դիմելիս ասենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: Այս կերպ նրանք, ովքեր կլսեն *Մորմոն* անունը, կկապեն այդ բառը մեր հայտնությամբ տրված անվան և մարդկանց հետ, ովքեր հետևում են Հիսուս Քրիստոսին:

Ինչպես խնդրել է Առաջին Նախագահությունը 2001թ. փետրվարի 23-ի նամակում. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի հայտնությամբ տրված անվան օգտագործումը ավելի ու ավելի կարևոր է դառնում ամբողջ աշխարհում Փրկչի անունը հայտարարելու մեր պարտականության մեջ: Ուստի, մենք խնդրում ենք, որ երբ մենք դիմում ենք Եկեղեցուն, օգտագործենք դրա լրիվ անունը, որտեղ որ հնարավոր է»:

1948թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին, Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է. «Եղբայրներ և քույրեր, երբ դուք դուրս գաք այստեղից, դուք կարող է շփվեք աշխարհի մի շարք կրոնական կազմակերպությունների հետ, բայց հիշեք, որ միայն մեկ եկեղեցի կա ամբողջ աշխարհում, որն աստվածային կարգադրությամբ կրում է Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ անունը» (in Conference Report, Oct. 1948, 167):

Եղբայրներ և քույրեր, թող որ մենք հիշենք սա, երբ հեռանանք համաժողովից: Թող Նրա մասին մեր վկայությունները և Նրա հանդեպ մեր սերը միշտ լինեն մեր սրտերում, ես խոնարհաբար աղոթում եմ Նրա՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կանգնեք սուրբ տեղերում

Մեր Երկնային Հոր հետ հաղորդակցվելը, այդ թվում մեր աղոթքները Նրան և Նրա ոգեշնչումը մեզ, անհրաժեշտ է, որպեսզի մենք դիմակայենք կյանքի փոթորիկներին ու փորձանքներին:

Հմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք հրաշալի ուղերձներ լսեցինք այս առավոտ, և ես գովաբանում եմ բոլոր խոսնակներին: Մենք առանձնապես ուրախ ենք, որ Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը կրկին մեզ հետ է և ապաքինված է զգում: Մենք սիրում ենք քեզ, Բոբ:

Խորհելով այն մասին, ինչ ուզում եմ ասել ձեզ այս առավոտ՝ ես զգացել եմ, որ պետք է կիսվեմ որոշ մտքերով ու զգացմունքներով, որոնք համարում եմ՝ տեղին են և ժամանակին. Ես աղոթում եմ, որ առաջնորդություն ունենամ խոսքերս ասելիս:

Ես ապրում եմ այս աշխարհում արդեն 84 տարի: Որպեսզի մի քիչ պատկերացում կազմեք, ես ծնվել է նույն թվականին, երբ Չարլզ Լինդբերգը առաջին անգամ միայնակ չվերթ կատարեց Նյու Յորքից մինչև Փարիզ մեկ շարժիչով, մեկ տեղանոց ինքնաթիռով: Շատ բան է փոխվել 84 տարիների ընթացքում: Մարդը վաղուց գնացել է լուսին ու վերադարձել: Փաստորեն, երեկվա գիտական վիպագրությունը դարձել է այսօրվա իրողությունը: Եվ այդ իրողությունը, մեր ժամանակների տեխնաբանության շնորհիվ, փոխվում է՝ այնքան արագ, որ մենք հազիվ ենք կարողանում քայլել դրան համընթաց, ավելի շուտ՝ հետ ենք մնում: Նրանց համար, ովքեր հիշում են սկավառակով հեռախոսներն ու ձեռքի տպագրական մեքենաները, այսօրվա տեխնաբանությունն ավելին է, քան պարզապես զարմանալի:

Մեծ արագությամբ զարգանում է նաև հասարակության բարոյական կողմնացույցը: Վարքագծերը, որոնք ժամանակին անվայել և անբարոյական էին համարվում, այժմ ոչ միայն հանդուրժելի են դառնում, այլ շատերի կողմից հավանության են ստանում:

Վերջերս մի հոդված կարդացի *Wall Street Journal* լրագրում, որի հեղինակը Մեծ Բրիտանիայի գլխավոր ռաբբին՝ Ջոնաթան Սաքսն էր: Ի թիվս այլ բաների, նա գրում է. «1960-ականներին արևմտյան գրեթե բոլոր հասարակություններում բարոյական հեղափոխություն կատարվեց, երբ մարդիկ սկսեցին հրաժարվել բարոյական զսպվածության

ավանդական չափանիշից: «Մերն է այն ամենն, ինչ քեզ անհրաժեշտ է», երգում էին Բիթլզ համույթի տղաները: Հրեա-քրիստոնեական բարոյական օրենքները թողնվեցին ետևում: Դրանց փոխարինեց *«Արա այն, ինչ քեզ հարմար է»* կարգախոսը: Տասը պատվիրանները վերաձևակերպվեցին որպես տասը ստեղծարար առաջարկություններ»:

Ռաբբի Սաքսը շարունակում է՝ զանգատվելով.

«Մենք ծախսում ենք մեր բարոյական կարողությունները նույն անխոհեմությամբ, ինչպես ծախսում ենք մեր ֆինանսական կարողությունները . . .

[Աշխարհի] շատ տեղեր կան, որտեղ կրոնն անցյալի բան է և չկա հակընդդեմ ձայն այն մշակույթին, որը սովորեցնում է՝ գնիր, ծախսիր, հագիր, քեզ ցույց տուր, որովհետև դու արժանի ես: Ուղերձն այն է, որ բարոյականությունը հնաոճություն է, խղճմտանքը՝ թույլերի համար է, և միակ գերակշռող պատվիրանը սա է. «Միայն թե մի՛ բռնվիր»:[1]

Իմ եղբայրներ և քույրեր, սա, ցավոք, ճիշտ նկարագիր է մեզ շրջապատող աշխարհի մեծ մասի համար: Բայց մի՞թե մենք պետք է հուսահատ մեր ձեռքերը ծալենք ու ոչինչ չանելով մտածենք, թե արդյոք կգոյատևենք նման աշխարհում: Ո՛չ, մենք ունենք Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր կյանքում և գիտենք, որ բարոյականությունը հնաոճություն չէ, որ մեր խղճմտանքը տրված է առաջնորդվելու համար, և որ մենք պատասխանատու ենք մեր գործողությունների համար:

Չնայած աշխարհը փոխվել է, Աստծո օրենքները մնում են անփոփոխ: Դրանք չեն փոխվել, դրանք չեն փոխվի: Տասը պատվիրաններն իրականում պատվիրաններ են: Դրանք առաջարկություններ *չեն* : Դրանք նույնքան անհրաժեշտ են այսօր, որքան երբ Աստված դրանք տվեց Իսրայելի զավակներին: Եթե միայն ականջ դարձնենք, մենք կլսենք Աստծո ձայնի արձագանքն այստեղ և այժմ մեզ հետ խոսելիս.

«Բացի ինձանից ուրիշ աստուածներ չունենաս:

Քեզ համար կուռք չշինես . . .

Քո Եհովա Աստծո անունը դատարկ տեղը չհիշես . . .

«Հիշիր հանգստության օրը նորան սուրբ պահելու համար: . . .

Պատվիր քո հորը և քո մորը: . . .

Սպանություն մի անիր:

Շնություն մի՛ անիր:

Գողություն մի՛ անիր:

Սուտ վկայություն մի՛ տուր: . . .

Ուրիշի ունեցվածքը մի՛ ցանկացիր»:[2]

Մեր վարքագիծն անփոփոխ է. այն սակարկելի չէ: Այն գտնվում է ոչ միայն տասը պատվիրաններում, այլ նաև սարի քարոզի մեջ, որը մեզ տրվել է Փրկչի կողմից, երբ Նա քայլում էր երկրի վրա: Այն գտնվում է Նրա բոլոր ուսմունքներում: Այն գտնվում է ժամանակակից հայտնության խոսքերում:

Մեր Երկնային Հայրը նույնն է երեկ, այսօր և հավիտյան: Մորմոն մարգարեն ասում է մեզ, որ Աստված «անփոփոխ է՝ ողջ հավերժությունից ողջ հավերժություն»:[3] Այս աշխարհում, ուր գրեթե ամեն ինչ կարծես թե փոխվում է, Նրա հաստատունությունը մի բան է, որին կարող ենք ապավինել, մի խարիսխ, որից կարող ենք բռնվել և անվտանգ մնալ, որ չլինի թե քշվենք դեպի օտար ջրեր:

Ժամանակ առ ժամանակ ձեզ կարող է թվալ, թե նրանք, որ աշխարհում են, ունեն ավելի շատ զվարճանք, քան դուք: Ձեզանից ոմանք կարող են սահմանափակված զգալ վարքագծի այն չափանիշներից, որոնց մենք հետամուտ ենք որպես Եկեղեցի: Սակայն, իմ եղբայրնե՛ր և քույրեր, ես հայտարարում եմ ձեզ, որ չկա *ոչինչ*, որը կարող է մեր կյանքին ավելի շատ ուրախություն տալ կամ մեր հոգիներին ավելի շատ խաղաղություն բերել, քան Հոգին, որը կարող է այցելել մեզ, երբ մենք հետևում ենք Փրկչին և պահում պատվիրանները: Այդ Հոգին չի կարող ներկա գտնվել այն տեսակի միջոցառումներում, որոնց այդքան շատ մասնակցում են աշխարհում: Պողոս Առաքյալը հայտարարել է ճշմարտությունը, որ «շնչավոր մարդն Աստծո Հոգու բաները չէ ընդունում. որովհետև նրանք հիմարություն են նրա համար. և չէ կարող էլ գիտենալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում»:[4] *Բնական մարդ* տերմինը կարող է վերաբերել մեզանից յուրաքանչյուրին, եթե մենք թույլ տանք, որ այդպես լինի:

Մենք պետք է աչալուրջ լինենք աշխարհում, որն այնքան հեռացել է հոգևորից: Կարևոր է, որ մենք մերժենք ցանկացած բան, որը չի համապատասխանում մեր չափանիշներին, չմոռանալով այն, ինչը մենք ցանկանում ենք

առավելագույնը՝ հավերժական կյանք Աստծո արքայությունում: Ժամանակ առ ժամանակ փոթորիկները կծեծեն մեր դռները, քանզի դրանք մեր մահկանացու կյանքի փորձառության անխուսափելի մասն են: Սակայն մենք շատ ավելի լավ պատրաստված կլինենք գործ ունենալու դրանց հետ՝ սովորելու դրանցից, հաղթահարելու դրանք, եթե կանգնած լինենք ավետարանի հիմքի վրա և ունենանք Փրկչի սերը մեր սրտերում: Եսայիա մարգարեն հայտարարել է, որ «արդարության գործը կլինի խաղաղություն և արդարության արդյունքը՝ հանգիստ ու ապահովություն հավիտյան»:[5]

Որպես աշխարհում *լինելու*, բայց աշխարհից *չլինելու* միջոց, անհրաժեշտ է, որ մենք աղոթքի միջոցով շփվենք մեր Երկնային Հոր հետ: Նա ցանկանում է, որ մենք դա անենք: Նա կպատասխանի մեր աղոթքներին: Փրկիչը հորդորել է մեզ, ինչպես գրված է 3 Նեփիի 18-րդ գլխում՝ «արթուն մնացեք և միշտ աղոթեք, որ չլինի թե մտնենք գայթակղության մեջ. քանզի Սատանան փափագում է տիրել ձեզ: . . .

Ուստի դուք պետք է միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով:

Եվ ինչ որ դուք խնդրեք Հորը, իմ անունով, ինչ որ ճիշտ է, հավատալով, որ դուք կստանաք, ահա այն կտրվի ձեզ»:[6]

Ես ստացել եմ իմ վկայությունը աղոթքի զորության մասին, երբ 12 տարեկան էի: Ես ծանր աշխատանք էի կատարել, որպեսզի որոշակի գումար վաստակեմ, և ինձ հաջողվել էր հինգ դոլար տնտեսել: Սա Մեծ ճգնաժամի տարիներին էր, երբ հինգ դոլարը զգալի գումար էր, հատկապես 12 տարեկան պատանու համար: Ես տվեցի հինգ դոլար կազմող իմ բոլոր մետաղադրամներն իմ հայրիկին, և նա տվեց ինձ հինգ դոլարանոց թղթադրամ: Ես գիտեմ, որ ծրագրել էի մի որոշակի բան գնել այդ հինգ դոլարով, թեև տարիներ անց ես չեմ կարողանում հիշել, թե դա ինչ էր: Ես պարզապես հիշում եմ, թե որքան կարևոր էր այդ գումարն ինձ համար:

Այդ ժամանակ մենք չունեինք սեփական լվացքի մեքենա, այնպես որ մայրս ամեն շաբաթ մեր հագուստներն ուղարկում էր լվացքատուն: Մի երկու օր անց մեզ վերադարձնում էին այսպես կոչված «թաց լվացքը», որը մայրս կախում էր տան ետևի մեր լվացքի պարանին, որ չորանա:

Ես իմ հինգ դոլարանոցը ծալել դրել էի ջինսիս գրպանում, և ինչպես, հավանաբար, կարող եք կռահել, իմ ջինսն ուղարկվել էին լվացքատուն գումարը գրպանում: Երբ ես հասկացա, թե ինչ է տեղի ունեցել, ես տարվեցի հիվանդագին անհանգստությամբ: Ես գիտեի, որ, սովորաբար, լվացքից առաջ գրպանները ստուգվում էին: Եթե իմ գումարը չհայտնաբերվեր և չվերցվեր այդ ժամանակ, ապա գրեթե համոզված էի, որ լվացքի ընթացքում այն կընկներ և լվացքատան աշխատողն այն կվերցներ, քանի որ նույնիսկ եթե ցանկանար, վերադարձնել, նա չէր պատկերացնի, թե գումարը ում պետք է վերադարձվի: Իմ հինգ դոլարը ետ ստանալու հավանականությունը խիստ քիչ էր՝ մի փաստ, որը հաստատեց թանկագին մայրս, երբ նրան ասացի, որ գումարը թողել եմ իմ գրպանում:

Ես ցանկանում էի այդ փողը. այդ փողն ինձ անհրաժեշտ էր. ես շատ ծանր աշխատանք էի կատարել այդ փողը վաստակելու համար: Ես հասկացա, որ ընդամենը մեկ բան կա, որ կարող եմ անել: Իմ ծայրահեղ վիճակում ես դիմեցի իմ Երկնային Հորը և Նրան խնդրեցի ինչ-որ կերպ ապահով պահել իմ գումարը գրպանում՝ մինչև մեր թաց լվացքի վերադարձը:

Երկու շատ երկար օրեր անց, երբ գիտեի, որ ժամանակն էր, որ առաքման բեռնատարը բերի մեր լվացքը, ես նստել էի պատուհանի մոտ ու սպասում էի: Երբ բեռնատարը կանգ առավ կողնակին, սիրտս սկսեց տրոփել: Հենց որ թաց շորերը տուն հասան, ես վերցրեցի ջինսս ու վազեցի իմ ննջասենյակ: Ձեռքս դողդողալով գրպանս տարա: Երբ անմիջապես ոչինչ չգտա, մտածեցի վերջ՝ կորել է: Ապա իմ մատները հպվեցին հինգ դոլարանոց թաց թղթադրամին: Մինչ գրպանիցս հանում էի այն, մի հանգստություն թափվեց ինձ վրա: Ես երախտագիտության սրտառուչ աղոթք ասեցի իմ Երկնային Հորը, քանի որ գիտեի, որ նա պատասխանել էր իմ աղոթքին:

Դրանից հետո ես անթիվ աղոթքների պատասխան եմ ստացել: Ոչ մի օր չի եղել, որ ես չհաղորդակցվեմ իմ Երկնային Հոր հետ աղոթքով: Ես փայփայում եմ այդ թանկագին հարաբերությունը, առանց որի, բառիս բուն իմաստով, ես կորած կլինեի: Եթե դուք հիմա չունեք նման հարաբերություններ ձեր Երկնային Հոր հետ, ես հորդորում եմ ձեզ աշխատել այդ նպատակի ուղղությամբ: Երբ դուք անեք այդ, դուք իրավունք կունենաք ստանալ Նրա ոգեշնչումն ու առաջնորդությունը ձեր կյանքում՝ անհրաժեշտ բան մեզանից յուրաքանչյուրի համար, եթե մենք ուզում ենք հոգևորապես գոյատևել այստեղ, երկրի վրա մեր պանդխտության ընթացքում: Նման ոգեշնչումն ու առաջնորդությունը պարգևներ են, որ Նա ազատ տալիս է, եթե մենք ձգտում ենք դրանց: Ի՜նչ արժեքավոր բաներ են դրանք:

Ես միշտ խոնարհ և երախտապարտ եմ զգում, երբ իմ Երկնային Հայրը շփվում է ինձ հետ՝ ոգեշնչելով ինձ: Ես սովորել եմ ճանաչել այն, վստահել և հետևել դրան: Կրկին ու կրկին անգամ, ես ստացել եմ նման ոգեշնչում: Մեկ այլ դրամատիկական փորձառություն է տեղի ունեցել 1987թ. օգոստոսին Գերմանիայի Ֆրանկֆուրտ Տաճարի նվիրագործման ընթացքում: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը մեզ հետ էր եղել նվիրագործման առաջին մեկ-երկու օրը, սակայն վերադարձել էր տուն, և ուստի, իմ հնարավորությունը եղավ անցկացնել մնացած նիստերը:

Շաբաթ օրը մենք նիստ ունեցանք հոլանդացի մեր անդամների համար, ովքեր Ֆրանկֆուրտի Տաճարի տարածքում էին: Ես լավ ծանոթ էի Նիդեռլանդների մեր հրաշալի ղեկավարներից մեկի՝ Եղբայր Պիտեր Մյուրիկի հետ: Նիստից մի փոքր առաջ, ես հստակ տպավորություն զգացի, որ պետք է Եղբայր Մյուրիկին խոսելու հնարավորություն տամ իր ընկեր հոլանդական անդամների նիստի ընթացքում, և

որ, փաստորեն, նա պետք է առաջին խոսնակը լինի: Տեսած չլինելով նրան տաճարում այդ առավոտյան՝ ես մի երկտող փոխանցեցի Երեց Կառլոս Ի. Էսեին՝ մեր տարածքի նախագահին, հարցնելով, թե արդյոք Պիտեր Մյուրիկը ներկա էր այդ նիստում: Նիստը սկսելու համար ոտքի կանգնելուց առաջ, ես ստացա պատասխան գրություն: Երեց Էսեյը նշել էր, որ Եղբայր Մյուրիկն այդ նիստում *չէր*, նա այլ հանձնարարության էր, և որ նա պատրաստվում էր ներկա գտնվել տաճարի նվիրագործման հաջորդ օրվա նիստին՝ զինծառայողների ցցերի հետ:

Երբ կանգնեցի ամբիոնի առաջ, որպեսզի ողջունեմ մարդկանց և հայտարարեմ ծրագիրը, ես ևս մեկ անգամ անվրեպ ոգեշնչում ստացա, որ Պիտեր Մյուրիկին պետք է հայտարարեմ որպես առաջին խոսնակ: Սա հակառակ էր իմ բոլոր բնազդներին, քանի որ հենց նոր էի լսել Երեց Էսեից, որ եղբայր Մյուրիկը հաստատ տաճարում *չէր* : Վստահելով ոգեշնչմանը, այդուամենայնիվ, ես հայտարարեցի երգչախմբի կատարումը, աղոթքը, և ապա նշեցի, որ մեր առաջին խոսնակը կլինի Եղբայր Պիտեր Մյուրիկը:

Երբ վերադարձա տեղս, նայեցի դեպի Երեց Էսեյը և տագնապ տեսա նրա դեմքին: Հետագայում նա ասաց ինձ, որ երբ ես հայտարարեցի Եղբայր Մյուրիկին որպես առաջին խոսնակ, նա չէր կարողանում հավատալ իր ականջներին: Նա գիտեր, որ ես ստացել էի նրա երկտողը, որ ես իսկապես կարդացել էի այն, և նա չէր կարող խորամուխ լինել, թե ինչու եմ ես հայտարարում Եղբայր Մյուրիկին որպես խոսնակ՝ իմանալով, որ նա տաճարում չէր:

Այս ամենը տեղի ունենալու ժամանակ Պիտեր Մյուրիկը ժողովի էր Պորտշտրասի տարածքի գրասենյակում: Մինչ ժողովն ընթանում էր, նա հանկարծ շրջվեց դեպի Երեց Թոմաս Ա. Հոկեսը, որն այդ ժամանակ տարածաշրջանային ներկայացուցիչ էր, և հարցրեց. «Քանի՞ րոպեում կարող ես ինձ տաճար հասցնել»:

Երեց Հոկեսը, որը հայտնի էր իր փոքրիկ սպորտային մեքենան արագ վարելով, պատասխանեց.

«Ես ձեզ կարող եմ այնտեղ հասցնել 10 րոպեում: Բայց ինչո՞ւ եք ուզում տաճար գնալ»:

Եղբայր Մյուրիկը խոստովանեց, որ չգիտեր, թե ինչու պետք է գնար տաճար, սակայն, գիտեր, որ պետք է գնար այնտեղ: Նրանք երկուսով անմիջապես ճանապարհվեցին դեպի տաճար:

Երգչախմբի հրաշալի կատարման ընթացքում ես նայում էի շրջապատս, մտածելով, որ ցանկացած պահի կտեսնեմ Պիտեր Մյուրիկին: Սակայն ես չտեսա նրան: Հատկանշական է, սակայն, որ ես ահազանգ չէի զգում: Ես մի քաղցր, անհերքելի հավաստիացում ունեի, որ ամեն բան լավ կլինի:

Բացման աղոթքը վերջանալիս Եղբայր Մյուրիկը ներս մտավ տաճարի առջևի դռնով, դեռևս չիմանալով, թե ինչու էր այնտեղ: Շտապելով դեպի դահլիճ՝ նա տեսավ իմ դեմքը մոնիտորի վրա և լսեց ինձ հայտարարելիս. «Այժմ մենք կլսենք եղբայր Պիտեր Մյուրիկին»:

Ի զարմանս Երեց Էսեի՝ Պիտեր Մյուրիկն անմիջապես ներս մտավ սենյակ և զբաղեցրեց իր տեղը ամբիոնի մոտ:

Նիստից հետո Եղբայր Մյուրիկը և ես քննարկեցինք այն, ինչ տեղի էր ունեցել նախքան նրա խոսելու հնարավորությունը: Ես խորհել եմ այն ոգեշնչման մասին, որը եկավ այդ օրը ոչ միայն ինձ, այլ նաև Եղբայր Պիտեր Մյուրիկին: Այդ նշանավոր փորձառությունը

անհերքելի վկայությունը է դարձել ինձ համար, որ կարևոր է արժանի լինել՝ նման ոգեշնչում ստանալու, իսկ հետո, վստահելու դրան, երբ այն գալիս է: Առանց կասկածի ես գիտեմ, որ Տերը նախատեսել էր նրանց համար, ովքեր ներկա էին Ֆրանկֆուրտի Տաճարի նվիրագործման այդ նիստին, լսել Նրա ծառայի՝ եղբայր Պիտեր Մյուրիկի հզոր և հուզիչ վկայությունը:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մեր Երկնային Հոր հետ հաղորդակցվելը, այդ թվում մեր աղոթքները Նրան և Նրա ոգեշնչումը մեզ, անհրաժեշտ է, որպեսզի մենք դիմակայենք կյանքի փոթորիկներին ու փորձանքներին: Տերը հրավիրում է մեզ. «Մոտեցեք ինձ, և ես կմոտենամ ձեզ. փնտրեք ինձ ջանասիրաբար, և կգտնեք ինձ»:[7] Երբ մենք դա անենք, նա մեր կյանքը կլցնի Իր Հոգով, տալով մեզ ցանկություն և քաջություն՝ ամուր և կայուն կանգնելու արդարությամբ՝ «կանգնելու . . . սուրբ տեղերում և չշարժվելու»:[8]

Մինչ փոփոխության քամիները պտտվում են մեր շրջապատում և հասարակության բարոյական մանրաթելերը շարունակում են քայքայվել մեր աչքի առաջ, թող որ մենք հիշենք Տիրոջ թանկարժեք խոստումները նրանց, ովքեր ապավինում են նրան. «Մի վախենար, որովհետև ես քեզ հետ եմ. մի վեհերիր, որովհետև ես քո Աստվածն եմ. ես զորացրել եմ քեզ. նաև օգնել եմ քեզ. նաև քեզ հաստատել եմ իմ արդարության աջով»:[9]

Ինչպիսի խոստում: Թող որ այդպիսին լինի մեր օրհնությունը. դա իմ անկեղծ աղոթքն է մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Jonathan Sacks, “Reversing the Decay of London Undone,” *Wall Street Journal,* Aug. 20, 2011, online.wsj.com; emphasis added. *Note:* Lord Sacks is the chief rabbi of the United Hebrew Congregations of the Commonwealth.
2. Ելից 20.3–4, 7, 8, 12–17:
3. Մորոնի 8.18:
4. Ա Կորնթացիս 2.14:
5. Եսայիա 32.17:
6. 3 Նեփի 18.18–20:
7. Վարդապետություն և Ուխտեր 88.63:
8. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
9. Եսայիա 41.10:

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ | *Հոկտեմբերի 2, 2011թ.*



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ուխտեր

Երբ մենք գիտակցում ենք, որ մենք ուխտի զավակներ ենք, մենք հասկանում ենք, թե ով ենք մենք և թե ինչ է մեզանից ակնկալում Աստված:

Ռուսաստանի Մոսկվա քաղաքում առաջին ցիցը ստեղծելու վերջերս ունեցած հանձնարարությունից մեկ շաբաթ անց[1] ես հաճախեցի շրջանի համաժողովին Ս. Պետերբուրգում: Մինչ խոսում էի իմ երախտագիտության մասին վաղ շրջանի միսիոներների և տեղական ղեկավարների հանդեպ, ովքեր ամրացրեցին Եկեղեցին Ռուսաստանում, ես հիշատակեցի Վլյաչեսլավ Եֆիմովի անունը: Նա առաջին ռուս նորադարձն էր, որ դարձել էր միսիայի նախագահ: Նա և նրա կինը հրաշալիորեն կատարեցին այդ հանձնարարությունը: Իրենց միսիան ավարտելուց հետո որոշ ժամանակ անց, ցավոք սրտի, Նախագահ Եֆիմովը անսպասելիորեն մահացավ:[2]

Մինչ խոսում էի այս պիոներ զույգի մասին, Հոգին հուշեց ինձ հարցնել հավաքվածներին, թե արդյոք նրա կինը ներկա էր: Մենյակի վերջում մի կին կանգնեց: Ես հրավիրեցի նրան մոտենալ խոսափողին: Այո, դա Քույր Գալինա Եֆիմովան էր: Նա խոսեց վստահությամբ և ազդեցիկ վկայություն բերեց Տիրոջ, Նրա ավետարանի և Նրա վերականգնված Եկեղեցու մասին: Նա և նրա ամուսինը կնքված էին սուրբ տաճարում: Նա ասաց, որ նրանք հավերժորեն միացված էին: Նրանք դեռևս միսիոներական զույգեր էին, նա վարագույրի այս կողմում, ամուսինը՝ վարագույրի մյուս կողմում:[3] Երջանկության արցունքներով նա շնորհակալություն հայտնեց Աստծուն տաճարային սուրբ ուխտերի համար: Ես նույնպես արտասվեցի, լիովին գիտակցելով, որ հավիտենական միությունը, որի վառ օրինակն էր այս հավատարիմ զույգը, սուրբ ուխտեր կապելու, պահելու և պատվելու արդար արդյունքն էր:

Ճշմարիտ կրոնի կարևոր գաղափարներից մեկը սուրբ ուխտն է: Իրավաբանական լեզվով՝ ուխտը ընդհանուր առմամբ պայմանագիր է՝ կնքված երկու կամ ավելի կողմերի միջև: Բայց կրոնի առումով, ուխտը շատ ավելի մեծ նշանակություն ունի: Այն սուրբ խոստում է Աստծո հետ: Նա է որոշում պայմանները: Յուրաքանչյուր անհատ կարող է ընտրել՝ ընդունել կամ մերժել այդ պայմանները: Եթե մեկը ընդունում է ուխտի պայմանները և հնազանդվում է Աստծո օրենքին, նա ստանում է ուխտի հետ կապված



օրհնությունները: Մենք գիտենք, որ «եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն»:[4]

Դարեր շարունակ Աստված ուխտեր է կապել Իր զավակների հետ:[5] Նրա ուխտերը առկա են ողջ փրկության ծրագրում և ուստի հանդիսանում են Նրա ավետարանի լրիվության մասը:[6] Օրինակ, Աստված խոստացավ Փրկիչ ուղարկել Իր զավակների համար,[7] խնդրելով նրանց դրա դիմաց հնազանդվել Իր օրենքին:[8]

Աստվածաշնչում մենք կարդում ենք Հին Աշխարհի տղամարդկանց ու կանանց մասին, ովքեր ճանաչված էին որպես ուխտի զավակներ: Ի՞նչ ուխտի: «Այն ուխտի, որ Աստուած մեր հայրերի հետ հաստատեց, եւ Աբրահամին ասեց. Եւ քո զաւակովը պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը»:[9]

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Նոր Աշխարհի մարդկանց մասին, ովքեր նույպես ճանաչված էին որպես ուխտի զավակներ:[10] Հարություն առած Տերը տեղեկացրեց նրանց հետևյալի մասին. «Ահա, դուք եք մարգարեների զավակները. և դուք Իսրայելի տնից եք. և դուք այն ուխտից եք, որ Հայրն արել էր ձեր հայրերի հետ՝ ասելով Աբրահամին. Եվ քո սերնդով երկրի բոլոր ցեղերը կօրհնվեն»:[11]

Փրկիչը բացատրել է որպես ուխտի զավակներ ճանաչված լինելու կարևորությունը: Նա ասել է. «Հայրը նախ ինձ բարձրացնելով ձեզ համար և ուղարկելով՝ օրհնելու ձեզ, հեռու շրջելով ձեզանից ամեն մեկին իր անօրինություններից. և դա՝ որովհետև դուք ուխտի զավակներն եք»:[12]

Ուխտը, որն Աստված կապեց Աբրահամի,[13] իսկ ավելի ուշ վերահաստատեց Իսահակի[14] և Հակոբի[15] հետ, անսահման մեծ կարևորություն ունի: Այն պարունակում է մի շարք խոստումներ, ներառյալ սրանք.

- Հիսուս Քրիստոսը պետք է ծնվեր Աբրահամի սերնդից:
- Աբրահամի սերունդը բազմաթիվ կլիներ, լիազորված լինելով ունենալու հավերժական աճ և նաև կրելու քահանայություն:
- Աբրահամը պետք է դառնար շատ ազգերի հայրը:
- Որոշակի երկրներ պետք է ժառանգվեն նրա սերնդի կողմից:
- Երկրի բոլոր ազգերը կօրհնվեն նրա սերնդի կողմից:[16]
- Եվ այդ ուխտը կլիներ հավիտենական՝ նույնիսկ մինչև «հազար ազգ»:[17]

Այս խոստումներից մի քանիսն իրականացել են, մյուսները դեռ պիտի իրականանան: Ես մեջբերում եմ Մորմոնի Գրքի վաղեմի մարգարեություններից. «Մեր հայրը՝ [Լեքին], միայն մեր սերնդի վերաբերյալ չի խոսել, այլ նաև ողջ Իսրայելի տան, նշելով ուխտը, որ պետք է իրականանա *վերջին օրերում*. այն ուխտը, որ Տերն արեց մեր հայր Աբրահամին»:[18] Արդյոք զարմանալի չէ՞: Բեթլեհեմում Հիսուսի ծնվելուց մոտ 600 տարի *առաջ* մարգարեները գիտեին, որ Աբրահամին տրված խոստումը վերջնականապես կիրականանար միայն *վերջին օրերում*:

Որպես այդ խոստումն իրականացնելու նախերգանք, Տերը հայտնվեց այս վերջին օրերում և վերանորոգեց Աբրահանին տրված այդ խոստումը: Մարգարե Ջոզեֆ Սմիթին Տերը հայտարարել է.

«Աբրահամը խոստումներ ստացավ իր սերնդի վերաբերյալ և իր երանքի պտղի համար,-դու . . .իմ ծառա Ջոզեֆ, այդ երանքից ես: . . .

Այդ խոստումը նաև ձերն է, որովհետև դուք Աբրահամից եք»:[19]

Խոստումի այս վերանորոգմամբ մենք ստացել ենք սուրբ քահանայությունն ու հավիտենական ավետարանը, ճիշտ ինչպես մարդիկ հնում: Մենք ունենք ավետարանի լրիվությունը ստանալու, քահանայության օրհնությունները վայելելու և Աստծո մեծագույն օրհնություններին արժանի լինելու իրավունքը, որը հավերժական կյանքն է:[20]

Մեզանից ոմանք Աբրահամի ուղղակի սերունդն են, մյուսները հավաքված են նրա ընտանիքում որդեգրմամբ: Տերը աչառ չէ:[21] Միասին մենք ստանում ենք այս խոստացված օրհնությունները, եթե փնտրում ենք Տիրոջը և հնազանդվում Նրա պատվիրաններին:[22] Բայց եթե մենք չենք հնազանդվում, մենք կորցնում ենք ուխտի օրհնությունները:[23] Մեզ աջակցելու համար Նրա Եկեղեցին տալիս է հայրապետական օրհնություններ, յուրաքանչյուր ստացողին տալով իր ապագայի հեռանկարը, ինչպես նաև կապը անցյալի հետ, մինչև անգամ հայտարարելով ազգատոհմի ծագումը

Ստոկհոլմ, Շվեդիա

մինչև Աբրահամը, Իսահակը և Հակոբը:[24]

Ուխտի եղբայրները իրավունք ունեն արժանանալու քահանայության երդմանը և ուխտին:[25] Եթե դուք «հավատարիմ [եք]՝ այս երկու քահանայությունները ստանալու . . . և [ձեր] կոչումը մեծարելու, [դուք] Հոգու կողմից սրբագործվում [եք]՝ ի նորացումն [ձեր] մարմնի»:[26] Դա ամենը չէ: Տղամարդիկ, ովքեր արժանիորեն ընդունում են քահանայությունը, ընդունում են Տեր Հիսուս Քրիստոսին, և նրանք, ովքեր ընդունում են Տիրոջը, ընդունում են Հայր Աստծուն:[27] Եվ նրանք, ովքեր ընդունում են Հորը, ընդունում են այն ամենն, ինչ Նա ունի:[28] Հրաշալի օրհնություններ են թափվում այս երդման և ուխտի արդյունքում արժանի տղամարդկանց, կանանց և երեխաների վրա ամբողջ աշխարհում:

Մերն է պարտականությունը օգնել իրականացնել Աբրահամի ուխտը: Մերն է սերունդը, որը նախասահմանված է և պատրաստված՝ օրհնելու աշխարհի բոլոր մարդկանց:[29] Ահա թե ինչու քահանայության պարտականությունը ներառում է միսիոներական աշխատանքը: Սպասումներից և նախապատրաստությունից հետո մոտ 4000 տարի, սա է նշանակված օրը, երբ ավետարանը պիտի տարվի երկրի ազգերին: Սա է Իսրայելի հավաքման խոստացված ժամանակը: Եվ մենք մասնակցելու հնարավորություն ունենք: Արդյոք դա ոգևորիչ չէ՞: Տերը վստահում է մեզ և մեր որդիներին, և Նա մեծապես երախտապարտ է մեր դուստրերին, ովքեր արժանիորեն ծառայում են որպես միսիոներներ Իսրայելի հավաքման այս կարևոր ժամանակներում:

Մորմոնի Գիրքը շոշափելի մի նշան է, որ Տերը սկսել է հավաքել ուխտյալ Իսրայելի Իր զավակներին:[30] Այդ գիրքը՝ գրված *մեր* օրերի համար, հայտարարում է, որ դրա նպատակներից մեկն է, որ «դուք կարող եք իմանալ, որ այն ուխտը, որը Հայրն արել է Իսրայելի զավակների հետ . . . արդեն սկսվում է կատարվել: . . . Քանզի ահա, Տերը հիշելու է իր ուխտը, որը նա արել է Իսրայելի տան իր ժողովրդին»:[31]

Իսկապես, Տերը չի մոռացել: Նա օրհնել է մեզ և մյուսներին աշխարհով մեկ Մորմոնի Գրքով: Դրա նպատակներից մեկն է «համոզել հրեային և հեթանոսին, որ Հիսուսը Քրիստոսն է»:[32] Այն օգնում է մեզ ուխտեր կապել Աստծո հետ: Այն հրավիրում է մեզ հիշել Նրան և ճանաչել Նրա Սիրելի Որդուն: Այն ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին:

Ուխտի զավակները իրավունք ունեն ստանալ Նրա վարդապետությունը և իմանալ փրկության ծրագիրը: Նրանք *հավակնում* են դրան սուրբ նշանակություն ունեցող ուխտեր կապելով: Բրիգամ Յանգն ասել է. «Բոլոր Վերջին Օրերի Սրբերը նոր և հավիտենական ուխտի մեջ են մտնում, երբ մտնում են այս Եկեղեցի: . . . Նրանք նոր և հավիտենական ուխտի մեջ են մտնում Աստծո Թագավորությանը աջակցելու համար»:[33] Նրանք ուխտը *պահում* են, Նրա պատվիրաններին հնազանդվելով:

Մկրտվելիս մենք խոստանում ենք ծառայել Տիրոջը և պահել Նրա պատվիրանները:[34] Երբ մենք ճաշակում ենք հաղորդությունը, մենք վերանորոգում ենք այդ ուխտը և հայտարարում ենք, որ հոժար ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը: Այդպիսով, մենք որդեգրվում ենք որպես Նրա որդիներ և դուստրեր և ճանաչվում ենք որպես եղբայրներ և քույրեր: Նա է Հայրը մեր նոր կյանքի:[35] Ի վերջո, սուրբ տաճարում մենք կարող ենք կցորդ ժառանգներ դառնալ հավերժական ընտանիքի օրհնություններին, ինչպես խոստացվել էր Աբրահամին, Իսահակին, Հակոբին և նրանց սերունդներին:[36] Այսպիսով, սելեստիալ ամուսնությունը վեհացման ուխտն է:

Երբ մենք գիտակցում ենք, որ մենք ուխտի զավակներ ենք, մենք հասկանում ենք, թե ով ենք մենք և թե ինչ է մեզանից ակնկալում Աստված:[37] Նրա օրենքը գրված է մեր սրտերում:[38] Նա մեր Աստվածն է և մենք Նրա ժողովուրդը:[39] Ուխտին հավատարիմ զավակները հաստատուն են մնում, նույնիսկ կյանքի անբարենպաստ շրջանում: Երբ այդ վարդապետությունը խորը արմատ է գցում մեր սրտերում, նույնիսկ մահվան խայթոցը մեղմանում է և մեր հոգևոր տոկունությունը ուժեղանում:

Ամենամեծ հաճոյախոսությունը, որին կարող ենք արժանանալ այս կյանքում, որպես ուխտը պահող ճանաչվելն է: Ուխտը պահողը պարգևներ կստանա և այս կյանքում, և այս կյանքից հետո: Սուրբ գրություններում ասվում է, որ «դուք խորհեք օրհնված և երջանիկ

վիճակի վրա նրանց, ովքեր պահում են Աստծո պատվիրանները: Քանզի, ահա, նրանք օրհնված են բոլոր բաներում, . . . և եթե նրանք հավատարիմ համբերում են մինչև վերջ, նրանք ընդունվում են երկնքում . . . և բնակվում են Աստծո հետ երբեք չվերջացող երջանկության վիճակում»:[40]

Աստված ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Նրա Եկեղեցին վերականգնվել է բոլոր մարդկանց օրհնելու համար: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Նրա մարգարեն է այսօր: Եվ մենք, որպես ուխտի *հավատարիմ* զավակներ, կօրհնվենք այժմ և հավիտյան: Սա ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մոսկվա Ռուսաստան Ցիցը բացվել է 2011թ. հունիսի 5-ին, կիրակի օրը:
2. Վյաչեսլավ Եֆիմովը Ռուսաստան Եկատերինբուրգ Միսիայի նախագահն էր 1995-ից 1998թ.: Նա մահացել է 2000թ. փետրվարի 25-ին:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 138–57:
4. Վարդապետություն և Ուխտեր 130.21:
5. Օրինակ, մեծ ջրհեղեղից հետո, Նա սաց, որ կհիշի ուխտը, որ կապվել է նրնց մեջ, և այլևս ջրհեղեղը չի կործանի բոլոր մարմնավորներին (տես Ծննդոց 9.14–15, ծանուցում 15b; from Joseph Smith Translation, Genesis 9:20):
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 66.2; 133.57:
7. Տես Հովհաննես 3.16:
8. Տես Աբրահամ 3.25:
9. Գործք 3.25:
10. Տես 3 Նեփի 20.26:
11. 3 Նեփի 20.25.
12. 3 Նեփի 20.26:
13. Տես Ծննդոց ԺԷ.1–10, 19; Ղևտացոց ԻԶ.42; Գործք Առաքելոց Գ.25; Աստվածաշնչի բառարան, «Աբրահամ, Խոստումը»:
14. Տես Ծննդոց ԻԶ.1–5, 24:
15. Տես Ծննդոց ԻԸ.1–4–4, 10–14; 35.9–13; 48.3–4:
16. Տես 13–15 ծանուցումները:
17. Երկրորդ Օրինաց Է.9; Ա Մնացորդաց ԺԶ.15; Սաղմոս 105.8:
18. 1 Նեփի 15.18; շեշտադրումն ավելացված է:
19. Վարդապետություն և Ուխտեր 132.30–31: Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին նաև ասաց, որ ինչպես Աբրահամի, այնպես էլ նա և նրա սերունդները կօրհնվեն երկրի վրա (Վարդապետություն և Ուխտեր 124.58):
20. Տես Վարդապետություն և Ուխտեր 14.7:
21. Տես Գործք 10.34–35:
22. Տես Ելից 19.5:
23. Վարդապետություն և Ուխտեր 82.10:
24. 1823թ. սեպտեմբերի 21-ին այս ուխտի գաղափարը առաջին անգամ հայտնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Մորոնի հրեշտակը հայտարարեց, որ Եղիա մարգարեն կգա որպես սուրհանդակ երկնքից՝ զավակների սրտերում սերմանելու այն խուստումների մասին գիտելիքը, որը մի ժամանակ խոստացված է եղել Իսրայելի տան հայրերին (տես Վարդապետություն և Ուխտեր 2.1–3):
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.33–34, 39–40:
26. Վարդապետություն և Ուխտեր 84.33:
27. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.35, 37:
28. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.38:
29. Տես Ալմա 13.1–9:
30. Տես 3 Նեփի 29:
31. 3 Նեփի 29.1, 3:
32. Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ:
33. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 62:
34. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.37:
35. 2 Նեփի 25.26:
36. Տես Գաղատացիս 3.29; Վարդապետություն և Ուխտեր 86.8–11:
37. Այս գաղափարը վերաբերում է մեզ. «Մեսիան մարմնում մարդկանց զավակներին հայտնվելուց շատ դարեր անց, այն ժամանակ Մեսիայի ավետարանի լրիվությունը կտրվի հեթանոսներին, իսկ հեթանոսներից՝ մեր սերնդի մնացորդին: Եվ այն օրը մեր սերնդի մնացորդը կիմանա, որ իրենք Իսրայելի տնից են, և որ իրենք Տիրոջ ուխտի ժողովուրդն են. և այն ժամանակ նրանք կիմանան և կգան իրենց նախահայրերի իմացությանը, և նաև Քավչի ավետարանի իմացությանը, որը տրվել էր իրենց հայրերին նրա կողմից. ուստի, նրանք կգան իրենց Քավչի և նրա վարդապետության ամեն մի կետի իմացությանը, որպեսզի նրանք կարողանան իմանալ ինչպես գան դեպի նա և փրկվեն» (1 Նեփի 15.13–14):
38. Տես Եսայիա 55.3; Երեմիա 31.33; Հռովմեացիս 2.15; Բ Կորնթացիս 3.2–3; Եբրայեցիս 10.16:
39. Տես Սաղմոս 95.7; 100.3; Երեմիա 24.7; 31.33; 32.38; Եզեկիել 11.20; 37.23, 27; Զաքարիա 8.8; Բ Կորնթացիս 6.16; Եբայեցիս 8.10:
40. Մոսիա 2.41:



Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հիսուսի ուսմունքները

Հիսուս Քրիստոսը Աստծո Միածին և Սիրելի Որդին է: . . . Նա մեր Փրկիչն է մեղքից ու մահից: Սա ամենակարևոր գիտելիքն է աշխարհում:

«Ձեզ ինչպե՞ս է երեւում Քրիստոսի համար» Մատթեոս 22.42: Այդ խոսքերով Հիսուսը շփոթեցրեց Իր ժամանակի Փարիսեցիներին: Այդ նույն խոսքերով ես հարցնում եմ իմ ընկեր Վերջին Օրերի Սրբերին և այլ Քրիստոնյաների. իրականում Հիսուս Քրիստոսի մասին ինչի՞ն եք իսկապես հավատում և ի՞նչ եք անում այդ հավատքի պատճառով:

Իմ սուրբ գրային մեջբերումների մեծ մասը կլինեն Աստվածաշնչից, որովհետև այն ծանոթ է Քրիստոնյաների մեծ մասին: Իմ մեկնաբանություններն, իհարկե, կհիմնվեն ժամանակակից սուրբ գրությունների վրա, հատկապես Մորմոնի Գրքի, թե ինչ է ուսուցանում մեզ Աստվածաշնչի այն հատվածների իմաստների մասին, որոնք այնքան մշուշապատ են, որ տարբեր Քրիստոնյաներ չեն համաձայնվում դրանց իմաստի հետ: Ես դիմում եմ հավատացյալներին, բայց ուրիշներին ևս: Ինչպես այս առավոտ մեզ ուսուցանեց Երեց Թադ Ռ. Քալիսթերը, իրենց Քրիստոնյաներ անվանող որոշ մարդիկ փառաբանում են Հիսուսին որպես մեծ ուսուցիչ, բայց ձեռնպահ են մնում Նրա աստվածայնությունը հաստատելուց: Նրանց դիմելու համար ես օգտագործել եմ հենց Իր՝ Հիսուսի խոսքերը: Մենք պետք է բոլորս հաշվի առնենք թե ինչ սովորեցրեց Նա Ինքը՝ Իր ով լինելու մասին, և ինչ անելու համար էր երկիր ուղարկվել:

Միածին Որդին

Հիսուսն ուսուցանեց, որ Նա Միածին Որդին էր: Նա ասաց.

«Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի այլ յաւիտենական կեանքն ունենայ:

Որովհետեւ Աստուած իր Որդին չուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի» (Հովհաննես 3.16–17):

Հայր Աստված հաստատեց այդ: Փոխակերպման սարի վրա ունեցած սրբազան փորձառության գագաթնակետին, Նա հայտարարեց երկնքից. «դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանել եմ. դորան լսեցեք» (Մատթեոս 17.5):

Հիսուսը սովորեցրեց մեզ նաև, որ Իր արտաքինը նույնն է ինչ Իր Երկնային Հոր արտաքինը: Իր Առաքյալներին Նա ասաց.

«Եթե ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կգիտենայիք. Եւ սորանից յետոյ կգիտենաք նորան եւ տեսաք նորան:

Փիլիպպոսը նորան ասեց. Տէր, Հայրը ցոյց տուր մեզ, եւ բաւական է մեզ:

Յիսուսը նորան ասեց. Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպոս. Ինձ տեսնողը Հօրը տեսաւ. Եւ դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ» (Հովհաննես ԺԴ.7–9):

Պողոս Առաքյալը այսպես է նկարագրել Որդուն որպես «[Հայր Աստծո] էութեան նկարագիրը» (Եբրայեցիս Ա.3, տես նաև Բ Կորնթացիս Դ.4):

Արարիչ

Հովհաննես Առաքյալը գրել է, որ Հիսուսը, որին նա կոչում է «Բանը» «նա սկզբումն Աստուծոյ մօտ էր: Ամեն ինչ նորանով եղաւ, եւ առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ» (Հովհաննես Ա.2–3): Այսպիսով, Հոր ծրագրի ներքո Հիսուս Քրիստոսը բոլոր բաների Արարիչն էր:

Իսրայելի Տեր Աստվածը

Պաղեստինում Իր ժողովրդին ծառայելու ընթացքում Հիսուսը հայտարարեց, որ Ինքը Եհովան էր, Իսրայելի Տեր Աստվածը (տես Հովհաննես Ը.58): Ավելի ուշ, հարություն առած վիճակում, Նա ծառայեց Իր ժողովրդին Ամերիկյան մայր-ցամաքում; Այնտեղ Նա հայտարարեց.

«Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը, ում մասին մարգարեները վկայել էին, որ պիտի գա աշխարհ: . . .

Ես եմ Իսրայելի Աստվածը և ողջ երկրագնդի Աստվածը» (3 Նեփի 11.10, 14):

Ի՞նչ է արել Նա մեզ համար

Ցցի համաժողովում շատ տարիներ առաջ ես հանդիպեցի մի կնոջ, որն ասաց, որ իրեն խնդրել են վերադառնալ եկեղեցի շատ տարիներ հեռու լինելուց հետո, բայց չէր կարողանում գտնել որևէ պատճառ, թե ինչու պետք է դա անի: Նրան խրախուսելու համար ես ասացի. «Երբ մտածեք, այն բոլոր բաների մասին, որ Փրկիչն արել է մեզ համար, միթե՞ դուք եկեղեցի վերադառնալու և Նրան երկրպագելու ու ծառայելու ոչ մի պատճառ չեք ունենա»: Ես ապշեցի նրա պատասխանից. «Իսկ ի՞նչ

է արել Նա ինձ համար»: Նրանց համար, ովքեր չեն հասկանում, թե ինչ է արել Փրկիչը մեզ համար, ես կպատասխանեմ այդ հարցին Իր իսկ խոսքերով և իմ իսկ վկայությամբ:

Աշխարհի կյանքը

Աստվածաշունչը հաղորդում է Հիսուսի ուսմունքը. «Ես եկայ որ կեանք ունենան, –ուսուցանեց Հիսուսը, – եւ էլ աւելի ունենան» (Հովհաննես Ժ.10): Հետագայում Նոր Աշխարհում Նա հայտարարեց. «Ես եմ լույսն ու կյանքն աշխարհի» (3 Նեփի 11.11): Նա է աշխարհի կյանքը, որովհետև Նա մեր արարիչն է, և որովհետև Նրա Հարության միջոցով, մենք բոլորս հավաստիացում ենք ստանում, որ կրկին կապրենք: Եվ կյանքը, որ Նա է տալիս մեզ միայն մահկանացու կյանք չէ: Նա ուսուցանել է. «Եւ ես յաւիտենական կեանք եմ տալիս նորանց, եւ նորանք յաւիտեան չեն կորչիլ եւ ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռիցը» (Հովհաննես Ժ.28, տես նաև Հովհաննես ԺԷ.2):

Աշխարհի լույսը

Հիսուսը նաև ուսուցանեց. «Ես եմ աշխարհքի լոյսը. ով որ իմ ետեւից գայ, նա խաւարումը չի գնալ» (Հովհաննես Ը.12): Նա նաև հայտարարեց. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը» (Հովհաննես ԺԴ.6): Նա է ճանապարհը և Նա է լույսը, որովհետև Նրա ուսմունքները լուսավորում են մեր ուղին մահկանացու կյանքում և ցույց տալիս մեզ դեպի Հայրը վերադառնալու ուղին:

Հոր կամքը կատարելը

Հիսուսը միշտ պատվում էր Հորը և հետևում Նրան: Նույնիսկ պատանի հասակում Նա հայտարարեց Իր երկրային ծնողներին. «Ի՞նչու համար էիք ինձ որոնում. Դուք չգիտեի՞ք թե պետք է, որ ես իմ Հօր տանը լինեմ» (Ղուկաս Բ.49): Որովհետեւ ես իջայ երկնքիցը, – ուսուցանեց Նա հետագայում, – որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը (Հովհաննես Զ.38, տես նաև Հովհաննես Ե.19): Եվ Փրկիչը ուսուցանեց. «Ոչ ով չի գալիս Հոր մօտ, եթե ոչ ինձանով» (Հովհաննես ԺԴ.6, տես նաև Մատթեոս ԺԱ.27):

Մենք վերադառնում ենք Հոր մոտ՝ կատարելով Նրա կամքը: Հիսուսը ուսուցանեց. «Ոչ թէ ամեն ինձ Տէր, Տէր ասողը կմտնէ երկնքի արքայութիւնը. Այլ նա որ կատարում է իմ Հօր կամքը, որ երկնքումն է» (Մատթեոս Է.21): Նա բացատրեց.

«Շատերը կասեն ինձ այն օրը, Տէր, Տէր. չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, եւ քո անունովը դեւեր հանեցինք, եւ քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք:

Եւ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց, թէ երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ» (Մատթեոս 7.22–23):

Ուրեմն ո՞վ կմտնի երկնքի արքայությունը: Ոչ թե նրանք, ովքեր պարզապես հրաշագործություններ են կատարում օգտագործելով Տիրոջ անունը, սովորեցրեց Հիսուսը, բայց միայն նա «որ կատարում է իմ Հօր կամքը, որ երկնքումն է»:

Մեծ օրինակը

Հիսուսը ցույց տվեց մեզ, թե ինչպես օրինակ լինել: Կրկին և կրկին Նա հրավիրեց մեզ հետևել Իրեն: «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, եւ ես ճանաչում եմ նորանց եւ իմ ետեւից գալիս են» (Հովհաննես Ժ.27):

Քահանայության իշխանությունը

Նա քահանայության իշխանություն տվեց Իր Առաքյալներին (տես Մատթեոս Ժ.1) և ուրիշների: Պետրոսին՝ գլխավոր Առաքյալին, Նա ասաց.«Եւ ես կտամ քեզ երկնքի արքայութեան բանալիները, եւ այն որ կապես երկրի վերայ, կապուած կլինի երկնքումը. Եւ այն որ երկրի վերայ արձակես, արձակուած կլինի երկնքումը» (Մատթեոս ԺԶ.19, տես նաև Մատթեոս ԺԸ.18):

Ղուկասը հիշատակում է, որ «Տերը . . . յոթանասուն հոգի էլ

կարգեց. եւ նորանց երկու երկու իր երեսի առաջին ուղարկեց այն բոլոր քաղաքներն եւ տեղերն, որտեղ որ ինքը գնալու էր» (Ղուկաս Ժ.17): Հետագայում այս Յոթանասունը ուրախությամբ պատմում էին Հիսուսին. «Դեւերն էլ հնազանդում են մեզ քո անունովը» (Ղուկաս Ժ.17): Ես քահանայության այդ իշխանության վկան եմ:

Սուրբ Հոգու առաջնորդությունը

Իր երկրային ծառայության վերջում Հիսուսը սովորեցրեց Իր Առաքյալներին. «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, եւ կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի» (Հովհաննես ԺԴ.26) և «նա կառաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ» (Հովհաննես ԺԶ.13):

Առաջնորդություն Նրա պատվիրաններով

Նա նաև առաջնորդում է մեզ Իր պատվիրաններով: Այդպես պատվիրեց Նա Նեփիացիներին, որ նրանք այլևս չպետք է վիճաբանություններ ունենան վարդապետության կետերի վերաբերյալ, քանզի Նա ասաց.

«Նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ:

Ահա, սա իմ վարդապետությունը չէ՝ բարկության դրդել մարդկանց սրտերը մեկմեկու դեմ. Այլ այս է իմ վարդապետությունը, որ այդպիսի բաները պիտի վերացվեն»: (3 Նեփի 11.29–30):

Կենտրոնացեք հավերժական կյանքի վրա

Նա նաև կոչ է անում մեզ կենտրոնանալ Իր վրա, ոչ թե աշխարհի բաների վրա: Կյանքի հացի մասին Իր մեծ քարոզի մեջ Հիսուսը բացատրեց հակադրությունը մահկանացու և հավերժական սնուցման միջև: «Գործեցէք ոչ թէ կորչելու կերակուրի համար, այլ այն կերակուրի, որ մնացող է յաւիտենական կեանքի մէջ. Որ մարդի Որդին կտայ ձեզ» (Հովհաննես Զ.27): Փրկիչը ուսուցանեց, որ Ինքն է Կյանքի Հացը՝ հավերժական սնուցման աղբյուրը: Խոսելով մահկանացու սնուցման մասին, որն առաջարկում է աշխարհը, ներառյալ մանանան, որ Եհովան ուղարկեց կերակրելու Իսրայելի զավակներին անապատում, Հիսուսը սովորեցրեց, որ նրանք, ովքեր ապավինում էին այս հացին, այժմ մահացել են (տես Հովհաննես Զ.49–50): Ի հակադրություն, սնուցումը, որ Նա էր առաջարկում «կենդանի հացն է, որ երկնքիցն է իջել» և Հիսուսն ուսուցանեց, «Եթե մէկն այս հացիցն ուտէ, յաւիտեան կապրի» (Հովհաննես Զ.51):

Նրա աշակերտներից ոմանք ասացին «Խիստ է այդ բանը», և այդ ժամանակվանից Նրա հետևորդներից շատերը «ետ գնացին, եւ այլեւս ման չէին գալիս նորա հետ» (Հովհաննես 6.60, 66): Ակնհայտորեն նրանք չէին ընդունել Նրա ավելի վաղ ուսմունքը, որ իրենք պետք է «առաջ Աստուծոյ արքայութիւնը . . . խնդրեն» (Մատթեոս Զ.33): Նույնիսկ այսօր ովքեր դավանում են Քրիստոնեություն, ավելի շատ հրապուրվում են աշխարհիկ բաներով՝ այն

բաներով, որոնք կյանք են ապահովում երկրի վրա, բայց սնուցում չեն տալիս ի հավերժական կյանք: Ոմանց համար Նրա [խիստ ասածը] դեռևս պատճառ է չհետևելու Քրիստոսին:

Քավությունը

Փրկչի մահկանացու ծառայության գագաթնակետը Նրա Հարությունն էր և աշխարհի մեղքերի համար Նրա Քավությունը: Հովհաննես Մկրտիչը մարգարեացավ այս, երբ նա ասաց. «Ահա Աստուծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհքի մեղքը» (Հովհաննես Ա.29): Հետագայում Հիսուսն ուսուցանեց, որ «մարդի Որդին չեկավ, որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ, և շատերի փոխանակ իր անձը փրկանք տայ» (Մատթեոս Ի.28): Վերջին Ընթրիքին Հիսուսը բացատրեց, համաձայն Մատթեոսի պատմության, որ գինին, որ Նա օրհնեց «իմ արյունն է նոր ուխտի, որ թափվում է շատերի համար ի թողութիւն մեղաց» (Մատթեոս ԻԶ.28):

Հայտնվելով Նեփիացիներին՝ հարություն առած Տերը հրավիրեց նրանց առաջ գալ՝ շոշափելու Իր կողքի վերքը և գամերի հետքերը Իր ձեռքերում և Իր ոտքերին: Նա արեց դա, ինչպես ինքը բացատրեց. «որ դուք կարողանաք իմանալ, որ ես եմ Իսրայելի Աստվածը, և ամբողջ երկրագնդի Աստվածը, և սպանվել եմ աշխարհի մեղքերի համար» (3 Նեփի 11.14): Եվ պատմությունը շարունակվում է, բազմությունը ընկավ «ցած՝ Հիսուսի ոտքերի մոտ և երկրպագեցին նրան» (հատված 17): Սրա համար ողջ աշխարհն ի վերջո կերկրպագի նրան:

Հիսուսն ուսուցանեց արժեքավոր լրացուցիչ ճշմարտություններ Իր Քավության մասին: Մորմոնի Գիրքը, որը մանրամասնում է Փրկչի ուսմունքները և տալիս Նրա առաքելության լավագույն բացատրությունը, հաղորդում է այս ուսմունքը.

«Իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ . . . որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ . . .

Որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի:

Եվ . . . ով որ ապաշխարի և մկրտվի իմ անունով, նա կլցվի. Եւ եթե նա համբերի մինչև վերջ, ահա նրան ես անմեղ կհամարեմ իմ Հոր առաջ այն օրը, երբ ես կկանգնեմ՝ դատելու աշխարհը . . .

Եվ ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել նրա արքայությունը. Ուստի, ոչինչ չի մտնում նրա հանգիստը, բացի նրանցից, ովքեր լվացել են իրենց հանդերձներն իմ արյունով իրենց հավատքի, և բոլոր իրենց մեղքերից ապաշխարության, և մինչև վերջ իրենց հավատարմության շնորհիվ» (3 Նեփի 27.14–16, 19):

Եվ այսպիսով, մենք հասկանում ենք, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը տալիս է մեզ հնարավորություն հաղթահարել հոգևոր մահը, որն առաջանում է մեղքից և, սրբազան ուխտեր կապելու և պահելու միջոցով ունենալ հավերժական կյանքի օրհնությունները:

Մարտահրավեր և վկայություն

Հիսուսը մարտահրավեր նետեց. «Ձեզ ի՞նչպես է երևում Քրիստոսի համար» (Մատթեոս ԻԲ.42): Պողոս Առաքյալը կոչ արեց Կորնթացիներին «Փորձեցէք ձեր անձերը, թե արդյոք հավատքո՞ւմն էք» (Բ Կորնթացիս ԺԳ.5): Մենք բոլորս պետք է ինքներս մեզ համար պատասխանենք այս կոչին: Որտեղ է մեր վերջնական հավատարմությունը: Արդյոք մենք նմա՞ն ենք Երեց Մաքսվելի հիշարժան նկարագրության Քրիստոնյաներին, ովքեր իրենց բնակարանը տեղափոխել են Սիոն, բայց դեռ փորձում են պահել մի երկրորդ բնակարան Բաբելոնում: [1]

Չկա միջին տարածք: Մենք Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք: Մեր քաղաքացիությունը Նրա Եկեղեցում է և Նրա ավետարանում, և մենք չպետք է մուտքի արտոնագիր օգտագործենք Բաբելոն այցելելու համար կամ վարվենք դրա քաղաքացիների պես: Մենք պետք է պատվենք Նրա անունը, պահենք Նրա պատվիրանները և «չփնտրենք աշխարհի բաները, այլ փնտրենք . . . նախ կառուցել Աստծո արքայությունը և հաստատել նրա արդարությունը» (Մատթեոս 6.33, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս 6.38):

Հիսուս Քրիստոսը Աստծո Միածին և Սիրելի Որդին է: Նա մեր Արարիչն է: Նա Աշխարհի Լույսն է: Նա մեր Փրկիչն է մեղքից ու մահից: Սա ամենակարևոր գիտելիքն է աշխարհում, և դուք ինքներդ կարող եք իմանալ դա, ինչպես ես ինքս գիտեմ դա: Սուրբ Հոգին, ով վկայում է Հոր և Որդու մասին և առաջնորդում մեզ դեպի ճշմարտություն, հայտնի է դարձրել դրանք ինձ և Նա ձեզ էլ հայտնի կդարձնի: Ուղին ցանկությունն է և հնազանդությունը: Ցանկության մասին Հիսուսն ուսուցանել է: «Խնդրեցէք եւ կտրուի ձեզ. Որոնեցէք եւ կգտնէք, դուռը թակեցէք եւ կբացուի ձեզ» (Մատթեոս Է.7): Հնազանդության մասին Նա ուսուցանել է. «Եթե մեկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդյո՞ք Աստվածանից է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես Է.17). Ես վկայում եմ այս բաների ճշմարտության մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Neal A. Maxwell, *A Wonderful Flood of Light* (1990), 47:

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Ուսուցանել համաձայն Հոգու ձևի

Չնայած մենք բոլորս ուսուցիչներ ենք, մենք պետք է լիովին հասկանանք, որ Սուրբ Հոգին է ուսուցիչը և վկան ամեն ճշմարտության:

Շատ տարիներ առաջ իմ ընկերակից միսիոների հետ գտնվում էի միսիոներական ուսուցման կենտրոնում, երբ լսեցի, ինչպես մի երեխա ասաց. «Տատիկ, նրանք *իսկակա՞ն* միսիոներներ են»: Ես շրջվեցի, տեսնելով իր տատիկի ձեռքը բռնած մի փոքրիկ աղջկա, որը մատնացույց էր անում ինձ և ընկերակցիս: Ես ժպտացի, մեկնեցի ձեռքս, ուղիղ նայեցի նրա աչքերին և ասացի. «Ողջույն, ես Երեց Ռիչարդսոնն եմ, և մենք *իսկական* միսիոներներ ենք»: Նրա դեմքը շողում էր, երբ ետ նայեց ինձ՝ հուզված, որ գտնվում էր իսկական միսիոներների հետ:

Ես հեռացա այդ փորձառությունից՝ ավելի մեծ նվիրումով: Ես ուզում էի լինել այնպիսի միսիոներ, որ Փրկիչը, իմ ընտանիքն ու այս փոքրիկ աղջիկն էին սպասում, որ լինեմ: Հաջորդ երկու տարիների ընթացքում ես ջանք չէի խնայում, որպեսզի երևայի, մտածեյի, գործեյի և հատկապես ուսուցանեյի *իսկական* միսիոների պես:

Տուն վերադառնալուց հետո, հետզհետե ակնհայտ դարձավ, որ չնայած ես թողել էի իմ միսիան, միսան չէր թողել ինձ: Փաստորեն, նույնիսկ այս բոլոր տարիներից հետո, ես դեռ զգում եմ, որ իմ միսիան *կյանքիս* երկու լավագույն տարիներն էին: Իմ միսիայից քաղած անսպասելի դասերից էր այդ փոքրիկ աղջկա ձայնը: Միայն այժմ ես այն լսում էի մտքումս այսպես. «Տատիկ, դա *իսկակա՞ն* քահանայություն կրող է»; «Տատիկ, դա *իսկակա՞ն* ամուսին է, կամ *իսկակա՞ն* հայր, կամ՝ Եկեղեցու *իսկակա՞ն* անդամ է»:

Ես սովորեցի, որ մեր կյանքի ամեն տեսակյունից *իսկական* դառնալը այնպիսի ձևով ուսուցանելու մեր կարողությունն է, որը չի սահմանափակում գիտելիքը: *Իսկական կյանքը* պահանջում է *իսկական գիտելիք*, որը կախված է *իսկական ուսուցումից*: Արդյունավետ ուսուցանելու պատասխանատվությունը սահմանափակված չէ նրանցով, ովքեր ուսուցիչների պաշտոնական կոչումներ ունեն:[1] Փաստորեն, ամեն ընտանիքի անդամ, Եկեղեցու ղեկավար և Եկեղեցու անդամ (ներառյալ երիտասարդներն ու երեխաները) պատասխանատվություն ունեն ուսուցանելու:

Չնայած մենք բոլորս ուսուցիչներ ենք, մենք պետք է լիովին հասկանանք, որ Սուրբ Հոգին է *իսկական* ուսուցիչը և վկան ամեն ճշմարտության: Նրանք, ովքեր լիովին չեն հասկանում այս, կամ էլ փորձում են փոխարինել Սուրբ Հոգուն և ամեն ինչ անել ինքնուրույն, քաղաքավարի ձևով հրավիրում են Հոգուն լինել իրենց հետ, բայց որպես օգնական, երբ իրականում, նրանք ուղղակի«առանց ուսումնասիրելու կամ նախապատրաստվելու» են ուսուցանում: Բոլոր ծնողները, ղեկավարները և ուսուցիչները պարտականություն ունեն ուսուցանելու «Հոգով»:[2] Նրանք չպետք է ուսուցանեն, «Հոգուց առաջ» կամ «ետ» ընկնելով, այլ՝ «Հոգու միջոցով», որպեսզի Հոգին կարողանա ուսուցանել ճշմարտությունը անսահմանափակորեն:

Մորոնին օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես կարող ենք «ուսուցանել Հոգով» առանց փոխարինելու, թուլացնելու, վանելու Սուրբ Հոգին որպես *իսկական* ուսուցիչ: Մորոնին ասում էր, որ Սրբերը ղեկավարում էին իրենց փորձառությունները «համաձայն Հոգու ներգործումների ձևին»:[3] Սա պահանջում է ավելին, քան ուղղակի Հոգին մեզ հետ ունենալը: Ղեկավարվել Սուրբ Հոգու «ձևով» նշանակում է, որ մենք գուցե կարիք ունենք փոխելու ուսուցանման մեր ձևը, ընդօրինակելով այն ձևին, որով ուսուցանում է Սուրբ Հոգին: Երբ մենք համաձայնեցնում ենք մեր ձևը Սուրբ Հոգու ձևին, ապա Սուրբ Հոգին կարող է ուսուցանել և վկայել առանց սահմանափակման: Այս կարևոր համաձայնեցումը կարելի է բացատրել հետևյալ օրինակով.

Շատ տարիներ առաջ երեխաներս և ես բարձրացանք Սաութ Միսթերի գագաթը՝ 3,157մ. բարձրությամբ մի լեռ Օրեգանում: Մի քանի ժամից մենք հանդիպեցինք մի երկար, 45 աստիճան թեքությամբ, մանր հրաբխային քարերով պատված լանջի: Գագաթը պահելով մեր տեսադաշտում, մենք առաջ շարժվեցինք, շուտով հասկանալով, որ յուրաքանչյուր քայլի հետ մեր ոտքերը խրվում էին քարերի մեջ, ստիպելով մեզ մի քանի մատնաչափ ետ սահել: Իմ 12 տարեկան

որդին գնում էր առջևից, իսկ ես մնացի իմ ութ տարեկան դստեր հետ: Հոգնածությունը և հուսահատությունը շուտով մեր մեջ սողոսկեց և նա սրտնեղվեց մտածելով, որ ինքը սարի գագաթին երևի չկարողանար միանալ իր եղբորը: Իմ առաջին մղումն էր տանել նրան: Հոգիս կամենում էր, բայց, ավաղ, մարմինս տկար էր: Մենք նստեցինք ժայռակտորների վրա, գնահատեցինք մեր իրավիճակը և նոր ծրագիր կազմեցինք: Ես նրան ասացի, որ իր ձեռքերը անդրավարտիքիս ետևի գրպաններում դնելով ամուր բռներ և ամենակարևորը հենց որ ես բարձրացնեի ոտքս քայլ կատարելու համար, նա արագ պիտի դներ իր ոտքը իմ ոտնատեղում: Նա կրկնօրինակում էր իմ յուրաքանչյուր շարժումը և հավատում, որ կբարձրանար՝ բռնվելով իմ գրպաններից: Մեզ մի հավերժություն թվաց մինչև հասանք սարի գագաթին: Նրա դեմքի հրճվանքի և բավարարվածության արտահայտությունը անգնահատելի էր: Այո, նա և իր եղբայրը, իմ կարծիքով, *իսկական* լեռնագնացներ են:

Դստերս հաջողությունը արդյունք էր իր ջանասեր ջանքերի և նրա, թե որքան լավ էր նա կարողանում քայլել այն *ձևով*, որով ես էի քայլում: Երբ նա իր շարժումները ներդաշնակ դարձրեց իմ շարժումների հետ, մենք միասին հասանք մի ռիթմի, որը թույլ տվեց օգտագործել իմ լրիվ էներգիան: Նույնը տեղի է ունենում, երբ մենք ուսուցանում ենք «համաձայն Հոգու ներգործումների ձևին»: Երբ մենք համաձանեցնում ենք մեր ուսուցման ձևը Սուրբ Հոգու ձևի հետ, Հոգին զորացնում է մեզ, և միևնույն ժամանակ չի սահմանափակվում: Սա հիշելով, խնդրում եմ հաշվի առեք «հոգու ներգործումների» երկու հիմնական ձևերը, որոնք արժե, որ մենք ընդօրինակենք:

Առաջինը, Սուրբ Հոգին ուսուցանում է անձնավորություններին շատ անհատական ձևով: Դա հնարավորություն է տալիս մեզ անձնապես իմանալ ճշմարտությունը: Մեր տարբեր կարիքների, հանգամանքների և առաջընթացի պատճառով,

Սուրբ Հոգին ուսուցանում է այն, ինչ մենք պետք է իմանանք, որ կարողանանք դառնալ այն, ինչ պետք է լինենք: Խնդրում եմ ի նկատի ունեցեք, որ երբ Սուրբ Հոգին ուսուցանում է «ճշմարտությունը բոլոր բաների մասին»,[4] այն չի ուսուցանում ամբողջ ճշմարտությունը միանգամից: Հոգին ուսուցանում է ճշմարտությունը «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ»:[5]

Նրանք, ովքեր ուսուցանում են համաձայն Հոգու ձևի, հասկանում են, որ նրանք ոչ թե դասեր են սովորեցնում, այլ՝ մարդկանց: Որպես այդպիսին, նրանք հաղթահարում են ձեռնարկում գրված ամեն ինչ ընդգրկելու կամ թեմայի վերաբերյալ իրենց ողջ իմացածը ուսուցանելու մղումը և, փոխարենը, կենտրոնանում են այն բաների վրա, որ իրենց ընտանիքը և կամ դասարանի անդամները պետք է իմանան և անեն: Ծնողները, ղեկավարներն ու ուսուցիչները, ովքեր կրկնօրինակում Հոգու ուսուցանման ձևը, արագ են սովորում, որ *իսկական* ուսուցումը ներառում է ավելին, քան ուղղակի խոսելը: Արդյունքում, նրանք դիտավորյալ կանգ են առնում լսելու, ուշադիր զննելու, իսկ հետո հասկանալու, թե ինչ պետք է անեն:[6] Երբ նրանք անում են այդ, Սուրբ Հոգին տրամադրված է լինում ուսուցանել ինչպես սովորողներին, այնպես էլ ուսուցիչներին, թե ինչ անեն ու ասեն:[7]

Երկրորդը, Սուրբ Հոգին ուսուցանում է՝ հրավիրելով, հուշելով, խրախուսելով և ոգեշնչելով մեզ գործելու: Քրիստոսը հավաստիացրել է մեզ, որ մենք սկսում ենք ճանաչել վարդապետության ճշմարտացիությունը, երբ համապատասխան ձևով ենք գործում:[8] Հոգին առաջնորդում է, ուղեկցում և ցույց է տալիս մեզ ինչ անել:[9] Այնուամենայնիվ, նա չի անի մեզ համար այն, ինչ մենք կարող ենք անել ինքներս մեզ համար: Դուք հասկանում եք, որ Սուրբ Հոգին չի կարող սովորել մեզ *համար*, զգալ մեզ *համար* կամ գործել մեզ *համար*, որովհետև դա հակառակ կլինի ազատ կամքի վարդապետությանը: Այն կարող է ապահովել հնարավորություններ և հրավիրել մեզ սովորել, զգալ և գործել:

Նրանք, ովքեր ուսուցանում են Հոգու այս ձևի համաձայն, օգնում են մյուսներին հրավիրելով, խրախուսելով և տալով նրանց հնարավորություններ՝ օգտագործելու իրենց ազատ կամքը: Ծնողներն ու առաջնորդները հասկանում են, որ իրենք չեն կարող զգալ, սովորել կամ նույնիսկ ապաշխարել իրենց ընտանիքի, համայնքի կամ դասարանի անդամների *համար*: Հարցնելու փոխարեն, թե «ի՞նչ կարող եմ անել երեխաներիս, դասարանի անդամներիս կամ ուրիշների համար», նրանք հարցնում են. «Ինչպե՞ս հրավիրեմ և օգնեմ նրանց, ովքեր իմ շրջապատում են, սովորել ինքնուրույն»: Ծնողները, ովքեր ընդօրինակում են Սուրբ Հոգու ներգործումներին, ստեղծում են տներ, որտեղ ընտանիքները սովորում են ավելի շուտ արժեքավորել, քան սովորել արժեքների մասին: Նմանապես, վարդապետությունների մասին պարզապես խոսելու փոխարեն, ուսուցիչներն օգնում են սովորողներին ավելի շուտ հասկանալ և ապրել ավետարանի վարդապետություններով: Սուրբ Հոգին անսահմանափակ է, երբ մարդիկ պատշաճորեն են գործադրում *իրենց* ազատ կամքը:

Աշխարհի ներկա պայմաններում, մենք ահռելի կարիք ունենք *իսկական* գիտելիքի և ուսուցման՝ մեր

տներում ժողովներում և ավետարանի դասարաններում: Ես գիտեմ, որ բարելավելու ձեր փնտրտուքը կարող է երբեմն ճնշող թվալ: Խնդրում եմ, մի հուսահատվեք ձեր առաջընթացի վեաբերյալ: Ես մտածում եմ իմ երեխաների հետ զբոսանքի փորձառության մասին: Մենք համաձայնության էինք եկել, որ ամեն անգամ, երբ կանգ էինք առնում շունչ առնելու, փոխարենը բացառապես կենտրոնանալու նրա վրա, թե որքան էր մնացել քայլելու, անմիջապես պետք է շրջվեինք և սարից ներքև նայեյինք: Մենք նայում էինք տեսարանին և ասում իրար. «Տես, թե որքան հեռու ենք մենք եկել»: Ապա մենք խորը շունչ էինք քաշում, արագ շրջվում դեմքով դեպի սարն ի վեր, և սկսում նորից մագլցել, ամեն անգամ մեկ քայլ անելով: Եղբայրներ և քույրեր դուք *կարող* եք ծնող լինել, ղեկավարել և ուսուցանել Հոգու ներգործումների ձևին համաձայն: Ես գիտեմ դուք կարող եք անել դա: Ես վկայում եմ, որ դուք կարող եք անել դա և կյանքեր փոխել:

Իմ կյանքն օրհնվել է *իսկական ուսուցիչներով,* ովքեր ուսուցանել են Հոգով և, հատկապես, Հոգու միջոցով: Ես հրավիրում եմ համաձանեցնել ձեր ուսուցման ձևը Սուրբ Հոգու ձևի հետ ձեր բոլոր բաներում, որ դուք անում եք: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է և որ Նրա ավետարանը վերականգվել է: Այդ պատճառով մենք պետք է լինենք *իսկական* ծնողներ, *իսկական* ղեկավարներ, *իսկական* ուսուցիչներ և *իսկական* սովորողներ: Ես վկայում եմ, որ Աստված կօգնի ձեզ ձեր ջանքերում, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teaching, No Greater Call: A Resource Guide for Gospel Teaching* (1999), 3:
2. Վարդապետություն և Ուխտեր 50.14:
3. Մորոնի 6.9:
4. Մորոնի 10.5; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 50.14; *True to the Faith: A Gospel Reference* (2004), 82:
5. 2 Նեփի 28.30:
6. Տես David A. Bednar, "Seek Learning by Faith," *Liahona,* Sept. 2007, 16–24:
7. Տես Ղուկաս 12.12:
8. Տես Հովհաննես 7.17:
9. Տես 2 Նեփի 32.1–5:

Կազուհիկո Յամաշիտա
Յոթանասունից

Միսիոներները Եկեղեցու գանձն են

Ես շնորհակալ եմ, որ միսիոներները կանչվում են Տիրոջ կողմից, որ նրանք պատասխանում են այդ կանչին, և որ նրանք ծառայում են աշխարհով մեկ:

Տարիներ առաջ Երեց Սվան անունով մի նոր կանչված միսիոներ և նրա ճապոնացի ավագ զուգընկերը եկան այցելելու մեր տուն: Բարեբախտաբար, ես տանն էի, ուստի ես նրանց ներս հրավիրեցի: Երբ ես ողջունեցի նրանց դռան մոտ, Երեց Սվանի հագած վերարկուն գրավեց իմ ուշադրությունը: Առանց մտածելու ես ասացի նրան. «Դու կրում ես իսկապես լավ վերարկու»: Ինչևիցե, դա նոր վերարկու չէր, և այն բավականին հին էր: Ես ենթադրեցի, որ վերարկուն մի նախկին միսիոներ էր թողել միսիոներական բնակարանում:

Երեց Սվանը անմիջապես պատասխանեց իմ խոսքերին, որը իմ մտածածի լրիվ հակառակն էր: Ճապոներեն կմկմալով, նա պատասխանեց. «Այո, սա լավ վերարկու է: Իմ հայրը կրել է այս վերարկուն, երբ ծառայել է որպես միսիոներ Ճապոնիայում ավելի քան 20 տարի առաջ»:

Նրա հայրը ծառայել էր Ճապոնիայի Օկայամա Միսիայում: Եվ երբ նրա որդին մեկնում էր ծառայելու միսիա Ճապոնիայում, նա տվել էր իր վերարկուն նրան: Այս նկարում պատկերված է վերարկուն, որը Երեց Սվանների երկու սերունդներ կրել են Ճապոնիայում:

Ես շատ զգացվեցի, լսելով Երեց Սվանի խոսքերը: Եվ ես այժմ հասկանում եմ, թե ինչու էր Երեց Սվանը կրում իր հոր վերարկուն, երբ քարոզում էր: Երեց Սվանը սկսել էր իր միսիան, ժառանգելով իր հոր սերը Ճապոնիայի երկրի և ժողովրդի հանդեպ:

Ես վստահ եմ, որ ձեզանից ոմանք ունեցել են նմանատիպ փորձառություն: Ճապոնիայում ծառայող մի շարք միսիոներներ պատմել են ինձ, որ իրենց հայրերը, իրենց մայրերը, իրենց պապիկները կամ հորեղբայրներն ու մորեղբայրները նույնպես միսիա են ծառայել Ճապոնիայում:

Ես ուզում եմ արտահայտել իմ անկեղծ սերը, հարգանքը և երախտագիտությունը բոլոր վերադարձած միսիոներներին, ովքեր ծառայել են աշխարհով մեկ: Ես վստահ եմ, որ նրանք, ում դուք օգնել եք դարձի գալ, ձեզ չեն մոռացել: «Ի՜նչ գեղեցիկ են սարերի վրայ աւետարանչի ոտքերը, որ բարիք է աւետում»:[1]

Ես այդ նորադարձներից մեկն եմ: Ես դարձի եմ եկել 17 տարեկանում, երբ ավագ դպրոցի ուսանող էի: Միսիոները, ով կատարեց իմ մկրտությունը, Երեց Ռափն էր՝ Այդահոյից: Նա վերջերս հետ կանչվեց ցցի նախագահի իր կոչումից Այդահոյում: Ես չեմ տեսել նրան այն օրվանից, ինչ նոր մկրտված էի, բայց ես հաղորդակցվել եմ նրա հետ էլեկտրոնային փոստով և խոսել եմ նրա հետ հեռախոսով: Ես երբեք նրան չեմ մոռացել: Նրա բարի, ժպտացող դեմքը դրոշմվել է իմ հիշողության մեջ: Նա շատ ուրախացավ, երբ իմացավ, որ ես լավ եմ:

Երբ ես 17 տարեկան էի, իրականում այդքան էլ լավ չէի հասկանում ուղերձները, որոնք միսիոներները սովորեցնում էին ինձ: Ինչևիցե, ես հատուկ զգացողություն ունեի միսիոներների մասին: Ես ուզում էի դառնալ նրանց նման: Եվ ես զգում էի նրանց խորը և տևական սերը:

Թույլ տվեք պատմել ձեզ իմ մկրտության օրվա մասին: Հուլիսի 15-ը շատ շոգ օր էր: Մի կին նույնպես մկրտվեց այդ օրը: Մկրտության ջրավազանը կառուցված էր միսիոներների ձեռքերով, և այն այդքան էլ գրավիչ տեսք չուներ:

Մենք հաստատվեցինք մկրտությունից անմիջապես հետո: Առաջինը հաստատվեց քույրը Երեց Լոյդի կողմից: Ես նստեցի մյուս անդամների հետ, փակեցի իմ աչքերը և լուռ լսում էի: Երեց Լոյդը հաստատեց նրան, և հետո սկսեց օրհնություն տալ նրան: Սակայն Երեց Լոյդը դադարեց խոսել, ուստի ես բացեցի իմ աչքերը և նայեցի նրան ակնապիշ հայացքով:

Նույնիսկ այսօր ես կարող եմ պարզ հիշել այդ տեսարանը: Երեց Լոյդի աչքերը լի էին արցունքներով: Եվ իմ կյանքում առաջին անգամ ես ունեցա Սուրբ Հոգով պարուրված լինելու փորձառությունը: Եվ Սուրբ Հոգու միջոցով ես հստակ իմացա, որ Երեց Լոյդը սիրում է մեզ, և որ Աստված սիրում է մեզ:

Այնուհետև հաստատման իմ հերթն էր: Կրկին դա Երեց Լոյդն էր: Նա դրեց իր ձեռքերը իմ գլխին և հաստատեց ինձ որպես Եկեղեցու

անդամ, շնորհեց ինձ Սուրբ Հոգու պարգևը և հետո սկսեց արտասանել օրհնությունը: Եվ կրկին նա դադար առավ: Ինչևիցե, հիմա ես հասկանում էի, թե ինչ էր տեղի ունենում: Ես, իսկապես, գիտեի Սուրբ Հոգու միջոցով, որ միսիոներները սիրում էին ինձ, և որ Աստված սիրում էր ինձ:

Ես այժմ կկամենայի մի քանի խոսք ասել միսիոներներին, ովքեր այժմ ծառայում են միսիայում աշխարհով մեկ: Ձեր վերաբերմունքն ու սերը, որ դուք ցուցաբերում եք ուրիշների հանդեպ, շատ կարևոր ուղերձներ են: Չնայած ես միանգամից չէի ընկալում բոլոր վարդապետությունները, որ միսիոներները սովորեցնում էին ինձ, ես զգացել եմ նրանց մեծ սերն ու տեսել նրանց բազում բարի գործերը, որոնք սովորեցրել են ինձ կարևոր դասեր: Ձեր ուղերձը սիրո ուղերձ է, հույսի ուղերձ և հավատի ուղերձ: Ձեր վերաբերմունքն ու ձեր գործերը հրավիրում են Հոգին, և Հոգին հնարավոր է դարձնում, որ մենք հասկանանք բաները, որոնք կարևոր են: Ուզում ձեզ ասել, որ ձեր սիրո միջոցով դուք հաղորդում եք Աստծո սերը: Դուք այս Եկեղեցու գանձն եք: Ես անչափ շնորհակալ եմ ձեզ բոլորիդ ձեր զոհաբերության և ձեր նվիրվածության համար:

Ես նաև կցանկանայի խոսել ձեզ հետ, ապագա միսիոներներ: Իմ սեփական ընտանիքում մեր երեխաներից չորսը ծառայել են միսիայում և մեր հինգերորդ միսիոները կմտնի Պրովոյի Միսիոներների Ուսուցման Կենտրոն այս ամսվա վերջում: Հաջորդ տարի մեր կրտսերը ծրագրում է միսիա ծառայել ավագ դպրոցը ավարտելուց հետո:

Ուստի ես խոսում եմ իմ տղաների և ձեր բոլորի հետ, ովքեր պատրաստվում են միսիայում ծառայել: Անհրաժեշտ է, որ երեք բան բերեք ձեզ հետ միսիա.

1. Ավետարանը քարոզելու ցանկություն: Տերը ուզում է, որ դուք փնտրեք Իր ոչխարներին և գտնեք նրանց:[2] Մարդիկ ամբողջ աշխարհում սպասում են ձեզ: Խնդրում եմ, արագ գնացեք այնտեղ, որտեղ նրանք են: Ոչ ոք ավելի ջանասիրաբար չի ձգտում փրկել ուրիշներին: Ես այդ փրկվածներից մեկն եմ:
2. Զարգացրեք ձեր վկայությունը: Տերը պահանջում է ձեր «սիրտն ու պատրաստակամ միտքը»:[3]
3. Սիրեք ուրիշներին՝ ճիշտ ինչպես Երեց Սվանը, ով իր հետ միսիա բերեց իր հոր վերարկուն և իր հոր սերը Ճապոնիայի և դրա ժողովրդի հանդեպ:

Եվ ձեզանից նրանք, ովքեր չգիտեն, թե ինչպես պատրաստվեն միսիա ծառայելուն, խնդրում եմ, գնացեք և տեսեք ձեր եպիսկոպոսին: Ես գիտեմ, որ նա կօգնի ձեզ:

Ես շնորհակալ եմ, որ միսիոներները կանչվում են Տիրոջ կողմից, որ նրանք պատասխանում են այդ կանչին, և որ նրանք ծառայում են աշխարհով մեկ: Թույլ տվեք ինձ ասել բոլորիդ, սիրելի վերադարձած միսիոներներ, ես իսկապես շնորհակալ եմ ձեր բոլոր ջանքերի համար: Դուք այս Եկեղեցու գանձն եք: Եվ թող, որ դուք միշտ շարունակեք լինել միսիոներներ և գործեք ինչպես Քրիստոսի աշակերտներ:

Ես վկայում եմ, որ մենք մեր Երկնային Հոր զավակներն ենք, որ Նա սիրում է մեզ և որ Նա ուղարկեց Իր Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի մենք այդպիսով կարողանանք վերադառնալ Նրա ներկայություն: Ես ասում եմ այս բաները Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եսայիա ԾԲ.7:
2. Եզեկիել 34.11:
3. Վարդապետություն և Ուխտեր 64.34:

Երեց Ռանդել Կ. Բեննեթ
Յոթանասունից

Ընտրեք հավերժական կյանքը

Ձեր հավերժական ճակատագիրը պատահականության արդյունք չէ, այլ՝ ընտրության: Երբեք խիստ ուշ չէ սկսել ընտրել հավերժական կյանքը:

Տարիներ առաջ երբ ընտանիքով ծովափին էինք, ես նկատեցի նշաններ և դրոշակներ, որոնք նախազգուշացնում էին մեզ ուժեղ հոսանքի դեմ, որն ափից գնում էր դեպի խորքերը՝ ջրապտույտ դառնալով: Իմ անվարժ աչքերի համար անտեսանելի, բայց փրկարարների համար հեշտորեն նշմարելի մոտակա պահակադիտային աշտարակից, հզոր հոսանքը վտանգ էր ներկայացնում բոլոր նրանց համար, ովքեր թողնելով ափի ապահովությունը մտնում էին ջուրը: Հիշում էի, թե ինչպես էի հիմնավորում.«Ես ուժեղ լողորդ եմ: Լողալը հիանալի վարժանք կլինի: Ես ապահով կլինեմ ծանծաղ ջրերում»:

Անտեսելով նախազգուշացումները և վստահ զգալով իմ սեփական դատողությամբ, ես մտա ջուրը՝ վայելելու «թարմացնող» լողը: Մի քանի րոպեից ես վեր նայեցի, փնտրելով ընտանիքիս մոտակա լողափին, բայց լողափն այլևս մոտիկ չէր: Խաբուսիկ հոսանքը, որի մասին ես նախազգուշացվել էի, ինձ գերի էր վերցրել և արագորեն հեռու էր քշում իմ ընտանիքից:

Սկզբում վստահորեն, իսկ հետո հուսահատորեն, ես փորձում էի լողալ դեպի ափը, բայց անողորմ հոսանքը քաշում էր ինձ ավելի հեռու՝ դեպի ավելի խորը և ավելի կատաղի ջրերը: Ես հոգնեցի և սկսեցի խեղդվել կուլ տված ջրից: Խեղդվելը դարձավ իրականություն: Ի վերջո, երբ էներգիաս սպառվեց, ես խելահեղորեն օգնություն կանչեցի:

Թվում է, հրաշքով մի փրկարար անմիջապես կողքիս հայտնվեց: Ես անտեղյակ էի, որ նա նկատել էր ինձ ջուրը մտնելիս: Նա գիտեր, որ հոսանքը տանելու էր ինձ և նա գիտեր, թե ուր էր տանելու: Խուսափելով հոսանքից, նա շրջանցեց այն, մոտենալով այն տեղին, որտեղ ես մաքառում էի, ապա համբերատար սպասեց, որ օգնություն խնդրեի: Խիստ թույլ լինելով դեպի ափը մենակ լողալու համար, ես երախտապարտ էի նրան փրկության համար: Առանց նրա օգնության երբեք չէի կարողանա վերադառնալ ընտանիքիս մոտ:

Այդ օրը ես վատ ընտրություն կատարեցի, որն առաջացրեց հնարավորինս լուրջ հետևանքներ ինձ և ընտանիքիս համար: Քանի

որ այժմ մենք միասին քննարկում ենք ընտրության պարգևը, աղոթում եմ, որ Սուրբ Հոգին օգնի մեզանից յուրաքանչյուրին գնահատել մեր կատարելիք ընտրությունները:

Մեր սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Ես չեմ կարող շեշտել ավելի վճռականորեն, որ որոշումներն են վճռում ճակատագիրը: Դուք չեք կարող կատարել հավերժական որոշումներ առանց հավերժական հետևանքների»:[1]

Ձեզանից յուրաքանչյուրը, ինչպես մեզ ուսուցանվեց այս համաժողովին, երկնային ծնողների հոգևոր սիրելի որդին կամ դուստրն եք: Դուք ունեք աստվածային էություն և ճակատագիր:[2] Ձեր նախաերկրային կյանքում դուք սովորեցիք սիրել ճշմարտությունը: Դուք կատարել եք ճիշտ հավերժական ընտրություններ: Դուք գիտեիք, որ այստեղ՝ մահկանացու կյանքում կլինեն չարչարանքներ և ձախորդություն, վիշտ ու տառապանք, ստուգարքներ և փորձություններ՝ օգնելու ձեզ աճել և առաջադիմել: Դուք նաև գիտեիք, որ կկարողանաք շարունակել ճիշտ ընտրություններ կատարել, ապաշխարել սխալ ընտրություններից և Հիսուս Քրիստոսի Քավությամբ ժառանգել հավերժական կյանք:

Ի՞նչ ուսուցանեց մարգարե Լեքին ընտրության մասին: Նա բացատրեց, որ մենք *ազատ ենք ընտրելու* ազատություն և *հավերժական կյանք*, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամընտրելու գերություն և մահ, ըստ դևի գերության և զորության»: Ապա նա հրահանգեց. «Դուք նայեք մեծ Միջնորդին և ականջ դրեք նրա մեծ պատվիրաններին. եղեք հավատարիմ նրա խոսքերին և *ընտրեք հավերժական կյանք*»:[3]

Եղբայրներ և քույրեր, մտածելու, զգալու և գործելու մեր ընտրություններում արդյո՞ք դուք և ես *ընտրում ենք հավերժական կյանք*:

Մեր թոռնիկները սովորում են, որ երբ նրանք ընտրություն են կատարում, նրանք նաև ընտրում են դրա հետևանքները: Վերջերս մեր երեք տարեկան թոռնիկներից մեկը

Մոնրեալ, Քվիբեք, Կանադա

հրաժարվեց ուտել իր ճաշը: Նրա մայրը բացատրեց, «Գրեթե քնելու ժամն է: Եթե դու ընտրես ուտել ճաշը, դու ընտրում ես պաղպաղակ որպես դեսերտ: Եթե ընտրում ես չուտել ճաշը, դու ընտրում ես այժմ գնալ քնելու առանց պաղպատակի»: Մեր թոռնիկն ասաց շեշտակիորեն. «Ես ուզում եմ *այս* ընտրությունը՝ խաղալ *և* ուտել միայն պաղպաղակ *և* չգնալ քնելու»:

Եղբայրներ և քույրեր, միթե՞ մենք ուզում ենք խաղալ, ուտել միայն պաղպաղակ, երբեք չգնալ քնելու և, միևնույն ժամանակ, խուսափել հետևանքներից, ինչպիսիք են՝ թերսնուցումն ու հյուծվածությունը:

Իրականում մենք ունենք միայն երկու հավերժական ընտրություններ, յուրաքանչյուրը իր հավերժական հետևանքով՝ ընտրել հետևել աշխարհի Փրկչին և, այդպիսով, ընտրել հավերժական կյանք Երկնային Հոր հետ, կամ՝ ընտրել հետևել աշխարհը և, այդպիսով, ընտրել Երկնային Հորից հավերժորեն մեկուսացված լինելը:

Մենք չենք կարող հաջողությամբ ընտրել երկուսը՝ արդարակեցության ապահովությունը և աշխարհիկ կյանքի վտանգները: Աշխարհիկի մեջ առաջ գնալը կարող է անվնաս թվալ, բայց այդպես էր թվում իմ «թարմացնող» լողի ժամանակ:

Հոսաքի նման, որը կարող էր փոխել ընտանիքիս կյանքի ընթացքը, այսօր աշխարհիկ հոսանքները, խաբուսիկ փիլիսոփայությունները, կեղծ ուսմունքները և անվերահսկելի անբարոյականությունը ձգտում են մեզ հեռու քաշել և հավերժորեն մեկուսացնել մեր ընտանիքներից և մեր Երկնային Հորից:

Մեր ապրող մարգարեները, տեսանողները և հայտնողները տեսնում են և ձգտում նախազգուշացնել մեզ հաճախ նուրբ, բայց վտանգավոր աշխարհիկ հոսանքներից, որոնք սպառնում են մեզ: Նրանք սիրով կոչ են անում, խրախուսում, ուսուցանում, հիշեցնում և նախազգուշացնում մեզ: Նրանք գիտեն, որ մեր ապահովությունը կախված է ընտրելուց հետևել (1) այն ներքմբռնումներին, որոնք մենք ստանում ենք սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրությունից, խորհելուց և աղոթքից, (2) Սուրբ Հոգու առաջնորդությանը և (3) նրանց մարգարեական խորհրդին: Նրանք գիտեն, որ կա ապահովություն և բարձրագույն ուրախություն միայն մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանով ապրելու միջոցով: Ինչպես Երեց Դալլին Հ. Օքսը նոր ուսուցանեց, մեր Փրկիչը հայտարարել է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը և կեանքը. Ոչ ով չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով»:[4]

Հետսովետական Ռուսաստանում ձախորդության և տառապանքի ժամանակ Անատոլի և Սվետլանա Ռեշետնիկովները ընտրեցին արդարակեցությունը աշխարհիկի փոխարեն: Եկեղեցուն միանալուց հետո, նրանք հալածվեցին: Նրա պաշտոնը իջեցվեց աշխատանքի վայրում: Նրանք հավատարմորեն մտածեցին. «Այժմ ավելի շատ ժամանակ կունենանք Աստծուն ծառայելու»: Նրանք անընդհատ սպառնալիքներ էին ստանում, սակայն նրանք որոշեցին ապրել ավետարանակենտրոն կյանքով: Երեց Անատոլի Ռեշետնիկովը կանչվեց որպես Ռուսաստանի առաջին Տարածքային Յոթանասունական: Իրենց ընտրությունների միջոցով Ռեշետնիկովները շարունակում են *ընտրել հավերժական կյանք*:

Մենք բոլորս հանդիպում ենք ձախորդության: Մենք բոլորս ունենք գայթակղություններ: Մենք բոլորս գործել ենք սխալներ: Երբեք խիստ դժվար չէ կամ խիստ ուշ չէ կատարել ճիշտ ընտրություններ: Ապաշխարությունը ճգնաժամային այդ ճիշտ ընտրություններից մեկն է:

Նախագահ Դիտեր Ուխդորֆն ուսուցանել է.

«Փոքրիկ սխալները և մանր շեղումները Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետությունից մեր կյանք կարող են բերել ողբալի հետևանքներ: Ուստի վճռական կարևորություն ունի, որ մենք դառնանք բավականաչափ ինքնակարգապահ, կատարելով վաղ և վճռական ուղղումներ և ետ գնալու ճիշտ ուղի և չսպասելու կամ հուսալու, որ սխալները ինչ որ ձևով իրենք իրենց կուղղվեն:

Որքան երկար հետաձգենք ուղղվելու գործը, այնքան ավելի մեծ են դառնում անհարժեշտ փոփոխությունները և ավելի երկար ժամանակ է պահանջվում ճիշտ ուղու վրա վերադառնալու համար, այսինքն մինչև այն կետը, որտեղ աղետը հնարավոր է:[5]

Փրկչի ողորմածության բազուկները միշտ մեկնված են դեպի մեզանից յուրաքանչյուրը:[6] Երբ մենք անկեղծորեն և լիովին ապաշխարում ենք, մեր սխալները կարող են լիովին ներվել և Փրկիչն այլևս չի հիշի մեր մեղքերը:[7]

Գնահատելով ձեր ընտրությունները և դրանց հետևանքները, դուք գուցե հարցնեք ինքներդ ձեզ.

- Արդյոք ես որոնո՞ւմ եմ աստվածային ուղղորդում սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության, խորհելու և աղոթքի միջոցով, թե ընտրել եմ այնքան զբաղված կամ անտարբեր լինել, որ ժամանակ չեմ տրամադրում Քրիստոսի խոսքերն ուսումնասիրելուն, դրանց մասին խորհելուն և մեր Երկնային Հոր հետ զրուցելուն:
- Արդյոք ընտրո՞ւմ եմ հետևել Աստծո ապրող մարգարեների խորհրդին, թե հետևում եմ աշխարհիկ ուղիների և ուրիշների հակադրվող կարծիքներին:
- Արդյոք որոնո՞ւմ եմ Սուրբ Հոգու առաջնորդությունն ամեն օր մտածելու, զգալու և գործելու իմ ընտրություններում:
- Արդյոք հետևողականորեն ձգտո՞ւմ եմ աջակցել, ծառայել կամ օգնել փրկել ուրիշներին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ձեր հավերժական ճակատագիրը պատահականության արդյունք չէ, այլ՝ ընտրության: Երբեք խիստ ուշ չէ սկսել ընտրել *հավերժական կյանքը*:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Երկնային Հոր երջանկության մեծ ծրագրի շնորհիվ մեզանից յուրաքանչյուրը կարող է կատարելագործվել Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Մեր ընտանիքների հետ մենք կարող ենք ապրել մեր Երկնային Հոր հետ հավերժորեն և ստանալ ուրախության լիություն: Այս բաների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, “Decisions Determine Destiny” (Church Educational System fireside for young adults, Nov. 6, 2005), institute.lds.org.
2. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
3. 1 Նեփի 2.27, 28; շեշտադրումն ավելացված է:
4. Հովհաննես ԺԴ.6:
5. Dieter F. Uchtdorf, “A Matter of a Few Degrees,” *Liahona,* May 2008, 59.
6. Տես Ալմա 5.33:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 58.42:

Երեց Ջ. Դեվն Քորնիշ
Յոթանասունից

Աղոթքի արտոնությունը

Աղոթքը Աստծո կողմից մարդուն տրված ամենաթանկարժեք պարգևներից մեկն է:

Իմ սիրելի քույրեր և եղբայրներ, մեր Հայր Աստվածը զգացմունք չէ, ոչ էլ գաղափար է կամ ուժ: Նա սուրբ անձնավորություն է, որն ինչպես սուրբ գրությունները են ուսուցանում, ունի դեմք և ձեռքեր ու փառահեղ, հարություն առած մարմին: Նա իրական է, Նա գիտի մեզանից յուրաքանչյուրին անհատապես և Նա սիրում է մեզ՝ մեկ առ մեկ: Նա ցանկանում է օրհնել մեզ:

Հիսուսն ասել է.

«Կամ ո՞վ է ձեզանից այն մարդն, որ եթե նորանից իր որդին հաց ուզէ, մի՞թե քար կտայ նորան:

Եվ եթե ձուկ ուզէ, մի՞թէ օձ կտայ նորան:

Արդ, եթե դուք չար լինելով, գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդկանցը, ո՞րքան ավելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բարիքներ կտայ նորանց, որ խնդրում են իրանից»: (Մատթեոս 7.9–11):

Հավանաբար, անձնական փորձառությունս կօգնի բացատրել այդ հարցը: Երբ ես Բոստոնի մանկական հիվանդանոցում մասնագիտացման ուղարկված երիտասարդ բժիշկ էի, ես աշխատում էի երկար ժամեր և հիմնականում ճանապարհորդում էի Մասաչուսետսի Վոթերթաունում գտնվող մեր տնից մինչև հիվանդանոց հեծանվով, քանի որ կինս և երիտասարդ ընտանիքս մեր մեքենայի կարիքն ունեին: Մի երեկո ես հեծանվով գնում էի տուն հիվանդանոցում շատ ժամեր աշխատելուց հետո, զգալով խիստ հոգնած և սոված և մի քիչ հուսահատված: Ես գիտեի, որ պարտավոր էի կնոջս և չորս փոքրիկ երեխաներիս տալ ոչ միայն իմ ժամանակն ու էներգիան, երբ տուն հասնեի, այլ նաև զվարթ տրամադրություն: Անկեղծ ասած ինձ համար ուղղակի դժվար էր ոտնակներն անդադար պտտելը:

Ճանապարհս անցնում էր հավի տապակա վաճառող խանութի մոտով, և ես զգում էի, որ շատ ավելի սակավ քաղցած և ավելի քիչ հոգնած կլինեի, եթե կարողանայի կանգ առնել և մի կտոր հավ ուտել տուն տանող իմ ճանապարհին: Ես գիտեի, որ նրանք տապակած հավի ազդրերի և ոտքի զեղջված վաճառք էին կատարում մեկ հատը 29 ցենտով, բայց երբ նայեցի դրամապանակիս մեջ, տեսա որ ընդամենն ունեի մեկ 5 ցենտանոց մետաղադրամ: Շարունակելով վարել հեծանիվս, ես պատմեցի Տիրոջը իմ իրավիճակի մասին և խնդրեցի, որ նա Իր ողորմության համաձայն, թույլ տար, որ ճանապարհի կողքին գտնեի մի հատ 25 ցենտանոց մետաղադրամ: Ես ասացի Նրան, որ չէի ուզում դա որպես նշան, որ ես իսկապես երախտապարտ կլինեի, եթե Նա շնորհեր ինձ այդ բարի օրհնությունը:

Ես սկսեցի ավելի ուշադիր նայել գետնին, բայց ոչինչ չտեսա: Փորձելով մնալ հավատքով լեցուն, բայց վերաբերմունքով խոնարհ, մինչ վարում էի հեծանիվս, ես մոտեցա խանութին: Ապա հավի վաճառատան փողոցի գրեթե ուղիղ հակառակ կողմում ես տեսա գետնին 25 ցենտանոց մի մետաղադրամ: Երախտագիտությամբ և հանգստացած՝ ես վերցրեցի այն, գնեցի հավով բրդուճը, հաճույքով կերա մինչև վերջին փշուրը և երջանիկ տուն վերադարձա:

Իր ողորմածությամբ երկնքի Աստվածը՝ Արարիչն ու ամենուրեք բոլոր բաների Կառավարիչը լսել էր աղոթքը մի շատ փոքր բանի վերաբերյալ: Ինչ-որ մեկը երևի հարցնի, թե ինչու էր Նա Իրեն նեղություն պատճառել այդպիսի փոքր բանի համար: Ես եկել եմ այն համոզման, որ մեր Երկնային Հայրն այնքան է սիրում մեզ, որ այն բաները, որոնք կարևոր են մեզ համար, դառնում են կարևոր Նրա համար, հենց այն պատճառով, որ Նա սիրում է մեզ: Ուրեմն որքա՞ն ավելի շատ Նա կուզենա օգնել մեզ մեր խնդրած մեծ բաներում, որոնք ճիշտ են (տես 3 Նեփի 18.20):

Փոքր երեխաներ, պատանիներ և նաև չափահասներ, խնդրում ենք հավատացեք, թե որքան շատ է ձեր սիրառատ Երկնային Հայրը կամենում օրհնել *ձեզ*: Բայց քանի որ Նա չի խախտի ձեր կամքի ազատությունը, մենք պետք է Նրանից օգնություն խնդրենք: Սա հիմնականում արվում է աղոթքի միջոցով: Աղոթքը Աստծո կողմից մարդուն տրված ամենաթանկարժեք պարգևներից մեկն է:

Մի առիթով Հիսուսի աշակերտները խնդրեցին. «Տեր, սովորեցրու մեզ աղոթք անել» (Ղուկաս ԺԱ.1): Ի պատասխան՝ Հիսուսը տվեց մեզ մի օրինակ, որը կարող է աղոթքի

հիմնական սկզբունքների վերաբերյալ ծառայել մեզ որպես ուղեցույց (տես Ռասել Մ. Նելսոն «Դասեր Տիրոջ աղոթքներից», *Լիահոնա*, մայիս 2009, 46–49, տես նաև Մատթեոս Զ.9–13, Ղուկաս ԺԱ.1–4)։ Ըստ Հիսուսի օրինակի.

{ Մենք սկսում ենք խոսել մեր Երկնային Հոր հետ. «Մեր Հայր, որ երկնքումն ես» (Մատթեոս Զ.9, Ղուկաս ԺԱ.2)։ Մեր արտոնությունն է ուղղակիորեն մոտենալ մեր Հորը։ Մենք չենք աղոթում որևէ այլ էակի։ Հիշեք, որ մեզ խորհուրդ է տրվել խուսափել կրկնություններից, ներառյալ Հոր անունը խիստ հաճախ օգտագործելը, երբ աղոթում ենք։[1]

«Քո անունը սուրբ լինի» (Մատթեոս Զ.9; Ղուկաս ԺԱ.2)։ Հիսուսը դիմեց Իր Հորը երկրպագության ոգով, ընդունելով Նրա մեծությունը և տալով Նրան փառաբանություն և շնորհակալություն։ Անշուշտ Աստծուն հարգելու և սրտառուչ ու առանձնահատուկ շնորհակալություն հայտնելու այս հարցը արդյունավետ աղոթքի բանալիներից մեկն է։

«Քո արքայությունը գայ։ Քո կամքը լինի» (Մատթեոս Զ.10, Ղուկաս ԺԱ.2)։ Մենք պատրաստակամորեն ընդունում ենք մեր կախվածությունը Տիրոջից և արտահայտում մեր ցանկությունը՝ Նրա կամքը կատարելու, նույնիսկ, եթե այն նույնը չէ, ինչ որ մեր կամքը։ Անգլերեն Աստվածաշնչի բառարանը բացատրում է. «Աղոթքը գործողություն է, որի միջոցով Հոր և երեխայի կամքը բերվում է համաձայնության միմյանց հետ։ Աղոթքի նպատակը Աստծո կամքը փոխելը չէ, այլ մեզ և ուրիշների համար օրհնություններ ապահովելը, որոնք Աստված արդեն կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որ ստանանք» (Bible Dictionary, “Prayer”)։

«Մեր ամեն օրուայ հացը տուր մեզ այսօր» (Մատթեոս Զ.11, տես Ղուկաս ԺԱ.3)։ Մենք խնդրում ենք այն բաները, որոնք մենք կամենում ենք Տիրոջից։ Աստծուց ինչ որ բաներ խնդրելիս ազնվությունը կարևոր է։ Օրինակ լիովին ազնիվ չէր լինի Տիրոջից օգնություն խնդրել դպրոցում ստուգարքի համար, եթե ուշադրություն չեմ դարձրել դասերին, չեմ կատարել հանձնարարված տնային աշխատանքը կամ պարապել ստուգարքի համար։ Հաճախ, երբ ես աղոթում եմ,Հոգին ինձ մեղմորեն հուշում է ընդունել, որ ես պետք է ավելի շատ բան անեմ այն օգնությունը ստանալու համար, որը խնդրում եմ Տիրոջից։ Ուրեմն ես պետք է պարտավորվեմ և անեմ իմ մասը։ Երկնային կարգին հակառակ է, որ Տերն անի մեզ համար այն, ինչ մենք կարող ենք ինքներս անել։

«Եւ թող մեզ մեր պարտքերը» (Մատթեոս Զ.4) կամ մեկ այլ տարբերակում «Եւ թող մեզ մեր մեղքերը» (Ղուկաս ԺԱ.4)։ Անձնական աղոթքի հիմնական և երբեմն մոռացված մաս է ապաշխարությունը։ Որպեսզի ապաշխարությունը գործի, այն պետք է լինի առնաձնահատուկ, անկեղծ և տևական։

«Ինչպես մենք էլ թողնում ենք մեր պարտականներին» (Մատթեոս Զ.12, տես նաև Ղուկաս ԺԱ.4)։ Քրիստոսը հստակ կապ է հաստատել մեր մեղքերից ներվելու և ուրիշներին ներելու միջև, ովքեր մեզ անիրավություն են արել։ Երբեմն ուրիշների կողմից մեզ հասցրած անիրավությունները շատ, շատ ցավոտ են և շատ դժվար է ներել կամ մոռանալ։ Այնքան երախտապարտ եմ այն սփոփանքի և բժշկության համար, որ ես գտել եմ Տիրոջ հրավերում՝ թողնելու, որ մեր ցավերը գնան, և դրանք հանձնել Իրեն։ Վարդապետություն և Ուխտերի 64 բաժնում, Նա ասել է.

«Ես Տերս կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց։

Եվ դուք պետք է ասեք ձեր սրտերում. Թող Աստված դատի իմ և քո միջև, և հատուցի քեզ՝ քո գործերի համեմատ» (հատվածներ 10–11)։

Ապա մենք պետք է հարցը լիովին մի կողմ դնենք, թույլ տալով, որ Տերը վերցնի դա այնտեղից, եթե մենք կամենում ենք բժշկվել։

«Եվ մի թող որ տարվենք փորձության, այլ ազատիր մեզ չարից» (Մատթեոս 6.13, ծանուցում ա; ՋՍԹ, Մատթեոս 6,14; տես նաև Ղուկաս 11.4)։ Այսպիսով, մեր աղոթքներում մենք կարող ենք սկսել Աստծո ողջ զրահը հագնելու պաշտպանական գործընթացը (տես Եփեսացիս Զ.11, ՎԱՈՒ 27.15) ակնկալելով սպասվող օրը և խնդրելով օգնություն, երբեմն երկյուղալի բաների դեմ, որոնք կարող են մեզ հանդիպել։ Իմ ընկերներ, խնդրում եմ, մի մոռացեք խնդրել Տիրոջը պաշտպանել ձեզ և լինել ձեզ հետ։

«Որովհետեւ քոնն է թագաւորութիւնը եւ զորութիւնը եւ փառքը յաւիտեանս» (Մատթեոս Զ.13)։ Որքան ուսանելի է, որ Հիսուսն ավարտեց այս աղոթքը կրկին փառաբանելով Աստծուն և արտահայտելով Իր ակնածանքն ու հնազանդությունը Հորը։ Երբ մենք իսկապես հավատում ենք, որ Աստված է կառավարում Իր թագավորությունը և որ Նա ունի ողջ զորությունն ու ողջ փառքը, մենք ընդունում ենք, որ Նա իսկապես հոգ է տանում, որ Նա սիրում է մեզ կատարյալ սիրով, և որ Նա ուզում է, որ մենք երջանիկ լինենք։ Ես պարզել եմ, որ ուրախալի կյանքի գաղտնիքներից մեկը ընդունելն է, որ Տիրոջ ուղով գործեր անելը ինձ ավելի երջանիկ կդարձնի, քան իմ ձևով գործեր անելը։

Կա վտանգ, որ մարդ կարող է բավականաչափ լավ չզգալ աղոթելու համար։ Այդ գաղափարը գալիս է այն չար ոգուց, որը նա է, ով սովորեցնում է մեզ չաղոթել (տես 2 Նեփի 32.8)։ Նույնքան ողբերգական է մտածել, որ մենք խիստ մեղսավոր ենք աղոթելու համար, որքան մի շատ հիվանդ մարդու համար հավատալն է, որ ինքը չափից ավելի հիվանդ է՝ բժշկի գնալու համար։

Մենք չպետք է ենթադրենք, անկախ նրանից թե որքան անկեղծ է այդ, որ ցանկացած աղոթք կլինի խիստ արդյունավետ, եթե աղոթք ասելն այն ամենն է, ինչ մենք անում ենք։ Մենք չպետք է միայն ասենք մեր աղոթքները, մենք պետք է ապրենք դրանցով։ Տերը շատ ավելի գոհ է այն մարդուց, ով աղոթում է, իսկ հետո գնում աշխատելու, քան

այն մարդուց, ով միայն աղոթում է։ Ճիշտ դեղի նման, աղոթքը գործում է միայն այն ժամանակ, երբ մենք օգտագործում ենք այն, ինչպես որ մեզ ուսուցանվել է։

Երբ ես ասում եմ, որ աղոթքը քաղցր արտոնություն է, դա ուղղակի միայն այն պատճառով չէ, որ ես երախտապարտ եմ Երկնային Հոր հետ խոսել կարողանալու և սուրբ Հոգին զգալու համար, երբ աղոթում եմ։ Դա նաև այն պատճառով է, որ Նա իրականում պատասխանում է և խոսում մեզ հետ։ Իհարկե, այն ձևը, որով Նա խոսում է մեզ հետ, սովորաբար ձայնով չէ, որը մենք լսում ենք։ Նախագահ Բոյդ Ք. Փաքերը բացատրել է. «Ոգեշնչման քաղցր, հանգիստ ձայնը գալիս է ավելի շատ որպես զգացողություն, քան որպես հնչյուն։ Մաքուր բանականությունը կարող է խոսվել մտքում . . . Այս առաջնորդությունը գալիս է որպես մտքեր, որպես զգացումներ հուշումների և տպավորությունների ձևով» (“Prayer and Promptings,” *Liahona,* Nov. 2009, 44)։

Երբեմն մեզ թվում է, որ ոչ մի պատասխան չենք ստանում մեր անկեղծ և ջանասեր աղոթքներին։ Հավատք է պահանջվում հիշելու համար, որ Տերը պատասխանում է Իր ժամանակին և Իր ձևով՝ որպեսզի լավագույն ձևով օրհնի մեզ։ Կամ հետագա խորհրդածությունների ժամանակ, մենք հաճախ հասկանում ենք, որ մենք արդեն լիակատար գիտակցում ենք, թե ինչ պիտի անենք։

Խնդրում եմ մի հուսալքվեք, եթե դա չի գործում ձեզ համար անմիջապես։ Ինչպես օտար լեզու սովորելիս, այն պրակտիկա է պահանջում և ջանք։ Սակայն իմացեք խնդրում եմ, որ դուք կարող եք սովորել Հոգու լեզուն, և երբ դա անեք, այն կտա ձեզ մեծ հավատք և արդարակեցության ուժ։

Ինձ համար թանկ է մեր սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խորհուրդը, ով ասել է. «Դիմելով բոլոր նրանց, ովքեր իմ ձայնի լսելիության սահմաններում են, ովքեր մաքառում են փոքր և մեծ մարտահրավերների և դժվարությունների դեմ, աղոթքը հոգևոր ուժ տվողն է, այն տանում է դեպի խաղաղություն։ Աղոթքը միջոց է, որով մենք մոտենում ենք մեր Հորը Երկնքում, որը սիրում է մեզ։ Խոսեք Նրա հետ աղոթքով, ապա լսեք պատասխանը։ Հրաշքները գործվում են աղոթքի միջոցով» («Եղեք ձեր լավագույնը», *Լիահոնա,* մայիս 2009, 68)։

Ես խորապես երախտապարտ եմ իմ սուրբ Երկնային Հորը աղոթքով մոտենալու արտոնության համար։ Ես շնորհակալ եմ այն անհամար առիթների համար, որ Նա լսել է ու պատասխանել ինձ։ Քանի որ Նա պատասխանում է ինձ, երբեմն էլ մարգարեական և հրաշագործ ձևով, ես գիտեմ, որ Նա ապրում է։ Ես նաև խոնարհաբար վկայում եմ, որ Հիսուսը՝ Նրա սուրբ Որդին, մեր կենդանի Փրկիչն է։ Սա Նրա Եկեղեցին է և թագավորությունը երկրի վրա. այս աշխատանքը ճշմարիտ է։ Թոմաս Ս. Մոնսոնը, որի համար մենք ջերմեռանդորեն աղոթում ենք, Նրա մարգարեն է. այս բաների մասին ես վկայում եմ լիակատար վստահությամբ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄ

1. Տես Francis M. Lyman, “Proprieties in Prayer,” in Brian H. Stuy, comp., *Collected Discourses Delivered by President Wilford Woodruff, His Two Counselors, the Twelve Apostles, and Others,* 5 vols. (1987–92), 3:76–79; B. H. Roberts, comp., *The Seventy’s Course in Theology,* 5 vols. (1907–12), 4:120; *Encyclopedia of Mormonism* (1992), “Prayer,” 1118–19; Bruce R. McConkie, *Mormon Doctrine,* 2nd ed. (1966), 583:

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Երգեր, որ նրանք չկարողացան երգել

Թեպետ մենք չգիտենք բոլոր պատասխանները, մենք գիտենք կարևոր սկզբունքներ, որոնք թույլ են տալիս մեզ տանել ողբերգությունները հավատքով և վստահ, որ կա մեզանից յուրաքանչյուրի համար ծրագրված պայծառ ապագա:

Շատերը մահկանացու կյանքի ճանապարհին հանդիպում են դժվարությունների կամ նույնիսկ ողբերգություն են ապրում: Ողջ աշխարհում մենք տեսնում ենք փորձությունների և դժբախտությունների օրինակներ:[1] Մեր հոգին տակնուվրա է լինում, երբ հեռուստացույցով տեսնում ենք մահվան, տառապանքի և վշտի տեսարաններ: Մենք տեսնում ենք ճապոնացիները ինչպես են մաքառում երկրաշարժի և ցունամիի ավերածությունների դեմ: Ցավով համակվեցինք վերջերս Համաշխարհային Առևտրի Կենտրոնի աշտարակների կործանման տեսարանները դիտելով: Մեծ հուզում ենք ապրում, երբ նման ողբերգության մասին ենք տեղեկանում, հատկապես, երբ անմեղ մարդիկ են տառապում:

Երբեմն ողբերգությունները շատ անձնական են: Որդի կամ դուստր է մահանում կյանքի վաղ շրջանում կամ ծանր հիվանդության զոհ է դառնում: Սիրող ծնողի կյանքը ընդհատվում է անմիտ արարքի կամ պատահարի պատճառով: Երբ էլ որ ողբերգությունը տեղի է ունենում, մենք սգում ենք և ձգտում ենք կրել միմյանց բեռը:[2] Մենք ողբում ենք անկատար մնացած բաների և չերգված երգերի համար:

Եկեղեցու ղեկավարներին առավել հաճախակի տրված հարցերից են. «Ինչո՞ւ արդար Աստվածը թույլ է տալիս, որ վատ բաներ կատարվեն, հատկապես բարի մարդկանց հետ»: «Ինչո՞ւ արդարակյաց և Տիրոջ ծառայությունը կատարող մարդիկ պաշտպանված չեն նման ողբերգություններից»:

Թեպետ մենք չգիտենք բոլոր պատասխանները, մենք գիտենք կարևոր սկզբունքներ, որոնք թույլ են տալիս մեզ տանել ողբերգությունները հավատքով և վստահ, որ կա մեզանից յուրաքանչյուրի համար ծրագրված պայծառ ապագա: Ամենակարևոր սկզբունքներից են՝

Առաջինը, մենք ունենք Երկնային Հայր, որը գիտի և սիրում է մեզ անձնապես և լիովին հասկանում է մեր տառապանքը:

Երկրորդ, Նրա Որդին, Հիսուս Քրիստոսը, մեր Փրկիչն ու Քավիչն է, որի Քավությունը ոչ միայն բերում է փրկություն և վեհացում, այլև հատուցում է կյանքի բոլոր անարդարությունների համար:

Երրորդ, Իր զավակների համար Հոր երջանկության ծրագիրը ընդգրկում է ոչ միայն նախամահկանացու և մահկանացու կյանքը, այլև հավերժական կյանքը, ներառյալ մեծ և փառավոր վերամիավորումը նրանց հետ, ովքեր արդեն հեռացել են այս կյանքից: Ամեն սխալ կշտկվի, և մենք կտեսնենք կատարյալ պարզությամբ, անաղարտ համայնապատկերով և հասկացողությամբ:

Այս կյանքը կարող է թվալ ճնշող, քաոսային, անարդար, անիմաստ ըստ նրանց սահմանափակ հեռանկարի, ովքեր չունեն գիտելիք, հասկացողություն կամ հավատ Հոր ծրագրի հանդեպ, ովքեր միայն նայում են աշխարհին մահկանացու կյանքի ոսպնյակներով, որոնք ներառում են պատերազմներ, բռնություն, հիվանդություն և չարիք: Եկեղեցու ղեկավարները համեմատել են այս տեսանկյունը այն մարդու հետ, որը մուտք է գործում երեք գործողությամբ պիեսի կեսից:[3] Հոր ծրագրի մասին գիտելիք չունեցողները չեն հասկանում, ինչ է կատարվել առաջին գործողության, կամ նախամահկանացու գոյության ժամանակ, և այնտեղ հաստատված նպատակները, ոչ էլ հասկանում են այն պարզաբանումը և լուծումը, որ գալիս է երրորդ գործողության ժամանակ, որը Հոր ծրագրի փառահեղ իրագործումն է:

Շատերը չեն հասկանում, որ Նրա սիրող և ամեն ինչ ընդգրկող ծրագրի ներքո նրանք, ովքեր ձախորդություններ են կրել, չնայած ոչ իրենց մեղքով, ի վերջո չեն տուժում:[4]

Մի քանի ամսից կլրանա *Տիտանիկ* նավի ողբերգական խորտակման 100 տարին: Այդ աղետալի միջադեպը պարուրող սոսկալի հանգամանքները դեռևս արձագանքում են այս հարյուր տարիների ընթացքում: Այդ նոր շքեղ շոգենավը ուներ 11 հարկ և համարյա 3 ֆուտբոլի դաշտի երկարություն,[5] և այդ նավի տերերը չարդարացված պնդումներ էին առաջ քաշում,

որ *Տիտանիկը* լիովին անխոցելի է սառցաբեկորներով լի ձմեռային ջրերում: Համարվում էր, որ այդ նավը երբեք չի սուզվի, սակայն երբ այն սահեց ատլանտյան օվկիանոսի սառցապատ մակերեսով, ավելի քան 1,500 հոգի զրկվեց մահկանացու կյանքից:[6]

Փոխաբերական իմաստով, *Տիտանիկի* խորտակումը կարելի է կապել կյանքի և ավետարանի շատ սկզբունքների հետ: Դա դժվարության կատարյալ օրինակ է, եթե նայենք միայն այս մահկանացու կյանքի ոսպնյակներով: Կյանքերի կորուստը աղետալի էր իր հետևանքներով, սակայն պատահական բնույթ էր կրում: Երկու համաշխարհային պատերազմների սպանդով հանդերձ և վերջերս նշվելով 10 տարին Համաշխարհային Առևտրական Կենտրոնի աշտարակների կործանման 10 տարին, մենք մեր ժամանակներում տեսնում ենք ցնցումների, հոգևարքի պատուհան և այդ դեպքերի հետ կապված բարոյական խնդիրներ, որոնք ազատ կամքի չարակամ գործադրման արդյունք էին: Անկախ պատճառից, այս ողբերգությունները սարսափազդու հարված հասցրեցին ընտանիքներին, ընկերներին և ազգերին:

Ինչ վերաբերում է *Տիտանիկին,* դասեր քաղվեցին հպարտության և վտանգավոր ջրերում ճամփորդելու մասին, և «որ Աստված աչառ չէ»:[7] Ճամփորդողները տարբեր խավերի մարդիկ էին: Ոմանք հարուստ էին և հայտնի, ինչպես Ջոն Ջեքոբ Աստորը, սակայն կային նաև աշխատողներ, էմիգրանտներ, կանայք, երեխաներ և նավի անձնակազմի անդամներ:[8]

Առնվազն երկու դեպք է հիշատակվում, երբ Վերջին Օրերի Սրբերի անունները առնչվում են *Տիտանիկի* հետ: Երկու դեպքն էլ ներկայացնում են, ինչպես ենք մենք հասկանում փորձությունները, դժբախտությունները և ողբերգությունները, և օգնում են մեզ անցնել դրանց միջով: Առաջին դեպքը երախտապարտ լինելու օրինակ է այն օրհնությունների համար, որ ստանում ենք, և խույս տալիս դժբախտությունից: Դա տեղի է ունեցել Ալմա Սոնիի հետ, որը հետագայում ծառայեց որպես Բարձրագույն Իշխանավոր:[9] Նա իմ ցցի նախագահն էր, երբ ես ծնվեցի Լոգանում, Յուտա: Իմ միսիայի հարցազրույցը ես անցել եմ Երեց Սոնիի հետ: Այն օրերին բոլոր միսիոներները հարցազրույց էին անցնում Բարձրագույն Իշխանավորների հետ: Նա մեծ ազդեցություն թողեց իմ կյանքում:

Երբ Ալման երիտասարդ էր, նա ուներ Ֆրեդ անունով ընկեր, որը ակտիվ չէր Եկեղեցում: Նրանք բազմաթիվ անգամներ քննարկել էին միսիա ծառայելու հարցը, և ի վերջո, Ալմա Սոնին համոզել էր Ֆրեդին պատրաստվել և ծառայել: Նրանք երկուսն էլ կանչվել էին Բրիտանական Միսիա: Ավարտելով իրենց միսիան, Երեց Սոնին, որը միսիայի քարտուղարն էր, Միացյալ Նահանգներ վերադառնալու համար ճամփորդության համար նախապատրաստություններ տեսավ: Նա *Տիտանիկի* տոմսեր պատվիրեց իր, Ֆրեդի և չորս այլ միսիոներների համար, ովքեր նույնպես ավարտել էին իրենց միսիան:[10]

Երբ եկավ ճամփորդության պահը, ինչ-որ պատճառով Ֆրեդը ուշացավ: Երեց Սոնին հետ վերադարձրեց այդ շքեղ շոգենավի բոլոր վեց տոմսերը և հաջորդ օրը ուղևորվող նավի տոմսեր գնեց:[11] Չորս միսիոներները, որոնք ոգևորված էին *Տիտանիկով* ճամփորդելու առիթով, իրենց հիասթափությունը հայտնեցին: Երեց Սոնին Ծննդոցից մեջբերեց Եգիպտոսում Հովսեփի և իր եղբայրների պատմությունից, ասելով. «Ինչպե՞ս կարող ենք վերադառնալ մեր ընտանիքների մոտ առանց մեր տղայի»:[12] Նա բացատրեց իր միսիոներ ընկերներին, որ իրենք բոլորը Անգլիա են եկել միասին և պետք է միասին տուն վերադառնան: Երբ Երեց Սոնին իմացավ *Տիտանիկի* խորտակման մասին, երախտագիտությամբ ասաց իր ընկեր Ֆրեդին. «Դու փրկեցիր իմ կյանքը»: Ֆրեդը պատասխանեց. «Ոչ, ինձ միսիա տանելով, դու փրկեցիր իմ կյանքը»:[13] Բոլոր միսիոներները շնորհակալություն հայտնեցին Տիրոջը իրենց պահպանելու համար:[14]

Երբեմն, Երեց Սոնիի և նրա միսիոներ ընկերների հետ կատարված դեպքի պես, մեծ օրհնություններ են գալիս հավատարիմներին: Մենք պետք է երախտապարտ լինենք այն բոլոր գորովագութ ողորմությունների համար, որ գալիս են մեր կյանք: [15] Մենք անտեղյակ ենք այն բազում օրհնություններից, որ մենք ստանում ենք ամեն օր: Անչափ կարևոր է, որ երախտագիտության ոգին ունենանք մեր սրտերում:[16]

Սուրբ գրությունները հստակ են՝ ովքեր արդար են, հետևում են Փրկչին և պահում են Նրա պատվիրանները, կբարգավաճեն երկրում:[17]

Բարգավաճման կարևոր տարրը՝ մեր կյանքում Հոգին ունենալն է:

Ինչևէ, արդարակեցությունը, աղոթքը և հավատարմությունը միշտ չէ, որ մահկանացու կյանքում երջանիկ ավարտի երաշխիքներն են: Շատերը ահավոր փորձությունների միջով կանցնեն: Այդ ժամանակ հավատք գործադրելը և քահանայության օրհնություններ փնտրելը հաստատվել է Աստծո կողմից: Տերը հայտարարել է. «Երեցները . . . պիտի կանչվեն, որ նրանց համար աղոթեն ու ձեռնադրեն նրանց՝ իմ անունով. և եթե մահանան, նրանք պիտի մահանան ինձ համար, իսկ եթե ապրեն, նրանք պիտի ապրեն ինձ համար»:[18]

Ուսանելի է, որ Վերջին Օրերի Սրբերի երկրորդ կապը *Տիտանիկի* հետ լավ ավարտ չի ունեցել: Իռեն Քորբեթը 30 տարեկան էր: Նա երիտասարդ կին և մայր էր Պրովոյից, Յուտա: Նա հրաշալի տաղանդներ ուներ որպես նկարիչ և երաժիշտ. նա նաև ուսուցիչ և բուժքույր էր: Պրովոյում բժշկական մասնագիտության մեջ խորանալու նպատակով նա վեց ամսյա մանկաբարձության դասընթացի մեկնեց Լոնդոն: Նրա մեծ ցանկությունն էր էլ ավելի լավացնել աշխարհը: Նա զգույշ էր, խելամիտ, աղոթքով լի և քաջարի: ԱՄՆ վերադառնալիս նա ընտրեց *Տիտանիկը,* որովհետև գիտեր, որ միսիոներները ճամփորդելու են իր հետ և դա լրացուցիչ ապահովության զգացում էր պարգևում նրան: Իռենը այն մի քանի կանանց թվում էր, ովքեր չկարողացան փրկվել այդ սոսկալի ողբերգության ժամանակ: Հիմնականում կանանց և երեխաներին իջեցրել էին փրկանավակների մեջ, և նրանք ի վերջո փրկվեցին: Չկային բավականաչափ փրկանավակներ բոլորի համար: Սակայն ասում են, որ նա չի նստել փրկանավակ, որովհետև օգնություն էր ցուցաբերում բազմաթիվ ուղևորների, ովքեր վիրավորվել էին սառցաբերկորի հետ բախման պատճառով:[19]

Կան տարբեր տեսակի դժվարություններ: Որոշները մեզ կարևոր փորձառություն են տալիս: Այս մահկանացու կյանքում ոչ

լավ ավարտը հավատքի պակասի կամ մեր Երկնային Հոր ընդհանուր ծրագրի անկատարության արդյունք չեն: Հալեցնողի կրակը իրական է, և բնավորության գծերը և արդարակեցությունը, որ կոփվում են չարչարանքի վառարանում, կատարելագործում և մաքրագործում են մեզ և պատրաստում Աստծուն հանդիպելուն:

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը բանտարկյալ էր Լիբերթի բանտում, Տերը նրան հայտնեց, որ բազում աղետներ կգան մարդկության վրա: Փրկիչը մասնավորապես ասաց. «Եթե քեզ զցեն ջրանդունդը. եթե բարձրացող ալիքը դավ նյութի քո դեմ. եթե կատաղի քամիները դառնան քո թշնամին . . . և բոլոր տարրերը համախմբվեն՝ ճանապարհը խոչընդոտելու . . . այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար»:[20] Փրկիչն այսպես է ավարտել Իր հրահանգը. «Քո օրերը հայտնի են, և քո տարիները չեն կրճատվի. հետևաբար, մի վախեցիր . . . քանզի Աստված քեզ հետ կլինի հավիտյանս հավիտենից»:[21]

Որոշ դժվարություններ մյուսների ազատ կամքի արդյունք են: Ազատ կամքը կարևոր է անհատի հոգևոր աճի և զարգացման համար: Մեղսագործությունը ազատ կամքի տարր է: Զորավար Մորոնին բացատրել է այս շատ կարևոր վարդապետությունը. «Տերը հանդուրժում է արդարների սպանվելը, որպեսզի իր արդարադատությունը և դատաստանը գա ամբարիշտների վրա»: Նա հստակ ասում է, որ արդարակյացները չեն կորչում, այլ «մտնում են Տիրոջ՝ իրենց Աստծո հանգիստը»:[22] Ամբարիշտները հաշվետու կլինեն իրենց չարագործությունների համար:[23]

Որոշ դժբախտություններ գալիս են Աստծո օրենքներին չհնազանդվելու արդյունքում: Առողջական խնդիրներ են առաջանում են ծխելու, ոգելից խմիչքներ օգտագործելու պատճառով, իսկ թմրանյութի չարաշահումը ապշեցուցիչ է: Ալկոհոլի և թմրանյութի ազդեցության տակ կատարված հանցագործությունների պատճառով բանտերում հայտնվածների թիվը ևս շատ բարձր է:[24]

Անհավատարմության պատճառով ամուսնալուծությունները նույնպես բազմաթիվ են: Այդ փորձություններից և դժբախտություններից շատերը կարող են տեղի չունենալ Աստծո օրենքներին հնազանդվելու դեպքում:[25]

Իմ սիրելի միսիայի նախագահ Երեց Մերիոն Դ. Հենքսը (որը մահացավ օգոստոսին), խնդրեց մեզ որպես միսիոներներ մտապահել այս խոսքերը կյանքի դժվարություններին դիմակայելու համար. «Չկա պատահականություն, չկա բախտ, կամ ճակատագիր, որ կարողանա խաբել կամ խանգարել կամ վերահսկել անհողդողդ հոգու հաստատուն վճռականությունը»:[26]

Նա նշեց, որ դա չի վերաբերում բոլոր դժվարություններին, որոնց հանդիպում ենք, սակայն գործում է հոգևոր հարցերում: Ես գնահատել եմ նրա խորհուրդն իմ կյանքում:

Տիտանիկի մարդկային կյանքերի այդքան մեծ կորստի պատճառներից մեկը փրկանավակների ոչ բավարար քանակն էր: Անկախ այս կյանքում ունեցած մեր փորձություններից, Փրկչի Քավությունը փրկանավակներ է տրամադրում բոլորին: Նրանց համար, ովքեր կարծում են, որ իրենց կրած

փորձությունները անարդար են, Քավությունը շտկում է կյանքի ամեն անարդարություն:[27]

Նրանց համար, ովքեր սիրելիներ են կորցրել, առանձնակի դժվարություն է այս կյանքում կորցրած հնարավորությունների վրա չկենտրոնանալը: Հաճախ նրանք, ովքեր շուտ են մահանում, կարևոր ունակություններ, հետաքրքրություններ և տաղանդներ են ցուցաբերած լինում: Մեր սահմանափակ հասկացողությամբ մենք ողբում ենք այն բաների համար, որ էլ չեն կատարվի, և երգերի համար, որ չեն երգվի: Սա նկարագրվել է որպես՝ մեռնել դեռևս քո մեջ գտնվող երգի հետ: Երգը այս դեպքում փոխաբերական իմաստով ներկայացնում է անկատար մնացած որևէ ներուժ: Երբեմն մարդիկ մեծապես պատրաստվում են, սակայն հնարավորություն չեն ունենում իրենց լիովին դրսևորել մահկանացու կյանքում:[28] Ամենաշատը մեջբերվող դասական պոեմներից է Թոմաս Գրեյի Եղերգություն գրված գյուղի եկեղեցու բակում, որը պատկերում է նման բացթողված հնարավորությունները.

Շատ ծաղիկներ են աննկատ ծաղկում,
Եվ իրենց գեղեցկությունը անհետ կորցնում:[29]

Կորսված հնարավորությունը կարող է վերաբերվել ընտանիքին, մասնագիտությանը, տաղանդներին, փորձառությանը և այլն: Այս ամենը անկատար մնաց Քույր Քորբեթի համար: Այս մահկանացու կյանքում չերգված երգեր մնացին և չիրագործված ներուժ: Սակայն նայելով ավետարանի լայն ու մաքուր ոսպնյակներով, և ոչ թե մահկանացու գոյության սահմանափակ ոսպնյակներով, մենք գիտենք, որ սիրելի Հայրը Իր ծրագրում մեծ հավերժական վարձք է խոստացել: Ինչպես Պողոս Առաքյալն է ուսուցանել. «Ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված իրան սիրողների համար»:[30] Սիրելի օրհներգի տողերը սփոփանք, խաղաղություն և մաքուր ոսպնյակներ

են պարգևում. «Եվ Հիսուսը լսում է երգերը, որ ես չեմ կարող երգել»:[31]

Փրկիչն ասել է. «Հետևաբար, թող ձեր սրտերը մխիթարվեն . . . Հանգիստ եղեք և իմացեք, որ ես եմ Աստված»:[32] Մենք ունենք Նրա խոստումը, որ մեր զավակների հետ կերգենք «հավիտենական ուրախության երգերը»:[33] Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հովհաննես 16.33:
2. Տես Մոսիա 18.8–9; տես նաև 2 Նեփի 32.7:
3. Տես Boyd K. Packer, "The Play and the Plan" (Church Educational System fireside for young adults, May 7, 1995), 3: "In mortality, we are like one who enters a theater just as the curtain goes up on the second act. We have missed Act 1. . . . 'And they all lived happily ever after' is never written into the second act. That line belongs in the third act when the mysteries are solved and everything is put right." See also Neal A. Maxwell, *All These Things Shall Give Thee Experience* (1979), 37: "God . . . sees the beginning from the end. . . . The arithmetic . . . is something we mortals cannot comprehend. We cannot do the sums because we do not have all the numbers. We are locked in the dimension of time and are contained within the tight perspectives of this second estate":
4. Նրանք, ովքեր մահանում են պատասխանատվության տարիքին չհասած, փրկվում են սելեստիալ արքայությունում (տես Վարդապետություն և Ուխտեր 137.10): Առանց ավետարանի մասին գիտելիք ունենալու մահացածները, որոնք կընդունեին այն, եթե իմանային, նույնպես հնարավորություն կունենան ժառանգելու սելեստիալ արքայությունը (տես Վարդապետություն և Ուխտեր 137.7); (տես նաև Վարդապետություն և Ուխտեր 76.89):
5. Տես Conway B. Sonne, *A Man Named Alma: The World of Alma Sonne* (1988), 83:
6. Տես Sonne, *A Man Named Alma,* 84:
7. Գործք 10.34; տես նաև "The Sinking of the World's Greatest Liner," *Millennial Star,* Apr. 18, 1912, 250:
8. Տես *Millennial Star,* Apr. 18, 1912, 250:
9. Երեց Սոննին երեց Լ. Թոմ Փերիի քեռին է:
10. Տես Sonne, *A Man Named Alma,* 83:
11. Տես Sonne, *A Man Named Alma,* 83–84; see also "From the Mission Field," *Millennial Star,* Apr. 18, 1912, 254: "Releases and Departures.—The following named missionaries have been honorably released and sailed for home April 13th, 1912, per s.s. *Mauretania*. From Great Britain—Alma Sonne, George B. Chambers, Willard Richards, John R. Sayer, F. A. [Fred] Dahle. From the Netherlands—L. J. Shurtliff":
12. Տես Ծննդոց 44.30–31, 34:
13. In Frank Millward, "Eight Elders Missed Voyage on Titanic," *Deseret News,* July 24, 2008, M6.
14. Տես "Friend to Friend," *Friend,* Mar. 1977, 39:
15. Տես David A. Bednar, "The Tender Mercies of the Lord," *Liahona,* May 2005, 99–102:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.21:
17. Տես Ալմա 36.30:
18. Վարդապետություն և Ուխտեր 42.44:
19. Interview with Irene Corbett's grandson Donald M. Corbett, Oct. 30, 2010, by Gary H. Cook.
20. Վարդապետություն և Ուխտեր 122.7:
21. Վարդապետություն և Ուխտեր 122.9:
22. Ալմա 60.13:
23. Ղուկաս 17.1:
24. Վարդապետություն և Ուխտերի բաժին 89-ը նվիրված է բոլոր սրբերի ֆիզիկական փրկությանը վերջին օրերում:
25. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.22–24:
26. Տես "Will," *Poetical Works of Ella Wheeler Wilcox* (1917), 129:
27. Տես «Քավություն», *Քայլոզիր Իմ Ամենապանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 51-52:
28. Տես "The Song That I Came to Sing," in *The Complete Poems of Rabrindranath Tagore's Gitanjali,* ed. S. K. Paul (2006), 64: "The song that I came to sing remains unsung to this day. / I have spent my days in stringing and in unstringing my instrument."
29. Thomas Gray, "Elegy Written in a Country Church Yard," in *The Oxford Book of English Verse,* ed. Christopher Ricks (1999), 279.
30. Ա Կորնթացիս 2.9:
31. "There Is Sunshine in My Soul Today," *Hymns,* no. 227.
32. Վարդապետություն և Ուխտեր 101.16; տսե նաև Սաղմոս 46.10:
33. Վարդապետություն և Ուխտեր 101.18; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 45.71:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մինչև նոր հանդիպում

Թող հոգին, որ մենք զգացինք այստեղ, մեզ հետ մնա, մինչ մենք կգնանք կատարելու մեր առօրյա գործերը:

Հմ եղբայրներ և քույրեր, ես գիտեմ, որ դուք կհամաձայնվեք ինձ հետ, որ սա առավել ոգեշնչող համաժողով էր: Մենք առատորեն զգացինք Տիրոջ Հոգին այս երկու անցած օրերի ընթացքում, մեր սրտերը հուզվեցին և այս աստվածային աշխատանքի մասին մեր վկայությունները ամրացան: Մենք շնորհակալություն ենք հայտնում յուրաքանչյուրին, ով մասնակցեց, ներառյալ եղբայրներին, ովքեր ասացին աղոթքները:

Մենք բոլորս այստեղ ենք, որովհետև մենք սիրում ենք Տիրոջը և ցանկանում ենք ծառայել Նրան: Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը մտածում է մեր մասին: Ես տեսնում եմ Նրա ձեռքը բոլոր բաներում:

Մեկ անգամ ևս երաժշտությունը հիանալի էր, և ես իմ անձնական շնորհակալությունն եմ հայտնում, ինչպես նաև՝ ողջ Եկեղեցու կողմից, նրանց, ովքեր կիսվեցին մեզ հետ իրենց տաղանդներով:

Մենք մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում այն Եղբայրներին, ովքեր ազատվեցին իրենց ծառայությունից այս համաժողովի ընթացքում: Նրանք հավատարմությամբ և լավ ծառայել են և նշանակալից ներդրումներ են կատարել Աստծո աշխատանքում:

Ես խորապես երախտապարտ եմ իմ հավատարիմ և նվիրված խորհրդականներին, և նրանց հրապարակավ շնորհակալություն եմ հայտնում այն աջակցության և օգնության համար, որ նրանք ինձ տրամադրում են: Նրանք իսկապես իմաստուն և հասկացող տղամարդիկ են, և նրանց ծառայությունը անգնահատելի է:

Ես շնորհակալ եմ Տասներկուսի Քվորումի իմ եղբայրներին՝ իրենց ունակ և անդադար ծառայության համար Տիրոջ գործում: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում Յոթանասունի Քվորումների անդամներին և Նախագահող Եպիսկոպոսությանը՝ իրենց անձնատուր և արդյունավետ ծառայության համար: Նմանապես, ես շնորհակալություն եմ հայտնում այն կանանց և տղամարդկանց, ովքեր ծառայում են որպես օժանդակ կազմակերպությունների բարձրագույն պաշտոնյաներ:

Եղբայրներ և քույրեր, ես հավաստիացնում եմ ձեզ, որ մեր Երկնային Հայրը մտահոգված է այն խնդիրներով, որոնց մենք հանդիպում ենք այսօր կյանքում: Նա սիրում է մեզանից յուրաքանչյուրին և կօրհնի մեզ, մինչ մենք պահենք Նրա պատվիրանները և փնտրենք Նրան աղոթքի միջոցով:

Որքան օրհնված ենք մենք, որ ունենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը: Այն տալիս է պատասխաններ այն հարցերին, թե որտեղից ենք մենք եկել, ինչու ենք այստեղ և ուր ենք գնալու, երբ հեռանանք այս կյանքից: Այն իմաստ և նպատակ է տալիս մեր կյանքին:

Ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ այն ծառայության համար, որը դուք պատրաստակամորեն մատուցում եք միմյանց: Մենք այս երկրի վրա Աստծո ձեռքերն ենք, նպատակ ունենալով սիրելու և ծառայելու Նրա զավակներին:

Ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ այն ամենի համար, ինչ դուք անում եք ձեր ծխերում և ձեր ճյուղերում: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում ձեր պատրաստակամության համար ծառայել այն պաշտոններում, որոնց դուք կանչվում եք, որտեղ էլ որ լինեք: Յուրաքանչյուրը կարևոր է Տիրոջ աշխատանքը առաջ տանելու գործում:

Համաժողովն ավարտվեց: Թող որ մենք ապահով վերադառնանք մեր տները: Թող որ վերադառնալով տուն տեսնենք, որ ամեն ինչ լավ էր մեր բացակայության ժամանակ: Թող հոգին, որ մենք

զգացինք այստեղ, մեզ հետ մնա, մինչ մենք կգնանք կատարելու մեր առօրյա գործերը: Թող որ մենք ավելի մեծ բարություն ցուցաբերենք միմյանց նկատմամբ: Թող որ մենք միշտ զբաղված լինենք Տիրոջ աշխատանքով:

Թող երկնային օրհնությունները ձեզ հետ լինեն: Թող ձեր տները լցված լինեն ներդաշնակությամբ և սիրով: Թող դուք մշտապես սնեք ձեր վկայությունները, որպեսզի դրանք պաշտպանություն լինեն ձեզ համար թշնամուց:

Որպես ձեր խոնարհ ծառա, ես ցանկանում եմ իմ ողջ սրտով կատարել Աստծո կամքը և ծառայել Նրան և ձեզ:

Ես սիրում եմ ձեզ, ես աղոթում եմ ձեզ համար: Կրկին ես պետք է խնդրեմ, որ դուք ձեր աղոթքներում հիշեք ինձ և Բարձրագույն բոլոր Իշխանություններին: Մենք մեկ ենք ձեզ հետ՝ այս հրաշալի աշխատանքը առաջ տանելու գործում: Ես վկայում եմ ձեզ, որ մենք բոլորս այս գործում միասին ենք, և որ յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա ունի իր դերը: Թող Աստված պարգևի մեզ ուժ և ունակություն և վճռականություն, որպեսզի մեր դերը լավ կատարենք:

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ մեր Փրկիչն ապրում է, և որ Նա առաջնորդում և ղեկավարում է Իր Եկեղեցին երկրի վրա: Ես թողնում եմ ձեզ հետ իմ վկայությունը, որ Աստված՝ մեր Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ: Նա իսկապես մեր Հայրն է, և Նա անձնական և իրական է: Թող որ մենք գիտակցենք և հասկանանք, թե որքան է Նա ցանկանում մոտենալ մեզ, որքան շատ է Նա ցանկանում օգնել մեզ, որքան շատ է Նա սիրում մեզ և որքան շատ է Նա անում և ցանկանում անել մեզ համար:

Թող Նա օրհնի ձեզ: Թող Նրա խոստացված խաղաղությունը լինի ձեզ հետ այժմ և հավիտյան:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ, մինչև որ մենք կհանդիպենք կրկին վեց ամիս անց, և ես անում եմ դա Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի և Քավչի անունով, ամեն: ■

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ | *Սեպտեմբերի 24, 2011թ.*

Ջուլի Բ. Բեք
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Ինչ եմ ցանկանում, որ իմ թոռնուհիները (և թոռները) հասկանան Սփոփող Միության մասին

Սկսած այն օրվանից, որ ավետարանը սկսեց վերականգնվել այս տնտեսությունում, Տիրոջը պետք էր, որ հավատարիմ կանայք մասնակցեին որպես Իր աշակերտներ:

Այս պատմական ժողովին ձեզ դիմելը պատիվ է: Միասին լինելը օրհնություն է մեզ համար: Սփոփող Միությունում գերագույն նախագահ ծառայելու ընթացքում ես մեծ սեր եմ զարգացրել ձեր հանդեպ՝ Եկեղեցու Սփոփող միության քույրեր, և Տերը մեծացրել է իմ խորաթափանցությունն այն մասին, թե ինչ է Նա զգում մեր վերաբերյալ և ինչ է Նա սպասում մեզնից:

Ես վերնագրել եմ այս ուղերձն այսպես՝ «Ինչ եմ ցանկանում, որ իմ թոռնուհիները (և թոռները) հասկանան Սփոփող Միության մասին»: Իմ մեծ թոռնուհիները եռանդուն կերպով աշխատում են Անձնական Զարգացման վրա և զարգացնում են ազնիվ կին լինելու սովորություններ և գծեր: Շուտով նրանք և իրենց հասակակիցները կկրեն այս աշխարհասփյուռ հիանալի քույրության պատասխանատվությունը:

Ես հուսով եմ, որ այն, ինչ ասեմ այս ուղերձում, կօգնի նրանց և բոլորին, ովքեր կլսեն կամ կկարդան այն, պարզ հասկանալ, թե ինչ էր Տերն ակնկալում Իր դուստրերից, երբ կազմավորվեց Սփոփող Միությունը:

Հին ժամանակների աշակերտության օրինակը

Ես հուսով եմ, որ թոռնուհիներս կհասկանան, որ Սփոփող Միությունը այսօր կազմավորվել է աշակերտության օրինակի հիման վրա,

տղամարդիկ հոժար էին թողնել իրենց ընտանիքները, ճամփորդել անհայտ տեղեր և տանել անհարմարություններ և դժվարություններ ավետարանը ուսուցանելու համար: Սակայն այս տղամարդիկ հասկանում էին, որ իրենց միսիան հնարավոր չէր լինի առանց իրենց կյանքի կանանց լիարժեք հավատքի և ընկերակցության, ովքեր աջակցում էին տներում և բիզնեսներում և եկամուտ էին վաստակում իրենց ընտանիքների և միսիոներների համար: Քույրերը հոգում էին նաև իրենց համայնքներում հավաքված հազարավոր նորադարձների համար: Նրանք մեծապես նվիրված էին կյանքի նոր ձևին՝ օգնելով կառուցել Տիրոջ թագավորությունը:

որը գոյություն է ունեցել Եկեղեցում հին ժամանակներում: Երբ Փրկիչը կազմավորեց Իր Եկեղեցին Նոր Կտակարանի ժամանակներում, «կանայք կարևորագույն մասնակիցներն էին [Նրա] ծառայության»:[1] Նա այցելեց Մարթային և Մարիամին՝ Նրա երկու ամենանվիրված հետևորդներին, Մարթայի տանը: Մինչ Մարթան լսում էր Նրան և ծառայում համաձայն իրենց ժամանակների սովորույթների, Նա օգնեց նրան տեսնել, որ կարող էր անել ավելին: Նա օգնեց Մարթային և Մարիամին հասկանալ, որ նրանք կարող էին ընտրել «այն բարի բաժինը», որը չէր վերցվի իրենցից:[2] Այս մեղմ դիտողությունը ծառայեց որպես հրավեր՝ մասնակցելու Տիրոջ ծառայությանը: Եվ ավելի ուշ Նոր Կտակարանում Մարթայի ամուր վկայությունը Տիրոջ աստվածության վերաբերյալ տալիս է մեզ ավելի մեծ խորաթափանցություն նրա հավատքի և աշակերտության մասին:[3]

Երբ մենք շարունակում ենք կարդալ Նոր Կտակարանը, մենք իմանում ենք, որ Առաքյալները շարունակել են հաստատել Տիրոջ Եկեղեցին: Մենք նաև իմանում ենք հավատարիմ կանանց մասին, ում աշակերտության օրինակը նպաստել է Եկեղեցու աճին: Պողոսը խոսել է Եփեսոսի[4] և Փիլիպպեայի[5] կին հետևորդների մասին: Սակայն երբ Տիրոջ ճշմարիտ Եկեղեցին կորավ ուխտադրժության մեջ, աշակերտության այս օրինակը նույնպես կորավ:

Երբ Տերը սկսեց վերականգնել Իր Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, Նա կրկին ներառեց կանանց աշակերտության մեջ: Եկեղեցու պաշտոնական կազմավորումից մի քանի ամիս անց Տերը հայտնեց, որ Էմմա Սմիթը պետք է ձեռնադրվի որպես առաջնորդ և ուսուցիչ Եկեղեցում և որպես պաշտոնական օգնական իր ամուսնու՝ Մարգարեի համար:[6] Իր թագավորությունը կառուցելու գործում Տիրոջն օգնելու իր կոչման հետ կապված նրան տրվել էին հրահանգներ, թե ինչպես մեծացներ իր հավատքը և անձնական արդարությունը, ինչպես ամրացներ իր ընտանիքն ու իր տունը, և ինչպես ծառայեր ուրիշներին:

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան, որ սկսած այն օրվանից, որ ավետարանը սկսեց վերականգնվել այս տնտեսությունում, Տիրոջը պետք էր, որ հավատարիմ կանայք մասնակցեին որպես Իր աշակերտներ:

Նրանց զարմանալի աջակցության օրինակներից մեկը միսիոներական աշխատանքին էր վերաբերվում: Վաղ շրջանի Եկեղեցու մեծ աճը հնարավոր դարձավ, որովհետև հավատարիմ

Կապված Քահանայությանը

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան, որ Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին կազմավորել Եկեղեցու կանանց «քահանայության ներքո՝ քահանայության օրինակով»[7] և սովորեցնել նրանց, թե «ինչպես [նրանք] կունենան արտոնություններ, օրհնություններ և Քահանայության պարգևներ»:[8]

Երբ Սփոփող Միությունը պաշտոնապես կազմավորվեց, Էմմա Սմիթը շարունակում էր կրել ղեկավար լինելու իր կոչումը: Նա կոչվեց կազմակերպության նախագահ և ունեցավ երկու խորհրդականներ, որոնք ծառայում էին իր հետ նախագահությունում: Փոխանակ ժողովրդի ձայնով ընտրվելուն, ինչպես ընդունված էր Եկեղեցուց դուրս կազմակերպություններում, այս նախագահությունը կանչված էր հայտնությամբ, հաստատված նրանց կողմից, ում նրանք առաջնորդելու էին և ձեռնադրված քահանայության ղեկավարների կողմից, որ ծառայեն իրենց կոչումներում, այսպիսով, որպեսզի «կանչված լինի Աստծո կողմից՝ մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրմամբ»:[9] Քահանայության ներքո կազմավորված լինելը հնարավոր դարձրեց նախագահության համար ցուցումներ ստանալ Տիրոջից և Իր մարգարեից այս յուրահատուկ աշխատանքի համար: Եվ

Սփոփող Միության կազմավորումը հնարավոր դարձրեց, որ տաղանդի, ժամանակի և միջոցների Տիրոջ պահեստը կառավարվի իմաստությամբ և կարգով:

Կանանց այդ առաջին խումբը հասկանում էր, որ իրենց տրված էր ուսուցանելու, ոգեշնչելու և որպես աշակերտներ քույրերին կազմակերպելու իշխանությունը, որպեսզի օգնեն Տիրոջ փրկության աշխատանքում: Իրենց առաջին ժողովներում քույրերին սովորեցվեց Սփոփող Միության առաջնորդող նպատակները՝ մեծացնել հավատքն ու անձնական արդարությունը, ամրացնել ընտանիքներն ու տները և գտնել ու օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան, որ Սփոփող Միության կազմակերպությունը բացառիկ հնարավորությունների, օրհնությունների և միայն տաճարում գտնվող պարգևների առանցքային մասն էր: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ուսուցանել է, որ Սփոփող Միությունը «երկրի վրա Աստծո թագավորության կարևորագույն մասն է» և «այնպես է նախագծված և գործում, որ այն օգնում է իր հավատարիմ անդամներին հավերժական կյանք ձեռք բերել մեր Հոր թագավորությունում»:[10] Մենք կարող ենք պատկերացնել, թե ինչ էր նշանակում քույրերի համար լինել Ջոզեֆ Սմիթի Կարմիր Աղյուսե Վաճառատանը Սփոփող Միության այդ առաջին ժողովների ժամանակ, իրենց դիմաց ունենալով բլուրը, որտեղ կառուցվում էր Տաճարը, մինչ Մարգարեն սովորեցնում էր նրանց, որ «այնտեղ կլինի ընտրյալ հասարակություն, աշխարհի ամեն չարից բաժանված, ընտիր, առաքինի և սուրբ»:[11]

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները գնահատում են տաճարն այնպես, ինչպես առաջին Սփոփող Միության քույրերը, ովքեր հավատում էին, որ տաճարի օրհնությունները յուրաքանչյուր Վերջին Օրերի Սուրբ կնոջ գլխավոր մրցանակն ու մեծ նպատակն են: Ես հուսով եմ, որ առաջին Սփոփող Միության քույրերի պես, իմ թոռնուհիները

կջանան ամեն օր դառնալ բավականաչափ հասուն տաճարային սուրբ ուխտեր կապելու և պահելու համար, և որ երբ նրանք գնան տաճար, նրանք ուշադրություն կդարձնեն ամենին, ինչ ասվում և արվում է: Տաճարի օրհնությունների միջոցով նրանք պարուրված կլինեն փառքով[12] և օրհնված՝ ստանալու «արքայության խորհուրդների բանալիները»:[13] Միայն տաճարներում կատարվող քահանայության արարողությունների միջոցով նրանք կօրհնվեն իրականացնելու իրենց աստվածային, հավերժական պարտականությունները, և նրանք կխոստանան ապրել ինչպես նվիրված աշակերտներ: Ես երախտապարտ եմ, որ Սփոփող Միություն կազմավորելիս Տիրոջ հիմնական նպատակներից մեկը եղել է կանանց պարտականություն տալը, որ օգնեն իրար պատրաստվել «քահանայության ավելի մեծ օրհնություններին, որոնք գտնվում են տաճարային արարողություններում և ուխտերում»:[14]

Աշխարհասփյուռ քույրության ապաստանն ու ազդեցությունը

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան հրաշալի Սփոփող Միության աշխարհասփյուռ քույրության կարևոր ազդեցությունն ու հնարավորությունը: Սկսած 1842թ. Եկեղեցին լավ տարածվել է Նավուից դուրս, և Սփոփող Միությունը այժմ գտնվում է ավելի քան 170 երկրներում, որտեղ քույրերը խոսում են ավելի, քան 80 լեզուներով: Ամեն շաբաթ նոր ծխեր և ճյուղեր են կազմավորվում, և նոր Սփոփող Միություններ դառնում են հավերժորեն ընդարձակվող քույրության մասը, «տարածվում երկրներով մեկ»:[15] Երբ Սփոփող Միությունը համեմատաբար փոքրաքանակ էր և կազմավորված էր հիմնականում Յուտայում, դրա ղեկավարները կարող էին կենտրոնացնել իրենց կազմակերպությունն ու աշակերտությունը հիմնականում տեղական հասարակական ծրագրերի և իրենց մեջ սփոփող աշխատանքների վրա: Նրանք զարգացրեցին տնային արտադրությունները և իրականացրեցին հիվանդանոցներ կառուցելու և հացահատիկի պաշար հավաքելու ծրագրեր: Այդ առաջին Սփոփող Միության ջանքերը օգնեցին հաստատել աշակերտության օրինակներ, որոնք այժմ մեծապես օգտագործվում են: Մինչ Եկեղեցին աճում է, Սփոփող Միությունը հնարավորություն ունի իրականացնելու իր նպատակները յուրաքանչյուր ծխում և ճյուղում, յուրաքանչյուր ցցում և շրջանում, հարմարվելով մշտապես փոփոխվող աշխարհին:

Ամեն օր Սփոփող Միության քույրերը ամբողջ աշխարհում հանդիպում են մահկանացու դժվարությունների և փորձառությունների ողջ տեսականուն: Կանայք և

նրանց ընտանիքները այսօր ապրում են, դեմ առ դեմ հանդիպելով անսպասելի դեպքերի՝ մտավոր, ֆիզիկական և հոգևոր հիվանդությունների, վթարների և մահվան: Որոշ քույրեր տառապում են միայնակ լինելու և հիասթափվելու արդյունքում, որովհետև նրանք չունեն իրենց սեփական ընտանիքները, իսկ մյուսները տառապում են ընտանիքի անդամների կողմից կատարված վատ ընտրությունների պատճառով: Ոմանք տեսել են պատերազմ, սով կամ բնական աղետներ, ոմանք էլ սովորում են կախվածության մեջ լինելու, գործազրկության կամ չբավականացնող կրթության և գործնական ուսուցման պակասի դժվարությունների մասին: Այս բոլոր դժվարությունները կարող են սասանել մեր հավատքը և թուլացնել անհատներին և ընտանիքներին: Քույրերի աշակերտության կազմավորման հարցում Տիրոջ նպատակներից մեկը եղել է օգնություն ապահովելը, որը նրանց վեր կբարձրացնի «ամենից, որ խոչընդոտում են կնոջ ուրախությանը և զարգացմանը»:[16] Յուրաքանչյուր ծխում և ճյուղում կա Սփոփող Միություն, որում կան քույրեր, ովքեր կարող են փնտրել, հայտնություն ստանալ և խորհրդակցել քահանայության ղեկավարների հետ, որպեսզի ամրացնեն իրար և աշխատեն հարցերի լուծման վրա, որոնք կիրառելի են իրենց իսկ տանը և համայնքներում:

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան, որ Սփոփող Միության միջոցով նրանց աշակերտությունը մեծանում է և նրանք կարող են այլոց հետ միասին ներգրավվել այնպիսի աշխատանքի մեջ, ինչպիսին արել է Տերը: Այս ծառայության միջոցով նրանք կարող են բաներ փոխել աշխարհում: Եթե պաշտոնական հաշվետվություն պահվեր բոլոր ծառայությունների և բոլոր օգնությունների վերաբերյալ, որոնք մատուցվել են Սփոփող Միության կողմից՝ սկսած դրա կազմավորումից, դա կլիներ ազդեցիկ և հերոսական արձանագրություն:

Իմ թոռնուհիները նաև պետք է իմանան, որ Սփոփող Միության քույրությունը կարող է լինել ապահովության վայր, ապաստան և պաշտպանություն:[17] Մինչ մեր ժամանակները ավելի բարդանում են, Սփոփող Միության հավատարիմ քույրերը կօգնեն պաշտպանել Սիոնի տները աշխարհի տհաճ ձայներից և հակառակորդի կլանող ու գայթակղիչ ազդեցությունից: Եվ Սփոփող Միության միջոցով արդար կանանց ազդեցությունը կարող է օրհնել մեր Հոր զավակներից ավելի շատերին:

Հոգատարության և ծառայության աշակերտություն

Ես հուսով եմ, իմ թոռնուհիները կհասկանան, որ այցելությամբ ուսուցումը իրենց աշակերտության արտահայտությունն է և իրենց ուխտերը պատվելու նշանակալից ձև: Մեր աշակերտության այս տարրը կարող է մանրազնին կերպով նմանվել մեր Փրկչի ծառայությանը: Սփոփող Միության վաղ շրջանում յուրաքանչյուր ծխի այցելող հանձնախումբ հանձնարարություն էր ստանում որոշելու կարիքները և հավաքելու նվիրատվություններ՝ կարիքավորներին բաժանելու համար: Տարիների ընթացքում Սփոփող Միության քույրերը և Սփոփող Միության ղեկավարները քայլ առ քայլ սովորել են և զարգացրել ուրիշների համար հոգալու իրենց ունակությունը: Եղել են ժամանակներ, երբ քույրերը ավելի շատ կենտրոնացել են ամբողջական այցելությունների վրա, դասերի ուսուցանման վրա և նշումներ թողնելու վրա, երբ այցելել են իրենց քույրերի տները: Այս փորձառությունները օգնել են քույրերին սովորել հոգատարության օրինակներ: Ճիշտ ինչպես ժողովուրդը Մովսեսի ժամանակներում կենտրոնացած էր օրենքների երկար ցուցակները պահելու վրա, Սփոփող Միության քույրերը երբեմն շատ գրված և չգրված օրենքներ են կիրառել իրենց վրա, ցանկանալով հասկանալ, թե ինչպես ամրացնեն իրար:

Այսօր քույրերի և նրանց ընտանիքների կյանքում սփոփանքի և ապահովության մեծ կարիքից ելնելով, մեր Երկնային Հայրը կարիք ունի, որ մենք հետևենք բարձրագույն ուղուն և ցուցաբերենք մեր աշակերտությունը՝ Նրա զավակների համար անկեղծորեն հոգալով: Մտքում ունենալով այս կարևոր նպատակը, ղեկավարներն ուսուցանվել են խնդրել տեղեկատվություն քույրերի և նրանց ընտանիքների հոգևոր և նյութական բարեկեցության և մատուցված ծառայության մասին:[18] Եվ այցելող ուսուցիչները պարտականություն ունեն «անկեղծորեն ճանաչել և սիրել յուրաքանչյուր քրոջ, օգնել նրան ամրացնել իր հավատքը և ծառայություն մատուցել»:[19]

Որպես Փրկչի հավատարիմ աշակերտներ, մենք կատարելագործվում ենք մեր ունակություններում անելու բաներն այնպես, ինչպես Նա կաներ, եթե Նա լիներ այստեղ: Մենք գիտենք, որ Նրա համար կարևորը մեր հոգատարությունն է, և ուստի մենք փորձում ենք կենտրոնանալ մեր քույրերի համար հոգալու վրա, և ոչ թե որոշ բաներ անելու ցուցակը լրացնելու վրա: Իսկական ծառայությունը չափվում է ավելի շատ մեր գթության խորությամբ, քան թե մեր վիճակագրական տվյալների կատարելությամբ: Մենք կիմանանք, որ մենք հաջողակ ենք որպես այցելող ուսուցիչներ մեր ծառայության մեջ, երբ մեր քույրերը կարող են ասել «Իմ այցելող ուսուցիչը օգնում է ինձ հոգևորապես աճել», «Ես գիտեմ, որ իմ այցելող ուսուցիչը շատ է մտահոգվում իմ և իմ ընտանիքի մասին» և «Եթե ես խնդիրներ ունեմ,

Իտու, Բրազիլիա

ես գիտեմ, որ իմ այցելող ուսուցիչը գործի կանցնի առանց հրավերի սպասելու»: Քույրերն ու առաջնորդները, ովքեր հասկանում են ուրիշներին ծառայելու կարևորությունը, կխորհրդակցեն միասին, թե ինչպես փնտրեն ու ստանան հայտնություն այցելող ուսուցիչներին ոգեշնչելու համար և ինչպես կազմակերպեն և կատարեն իրենց ծառայությունը:

Ի լրացում, այցելությամբ ուսուցումը Տիրոջ հոտի համար հոգալու եպիսկոպոսի պատասխանատվության լրացումն է: Եպիսկոպոսն ու Սփոփող Միության նախագահը ոգեշնչված այցելող ուսուցիչների կարիքն ունեն՝ օգնելու նրանց կատարել իրենց պարտականությունները: Այցելող ուսուցիչների ծառայության միջոցով Սփոփող Միության նախագահը կարող է տեղեկանալ ծխի յուրաքանչյուր քրոջ բարեկեցության վերաբերյալ և զեկուցել նրանց բարեկեցության վերաբերյալ, երբ նա այցելում է իր եպիսկոպոսին:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ուսուցանել է մեզ, որ «երբ մենք հավատքով ջանում ենք առանց տատանվելու իրականացնել մեզ տրված պարտականությունները, երբ մենք փնտրում ենք Ամենակարողի ոգեշնչումը մեր պարտականությունները կատարելիս, մենք կարող ենք հասնել հրաշքների»:[20] Ես հուսով եմ իմ թոռնուհիները մասնակից կլինեն հրաշքների, երբ նրանք օգնեն, որ այցելությամբ ուսուցանելը դառնա աշակերտության օրինակ, որ Տերը կճանաչի, երբ Նա կրկին գա:

Իրականացնելով Սփոփող Միության նպատակը

Սփոփող Միության վերաբերյալ այս և այլ կարևոր ուսմունքներ այժմ մատչելի են իմ թոռնուհիներին *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* գրքի շնորհիվ: Այս գիրքը պարունակում է Սփոփող Միության և այս Եկեղեցու կանանց ժառանգությունը: Այն կմիավորի և կաջակցի աշխարհասփյուռ քույրությանը Սփոփող Միության նպատակներով և աշակերտների

օրինակներով և արտոնություններով: Այն մեր Հոր երջանկության ծրագրում կանանց դերերի կարևորության վկայությունն է, և այն տալիս է կայուն չափանիշ, թե ինչին ենք մենք հավատում, ինչ ենք մենք անում և ինչ ենք մենք պաշտպանում: Առաջին Նախագահությունը քաջալերել է մեզ «ուսումնասիրել այս գիրքը և թույլ տալ դրա հավերժական ճշմարտություններին և ոգեշնչող օրինակներին ազդել [մեր] կյանքի վրա»:[21]

Իմանալով, որ Սփոփող Միության կազմակերպությունը աստվածայնորեն է ստեղծված, Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը Սփոփող Միության քույրերին ասել է. «Դուք եք, որ պիտի առաջնորդեք աշխարհը, և հատկապես՝ աշխարհի կանանց: . . .Դուք գլուխն եք, ոչ թե պոչը»:[22] Մինչ Տիրոջ վերադառնալու ժամանակը մոտենում է, ես հուսով եմ, իմ թոռնուհիները կդառնան ուժեղ, հավատարիմ կանայք, ովքեր կիրառում են Սփոփող Միության սկզբունքներն ու օրինակները իրենց կյանքում: Երբ Սփոփող Միությունը դառնա նրանց համար ապրելակերպ, նրանք միասնության մեջ կծառայեն ուրիշների հետ՝ իրականացնելով դրա աստվածային նպատակները: Ես վկայություն ունեմ Հիսուս Քրիստոսի վերականգնված ճշմարիտ Եկեղեցու վերաբերյալ, և ես երախտապարտ եմ աշակերտության օրինակի համար, որը վերականգնվեց, երբ Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին կազմավորել Սփոփող Միությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *«Իմ արքայության դուստրերը». Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 3:
2. Տես Ղուկաս 10.38–42:
3. Տես Հովհաննես 11.20–27:
4. Տես Գործք 18.24–26; Հռովմեացիս 16.3–5:
5. Տես Փիլիպեցիս 4.1–4:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 25:
7. Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 12.
8. Joseph Smith, in *History of the Church,* 4:602.
9. Հավատո Հանգանակներ 1.5:
10. Joseph Fielding Smith, in *Daughters in My Kingdom,* 97.
11. Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 15.
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22; տես նաև Sheri L. Dew, in *Daughters in My Kingdom,* 128:
13. Վարդապետություն և Ուխտեր 84.19; տես նաև also Ezra Taft Benson, in *Daughters in My Kingdom,* 129:
14. *Daughters in My Kingdom,* 131.
15. Boyd K. Packer, in *Daughters in My Kingdom,* 99.
16. John A. Widtsoe, in *Daughters in My Kingdom,* 25.
17. Տես *Daughters in My Kingdom,* 86–87.
18. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.5.4:
19. *Handbook 2,* 9.5.1.
20. Thomas S. Monson, in *Daughters in My Kingdom,* 91.
21. First Presidency, in *Daughters in My Kingdom,* ix.
22. Joseph F. Smith, in *Daughters in My Kingdom,* 66.

Սիլվիա Հ. Ալրեդ
Սփոփող Միության Գերագույն Նախագահության
Առաջին Խորհրդական

Գթությունը երբեք չի խափանվում

Աղերսեք, որ լցվեք գթությամբ՝ Քրիստոսի մաքուր սիրո պարգևով:

Ամուսինս և ես վերջերս այցելեցինք Նավու քաղաքը, Իլինոյսում: Երբ այնտեղ էինք՝ Կարմիր Աղյուսից խանութում, որտեղ գտնվում էին Մազարե Ջոզեֆ Սմիթը գրասենյակը և աշխատանքը, ուշադիր լսում էինք ուղեկցորդին, որը պատմեց Վերականգման մի քանի պատմական իրադարձությունների մասին, որոնք տեղի էին ունեցել այնտեղ:

Մտքերս ուղղվեցին դեպի Սփոփող Միության հիմնադրումը և Սփոփող Միության ուսմունքներից մի քանիսին, որոնք Սփոփող Միության քույրերը ստացան Մարգարե Ջոզեֆից հենց այդ սենյակում: Այդ ուսմունքները դարձան հիմնադրույթային սկզբունքներ, որոնց վրա կառուցվեց Սփոփող Միությունը: Հավատքն ուժեղացնելու, Սիոնի տները զորացնելու և կարիքավորներին որոնելու և օգնելու նպատակները հիմնադրվեցին սկզբից ի վեր: Դրանք միշտ համահունչ են եղել մարգարեական առաջնահերթություններին:

Այդ առաջին ժողովների ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթը մեջբերեց Կորնթացիներին ուղղված Պողոսի գրվածքներից: Գթության վերաբերյալ իր հզոր դատողություններում Պողոսն անդրադառնում է հավատքին, հույսին և գթությանը, եզրափակելով «բայց սորանցից մեծը սէրն է»:[1]

Նա նկարագրում է գթության մեջ մարմնավորված հատկանիշները:

«Սէրը երկայնամիտ է՝ քաղցր է. Սէրը չէ նախանձվում, չէ գոռոզանում, չէ հպարտանում,

Իրը չէ որոնում, չէ գրգռվում, չարը չէ մտածում,

Անիրաւութեան վերայ չէ ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտութեան հետ,

Ամեն բանի դիմանում է. Ամեն բան հաւատում է, ամեն բանի համար յոյս ունի, ամեն բանի համբերում է:

Սէրը երբէք չի վերջանալ»:[2]

Խոսելով քույրերի հետ, Մարգարե Ջոզեֆն ասաց. «Ձեր մերձավորների արժանիքների վերաբերյալ մի սահմանափակվեք ձեր տեսակետներում . . . Դուք պետք է մեծացնեք ձեր հոգիները դեպի ուրիշները, եթե «կամենում» եք անել Հիսուսի նման: . . . Երբ աճում եք անմեղության և առաքինության մեջ, երբ աճում եք բարության մեջ, թող ձեր սրտերն ընդարձակվեն, թող դրանք ընդարձակվեն դեպի ուրիշները, դուք պետք է երկայնամիտ լինեք և համբերատար մարդկության հանցանքների ու սխալների հանդեպ: Որքան արժեքավոր են մարդկանց հոգիները»:[3]

Սուրբգրքյան հայտարարությունը «Գթությունը երբեք չի խափանվում» դարձավ Սփոփող Միության նշանաբանը, որովհետև այն ընդգրկում է այս ուսմունքները և այն պարտավորությունը, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը տվեց Սփոփող Միության քույրերին՝ «սփոփեք աղքատներին» և «փրկեք հոգիներ»:[4]

Այս հիմնադրույթային սկզբունքները ընդունվեցին Սփոփող Միության քույրերի կողմից ողջ աշխարհում, քանի որ այդպիսին է Սփոփող Միության աշխատանքի բնույթը:

Ի՞նչ է գթությունը: Ինչպե՞ս ենք ձեռք բերում գթություն:

Մարգարե Մորմոնը բնորոշում է գթությունը, որպես Քրիստոսի մաքուր սեր,[5] մինչդեռ Պողոսն ուսուցանում է, որ «սէրը . . . կատարելութեան կապն է»,[6] իսկ Նեփին հիշեցնում է մեզ, որ «Տեր Աստված տվել է պատվիրան, որ բոլոր մարդիկ պետք է գթություն ունենան, գթություն, որը սեր է»:[7]

Վերանայելով գթությանՊողոսի նախորդ նկարագրությունը, մենք իմանում ենք, որ գթությունը մեկանգամյա գործողություն չէ կամ մի բան, որ մենք տալիս ենք, այն գոյության վիճակ է, սրտի վիճակ, բարի զգացումներ, որոնք առաջացնում են սիրո գործեր:

Մորմոնը նաև ուսուցանում է, որ գթությունը շնորհվում է Տիրոջ ճշմարիտ աշակերտներին և որ գթությունը մաքրագործում է նրանց, ովքեր ունեն այն:[8] Բացի այդ, մենք իմանում ենք, որ գթությունը աստվածային պարգև է, որին մենք պետք է ձգտենք և որի համար պետք է աղոթենք: Մենք պետք է ունենանք գթություն մեր սրտերում, որպեսզի ժառանգենք սելեստիալ արքայությունը:[9]

Հասկանալով, որ Տերը խնդրել է մեզ, որ «հագ[նենք] գթության կապը»,[10] մենք պետք է հարցնենք, թե ինչ հատկանիշներ կօգնեն մեզ զարգացնել գթություն:

Մենք պետք է առաջինը

ցանկություն ունենանք աճել գթության մեջ և լինել ավելի Քրիստոսանման:

Հաջորդ քայլը աղոթելն է: Մորմոնը հորդորում է մեզ «աղոթել Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով»: Այդ աստվածային սերը գթությունն է և երբ մենք լցվենք այդ սիրով, ապա «մենք նման կլինենք Նրան»:[11]

Սուրբ գրություններն ամեն օր կարդալը կարող է մեր միտքը դեպի Փրկիչն ուղղել և Նրան նման լինելու ցանկությունը բերել:

Իմ գրասենյակում ես ընտրեցի Միներվա Տեչերտի կտավը կախել, որի անունն է *Կորած գառնուկի ազատումը:* Այն պատկերում է Իր ոչխարների մոտ կանգնած և քնքշորեն մի փոքրիկ գառնուկի գրկած Փրկչին: Այն օգնում է ինձ մտածել Նրա մասին.«Արածացրեք իմ ոչխարներին» խնդրանքի մասին,[12] որն ինձ համար նշանակում է ծառայել բոլոր նրանց մեր շրջապատում և հատուկ ուշադրություն դարձնել նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Փրկիչը կատարյալ օրինակ է, թե ինչպես հասցնել գթություն: Իր մահկանացու ծառայության ժամանակ Նա ցուց տվեց կարեկցանք սովածների, մեղավորների, տառապյալների և հիվանդների հանդեպ: Նա ծառայեց աղքատներին և հարուստներին, կանանց, երեխաներին և տղամարդկանց, ընտանիքին, ընկերներին և օտարականներին: Նա ներեց Իրեն դատապարտողներին, և Նա տառապեց և տանջվեց ու մահացավ ողջ մարդկության համար:

Իր կյանքի ընթացքում Մարգարե Ջոզեֆ Սմիթը ևս գործադրեց գթություն, երբ նա դրսևորեց

Իտու, Բրազիլիա

եղբայրական սեր և հարգանք ուրիշների հանդեպ: Նա լավ հայտնի էր իր բարությամբ, սիրով, կարեկցանքով և իր շրջապատում գտնվողների հանդեպ հոգատարությամբ:

Այսօր մենք օրհնված ենք, ունենալով մարգարե, որը մարմնավորում է գթություն: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը օրինակ է մեզ և աշխարհի համար: Նա կրում է գթության թիկնոցը: Նա բարի է, կարեկցող և առատաձեռն, Տեր Հիսուս Քրիստոսի իսկական ծառա:

Նախագահ Մոնսոնն ուսուցանում է. «Գթությունը համբերություն ունենալն է մեկի հանդեպ, որը մեր հանդեպ ստորություն է արել: Դա հեշտորեն վիրավորվելու մղմանը դիմադրելն է: Դա թուլություններն ու թերություններն ընդունելն է: Դա մարդկանց ընդունելն է այնպիսին, ինչպիսին իրականում նրանք կան: Դա ֆիզիկական արտաքինից այն կողմ հատկանիշներ տեսնելն է, որոնք չեն խամրի ժամանակի ընթացքում: Դա ուրիշներին դասակարգելու մղմանը դիմադրելն է»:[13]

Երբ մենք գթություն ունենք, մենք ուզում ենք ծառայել և օգնել ուրիշներին, երբ մեզ համար այնքան էլ հարմար չէ և առանց շնորհակալություն կամ փոխհատուցում սպասելու: Մենք չենք սպասում, որ մեզ հանձնարարություն տրվի օգնելու, որովհետև դա դառնում է մեր իսկ էությունը: Երբ ընտրում ենք լինել բարի, հոգատար,առատաձեռն, համբերատար, ընդունող,ներող, ներգրավող և անեսասեր, մենք նկատում ենք, որ առատանում ենք գթությամբ:

Սփոփող Միությունն ապահովում է ուրիշներին ծառայելու անհամար ուղիներ: Գթություն գործադրելու ամենակարևոր ուղիներից մեկը այցելությամբ ուսուցանելն է: Արդյունավետ այցելող ուսուցման միջոցով մենք շատ հնարավորություններ ունենք սիրելու, սպասավորելու և ծառայելու ուրիշներին:Գթություն կամ սեր ցույց տալը մաքրում է և սրբագործում մեր հոգիները, օգնելով մեզ ավելի նմանվել Փրկչին:

Ես հիանում եմ, երբ ականատես եմ լինում գթության գործերի, որոնք կատարվում են ամեն օր այցելող ուսուցիչների կողմից ողջ աշխարհում, ովքեր անձնազոհորեն սպասավորում են քույրերի և նրանց ընտանիքների անձնական կարիքները: Այս հավատարիմ այցելող ուսուցիչներին ես ասում եմ՝ այդ փոքրիկ գթության գործերով, դուք հետևում եք Փրկչին և դուք գործում եք որպես միջոց Նրա ձեռքում, երբ օգնում եք, հոգում, բարձրացնում, սփոփում, լսում, խրախուսում, դաստիարակում, ուսուցանում և զորացնում ձեր խնամքի տակ գտնվող քույրերին: Թույլ տվեք կիսվել այդպիսի ծառայության մի քանի համառոտ օրինակներով:

Ռոզան տառապում է տկարացնող շաքարախտից և այլ

հիվանդություններից: Նա միացել է Եկեղեցուն մի քանի տարի առաջ: Նա միայնակ մայր է անչափահաս որդու հետ: Նրան հաճախ պետք է հիվանդանոց պառկեցնել, ամեն անգամ մի քանի օրով: Նրա բարի այցելող ուսուցիչները ոչ միայն տանում են նրան հիվանդանոց, այլ նրանք այցելում են նրան, սփոփում հիվանդանոցում, միաժամանակ, իհարկե, նաև հետևելով նրա որդուն տանը և դպրոցում: Նրա այցելող ուսուցիչները ծառայում են նրան որպես ընկերներ և ընտանիք:

Մի քրոջ առաջին մի քանի այցելություններն անելուց հետո, Քեթին հայտնաբերեց, որ այդ քույրը կարդալ չգիտեր, բայց ուզում էր սովորել: Քեթին առաջարկեց օգնել նրան, չնայած գիտեր, որ դա ժամանակ, համբերություն և հաստատակամություն կպահանջեր:

Էմիլին երիտասարդ կին է, որը որոնում էր ճշմարտությունը: Նրա ամուսինը՝ Մայքլը, ավելի քիչ է հետաքրքրվում կրոնով: Երբ Էմիլին հիվանդացավ և որոշ ժամանակ անցկացրեց հիվանդանոցում, Կալին՝ Սփոփող Միության մի քույր, որը նաև նրա հարևանն է, պատրաստեց ընտանիքի ճաշերը, խնամեց նրանց մանկիկին, մաքրեց տունը և պատրաստեց Էմիլիին քահանայության օրհնություն ստանալուն: Գթության այս գործերը փափկացրեցին Մայքլի սիրտը: Նա որոշեց հաճախել Եկեղեցու ժողովներին և հանդիպել միսիոներների հետ: Էմիլին և Մայքլը վերջերս մկրտվեցին:

«Գթությունը երբեք չի խափանվում: Գթությունը բարի է, իրենը չի որոնում, տանում է ամեն բան, համբերում է ամեն բանի»:[14]

Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է.

«Սփոփող Միության պատմությունը լի է այդպիսի նշանավոր անձնազոհ ծառայության պատմություններով: . . .

Այս կազմակերպությունը կազմված է կանանցից, որոնց գթության զգացումները բխում են սրտից, որոնք փոխվել են ուխտերին արժանի լինելուց և պատվիրանները պահելուց, որոնք առաջարկվում են

միայն Տիրոջ ճշմարիտ Եկեղեցում: Նրանց գթության զգացումները գալիս են Նրա կողմից՝ Քավության միջոցով: Գթության նրանց գործերը առաջնորդվում են Նրա օրինակով և դրսևորվում են Նրա ողորմածության անսահման պարգևի հանդեպ երախտագիտությունից և Սուրբ Հոգու միջոցով, որին Նա ուղարկում է ուղեկցելու Իր ծառաներին ողորմածության իրենց առաքելություններում: Այդ պատճառով նրանք արել են և կարողանում են անել անսովոր բաներ ուրիշների համար և գտնել ուրախություն, նույնիսկ, երբ իրենց սեփական չբավարարված կարիքները մեծ են»:[15]

Ծառայություն մատուցելը և ուրիշներին գթություն ցույց տալն օգնում է մեզ հաղթահարել մեր իսկ դժվարությունները և դարձնում է դրանք ավելի սակավ դժվարին թվացող:

Այժմ ես կվերադառնամ վերականգման վաղ օրերին Մարգարե Ջոզեֆի կողմից քույրերին կատարած ուսուցումներին: Հորդորելով գթության գործեր և բարեգործություն կատարել, նա ասել է. «Եթե դուք ապրեք այս սկզբունքներով, որքան մեծ և փառահեղ կլինի ձեր վարձքը սելեստիալ արքայությունում: Եթե դուք ապրեք ձեր արտոնությունների համաձայն, հրեշտակներին հնարավոր չի լինի ետ պահել ձեր ընկերակիցները լինելուց»:[16]

Վաղ օրերի նման Նավույում, որտեղ քույրերը շրջում էին՝ որոնելով և օգնելով նրանց, ովքեր կարիքի մեջ էին, այսօր արվում է նույնը: Քույրերը թագավորությունում հոգևոր ուժի, կարեկցանքի ծառայության և նվիրվածության մեծ սյուներ են: Նվիրված այցելող ուսուցիչներն այցելում են և հոգ տանում միմյանց համար: Նրանք հետևում են Փրկչի օրինակին և անում այնպես, ինչպես Նա արեց:

Սփոփող Միության բոլոր կանայք կարող են լցվել սիրով, իմանալով, որ իրենց գթության փոքրիկ գործերը ապաքինող ուժ ունեն ինչպես ուրիշների, այնպես էլ՝ իրենց համար: Նրանք սկսում են հասկանալ և չկասկածել, որ գթությունը Քրիստոսի մաքուր սերն է և երբեք չի խափանվում:

Երբ կարդաք Սփոփող Միության պատմությունը, այն կոգեշնչի ձեզ պարզել, որ այս կարևոր ավետարանական սկզբունքը միահյուսված է ողջ գրքով:

Ես եզրափակում եմ հրավերով Եկեղեցու բոլոր կանանց՝ աղերսելու, որ լցվեք գթությամբ՝ Քրիստոսի մաքուր սիրո պարգևով: Օգտագործեք բոլոր ձեր միջոցները՝ բարիք անելու համար, բերելով սփոփանք և փրկություն ձեր շրջապատում գտնվողներին, ներառյալ ձեր սեփական ընտանիքին: Տերը ձեր ջանքերը հաջողությամբ կպսակի:

Թող որ մեր գիտելիքն այն մեծ սիրո վերաբերյալ, որ Հայրն ու Որդին ունեն մեր հանդեպ և մեր հավատքն ու երախտագիտությունը Քավության հանդեպ, մղեն մեզ զարգացնել և գործադրել գթություն բոլոր նրանց հանդեպ, ովքեր մեր շրջապատում են: Սա է իմ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Կորնթացիս Ժ.13:
2. Ա Կորնթացիս ԺԳ.4-8:
3. Joseph Smith, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 23.
4. Joseph Smith, in *Daughters in My Kingdom,* 17.
5. Մորոնի 7.47:
6. Կողոսացիս 3.14:
7. 2 Նեփի 26.30:
8. Տես Մորոնի 7.48:
9. Տես Եթեր 12.34; Մորոնի 10.21:
10. Վարդապետություն և Ուխտեր 88.125:
11. Մորոնի 7.48:
12. Տես Հովհաննես 21.16-17:
13. Thomas S. Monson, “Charity Never Faileth,” *Liahona,* Nov. 2010, 124.
14. Ա Կորնթացիս 13.4, 5, 7, 8:
15. Henry B. Eyring, “The Enduring Legacy of Relief Society,” *Liahona,* Nov. 2009, 121.
16. *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 454:



Բարբարա Թոմսոն
Սփոփող Միության Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Հավատարիմ մնա ուխտերին

եթե մենք հավատք ունենանք առ Քրիստոս և հավատարիմ մնանք մեր ուխտերին, մենք կստանանք ուրախություն, որի մասին խոսվում է սուրբ գրություններում և խոստացվում է մեր վերջին օրերի մարգարեների կողմից:

«Բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես»: [1] Ես չեմ կարող կարդալ այս սուրբ գրությունն առանց ուրախություն զգալու: Իմ սիրտը ցնծում է, երբ ես մտածում եմ խոստումների և բազում օրհնությունների մասին, որոնք եղել են իմ կյանքի մի մասը, մինչ ես ձգտել եմ հավատարիմ մնալ ուխտերին, որոնք ես կապել եմ իմ Երկնային Հոր հետ:

Քանի որ երկու ծնողներս էլ մահացել են, այս տարի պետք էր մաքրել նրանց տունը՝ պատրաստելու այն վաճառքի համար: Այս վերջին մի քանի ամիսների ընթացքում, մինչ ես և իմ հարազատները մաքրում և կարգի էինք բերում իմ ծնողների տունը, մենք գտանք ընտանեկան պատմություններ և շատ կարևոր թղթեր ու փաստաթղթեր: Շատ հետաքրքրական էր կարդալ իմ ծնողների ու տատիկ-պապիկների անձնական պատմություններն ու հայրապետական օրհնությունները: Դրանք ինձ հիշեցրեցին այն ուխտերը, որոնք նրանք կապել և պահել էին:

Իմ տատիկը՝ Էլեն Հանքս Ռայմերը, երիտասարդ մայր էր 1912թ., երբ ստացավ իր հայրապետական օրհնությունը: Երբ ես կարդացի նրա օրհնությունը, այս տողերը մեծ տպավորություն թողեցին ինձ վրա և մնացին իմ մտքում. «Դու ընտրված էիր նախքան աշխարհի հիմնադրումը և ընտրյալ հոգի ես այս օրերում: . . . Քո վկայությունը կզորացվի և դու կկարողանաս վկայել: . . . Կործանիչը կձգտի կործանել քեզ, բայց եթե դու հավատարիմ մնաս քո Աստծուն, նա [Կործանիչը] զորություն չի ունենա վնասելու քեզ: Դու քո հավատարմությամբ մեծ զորություն կունենաս, և կործանիչը կփախչի քո առջևից՝ քո արդարության պատճառով: . . . Երբ վախի և փորձության ժամանակներ գան քեզ համար, եթե դու առանձնանաս քո սենյակում և աղոթես, քո սիրտը կմխիթարվի և խոչընդոտները կհեռացվեն»:[2]

Իմ տատիկին խոստացվել էր, որ եթե նա պահեր իր ուխտերը և մոտ մնար Աստծուն, Սատանան զորություն չէր ունենա նրա վրա: Նա կգտներ մխիթարություն և օգնություն իր դժվարություններում: Այս խոստումները իրականացել էին նրա կյանքում:

Այսօր ես ուզում եմ խոսել ուխտերին հավատարիմ մնալու կարևորության, և այն ուրախության և պաշտպանության մասին, որ գալիս են մեր ուխտերը պահելու արդյունքում:

Որոշ օրինակներ, որոնք ես կօգտագործեմ, վերցված են *Իմ Արքայության Դուռները. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* գրքից: Այն լի է կանանց օրինակներով, ովքեր մեծ ուրախություն են գտել ուխտերը պահելու մեջ:

Ուխտերին հավատարիմ լինելու կարևորությունը

Աստվածաշնչի բառարանը ասում է մեզ, որ ուխտը համաձայնություն է՝ կնքված Աստծո և մարդու միջև: «Աստված իր բարության համաձայն որոշում է պայմանները, որոնք մարդն ընդունում է: . . . Ավետարանն այնպես է կազմված, որ սկզբունքներն ու արարողությունները ընդունվում են ուխտով, ընդունողի վրա դնելով խիստ պարտավորություն և պատասխանատվություն՝ հարգելու խոստումը»:[3] «Հավատարիմ մնա ուխտերին» արտահայտության մեջ *հավատարիմ մնա* բառերը նշանակում են «ամուր և կիպ կառչել» ինչ-որ բանից:[4]

Սուրբ գրություններում մենք սովորում ենք տղամարդկանց ու կանանց մասին, ովքեր ուխտեր են կապել Աստծո հետ: Աստված հրահանգներ է տվել, թե ինչ անել այդ ուխտերը պատվելու համար, և երբ այդ ուխտերը պահվել են, եկել են խոստացված օրհնությունները:

Օրինակ, մկրտության արարողության միջոցով մենք ուխտ ենք կապում մեր Երկնային Հոր հետ: Մենք պատրաստում ենք ինքներս մեզ մկրտվելուն, ունենալով հավատք առ Տեր Հիսուս Քրիստոսը, ապաշխարելով մեր մեղքերը և հոժար լինելով մեզ վրա վերցնել Քրիստոսի անունը: Մենք պարտավորվում ենք պահել Աստծո

պատվիրանները և միշտ Հիշել Փրկչին: Մենք ուխտում ենք «կրել մեկս մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն»: Մենք ցույց ենք տալիս ,որ հոժար ենք սգալու նրանց հետ, ովքեր սգում են և մխիթարել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:[5]

Սուրբ տաճարներում այլ սրբազան արարողություններ են ստացվել և այլ ուխտեր են կապվել: Վերականգնման վաղ շրջանում Մարգարե Ջոզեֆ Սմիթը մտահոգվում էր Սրբերի համար, որ նրանք ունենան տաճարի խոստացված օրհնությունները: Տերն ասել է. «Թող այս տունը կառուցվի իմ անվան համար, որ նրանում ես կարողանամ հայտնի դարձնել իմ արարողություններն իմ ժողովրդին»:[6]

«Սփոփող Միության կազմավորման հետ կապված Տիրոջ նպատակներից մեկն էր նախապատրաստել Իր դուստրերին տաճարային արարողությունների և ուխտերի քահանայության ավելի մեծ օրհնությունների համար: Նավույի քույրերը մեծ ոգևորությամբ սպասում էին տաճարի կառուցման ավարտին, քանզի նրանք գիտեին, որ ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթն էր խոստացել Մերսի Ֆիլդինգ Թոմփսոնին, որ օժտումը նրանց «դուրս կբերի խավարից դեպի հրաշալի լույս»:[7]

Ավելի քան 5000 սրբեր էին հավաքվել Նավույի Տաճարում դրա օժտումից հետո, որպեսզի նրանք կարողանային ստանալ օժտում և կնքման արարողություն մինչև իրենց ճանապարհորդությունը սկսելը» դեպի Սոլթ Լեյքի հովիտը:[8] Նախագահ Բրիգամ Յանգը և շատ Եկեղեցու առաջնորդներ ու տաճարի աշխատողներ ծախսեցին իրենց ժամանակը, գիշեր ու ցերեկ ծառայելով տաճարում, որպեսզի այս կարևոր աշխատանքը կատարվեր Սրբերի համար:

Մեր ուխտերը օգնում են մեզ՝ դա լավ ժամանակներում կամ դժվար պահերին: Նախագահ Բոյդ Ք. Փաքերը հիշեցնում է մեզ, որ «մենք ուխտյալ ժողովուրդ ենք: Մենք ուխտում ենք տալ մեր միջոցները՝ ժամանակը, գումարը և տաղանդները, այն ամենը, ինչ մենք կանք, և ամենը, ինչ ունենք՝ երկրի վրա Աստծո թագավորությունը կառուցելու համար: Պարզ ասած, մենք ուխտում ենք լավ բաներ անել: Մենք ուխտյալ ժողովուրդ ենք, և տաճարը մեր ուխտերի կենտրոնն է: Այն ուխտի աղբյուրն է»:[9]

Սուրբ գրությունները հիշեցնում են մեզ. «Եվ սա պետք է լինի մեր ուխտը,- որ մենք կքայլենք Տիրոջ բոլոր կանոններով»:[10]

Մեծ են մեր օրհնությունները, որոնք մենք ստանում ենք, երբ մենք հավատարիմ ենք մնում մեր ուխտերին:

Երջանկությունն ու ապահովությունը գալիս են մեր ուխտերը պահելու արդյունքում

Մորմոնի գրքում մենք կարդում ենք Բենիամին Թագավորի քարոզը: Նա սովորեցրել է ժողովրդին, որ Հիսուս Քրիստոսը գալու էր աշխարհ և տանելու էր ամեն տեսակի չարչարանքներ: Նա սովորեցրեց մարդկանց, որ Քրիստոսը քավելու էր բոլոր մարդկանց մեղքերը և որ Նրա անունը միակ անունն է, որի միջոցով մարդը կարող էր փրկվել:[11]

Այս զեղեցիկ ուսմունքները լսելուց հետո ժողովուրդը խոնարհեցրել էր իրեն և ցանկացել իրենց ողջ սրտով ազատվել մեղքից և մաքրվել: Նրանք ապաշխարեցին և խոստովանեցին իրենց հավատքը առ Քրիստոս: Նրանք ուխտեր կապեցին Աստծո հետ, որ նրանք կպահեն Նրա պատվիրանները:[12]

«Տիրոջ Հոգին եկավ նրանց վրա և նրանք լցվեցին ուրախությամբ, ստացած լինելով իրենց մեղքերին թողություն, և ունենալով խղճմտանքի խաղաղություն այն արտասովոր հավատքի շնորհիվ, որ նրանք ունեին Հիսուս Քրիստոսում»:[13]

Ուրախության մեկ այլ օրինակ, որը գալիս է Աստծո պատվիրանները հավատարմորեն պահելուց և Նրա ավետարանով ուրիշների հետ կիսվելուց, ներկայացվել է Ամմոնի կողմից: Ամմոնն ու նրա եղբայրները գործիք հանդիսացան՝ օգնելով հազարավոր մարդկանց գալ դեպի Քրիստոսը: Ահա մի քանի բառեր, որ Ամմոնն օգտագործեց իր զգացմունքները նկարագրելիս, երբ այնքան շատ մարդիկ էին մկրտվել և ուխտ կապել Աստծո հետ.

«Ինչպիսի մեծ պատճառ ունենք մենք ցնծալու»:[14]

«Իմ ուրախությունը լիակատար է, այո, իմ սիրտը մինչև պռունկը լցված է ուրախությամբ, և ես կցնծամ իմ Աստծով»:[15]

«Ես չեմ կարող արտահայտել փոքրագույն մասն իսկ նրա, ինչ զգում եմ»:[16]

«Երբեք չեն եղել մարդիկ,որ ցնծալու այնպիսի մեծ պատճառ ունենային, ինչպես մենք»:[17]

Սրբազան ուխտեր կապելն ու պահելը հնարավորություն է տալիս մեզ ունենալ Սուրբ Հոգին մեզ հետ: Սա է Հոգին, որն «ուրախությունով կլցնի քո հոգին»:[18]

Երկրորդ համաշխարհային պատերազմը շատ տառապանքներ է պատճառել բազմաթիվ մարդկանց աշխարհով մեկ: Սրբերը Գերմանիայում տարել են շատ դժվարություններ: Սփոփող Միության հավատարիմ նախագահը Ստուտգարթում՝ Գերմանիա, Քույր Մարիա Սպեյդելն էր: Խոսելով իրենց դժվարությունների մասին, նա ասել է. «Տիրոջ հանդեպ մեր վստահությունը և նրա Եկեղեցու մասին մեր վկայությունը եղել են մեր ուժի աղբյուրը: . . . Ուրախությամբ մենք երգում ենք Սիոնի երգերը և դնում ենք մեր վստահությունը Տիրոջ վրա: Նա անում է այնպես, որ ամեն բան լավ լինի»:[19]

Կրկին, երբ անդամները պահել են իրենց ուխտերը, նրանք ուրախություն են զգացել նույնիսկ ահռելի դժվարությունների հանդիպելիս:

Սառա Ռիչը Նավույում ապրող արդար կին էր, ով կանչվել էր ծառայելու տաճարում, մինչև Սրբերի քաղաքից վտարվելը: Ահա նրա խոսքերը տաճարային ուխտերի օրհնությունների մասին. «Բազում էին օրհնությունները, որոնք մենք ստացանք Տիրոջ տանը, որ մեզ ուրախություն և մխիթարություն բերեց մեր բոլոր վշտերի մեջ և մեզ հնարավորություն տվեց հավատք ունենալ առ Աստված, իմանալով, որ Նա կառաջնորդեր մեզ և կաջակցեր մեզ այն անհայտ

ճանապարհորդությունում, որ սպասում էր մեզ»:[20]

Սրբերն արդեն ավարտել էին Կիրթլանդի տաճարը, և շատերը մասնակցել էին նվիրագործմանը: Նվիրագործումից հետո տաճարն ընդունվեց Տիրոջ կողմից: Տերն ասաց նրանց «մեծապես ցնծալ այն օրհնությունների հետևանքով, որոնք պիտի թափվեն . . . Իր ժողովրդի գլխին»:[21]

Մինչ ավելի ու ավելի շատ սուրբ տաճարներ են կառուցվում աշխարհով մեկ, ես տեսնում եմ օրհնությունները, որոնք գալիս են անդամների կյանքեր: 2008թ. ես ականատես եղա Ուկրաինայից մի զույգի ուրախությանը, երբ նրանք պատմում էին ինձ Ֆրայբերգ՝ Գերմանիա, գնալու մասին, որպեսզի ստանային իրենց տաճարային արարողությունները: Ճանապարհորդությունը այս նվիրված անդամների համար ավտոբուսով տևում էր 27ժամ ամեն ուղությամբ և նրանք հնարավորություն չունեին հաճախ գնալու: Նրանք հրճվում էին, քանի որ Կիև Ուկրաինա Տաճարը շուտով պատրաստ կլիներ և նրանք կկարողանային շատ ավելի հաճախ այցելել: Այդ տաճարն այժմ բացված է, և հազարավոր մարդիկ վայելում են այնտեղ օրհնությունները:

Կարդալով իմ տատիկի անձնական պատմությունը, ես իմացա նրա մեծ ուրախության մասին իր ուխտերի համար: Նա սիրում էր տաճար գնալ և արարողություններ կատարել այն հազարավորների համար, ովքեր մահացել էին: Դա նրա կյանքի միսիան էր: Նա ծառայել է որպես տաճարային աշխատող ավելի քան 20 տարի Մանթի Յուտա Տաճարում: Նա գրել է, որ ապաքինման շատ հրաշալի փորձառություններ է ունեցել, որ կարողանար մեծացնել իր երեխաներին և ծառայել ուրիշներին՝ կատարելով նրանց աշխատանքը տաճարում: Որպես նրա թոռնիկներ, մենք մի բան գիտեինք Ռայմեր տատիկի մասին. նա արդար կին էր, որ պահել էր իր ուխտերը և ուզում էր, որ մենք էլ նույնը անեինք: Երբ մարդիկ ուշադիր զննեն մեր իրերը

մեր մահից հետո, կգտնե՞ն նրանք ապացույցներ, որ մենք պահել ենք մեր ուխտերը:

Մեր սիրելի մարգարեն՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ասել է մեզ մեր վերջին գերագույն համաժողովի ժամանակ. «Երբ դուք և ես գնանք Աստծո սուրբ տունը, երբ մենք հիշենք ուխտերը, որ մենք կապում ենք այնտեղ, մենք ավելի ունակ կլինենք տանելու ամեն դժվարություն և հաղթահարելու յուրաքանչյուր փորձություն: Այս սուրբ ապաստանում մենք կգտնենք խաղաղություն. Մենք կնորոգվենք և կգոտեպնդվենք»:[22]

Եվս մեկ անգամ. «Բարձրացրու սիրտդ և ցնծա, և հավատարիմ մնա այն ուխտերին, որոնք դու արել ես»:[23] Ուխտերը պահելը ճշմարիտ ուրախություն և երջանկություն է: Սա հանգստություն և խաղաղություն է: Սա պաշտպանություն է աշխարհի չարիքներից: Մեր ուխտերը պահելը կօգնի մեզ դժվարության պահերին:

Ես վկայում եմ, որ եթե մենք հավատք ունենանք առ Քրիստոս և հավատարիմ մնանք մեր ուխտերին, մենք կստանանք ուրախություն, որի մասին խոսվում է սուրբ գրություններում և խոստացվում է մեր վերջին օրերի մարգարեների կողմից:

Սիրելի քույրեր, ես սիրում եմ ձեզ և հուսով եմ, որ դուք կունենաք այս մեծ ուրախության փորձառությունը ձեր իսկ կյանքերում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 25.13:
2. Patriarchal blessing given by Walter E. Hanks, Oct. 25, 1912, in Lyman, Wayne County, Utah.
3. Bible Dictionary, “Covenant.”
4. *Merriam-Webster’s Collegiate Dictionary,* 11th ed. (2003), “cleave.”
5. Տես Մոսիա 18.8–9; տես նաև Thomas S. Monson, “What Have I Done for Someone Today?” *Liahona,* Nov. 2009, 85–87:
6. Վարդապետություն և Ուխտեր 124.40:
7. *Իմ արքայության դուռները. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը*(2011), 131–32:
8. *Daughters in My Kingdom,* 29.
9. Boyd K. Packer, *The Holy Temple* (1980), 170.
10. Վարդապետություն և Ուխտեր 136.4:
11. Տես Մոսիա 3.5–18:
12. Տես Մոսիա 4.2; 5.5:
13. Մոսիա 4.3:
14. Ալմա 26.1:
15. Ալմա 26.11:
16. Ալմա 26.16:
17. Ալմա 26.35:
18. Վարդապետություն և Ուխտեր 11.13:
19. Maria Speidel, in *Daughters in My Kingdom,* 76.
20. Sarah Rich, in *Daughters in My Kingdom,* 30.
21. Վարդապետություն և Ուխտեր 110.9-10:
22. Thomas S. Monson, “The Holy Temple—a Beacon to the World,” *Liahona,* May 2011, 93.
23. Վարդապետություն և Ուխտեր 25.13:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Անմոռուկ

Իմ աղոթքն է և օրհնությունը, որ դուք երբեք չմոռանաք, որ դուք Աստծո արքայությունում իսկապես թանկագին դուստրեր եք:

Իմ սիրելի քույրեր, ինչպիսի ուրախություն է ձեզ հետ լինել այսօր: Ես մեծ անհամբերությամբ եմ սպասում Սփոփող Միության այս ամենամյա գերագույն ժողովին և այստեղ տրվող ուղերձներին: Շնորհակալություն ձեզ, քույրեր: Ինձ համար մեծ պատիվ է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնից այսօր խոսելու հանձնարարություն ստանալը և մի քանի մտքեր ավելացնելը, դիմելով Եկեղեցու քույրերին:

Որոշ ժամանակ առաջ ես քայլում էի մի գեղեցիկ պարտեզի միջով կնոջս և դստերս հետ: Ես հիանում էի Աստծո ստեղծագործության փառքով և գեղեցկությամբ: Եվ այդ պահին ես նկատեցի բոլոր շքեղ ծաղկունքի մեջ ամենափոքրիկ ծաղկին: Ես գիտեի այդ ծաղկի անունը, որովհետև մանուկ հասակից քնքուշ կապ եմ ունեցել դրա հետ: Այդ ծաղիկը կոչվում է անմոռուկ:

Ես այնքան էլ համոզված չեմ, թե ինչու է այս փոքրիկ ծաղիկը այդքան շատ նշանակություն ունեցել ինձ համար տարիների ընթացքում: Այն անմիջապես ուշադրություն չի գրավում, ավելի մեծ և ավելի գրավիչ ծաղիկների մեջ այն կարելի է հեշտորեն չնկատել, սակայն այն ոչ պակաս գեղեցիկ է՝ իր հարուստ գույնով արտացոլելով երկնքի լազուրը: Հավանաբար, պատճառներից մեկը սա է, թե ինչու եմ այդքան շատ սիրում այն:

Եվ գուցե նրա աղերսանք հիշեցնող անունն է պատճառը: Կա մի գերմանական լեգենդ, որ հենց Աստված վերջացրեց բոլոր բույսերին անուններ տալը, մեկը մնաց առանց անվան: Մի փոքրիկ ձայն ասաց.«Ով Տեր, ինձ չմոռանաս»: Եվ Աստված պատասխանեց, որ դա էլ կլինի նրա անունը:

Այս երեկո ես կցանկանայի այս փոքրիկ ծաղիկն օգտագործել որպես փոխաբերություն: Փոքրիկ անմոռուկի հինգ ծաղկաթերթիկները հուշում են ինձ մտածել հինգ բաների մասին, որոնք մենք, եթե ուզում ենք իմաստուն լինել, պետք է երբեք չմոռանանք:

Առաջինը, մի մոռացեք համբերատար լինել ինքներդ ձեզ հետ:

Ես մի բան եմ ուզում ասել ձեզ, որը, հուսով եմ, դուք ճիշտ կհասկանաք. Աստված լիովին տեղյակ է, որ դուք և ես կատարյալ չենք:

Թույլ տվեք ավելացնել. Աստված նաև լիովին տեղյակ է, որ այն մարդկանց, ում դուք համարում եք կատարյալ, կատարյալ չեն:

Եվ այնուամենայնիվ, մենք այնքան շատ ժամանակ և էներգիա ենք վատնում, մեզ համեմատելով ուրիշների հետ՝ սովորաբար համեմատելով մեր թուլությունները նրանց ուժեղ կողմերի հետ: Սա մեզ մղում է ակնկալիքներ ստեղծել մեզ համար, որոնք անհնարին է իրականացնել: Արդյունքում մենք երբեք չենք փառաբանում մեր սաստիկ ջանքերը, որովհետև դրանք թվում են ավելի քիչ, քան որևէ մեկ ուրիշինը:

Յուրաքանչյուրն ունի ուժեղ և թույլ կողմեր:

Հրաշալի է, որ դուք ունեք ուժեղ կողմեր:

Եվ դա ձեր մահկանացու փորձառության մասն է, որ դուք ունեք թույլ կողմեր:

Աստված ուզում է օգնել մեզ ի վերջո դարձնել մեր բոլոր թույլ կողմերը ուժեղ,[1] բայց Նա գիտի որ սա երկարաժամկետ նպատակ է: Նա ուզում է, որ մենք դառնանք կատարյալ, ինչպես Ինքն է,[2] և եթե մենք մնանք հետևորդ լինելու ուղու վրա, մի օր մենք կդառնանք այդպիսին: Ամեն ինչ կարգին է, եթե դուք դեռ լիովին չեք հասել դրան: Շարունակեք աշխատել, բայց դադարեք ինքներդ ձեզ պատժել:

Սիրելի քույրեր, ձեզանից շատերը անսահման կարեկցող եք և համբերատար ուրիշների թուլությունների հանդեպ: Խնդրում եմ հիշեք կարեկից և համբերատար լինել նաև ինքներդ ձեզ հետ:

Միևնույն ժամանակ շնորհակալ եղեք փոքրիկ հաջողությունների համար ձեր տներում, ձեր ընտանեկան հարաբերություններում, ձեր կրթության և ձեր ապրուստի, Եկեղեցու ձեր մասնակցության և անձնական բարեփոխման համար: Անմոռուկների պես, այս հաջողությունները ձեզ կարող են փոքրիկ թվալ և դրանք կարող են աննկատ անցնել ուրիշների կողմից, բայց Աստված նկատում է դրանք և դրանք փոքր չեն Նրա համար: Եթե դուք հաջողություն եք համարում միայն ամենակատարյալ վարդը կամ շլացուցիչ խոլորձները, դուք գուցե բաց թողնեք կյանքի ամենաթաղցր փորձառություններից մի քանիսը:

Օրինակ, եթե դուք պնդում եք, որ ամեն շաբաթ պետք է կատարյալ ընտանեկան երեկոն անցկացնեք, թեև այդ ջանքերի արդյունքում դուք և ձեր շրջապատում գտնվող բոլոր մարդիկ իրենց թշվառ են զգում, ուրեմն դա, հնարավոր է, ճիշտ որոշում չէ: Փոխարենը, հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ կարող ենք անել որպես ընտանիք, որը հաճելի կլինի և հոգևոր և մեզ ավելի կմոտեցնի միմյանց»: Այդ ընտանեկան երեկոն, չնայած այն կարող է լինել համեստ իր տևողությամբ և իրականացման եղանակով, կարող է ունենալ շատ ավելի դրական և երկարատև հետևանքներ:

Դեպի կատարելություն մեր ճամփորդությունը երկար է, բայց մենք կարող ենք հրաշք և հրճվանք գտնել նույնիսկ այդ ճանապարհորդության ամենափոքրիկ քայլերի մեջ:

Երկրորդ, մի մոռացեք տարբերությունը լավ զոհաբերության և հիմար զոհաբերության միջև:

Ընդունելի է այն զոհաբերությունը, երբ մենք հրաժարվում ենք ինչ որ լավ բանից հանուն շատ ավելի մեծ արժեք ունեցող բանի:

Մի քիչ քնից հրաժարվելը երեխային օգնելու համար, որը մզձավանջի մեջ է, լավ զոհաբերություն է: Մենք բոլորս գիտենք դա: Ողջ գիշեր ոտքի վրա մնալը, մեր առողջությունը վտանգի տակ դնելով, որպեսզի դստեր կիրակնօրյա հանդերձանքը կատարյալ տեսք ունենա, այնքան էլ լավ զոհաբերություն չէ:

Մեր ժամանակի մի մասը նվիրաբերելը սուրբ գրքերի ուսումնասիրությանը կամ նախապատրաստվելուն դաս ուսուցանելու համար լավ զոհաբերություն է: Շատ ժամեր դասի վերնագիրը կարելը տանը պատրաստած բռնիչների վրա դասարանի յուրաքանչյուր անդամի համար չի կարող լինել լավ զոհաբերություն:

Յուրաքանչյուր անձնավորություն և իրավիճակ տարբեր է և մեկ դեպքում լավ զոհաբերությունը մեկ այլ դեպքում կարող է հիմար զոհաբերություն լինել:

Ինչպես կարող ենք զգալ տարբերությունը մեր իսկ իրավիճակում: Մենք կարող ենք հարցնել ինքներս մեզ. «Արդյոք ամենակարևոր նշանակություն ունեցող բաներին եմ ժամանակս և էներգիաս նվիրում»: Այնքան լավ բաներ կան անելու, բայց մենք չենք կարող անել ամենը: Մեր Երկնային Հայրը շատ գոհ է, երբ մենք զոհաբերում ենք ինչ որ լավ բան հանուն հավերժական հեռանկարով շատ ավելի մեծ բանի: Երբեմն այն կարող է լինել էկզոտիկ ծաղիկների մեծ պարտեզի փոխարեն փոքրիկ, բայց գեղեցիկ անմոռուկներ խնամելը:

Երրորդ, մի մոռացեք երջանիկ լինել այժմ:

Երեխաների սիրած *Չառլին և շոկոլադի ֆաբրիկան* պատմվածքում, շոկոլադի սալիկներ պատրաստող խորհրդավոր Վիլլի Վոնկան թաքցնում է մի ոսկե տոմսակ շոկոլադներից հինգի մեջ և հայտարարում, որ ով որ գտնի այդ տոմսակներից մեկը շահում է ջրջայց իր ֆաբրիկայում և ողջ կյանքի ընթացքում շոկոլադի մատակարարման հնարավորություն:

Յուրաքանչյուր տոմսակի վրա գրված էր այս ուղերձը. «Ողջույն քեզ, Ոսկե Տոմսակի հաջողակ գտնող: . . . Քեզ սպասում են սքանչելի բաներ: Շատ հիանալի անակընկալների ես հանդիպելու, . . . խորհրդավոր և սքանչելի անակընկալները . . . հրճվանք կպատճառեն . . . կապշեցնեն և կզարմացնեն քեզ»:[3]

Այդ մանկական դասական պատմվածքում, ողջ աշխարհի մարդիկ մոլեգնորեն տենչում են գտնել ոսկե տոմսակ: Ոմանք կարծում են, իրենց ողջ ապագա երջանկությունը կախված է ոսկե տոմսակը գտնելուց: Իրենց անխոհեմությամբ, մարդիկ սկսում են մոռանալ այն պարզ ուրախությունը, որը նրանք սովորաբար գտնում էին շոկոլադի սալիկի մեջ: Շոկոլադի սալիկը դառնում է բացարձակ հիասթափություն, եթե այն չի պարունակում ոսկե տոմսակ:

Այնքան շատ մարդիկ են այսօր սպասում իրենց ոսկե տոմսակին՝ տոմսակ, որն, ըստ իրենց, պարունակում է բանալին դեպի երջանկությունը, որի մասին նրանք միշտ երազել են: Ոմանց համար ոսկե տոմսակ կարող է լինել կատարյալ ամուսնությունը, մյուսների համար ամսագրի կազմի վրա պատկերված տան նման տան ձեռբերումը, կամ գուցե՝ ազատումը՝ սթրեսից

կամ մտատանջություններից:

Ոչ մի սխալ բան չկա արդար ձգտումների մեջ, մենք հույս ունենք և ձգտում ենք բաների, որոնք «առաքինի են, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի»:[4] Խնդիրն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ մենք հետաձգում ենք մեր երջանկությունը, կարծես, սպասելով ինչ որ ապագա իրադարձության՝ մեր ոսկե տոմսակի հայտնվելուն:

Մի կին ամենից շատ ցանկանում էր ամուսնանալ մի արդարակյաց քահանայություն կրողի հետ տաճարում և մայր դառնալ: Նա երազում էր այդ մասին ողջ իր կյանքում և, օհ, ինչպիսի հրաշալի մայր և սիրառատ կին կարող էր նա լինել: Նրա տունը կլցվեր սիրառատ բարությամբ: Երբեք դառը խոսք չէր ասվի: Ճաշը երբեք չէր վառվի: Եվ նրա երեխաները փոխարեն դրսում իրենց ընկերեների հետ ժամանակ անցկացնելու, կնախընտրեին երեկոներն ու շաբաթավերջն անցկացնել մայրիկի և հայրիկի հետ:

Սա նրա ոսկե տոմսակն էր: Սա էր այն միակ բանը, որից նա կախված էր զգում իր ողջ գոյության համար: Սա էր միակ բանը ողջ աշխարհում, որի համար նա ամենամոլեգին ձևով տենչում էր:

Բայց դա երբևէ տեղի չունեցավ: Եվ մինչ տարիներն անցնում էին, նա դարձավ ավելի ու ավելի շատ ներփակված, դառնացած և, նույնիսկ, չարացած: Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչու Աստված չկամեցավ իրականացնել իր այս արդար ցանկությունը:

Նա տարրական դպրոցի ուսուցչուհի էր և երեխաների շրջապատում ողջ օրվա ընթացքում լինելը պարզապես հիշեցնում էր նրան, որ իր ոսկե տոմսակը երբեք ի հայտ չեկավ: Տարիների հետ նա դարձավ ավելի հուսալքված և փակ: Մարդիկ չէին սիրում լինել նրա կողքին և խուսափում էին նրանից: Իր նեղսրտությունը նա երբեմն թափում էր դպրոցում երեխաների վրա: Նա կորցնում էր հավասարակշտությունը և անընդհատ սաստիկ զայրանում էր կամ խիստ միայնակ զգում:

Այս պատմության ողբերգությունն այն է, որ այս սիրելի կինը, ոսկե իր տոմսակի վերաբերյալ իր ողջ հուսահատությամբ, ձախողվեց տեսնել իր այն օրհնությունները, որոնք ինքն իսկապես *ուներ*: Նա երեխաներ չուներ իր տանը, բայց նա շրջապատված էր նրանցով իր դասարանում: Նա չէր օրհնվել ընտանիքով, բայց Տերը նրան հնարավորություն էր տվել, որը քիչ մարդիկ ունեին՝ որպես ուսուցիչ բարի ազդեցություն գործել հարյուրավոր երեխաների և ընտանիքների կյանքում:

Այստեղ դասը նրանում է, որ եթե մենք անցկացնենք մեր օրերը, սպասելով առասպելական վարդերի, մենք կարող ենք բաց թողնել փոքրիկ անմոռուկների գեղեցկությունն ու հրաշքը, որոնք ամենուրեք մեր շուրջն են:

Սա չի նշանակում, որ մենք պետք է կորցնենք մեր հույսը կամ խառնենք մեր նպատակները: Երբեք մի դադարեք ձգտել այն լավագույնին, որը ձեր մեջ է: Երբեք մի դադարեք հուսալ ձեր սրտի բոլոր արդար ցանկությունների համար: Բայց մի փակեք ձեր աչքերը և սրտերը ամեն օրվա սովորական պահերի առաջ՝ այն պարզ, բայց նրբագեղ գեղեցկությունների առաջ, որոնք ստեղծում են հարուստ, լավ ապրած կյանք:

Ամենաերջանիկ մարդիկ, որոնց ես գիտեմ, նրանք չեն, ովքեր գտնում են ոսկե տոմսակնոը, այլ նրանք են, ովքեր հետամուտ լինելով արժանավոր նպատակներին, հայտնաբերում են և փայփայում ամենօրյա պահերի գեղեցկությունն ու քաղցրությունը: Նրանք այն մարդիկ են, ովքեր, քայլելով ամենօրյա քայլերով, ստեղծում են երախտագիտության և հրաշքի զգացում իրենց կյանքի ընթացքում:Նրանք են, որ իսկապես երջանիկ են:

Չորրորդ, մի մոռացեք ավետարանի «ինչուն»:

Երբեմն մեր կյանքի ամենօրյա գործերի մեջ մենք անգիտակցորեն աչքաթող ենք անում Հիսուս Քրիստոսի ավետարանի մի կենսական կողմ, ճիշտ ինչպես կարող ենք աչքաթող անել մի գեղեցիկ, նուրբ անմոռուկ: Որպես Եկեղեցու անդամներ մեր ստանձնած բոլոր պարտականություններն ու պարտավորությունները կատարելու մեր ջանասեր ջանքերում, մենք երբեմն տեսնում ենք ավետարանը որպես անելիքների մի երկար ցուցակ, որը մենք պետք է ավելացնենք մեր արդեն անհնարին երկար «անելու» ցուցակին՝ որպես ժամեր, որոնք մենք ինչ որ կերպ պետք է հարմարեցնենք մեր զբաղված գրաֆիկին: Մենք կենտրոնանումենք նրա վրա, թե *ինչ* է Տերն ուզում, որ մենք անենք, և *ինչպես*, սակայն մենք երբեմն մոռանում ենք, թե *ինչու*:

Իմ սիրելի քույրեր, Հիսուս Քրիստոսի ավետարանը պարտականություն չէ, այն ուղի է, նշված մեր սիրառատ Երկնային Հոր կողմից, որը տանում է դեպի երջանկություն և խաղաղություն այս կյանքում և դեպի փառք և աներևակայելի իրականացում գալիք կյանքում: Ավետարանը լույս է, որը ներթափանցում է մահկանացու կյանք և լուսավորում ուղին մեր առջև:

Չնայած ավետարանի «ինչը» և «ինչպեսը» հասկանալն անհրաժեշտ է, ավետարանի հավերժական կրակը և վեհափառությունը բխում են «ինչու»-ից: Երբ հասկանում ենք, թե *ինչու* է մեր Երկնային Հայրը տվել մեզ ապրելու այս օրինակը, երբ հիշում ենք, թե *ինչու* մենք պարտավորվեցինք դարձնել այն մեր կյանքի հիմնական մասը, ավետարանը դադարում է դառնալ բեռ, վերածվելով ուրախության և հրճվանքի: Այն դառնում է թանկարժեք և քաղցր:

Եկեք չքայլենք հետևորդության արահետով մեր աչքերը հառած գետնին, մտածելով միայն անելիքների և պարտականությունների մասին, որոնք մեր առջևում են: Եկեք չքայլենք երկրային և հոգևոր փառահեղ տեսարաններից անտեղյակ, որոնք շրջապատում են մեզ:

Իմ սիրելի քույրեր, որոնեք Հիսուս Քրիստոսի ավետարանի «ինչու»-ի վեհափառությունը, գեղեցկությունը և զվարթացնող ուրախությունը:

Հնազանդության «ինչ»-ը և »ինչպեսը» նախանշում են ճանապարհը

և մեզ պահում ճիշտ ուղու վրա: Հնազանդության «ինչու»-ն սրբագործում է մեր գործողությունները, փոխակերպելով աշխարհիկը վեհափառության: Այն մեծացնում է հնազանդության մեր փոքրիկ գործերը, դարձնելով դրանք նվիրաբերման սուրբ գործեր:

Հինգերորդ, մի մոռացեք, որ Տերը սիրում է ձեզ:

Երբ երեխա էի, ես սովորություն ունեի նայել այդ փոքրիկ անմոռուկներին: Երբեմն ինձ զգում էի այդ փոքրիկ ծաղկի նման՝ փոքրիկ և անկարևոր: Ես մտատանջվում է, թե գուցե մոռացվեի իմ ընտանիքի կամ իմ Երկնային Հոր կողմից:

Տարիներ հետո, ես ետ եմ նայում այդ փոքրիկ տղային քնքշությամբ և կարեկցանքով: Եվ ես իսկապես գիտեմ այժմ, որ ես երբեք չեմ մոռացվել:

Եվ ես գիտեմ մեկ ուրիշ բան: Որպես մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Առաքյալ, ես հռչակում եմ իմ սրտի ողջ հաստատակամությամբ և համոզվածությամբ՝ ոչ էլ դուք եք մոռացված:

Դուք մոռացված չեք:

Քույրեր, որտեղ էլ որ լինեք, ինչպիսին էլ լինեն ձեր պայմանները, դուք մոռացված չեք: Անկախ նրանից, թե որքան խավար կարող են թվալ ձեր օրերը, անկախ նրանից, թե որքան աննշան կարող եք ձեզ զգալ, անկախ նրանից, թե որքան ստվերված ձեզ կարող եք համարել, ձեր Երկնային Հայրը չի մոռացել ձեզ: Հիրավի Նա սիրում է ձեզ անսահման սիրով:

Միայն մտածեք այդ մասին. Դուք ճանաչված եք և հիշվում եք տիեզերքում ամենավեհափառ, ամենազորավոր և ամենափառավոր էակի կողմից: Դուք սիրված եք անսահման տիեզերքի և հավիտենական ժամանակի Թագավորի կողմից:

Նա, ով ստեղծել է աստղերը, գիտի ձեզ և ձեր անունը. դուք Նրա թագավորության դուստրերն եք: Սաղմոսողը գրել է.

«Երբոր տեսնում եմ քո երկինքը, քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ դու հաստատեցիր,

Ի՞նչ է մարդը որ դու յիշում ես նորան, . . .

Եւ մի քիչ ցածացրիր նորան հրեշտակներիցը, բայց փառքով ու պատուով պսակեցիր նորան»:[5]

Աստված սիրում է ձեզ, որովհետև դուք Նրա զավակն եք: Նա սիրում է ձեզ, չնայած երբեմն դուք կարող է միայնակ զգաք կամ սխալներ գործեք:

Աստծո սերը և վերականգված ավետարանի ուժը քավող են և փրկող: Եթե միայն թույլ տաք Նրա աստվածային սերը մտնի ձեր կյանք, այն կարող է վիրակապել ամեն վերք, բժշկել ամեն ցավ և մեղմացնել ամեն կսկիծ:

Իմ սիրելի Սփոփող Միության քույրեր, դուք ավելի մոտ եք երկնքին, քան կարող եք ենթադրել: Դուք նախասահմանված եք ավելի շատ բանի համար, քան կարող եք հնարավորինս պատկերացնել:

Շարունակեք աճել հավատքով և անձնական արդարակեցության մեջ: Փայփայեք այս մեծ և ճշմարիտ Եկեղեցում գործելու պարգևը: Ընդունեք Հիսուս Քրիստոսի ավետարանը որպես ձեր կյանքի ուղի: Բարձր գնահատեք ծառայության պարգևը Սփոփող Միության օրհնյալ կազմակերպությունում: Շարունակեք զորացնել տներն ու ընտանիքները: Շարունակեք որոնել և օգնել ուրիշներին, ովքեր ձեր և Տիրոջ օգնության կարիքն ունեն:

Քույրեր, անմոռուկ փոքրիկ ծաղկի մեջ կա ինչ որ ոգեշնչող և վեհ մի բան: Հուսով եմ, այն կլինի ձեր կյանքը ուրախ և քաղցր դարձնող փոքր բաների խորհրդանիշ: Խնդրում եմ, երբեք մի մոռացեք, որ դուք պետք է լինեք համբերատար և կարեկցող ինքներդ ձեր հանդեպ, որ որոշ զոհաբերություններ ավելի լավն են, քան մյոսները, որ դուք կարիք չունեք սպասելու ոսկե տոմսակի՝ երջանիկ լինելու համար: Խնդրում եմ, երբեք մի մոռացեք դա: Խնդրում եմ, երբեք մի մոռացեք, որ Հիսուս Քրիստոսի ավետարանի «ինչու»-ն կոգեշնչի և կբարձրացնի ձեզ: Եվ երբեք մի մոռացեք, որ ձեր Երկնային Հայրը գիտի, սիրում է և փայփայում ձեզ:

Շնորհակալություն նրա համար, թե ով եք դուք: Շնորհակալություն սիրո և ծառայության անհամար գործերի համար, որոնք դուք մատուցում եք այնքան շատերին: Շնորհակալություն այն բոլոր բաների համար որ դուք դեռ անելու եք՝ բերելով Հիսուս Քրիստոսի ավետարանի ուրախությունը ընտանիքներ, Եկեղեցի, ձեր համայնքները և աշխարհի ազգերին:

Քույրեր, մենք սիրում ենք ձեզ: Իմ աղոթքն է և օրհնությունը, որ դուք երբեք չմոռանաք, որ դուք Աստծո արքայությունում իսկապես թանկագին դուստրեր եք, մեր սիրելի Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Եթեր 12.27:
2. Տես 3 Նեփի 12.48:
3. Roald Dahl, *Charlie and the Chocolate Factory* (1964), 55–56.
4. Հավատո Հանգանակներ 1.13:
5. Սաղմոսող 8.3–5:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ	(6) Ռիչարդ Գ. Սքոթը ձայնագրում է Մորմոնի Գիրքը իր ընտանիքի համար:
Երեց Խոսե Լ. Ալոնսո	(14) Խառնված ծնողները կորցնում են իրենց փոքր տղային մարդաշատ Մեխիկո Սիթիում:
Նախագահ Բոյդ Կ. Փաքեր	(16) Բոյդ Կ. Փաքերը ստանում է իր հայրապետական օրհնությունը:
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(19) Դիտեր Ֆ. Ուխդորֆը օգնում է կառուցել հավաքատուն, գտնվելով զինված ուժերում օդաչուների ուսուցմանը: Հավատարիմ զույգը դրական ազդեցություն է գործում իրենց շուրջը գտնվողների վրա:
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար	(24) Ահարոնյան Քահանայության երիտասարդները ուսուցանում են ընտանեկան պատմություն:
Երեց Նիլ Լ. Անդերսեն	(28) Ջեյմս Օ. Մեյսոնը և նրա կինը որոշում են չսպասել երեխաներ ունենալուն: Սքոթ և Բեքի Դորիուսները որդեգրում են երեխաներ ամուսնությունից 25 տարի անց:
Երեց Կարլ Բ. Քուք	(33) Թոմաս Ս. Մոնսոնը հորդորում է Կարլ Բ. Քուքին վեր նայել: Քույրերը փուչիկների տեսքով «բեռները» արձակում են երկինք:
Երեց Լեգռան Ռ. Քըրթիս Կրտսեր	(35) Քիչ ակտիվ անդամները փրկագնում են գտնում, երբ նրանց հրավիրում են վերադառնալ եկեղեցի:
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(38) Դոններ Փարթիի ողջ մնացածը հիշում է այն առավոտը, երբ նա տեսավ Ջոնսոնի ռանչոն:
Երեց Վ. Քրիստոֆեր Վադել	(50) Ջավիեր Միսիեգո անունը միսիոները հանդիպում է այն մարդուն, ում մկրտել էր նրա հայրը:
Նախագահ Հենրի Բ. Այրինգ	(56) Երիտասարդ Հենրի Բ. Այրինգը և նրա եպիսկոպոսը այցելում են իրենց ծխի մի քրոջ: Գորդոն Բ. Հինքլին և Հենրի Բ. Այրինգը ուշ գիշերով ուսումնասիրում են ձեռագիրը:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(60) Թոմաս Ս. Մոնսոնը մտածում է, թե միակ Եկեղեցու անդամն է ճամբարում: Թոմաս Ս. Մոնսոնը ավտոբուսի մարդկանց հետ խոսում է Եկեղեցու մասին
Նախագահ Հենրի Բ. Այրինգ	(68) Հենրի Բ. Այրինգը խոսում է համալսարանում, որտեղ նրան խնդրել են չկիսվել Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությամբ: (68) Հենրի Բ. Այրինգը տանում է իր դուստրերին քաղցկեղից մահացող իր ծանոթի մոտ: Մահացող տղամարդը հագել է կիրակնօրյա հագուստը՝ քահանայության օրհնություն ստանալու համար: Տնից փախչելուց հետո, տղամարդը կարդում է Մորմոնի Գիրքը և վկայություն ստանում:
Երեց Թեդ Ռ. Քալիստեր	(74) Մի երիտասարդ կին վկայում է իր ընկերուհուն Մորմոնի Գրքի ճշմարտության մասին:
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն	(82) Թոմաս Ս. Մոնսոնը սովորում է աղոթքի զորության մասին նրանից հետո, երբ գտնում է հինգ դոլարը, որը, նրա կարծիքով, կորած էր: Թոմաս Ս. Մոնսոնը զգում է, որ պետք է հայտարարի Պետեր Մյուրիկի ելույթը Ֆրանկֆուրտ Գերմանիա Տաճարի նվիրագործման ժամանակ:
Երեց Ռասսել Մ. Նելսոն	(86) Ռուս նորդարձները գոհ են իրենց տաճարային ամուսնությունից:
Երեց Ռանդալ Կ. Բենեթ	(98) Ռանդալ Կ. Բենեթը անտեսում է օվկիանոսի ուժեղ հոսանքների մասին նախազգուշացումները:
Երեց Ջ. Դեվն Քորնիշ	(101) Ջ. Դեվն Քորնիշը հրաշքով գտնում է 25 ցենտը՝ որպես աղոթքի պատասխան:
Երեց Քվենթին Լ. Քուք	(104) Ալմա Սոնսին չեղարկում է *Տիտանիկի* ամրագրումները: Իռեն Քորբեթը զոհվում է *Տիտանիկի* խորտակման հետևանքով:
Սիլվիա Հ. Ալրեդ	(114) Առողջական բազմաթիվ խնդիրներով տառապող քույրը մխիթարվում է այցելող ուսուցիչների կողմից: Տղամարդը դարձի է գալիս իր ընտանիքին այցելող ուսուցիչների ծառայության արդյունքում:
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(120) Կինը չարանում է չամուսնանալու և երեխաներ չունենալու պատճառով:

Մեր ժամանակների ուսմունքները

Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը կնվիրվեն «Մեր ժամանակների ուսմունքներին»: Յուրաքանչյուր դաս կարելի է պատրաստել վերջին գերագույն համաժողովի մեկ կամ մի քանի ելույթներից (տես ստորև տրված սխեման): Ցցերի և շրջանների նախագահները կարող են ընտրել, թե որ ելույթները պետք է օգտագործվեն, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պատասխանատվությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին: Ղեկավարները Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրներին և Սփոփող Միության քույրերին պետք է շեշտեն միևնույն ելույթները նույն կիրակի օրերին ուսումնասիրելու կարևորությունը:

Նրանց, ովքեր հաճախում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսում ենք ուսումնասիրել և իրենց հետ դասարան բերել վերջին գերագույն համաժողովի ամսագիրը:

Առաջարկություններ ելույթներից դաս պատրաստելու համար

Աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին լինի ձեզ հետ, երբ ուսումնասիրում և ուսուցանում եք ելույթ(ներ)ը: Դուք կարող եք դասը պատրաստել, օգտագործելով այլ նյութեր, սակայն համաժողովի ելույթները հաստատված են ծրագրով: Ձեր առաջադրանքն է օգնել մյուսներին սովորել և ապրել ավետարանով, ինչպես ուսուցանվում է Եկեղեցու վերջին գերագույն համաժողովում:

Վերանայեք ելույթները, գտնելու համար այն սկզբունքներն ու վարդապետությունները, որոնք համապատասխանում են դասարանի անդամների կարիքներին: Ինչպես նաև ելույթներից գտեք պատմություններ, սուրբ գրությունների հղումներ և սահմանումներ, որոնք կօգնեն ձեզ ուսուցանել այդ ճշմարտությունները:

Ծրագիր կազմեք, որով կարող եք ուսուցանել սկզբունքներն ու վարդապետությունները: Ձեր ծրագիրը պետք է ընդգրկի հարցեր, որոնք կօգնեն դասարանի անդամներին.

- Ելույթ(ներ)ից գտնել սկզբունքներ և վարդապետություններ:
- Խորհել դրանց իմաստի մասին:
- Կիսվել իրենց հասկացողությամբ, մտքերով, փորձառությամբ և վկայություններով:
- Կիրառել այդ սկզբունքներն ու վարդապետություններն իրենց կյանքում: ■

ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԱՄԻՍՆԵՐԸ	ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՕՐՎԱ ԴԱՍԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ
Նոյեմբեր 2011–Ապրիլ 2012	*Լիահոնա** 2011թ.նոյեմբերի համարներում տպված ելույթներ
Մայիս 2012–Հոկտեմբեր 2012	*Լիահոնա** 2012թ.մայիսի համարներում տպված ելույթներ

** Այս ելույթները (տարբեր լեզուներով) մատչելի են conference.lds.org-ում:*

Օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահությունները

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սիլվիա Հ. Ալրեդ
Առաջին Խորհրդական

Ջուլի Բ. Բեք
Նախագահ

Բարբարա Թոմսոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Մերի Ն. Քուք
Առաջին Խորհրդական

Էլեյն Ս. Դալտոն
Նախագահ


Էն Մ. Դիբ
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ


Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ

Շերիլ Ա. Էսպլին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Լարրի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ադրիան Օչոա
Երկրորդ Խորհրդական

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյվիդ Մ. Մակ-Քոնկի
Առաջին Խորհրդական

Ռասսել Տ. Օսգութորփ
Նախագահ

Մեթյու Օ. Ռիչարդսոն
Երկրորդ Խորհրդական

Նկարը պատկերում է հրդեհի հետևանքով ոչնչացված Պրովոյի Թաբերնաքլը՝ վերականգնված վիճակում՝ որպես երկրորդ տաճար Պրովոյում, Յուտա, ԱՄՆ:

181-րդ կիսամյա գերագույն համաժողով

Ավելի քան 100000 մարդ մասնակցեցին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 181-րդ կիսամյա գերագույն համաժողովին՝ հոկտեմբերի 1-ին և 2-ին Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, ԱՄՆ: Միլիոնավոր այլ մարդիկ դիտեցին կամ ունկնդրեցին այն հեռուստատեսությամբ, ռադիոյով, արբանյակային և համացանցային հեռարձակումներով:

Շաբաթ օրը՝ հոկտեմբերի 1-ին, առաջին նիստին, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հայտարարեց վեց նոր տաճարների կառուցման վայրերի մասին. Բառանքիլլա, Կոլումբիա; Դուրբան, Հարավային Աֆրիկա; Կինշասա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն; Փարիզ, Ֆրանսիա; Պրովո, Յուտա, ԱՄՆ; և Սթար Վելլի, Վայոմինգ, ԱՄՆ:

Այս հայտարարությունից հետո, Նախագահ Մոնսոնը հրավիրեց անդամներին ներդրում կատարել Տաճարների այցելուների աջակցման Եկեղեցու ընդհանուր ֆոնդին: Այդ ֆոնդը ֆինանսավորում է նրանց մեկանգամյա այցը տաճար, ովքեր այլապես չեն կարող գնալ, սակայն խորապես ցանկանում են» - ասաց նա :

Շաբաթ ցերեկային նիստին Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հայտարարեց youth.lds.org—FamilySearch Youth and Family History (lds.org/familyhistoryyouth) նոր բաժնի մասին: Այս նոր բաժինը կօգնի երիտասարդներին հետազոտել ընտանեկան պատմությունը և ծառայել իրենց նախնիներին, ուսումնասիրելով նրանց գրառումները: (Տես հոդվածը էջ 128-ում:)

Նաև այս նիստին, Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստան ազատվեց Յոթանասունի Նախագահությունից: Յոթանասունի Նախագահությունում հաստատվեց Երեց Թադ Ռ. Քալիսթերը (տես նրա կենսագրությունը, էջ 128): Տասներկու Յոթանասուններ և Տարածքային Յոթանասուններ ազատվեցին կամ ստացան պատվավոր պաշտոնյաների կոչումներ (տես հաստատումները և ազատումները, էջ 23):

Կիրակի առավոտյան իր ելույթում Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, հիշեցրեց ապրիլի գերագույն համաժողովին բոլոր անդամներին ուղղված կոչի մասին՝ մասնակցելու 2011թ. ծառայության օրվան (տես Հենրի Բ. Այրինգ, «Բարիք գործելու հնարավորություններ», *Լիահոնա*, մայիս 2010, 22):

Ողջ աշխարհում անդամները ունկնդրում էին համաժողովը 93 լեզուներով: Տարբեր լեզուներով համաժողովի տեքստի, աուդիո- և վիդեո-տարբերակների մասին տեղեկության համար, այցելեք lds.org/general-conference/when-conference-materials-will-be-available: ■

Իմ արքայության դուստրերը. պատմական աշխատանք այսօրվա ՎՕՍ կնոջ համար

Չելսի Նիբերգալ
Եկեղեցու ամսագրեր

Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը վերնագրով նոր գիրքը, որը պատրաստվել է Առաջին Նախագահության ղեկավարության ներքո, Սփոփող Միության և Եկեղեցու կանանց ժառանգության գրառումն է, ինչպես ասաց Ջուլի Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը, 2011թ. սեպտեմբերին կայացած Սփոփող Միության գերագույն ժողովին:

«Այն կմիավորի և կաջակցի աշխարհասփյուռ քույրությանը Սփոփող Միության նպատակներով և աշակերտների օրինակներով և արտոնություններով», - ասաց նա: «Այն մեր Հոր երջանկության ծրագրում կանանց դերի կարևորության վկայությունն է, և այն ապահովում է անշարժ չափանիշ, թե ինչին ենք մենք հավատում, ինչ ենք մենք անում և ինչ ենք մենք պաշտպանում»:

Քույր Բեքն ասաց, որ գիրքը հիմք է տրամադրում որպես Աստծո դուստրեր կանանց ինքնության համար: Նա ասաց, որ ուսումնասիրելով այդ գիրքը, մարդիկ կկարողանան տեսնել, թե ինչպես պետք է աշխատի Սփոփող Միությունը յուրաքանչյուր քրոջ կյանքում:

Ինչպես ծնվեց գիրքը

Ծրագիրը սկիզբ առավ որպես հանձնարարական Առաջին Նախագահության կողմից: Սյուզան Վ. Թանները՝ Երիտասարդ Կանանց նախկին գերագույն նապագահը, ձեռնադրվեց՝ գիրքը գրելու: Քույր

© 2011 INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՊԱՆՎԱԾ ԵՆ

Բեքը և նրա խորհրդականները՝ Սիլվիա Հ. Ալրեդը և Բարբարա Թոմսոնը, հանձնարարություն ստացան՝ հայտնության հոգով կառավարելու այդ ծրագիրը և աշխատելու Քույր Թանների, խմբագիրների և մյուս մասնակիցների հետ: «Ես երբեք չեմ աշխատել մի ծրագրի վրա, որն ավելի մեշ ուղղորդում կստանար Հոգու կողմից», - ասաց Քույր Բեքը:

Այդ ընթացքում որոշվեց, թե պատմական գրառումների հազարավոր էջերից որոնք պետք է ներառվեն գրքի կազմում: Քույր Բեքը, նրա խորհրդականները և Քույր Թանները ուսումնասիրեցին Նավույում անցկացված Սփոփող Միության առաջին ժողովների արձանագրությունները, այլ պատմությունները և փաստերը Սփոփող Միության և Եկեղեցու կանանց մասին:

Քույր Բեքն ասաց, որ արդյունքում ստացվեց ոչ թե սովորական ժամանակագրական պատմություն, այլ Եկեղեցու կանանց և Սփոփող Միության հոգևոր պատմությունը:

«Մենք ուսումնասիրում ենք մեր պատմությունը, որովհետև այն օգնում է մեզ փոխվել», - ասել է Քույր Բեքը 2010թ. Սփոփող Միության ժողովի իր ելույթում: «Ի վերջո, պատմության արժեքը ոչ թե տարեթվերի, ժամանակների կամ վայրերի մեջ է: Այն արժեքավոր է, քանի որ սովորեցնում է մեզ այն սկզբունքները, նպատակները և ուղիները. Որոնց մենք պետք է հետևենք, և օգնում է մեզ իմանալ, թե ով ենք մենք և ինչ պետք է անենք, նաև միավորում է մեզ երկրի վրա Սիոնի տները ամրացնելու և Աստծո արքայությունը կառուցելու գործում» («Իմ արքայության դուստրերը». Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը, *Լիահոնա,* նոյ. 2010, 115):

Թեև գիրքը չի հետևում ժամանակագրությանը, դրա ուսմունքները ներկայացված են թեմատիկ գլուխներով: Գիրքը պարունակում է պատմություններ և օրինակներ սուրբ գրություններից և արդի ժամանակներից, մարգարեների և Սփոփող Միության ղեկավարների խոսքերը, որոնք կարևոր ուղերձներ են ուսուցանում:

Գրքի ազդեցությունը

Քույր Բեքն ասել է, որ գրքի շնորհիվ քույրերը կսովորեն ինչպես իրականացնել Սփոփող Միության նպատակները իրենց սեփական կյանքում և որպես ուխտեր պահող աշակերտների քույրեր:

«Նրանք կսովորեն, թե ինչ է նշանակում մեծացնել հավատքը և անձնական արդարակեցությունը, ամրացնել ընտանիքները և տները, փնտրել և օգնել կարիքավորներին», - ասել է Քույր Բեքը Եկեղեցու ամսագրերին իր հարցազրույցի մեջ: «Երբ քույրերը սկսում են տեսնել իրենց Սփոփող Միության աշխատաքի մեջ, նրանք սկսում են հասկանալ, թե որքան ազդեցիկ են եղել կանայք Եկեղեցու զարգացման գործում, ինչպես հնում, այնպես էլ վերջին օրերին, և նրանք կարող են ճանաչել իրենց նպատակը և իրենց ինքնությունը»:

Քույր Բեքը հավատում է, որ նրանք, ովքեր կկարդան գիրքը, օրինակով և ցուցումով, կսովորեն լսել Սուրբ Հոգուն և ստանալ անձնական հայտնություն: Նրանք նաև կամրացվեն և կխրախուսվեն իրենց առօրյա կյանքում, ինչպես նաև փորձությունների և դժվարությունների միջով անցնելիս:

«Գրքի մեջ մեծ ուժ կա՝ մեծ զորություն, որը մենք կարող ենք կրկնօրինակել», - ասել է Քույր Բեքը: «Դժվար օրերին, ես հուսով եմ, մարդիկ ձեռքի տակ կպահեն իրենց գիրքը, կվերցնեն և կկարդան որևէ պատմություն կամ օրինակ, որը կամրացնի իրենց»:

Քույր Բեքը նաև ասաց, որ գիրքը մուտք կգործի Եկեղեցու տները քույրերի ձեռքերով, սակայն նա հավատացած է, որ այն կարևոր նյութ կհանդիսանա և տղամարդկանց, և կանանց համար: Այն կօգնի երիտասարդ կանանց հասկանալ, թե ինչպես են իրենք դառնում քույրերի համաշխարհային մեծ կազմակերպության մասը, և այն կարող է միավորել ամուսիններին և կանանց՝ իրենց ընտանիքները առաջնորդելու և Եկեղեցում ծառայելու սուրբ աշխատանքում:

Գիրքն ուսումնասիրելուց հետո, Դեյլ Քուքը՝ Սիռակուզ Յուտա Բլաֆ Ցցի նախագահը, ասաց, որ այն կարևոր նյութ է, որը կօգնի ոչ միայն Եկեղեցու կանանց, այլ նաև տղամարդկանց հասկանալ որպես Քրիստոսի աշակերտներ իրենց դերը,: «Կարդալիս դուք տեսնում եք, թե ինչպես է այն [Սփոփող Միությունը] համակցված և կապված քահանայության հետ», - ասում է Նախագահ Քուքը: «Այն օգնեց ինձ հասկանալ, թե ինչ զորություն ունի իմ կինը և ինչպես ես կարող եմ ավելի շատ սիրել, օգնել և աջակցել նրան»:

Գրքի մասին

Գիրքը նախատեսված է անձնական ուսումնասիրության, տանը, Սփոփող Միությունում և, ընդհանրապես, Եկեղեցում ուսուցանելու համար: Այն ուղարկվել է Սփոփող Միության նախագահների հետ աշխատող եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին, ովքեր պետք է բաժանեն գիրքը ծխերի և ճյուղերի քույրերին, դարձնելով այն օրհնություն նրանց կյանքում:

Մինչև 2012թ. հունվարի վերջը, գիրքը մատչելի կլինի մոտ քսանչորս լեզուներով: Շատ լեզուներով այն արդեն մատչելի է առցանց, որտեղ անդամները կարող են գտնել ուղեկցող վիդեոներ, կիսվել մեջբերումներով և կարդալ առաջարկություններ՝ գրքի ուղերձները կարդալու և դրանցով կիսվելու վերաբերյալ: Այցելեք **lds.org/relief society/daughters-in-my-kingdom: Սեղմեք "Additional Languages (PDF)"** էջի կենտրոնում **"Related Resources"** վերնագրի տակ: Մատչելի լեզուների ցանկը կհայտնվի հաջորդ էջի աջ կողմում: Կայք-էջը նախատեսված է թարգմանել մի քանի լեզուներով:

Գրքի տպագիր տարբերակը սպասվում է այս տարվա վերջում անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն լեզուներով: Այն հնարավոր կլինի ձեռք բերել Բաշխման ծառայությունների և store.lds.org-ի միջոցով: ■

Ընտանեկան պատմության ուսումնասիրության նոր վայր դեռահասների համար

FamilySearch Youth և Family History նոր բաժինը, որն ավելացվել է youth.lds.org (lds.org/familyhistoryyouth) կայքում, կօգնի երիտասարդներին ուսումնասիրել ընտանեկան պատմությունը և ծառայել իրենց նախնիներին, գտնելով նրանց գրառումները:

Նյութերը դեռահասներին ուսուցանում են, ինչպես սկսել օգտագործել FamilySearch-ը: Հինգ պարզ քայլերով նրանք սովորում են ուսումնասիրել իրենց տոհմածառը, կազմել ընտանեկան գրառումներ և պատրաստել անուններ տաճարի համար: Տրվում են նաև մտքեր, թե ինչպես դասարանները և քվորումները կարող են օգտագործել ընտանեկան պատմությունը՝ մյուսներին ծառայելու համար:

Նոր բաժինը ներկայումս մատչելի է անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն լեզուներով: Լրացուցիչ լեզուներով այն մատչելի կլինի առաջիկա ամիսներին: ■

Արվեստի մրցույթը հրավիրում է երիտասարդներին շողալ

Եկեղեցու Պատմության թանգարանը հրավիրում է 13-18 տարեկան երիտասարդներին մասնակցել երիտասարդների արվեստի առաջին միջազգային մրցույթին:

Նկարիչները իրենց գործերով պետք է արտահայտեն « վեր կացեք և շողացեք» կոչը (տես ՎԼՈ 115.4–6):

Արվեստի աշխատանքները պետք է ստեղծված լինեն 2009թ. հունվարի 1-ից հետո: Մասնակիցները 2012թ. հունվարի 1-ի դրությամբ պետք է լինեն 13 տարեկան: Նրանք կարող են ներկայացնել արվեստի մեկ աշխատանք առցանց՝ 2012թ. հունվարի 2-ից սկսած մինչև 2012թ. հունիսի 1-ը, ուրբաթ: Առավելագույն չափը պետք է լինի 213 սմ.՝ ամենաերկար ուղղությամբ: Ընդունվում են ցանկացած տեսակի մեդիա գործեր և ցանկացած ոճի աշխատանքներ:

Աշխատանքները ներկայացնելու պայմանները մատչելի կլինեն lds.org/youthartcomp կայքում:

Հաղթողները կհրավիրվեն ուղարկելու իրենց բնօրինակ աշխատանքները թանգարան՝ 2012թ. նոյեմբերի 16-ից մինչև 2013թ. հունիսի 17-ը կայանալիք ցուցադրության համար: ■

Երեց Թեդ Ռ. Քալիսթեր

Յոթանասունի Նախագահությունից

Երեց Թեդ Ռիչարդս Քալիսթերը, Յոթանասունի Նախագահությունում նոր հաստատված անդամը և Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամը, բացատրում է, որ Եղբայրների նպատակներից մեկը հանդիսանում է Եկեղեցու «իսկական աճը» ապահովելը: «Դա նշանակում է, որ թվով ավելի ու ավելի մարդիկ ոչ միայն պետք է պարզապես գան հաղորդության ժողովին, այլ նաև պետք է ընդունեն հաղորդությունը, ստանան Եկեղեցու առաջարկվող ծեսերը և պահեն իրենց ուխտերը», - ասել է նա:

Ցանկանալով օգնել Եկեղեցու տեղական ղեկավարներին այդ ջանքերում, Երեց Քալիսթերը շնորհակալ է, որ Տերը իրեն հնարավորություններ է տվել ծառայելու բազմաթիվ կոչումներում: «Լինելով այն մարդկանց կոշիկների մեջ, որոնց հետ այժմ աշխատում եմ՝ ցցերի նախագահների և եպիսկոպոսների, և երեցների քվորումների նախագահների, ես ավելի զգայուն եմ դառնում նրանց կարիքների հանդեպ, ինչպես նաև տեղյակ եմ այդ կարիքների մասին », - բացատրել է նա:

Երեց Քալիսթերը ծառայել է որպես լիաժամկետ միսիոներ Արևմտյան Ատլանտյան Նահանգների Միսիայում, երեցների քվորումի նախագահ, ցցի միսիայի նախագահ, ցցի նախագահի խորհրդական, եպիսկոպոս, ցցի նախագահ, տարածքային ներկայացուցիչ, Տարածքային Յոթանասունական, Կանադա Տոռոնտո Արևմտյան Միսիայի նախագահ (2005–2008), և ծառայում էր Խաղաղօվկիանոսյան Տարածքի Նախագահ, երբ կանչվեց Յոթանասունի Նախագահություն:

Նա ծնվել է Ռիդ և Նորին Քալիսթերների ընթանիքում 1945թ. դեկտեմբերին, Գլենդելում, Կալիֆոռնիա, ԱՄՆ: Երեց Քալիսթերը ստացել է հաշվապահության աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանում 1968թ.: 1971թ. նա ավարտել է Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի Համալսարանի իրավաբանական դպրոցը: 1972թ. նա ստացել է մագիստրոսի կոչում հարկային օրենքի գծով Նյու Յորքի Համալսարանից: 1972-ից մինչև 2005թ. նա զբաղվել է իրավաբանությամբ, նաև գրել է գրքեր Քավության, Ուրացության և Վերականգնման մասին:

Նա ամուսնացել է Քեթրին Լուիզ Սափորիտիի հետ 1968թ. դեկտեմբերին Լոս Անջելես Կալիֆոռնիա Տաճարում: Նրանք ունեն վեց զավակ:

Երեց Քալիսթերը տեսնում է իր կյանքում Տիրոջ ձեռքը: «Փրկչի սերը այնքան խորն է, որ, ես կարծում եմ, Նա և մեր Երկնային Հայրը չեն համբերում օրհնել մեզ ամեն փոքր առիթով, երբ մենք բարիք ենք գործում, որովհետև դա Նրանց էությունն է»: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ: ՄԵՑՅՈՒ ՈՏՅԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սան Սալվադոր Էլ Սալվադոր Տաճար

Էլ Սալվադորում այս տպավորիչ տաճարը նվիրագործվել է 2011թ. օգոստոսի 21-ին, և հանդիսանում է աշխարհում գործող տաճարներից թվով վերջինը: Տաճարների մասին Նախագահ Հովարդ Վ. Հանթերն (1907–95) ասել է 1994թ. գերագույն համաժողովի իր ելույթում. «Եկեք լինենք տաճար հաճախող ժողովուրդ: Հաճախեք տաճար այնքան հաճախ, որքան թույլ կտան ձեր անձնական հանգամանքները: Ձեր տանը պահեք տաճարի նկարը, որպեսզի ձեր երեխաները կարողանան տեսնել այն» (“Exceeding Great and Precious Promises,” Ensign, Nov. 1994, 8):

«Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, որ այս աշխատանքը ճշմարիտ է, որ մեր Փրկիչն ապրում է, և որ Նա առաջնորդում և ղեկավարում է Իր Եկեղեցին երկրի վրա», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 181-րդ կիսամյա գերագույն համաժողովի իր եզրափակիչ ելույթում: «Ես թողնում եմ ձեզ հետ իմ վկայությունը, որ Աստված՝ մեր Երկնային Հայրն ապրում է և սիրում է մեզ: Նա իսկապես մեր Հայրն է, և Նա անձնական և իրական է: Թող որ մենք գիտակցենք և հասկանանք, թե որքան է Նա ցանկանում մոտենալ մեզ, որքան շատ է Նա ցանկանում օգնել մեզ, որքան շատ է Նա սիրում մեզ և որքան շատ է Նա անում և ցանկանում անել մեզ համար»:

ARMENIAN

4 020096 912012